

ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎԱՆԵՐԻ

N 2 (104)  
2004

ԲԱՆԲԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎԱՆԵՐԻ

*Գիտահանրամատչելի հանդես*

**Вестник архивов  
Армении**

*Научно-популярный журнал*

**Bulletin of Armenian  
Archives**

*Scientific practical magazine*

2 (104)  
2004

---

**ԵՐԵՎԱՆ**

**ЕРЕВАН**

**YEREVAN**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ  
ԼՈՒՅՍ է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վերաբյան

Խմբագրական խորհուրդ  
**Արմեն Բաղալյան (պատասխանատու քարտուղար)**  
Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա Հովսեփյան,  
Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան,  
Հարություն Ֆելեքյան

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2004թ.

Գեվորգեան ձեռագրերը վավերագրերում

1874թ. սեպտեմբերին, Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ, էջմիածնում բացվեց Հոգեւոր ճեմարան, որը հիմնադրի անունով կոչվեց Գեորգյան: Նույն թվականի Հոկտեմբերի մեկին կառավարութունը որոշակի փոփոխություններով հաստատեց ճեմարանի կանոնադրությունը: Գեորգյան ճեմարանն Արեւելյան Հայաստանում առաջին եւ միակ բարձրագույն Հոգեւոր ուսումնական հաստատությունն էր՝ բաղկացած երկու բաժնից՝ դասարանական, ճամայա ուսուցմամբ, միջնակարգ դպրոցի ծավալով եւ եռամյա, յարանանկան, որը համաարագոր էր Հոգեւոր բարձրագույն կրթություն: Ճեմարան կարող էին ընդունվել Հայոց բոլոր թեմերից, հիմնականում Հոգեւորականների գավալներ, ինչպես նաեւ 14-16 տարեկան չբավոր, սակայն ընդունակ Հայ պատանիներ:

Ճեմարանն Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինության տակ էր, պահվում էր Մայր Աթոռի միջոցներով եւ նվիրատվություններով: Հասարակության աջակցությամբ ճեմարանը սարեցտարի բարգավաճեց եւ 1905-06թթ. ուսումնական տարում այն արգեն ուներ 310 աշակերտ, որոնցից 249-ը գիշերօթիկ սաներ (գիշերում էին ճեմարանում՝ Մ.Ա.) էին, իսկ 61-ը երթեւեկ (նրանք, ովքեր ցերեկը հաճախում էին ճեմարան, իսկ գիշերում էին իրենց տանը՝ Մ.Ա.): Իսկ 1914թ., հասկանալի պատճառներով, ուսանողություն թիվը կրճատվում է, հասնելով 227-ի (170 գիշերօթիկ եւ 57 երթեւեկ)\*\*:

Գեորգյան ճեմարանը պատրաստել է գիտելիքներով զինված, հայրենասեր, ազգին ծառայելու պատրաստակամ Հոգեւոր գործիչներ եւ Հայոց դպրոցների ուսուցիչներ: Ճեմարանում են ուսանել Կոմիտասը, Կարա-Մուրզյան, Վ.Սուրենյանցը, Այ.Բակունցը, Լ.Շանթը, պետական գործիչներ Ազ.Ահարոնյանը, Ս.Թորոսյանը, Արտ.Արեղյանը, Ա.Միկոյանը, Ասք.Մուսայանը, Ազ.Խանջյանը եւ ուրիշներ: Գեորգյան ճեմարանում են աշխատել եւ իրենց գիտական գործունեությունը ծավալել Հայ մշակույթի մեծ երախտավորներ Կ.Կոստանյանը, Գ.Տեր-Մկրտչյանը, Գ.Հովսեփյանը, Մ.Արեղյանը, Հր.Աճառյանը եւ այլք, որոնց աշխատությունները նպաստեցին Հայագիտության զարգացմանը:

Առաջին համաշխարհային պատերազմը եւ հետագա քաղաքական իրադարձությունները ստիպեցին առժամանակ փակել ճեմարանը: Այն փակվեց 1917-ին եւ վերաբացվեց 1945 թվականին էջմիածնի Հոգեւոր ճեմարան վերանվանմամբ եւ գործում է առ այսօր: Ճեմարանի սաները ոչ միայն Հայ առաքելական եկեղեցուն նվիրված, ազգի կրոնա-քարոյական գաստիարակությամբ զբաղվող բարեպաշտ Հոգեւորականներ են, այլեւ Հայրենասեր քաղաքացիներ, որոնց հայպահպան գործունեությունը առավել քան զգալի ու անհրաժեշտ է սփյուռքում:

Փաստաթղթերն ընդգրկում են 1874-1917թթ., եւ հրապարակվում են առաջին անգամ: Հրապարակելիս պահպանվել են փաստաթղթերի լեզվական ու ոճական առանձնահատկությունները:

Մարտ Ավետիսյան  
ՀԱԱ. գլխավոր արխիվագետ

\* ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.15, ք.229, թ.4:

\*\* Նույն տեղում, ֆ.Պ- 312, ց. 1, ք.214, թ.45:

ՎՐԱՍՍԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍԻՆՈՒԳԻՆ՝ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱՔԻԱՅԻ ՈՒ ՎՐԱՍՍԱՆԻ ԹԵՄԵՐԻՑ ՁԵՄԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22 օգոստոսի 1874թ.  
Թիֆլիս

Ըստ յանձնարարության կոնսիստորիային Հայոց Նախիջևանայ եւ Բեսարաբիոյ եւ բարեչորհ Արեւստակե վարդապետի Սեդրակեանց ի 10 եւ 16 օգոստոսի ամսոյս համարք 722 եւ 17 վիճակային կոնսիստորիայո Վրաստանի պատեւ ունի խոնարհարար յայտնել Սիեզիգ, թէ նորոգ ընտրեալ ի վիճակէն Նախիջևանայ եւ Բեսարաբիոյ յորդեգրութիւն նորաբաց ճեմարանի սրբոյ էջմիածնի՝ Յովհաննէսն Տէր Դաւթեանց, Միքայէլէն Այսուսիժատրեանց, Յովհաննէս Բօնակեանց, Յարութլունն Շահինեանց եւ Մէլքոնն Արամհիրեանց եւ ի քաղաքէն Թիֆլիզոյ՝ Պօղոսն Սահակեանց, Հայրապետն Մելիք Ստեփաննոսեանց եւ Նիկողայոսն Շաքեանց, փոխանակ յառաջագոյն ընտրեալ Մեհարաբայ Մեհարեանց: Ի միասին ընդ այսմ ուղեւորեցան ի սուրբ էջմիածին ընդ ուղեկցութեամբս եւ հսկողութեամբ Յովսէփ քահանայի Մամուլեանց, որոց ճանապարհածախք լիովին վճարեալ է աստէն. յարգոյսարար յարակցելով, թէ ծնողքն լիջեալ Մեհարաբայ Մեհարեանց ի պատճառս հրանդուլթեան՝ վերջնոյս այլեւս չկամեցան առաքել զնա:

Անդամք՝ Մովսէս աւագ քահանայ [Սայաթնեանց]  
Յովհաննէս աւագ քահանայ Արարատեանց  
Կարապետ քահանայ Տեր-Սարգսեանց

ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.1, ք.6473, թ.9: Բնագիր: Ձեռագիր:

էջմիածնի Հոգեվոր ձեռագրերի ԿԱՆՈՆՆԵՐԸ

[1874թ.]  
Ա.էջմիածին

1. Эчмиадзинская Армянская Духовная Академия есть высшее духовно-учебное учреждение, имеющее целью: доставлять общее и богословское образование для просвещенного служения армянской церкви и готовить преподавателей для духовно-учебных заведений армяно-григорианского исповедания.
2. Эчмиадзинская Академия находится под главным начальством Святейшего Патриарха Католикоса всех Армян.
3. Эчмиадзинская Академия содержится средствами Эчмиадзинского Патриаршего престола и добровольными в пользу ее приношениями.
4. Управление Эчмиадзинскою Академиею ввергается ректору, при содействии: 1 учебного совета и 2 хозяйственного правления.
5. В Эчмиадзинской Академии, кроме ректора состоят: помощник его, преподаватели, воспитатели, секретарь, медик, библиотечарь и эконом.
6. Примечание: обязанности служащих в академии лиц, а также состав и предметы занятий учебного совета и хозяйственного правления определяются инструкцией святейшего Патриарха Католикоса.
6. В Эчмиадзинскую Академию принимают, на основании установленных для сего начальством академии правил, лица армяно-григорианского исповедания без различия сословия и подданства, преимущественно из кончивших с успехом учение в состоящих при армянских церквах и монастырях учебных заведениях и в семинариях, по предварительном испытании, производимом в академии.

7. Эчмиадзинская Академия состоит из шести семинарских классов и трех высших академических с годичным курсом в каждом.

8. В Эчмиадзинской Академии преподавание производится на армянском языке.

9. В Эчмиадзинской Академии преподаются:

- 1) Пространный катихизис по догматам армянской церкви.
- 2) История армянской церкви.
- 3) Общая церковная история.
- 4) Священное писание и его толкование.
- 5) Богословие основное, догматическое, нравственное и сравнительное.
- 6) Богослужение и церковный календарь.
- 7) Пасторское богословие и гомилетика.
- 8) Жизнеописание святых, чтимых армянскою церковью.
- 9) Церковное право.
- 10) Педагогика.
- 11) Философия (логика и психология) и история философии.
- 12) Армянская история и география.
- 13) Всеобщая история и география.
- 14) История и география России.
- 15) Математика, физика и космография.
- 16) Естественная история.
- 17) Армянский язык и история литературы.
- 18) Русский язык.
- 19) Древние и новые языки: латинский, французский и немецкий.
- 20) Еврейский язык и библейская археология.
- 21) Черчение и рисование (преимущественно церковное).
- 22) Пение церковное.

Примечание: из новых языков воспитанники обучаются обязательно только одному.

10. Учебные предметы распределяются по классам советом академии. Из наук преподаваемых в академических классах, совет определяет одни общие, а другие как специальные, по отделениям с утверждения святейшего Патриарха Католикоса. Русский язык, история и география России обязательны для воспитанников, состоящих в русском подданстве.

Секретарь Эчмиадз. Синода И.Иоаннисян

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, դ.235, թ.21-22: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 3

ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝<sup>2</sup> ԿՈՆԳՐԱԿԸ՝ ԳԱՐԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ՝<sup>3</sup> ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 Հունիսի 1875թ. Ա.Էջմիածին

Ձի Հայրապետական կոնդակա մերով՝ զոր ի սմին իսկ աւուր տուր գերապատիվ Գարբիել արքեպիսկոպոս Այվազեան՝ անդամայ Սինոդիզ Համարաւս 187՝ կարգեցար զնա տեսուչ նորակառուց ճեմարանի ս. Աթոռոյս տալով նմա զիրակատար իրաւունս տնօրինելոյ զկառավարութիւն ուսումնական, բարոյական եւ կառավարչական մասանց միանգամայն, այնպէս, որպէս նորայն բազմամեայ փորձառութիւն ցուցանիցե առ անալրաբ յառաջադիմութիւն ճեմարանի, զորոց զշենութիւն յետ այգքանեաց բազմատեսակ նիւթական եւ բարոյական ձախորդութիւնից, քրտանց եւ վաստակոց՝ Հուսկ ուրեմն յաբողեցաւ մեզ ի դուռս Հաննի եւ այնպիսոց քաջամուտ սան ազգասէր խնամոց աւելոյ ապաստան:

Ընդունին առաքիմք ի Սինոդ եւ զպատճէն ատճամանակեաց կանոնադրութիւն ճեմարանի Համար տրամադրութեանց կայսերահաստատ Հիմնական քրապրին:

Գէորգ Դ կաթողիկոս ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.1, դ.6473, թ.62: Բնագիր: Ձեռագիր:

N 4

ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

23 նոյեմբերի 1876թ. Ա.Էջմիածին

Ի 23 նոյեմբերի 1876 ամին ընդ նախագահութեամբ կարգապահի ճեմարանիս պ[արոն] Յ.Գալստեան, եւ յառաջարկութեան արդոյ ուսուցչոցն արժանապատիւ Կիրիլի վարդապետի Սրապեան, եւ պպ. Մ.Պայեան, Պ.Ճէպէճեան, Լ.Թիւսիկեան, Ն.Սիմէոնեան, Առաքելի Սազիսեան եւ Մ.Քէրէսթէճեան ժողովեցաւ խորհրդարան ճեմարանիս, յորում նախ ընթերցաւ աղենագրութիւն նախընթաց ժողովոյն, զորմէ չեղեւ կարելոր ինչ գիտողութիւն:

Ապա Պ.Ն.Սիմէոնեան խօսել կալաւ եւ ասէ. որպէս յայտ է ժողովականացդ, սրբաբան վերատեսուչն Հաւանեցաւ զի ճեմարանս տացէ բերել օրագիրս եւ լրագիրս յառաջիկայ 1877 ամի. արդ ժամանակ է խորհելոյ թէ՛ զո՞ր օրագիրս եւ զո՞ր լրագիրս տացե բերել ճեմարանս. զի ամիս մի եւ եթ մնայ ցսկիդրն միւսոյ տարւոյ: Ի լրագիրս եւ յօրագիրս օգտակարագոյնք ճեմարանիս ինձ թուին. ի Հրատարակելոցն ի ուսւ լեզու՝ «Голос», «Всемирная иллюстрация»<sup>5</sup> (զոր եւ յառաջն ընդունէր ճեմարանս), եւ «Учительское обозрение»: Իսկ ի Հրատարակելոցն ի Հայ լեզու՝ «Մշակ»<sup>6</sup> եւ «Մեղու Հայաստանի»: Ձի այնու տեղեկութիւնս ինչ առցուք եւ զազգային կենաց եւ զգործոց:

Պ.Մ.Պայեան. - «Մշակն» եւ «Մեղուն Հայաստանի» մի բերեցին. զի ոչ կարեմք ի ձեռս աշակերտաց տալ զլրագիրսդ:

Պ.Ն.Սիմէոնեան. - Եթէ գուցէ ի նոսա յօրուած ինչ այնպիսի զոր չիցէ մարթ տալ ընթեռնուլ աշակերտաց, մի տացուք, իսկ եթէ չիցե այնպիսի ինչ, ընդէ՞ր չտալ զլրագիրսդ ի ձեռս աշակերտաց:

Պ.Մ.Պայեան. - Երբէք չկարեմք տալ ի ձեռս աշակերտաց զլրագիրսդ, զի լի են Հանապազ անպիտան Հատուածովք, եւ ոճ բանիցն ինքնին անպիտան է եւ Հեռի յոյժ յուզողախօսութենէ եւ ի Հայկաբանութենէ զոր պարտաւ էք աւանդել Համբակացն մեթոդ. Հեռի պահելով զլսելիս նոցա ի խժոգժական ասացուածոց եւ ցօտարախորթ բառից լրագրացդ երկոցուն: Այլեւ ի բարոյականի մասին եւս պիտարակելի յոյժ են լրագիրքդ, զի ի մէն մի ի թուահամարացն անձնական կիրք եւ անտեղի տակութիւն տեսանի եւս եւ զպատկառելի եւ զսրբազան իրաց:

Պ.Ն.Սիմէոնեան. - Եթէ չկարեցեմք տալ զլրագիրսդ ի ձեռս աշակերտաց, սակայն եւ այնպէս տացուք բերել զայնս վասն ուսուցչաց: Ձի ոչ գնոյն կարէք ասել եւ զուսուցչաց, որոց կարողութիւն գատողութեան ի վեր է քան զաշակերտաց, եւ կարին որոշել զչարն ի բարւոյ: Ուսուցիչք յետ ընթեռնուլ զայնս, կարին զկարելոր գիտելիսն պատմել աշակերտաց:

Եւ իբրեւ պ. Մկրտիչ Պայեան ոչ Հաւանէր ասացելոցն պ. Ն.Սիմէոնեան, պ. Պ.Ճէպէճեան ասէ. «Անշուշտ կարելոր է յոյժ եւ անհարժեշտ իսկ ուսուցչացս եւս եւ աշակերտաց ընթեռնուլ զազգային լրագիրս, զի տեղեկացուք նորանոր անցից եւ գիտութեանց պատահելոց յազգի մերում, այլ քանզի պ. Մ.Պայեան չՀաւանի ընդ լրագիրսդ «Մշակ» եւ «Մեղու Հայաստանի», խնդրեսցուք ի Վեհափառ Հայրապետէն զի բարեհաճեսցի Հրամայել, տալ մեզ ընթեռնուլ յազգային լրագրացն Հրատարակելոց յօսմանեան աշխարհին գորս նա ինքն Վեհափառ Հայրապետն պատշաճ գատեցէ:

Ապա ընդ երկար վիճեցին զինչորոյս պպ. Մ. Պայեան, Պ. Ճէպէճեան եւ Ն. Սիմէոնեան: Հուսկ ուրեմն Հաւանութեամբ ժողովականաց սահմանեցաւ.

Ա.Ճեմարանն տացե բերել վասն առաջիկայ 1877 ամի գհետագայ լրագիրս եւ օրագիրս ի հրատարակելոցն ի ուսու լեզու «Голос», «Всемирная иллюстрация» եւ «Учительское обозрение», իսկ ի հրատարակելոցն ի հայ լեզու վասն ուսուցչաց միայն «Մշակ» եւ «Մեղու Հայաստանի»։ Բ.- Գրել առ սրբազան վերատեսուչն եւ խնդրել զի բերեհանցնցի կարգադրել զարժանն զայժմանէ։

Յետ այնորիկ կարգապահ ճեմարանիս գեկոյց ժողովականաց զոր ինչ գրէ սրբազան վերատեսուչն վասն նստուցանելոյ գաշակերտս ի դասարանս եւ ոչ ի սերտանի, եւ այս են բանք սրբազան հօրն. «Բարևոք յոյժ արարեալ էք յայպահովոյ զմանկտիղ ի ցրտութենէ սերտարանին. միայն թէ հարկաւ ոչ միայն կանթնոցս պատշաճականս լաւելք ի մէն միում ի դասարանացն, այլեւ դասապետացս պատուէր տայք անխախտ պահել յիւրաքանչիւրումն դասարանի զկանոն լուսութեան, որ կարելորագոյնն է պարապելոցն ի սերտողութեամբը»։

Ապա պ. Մ. Պալեան ի հարց ժողովականաց եթէ պա՞րտ եւ կարելո՞ք իցե գատենագրութիւնս ժողովոց մերոց բնթեւնույ ի լուր համօրէն աշակերտաց։

Առ այս իտուն պատասխանի արժանապատիւ Կիւրեղ վարդապետ, պ. Ն.Սիմէոնեան եւ այլք ընդ նոսա թէ՛ ոչ այլ զի կարգապահ ճեմարանիս ընթերցցի կամ յայտ արասցէ աշակերտաց յատենագրութեանց ժողովոց մերոց զայն ինչ եւեթ որ աշակերտաց կարելոր է իմանալ։

Յետ այնորիկ պ. Պ.Ճէպէճեան յայտարար ժողովոյս զի աշակերտք չորեցունց եւս դասարանացն, ծանրաբեռնեալ յոյժ են ազգի գրութեամբք դասուց, որ սպառէ զմեծ մասն սերտողութեանն, այնպէս զի սակաւ ժամանակ մնայ աշակերտաց սերտելոյ զդասան։

Եւ իբրեւ աւարիկցիին նմա ոմանք ի ժողովականաց թէ առ ի չզուլէ դասագրոցն, ի ժամս սերտողութեան աշակերտք պարտին գրել ո՞չ միայն զպէսպէս կրթութիւնսն, զհրահանգս եւ զշարադրութիւնս, այլեւ զգաստ իւրաքանչիւր ուսմանց, զեկեղեցական պատմութեան, զթուարանութեան, զճարտասանութեան, զբնական պատմութեան եւ լայլն պ. Պ.Ճէպէճեան յաւել. «Պարտ է տալ բերել դասագիրս՝ եթէ գացին, իսկ եթէ ոչ, խորհել պարտիմք, թէ որո՞վ հնարիւք արդիօք մարթ իցէ ապատ առնել կամ զէթ թեթեւացուցանել զաշակերտս ի գրելոյ զդասան ի ժամս սերտողութեան»։

Արժանապատիւ Կիւրեղ վարդապետ պատասխանի ետ եւ առ թէ՛ յիւրախ այդ ալդպէս է, ծանրաբեռնեալ են յոյժ աշակերտք, վասն որոյ ամենայն վարժապետք պարտին ի ժամու դասախօսութեանց տալ գրել աշակերտաց զդասան իւրաքանչիւր, որպէս առնեմս վասն եկեղեցական պատմութեան։

Պ.Մ. Պալեան չեղեւ հաւան ընդ առաջարկութեանն զ, ասելով թէ՛ ի ժամու դասախօսութեան տալ գրել աշակերտաց զգաստ իւրանց, կորուստ է ժամանակի, զի այնմ ժամու կարէ ուսուցիչն յայլ օգտակարագոյն կրթութիւն ինչ պարապել ընդ աշակերտան։ Իսկ զգրութիւն դասուցն թողուլ ի ժամս սերտողութեան, կամ եթէ անրեզու ենի իցէ այդ ժողովականացդ, յազատ ժամս աշակերտոց։

Առ այս բան նորա աւարիկցիին պպ. Պօղոս Ճէպէճեան եւ Ն. Սիմէոնեան թէ՛ առողջութիւն աշակերտաց պահանջէ չխորել ինչ յազատ ժամուց նոցա. զի սրբազան պարտք մեր են ստանձնելոյս զգաստիրակութիւն մանկուոյդ ոչ միայն զմիտս զարգարել նոցա ազգի ազգի գիտութեամբք, այլեւ զմարմինս պահել ի կատարեալ առողջութեան։ Իսկ այդ ամենայն ժողովականացս յայտ է թէ քանի վնասակար հետեւանս առնու ձգէ գհետ իւր (մանաւանդ վասն դեռարոյս մանկանց եւ պատանեկայ), անշարժ եւ նստողական կեանք։

Արժանապատիւ Կիւրեղ վարդապետ ասէ. «Ասկաւ են ժամք սերտողութեան ի ճեմարանիս, եւ աշակերտք ոչ կարին ի կարճ ժամանակիդ ուսանել զդասն որպէս անկն է, յոյր սակս, եթէ չիցէ հնար ի ձեռս բերել դասագիրս, պարտ է հնարս խնդրել գիւրացուցանելոյ աշակերտաց զպատրաստութիւն դասուցն։

Պ.Պ.Ճէպէճեան ասէ. «Անպաքէն բարւոք է եւ օգտակար յոյժ զի ուսուցիչն ժամ մի ողջոյն պարապեցի ի դասատուութեան, սակայն եւ այնպէս հնարս հնարել պարտ է զի մի ժամք սերտողութեանն ծախեսցին ի գրութիւն դասուցն։ Եւ զայս ոչ այլազգ կարեմք առնել, եթէ ոչ՝ գէթ մասամբ իւրիք, տալով գրել աշակերտաց զգաստ իւրաքանչիւր ի ժամու դասախօսութեան»։

Ապա յետ երկար վիճարանութեան, հաւանութեամբ մեծի մասին ժողովականացս սամանեցաւ. «Քանզի ժամք սերտողութեան սակաւ են (ընդ ամենայն

ժամք երեք) ոչ միայն ի պատրաստել աւուր աւուր դասս հինգ կամ վեց, այլեւ ի գրել զոմանս ի դասուցդ, իւրաքանչիւր ոք յուսուցչաց քան ի գործ դիցել ի ժամու դասատուութեան տալ գրել աշակերտաց եթէ ոչ զբոլոր դասն՝ զէթ մասն ինչ անոր, այնպէս զի մի՛ տեսեցէ գրութիւն դասունս առաւել քան զկես ժամու։

Կարգապահ ճեմարանիս Բ.Գալստեան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, դ.6, թ.9-10: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՎԵՏԻՔՑԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԻ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻՆ ՃԵՄԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄՈՍԿՆ

14 Հունիսի 1879թ.  
Նախիջեան

Նախիջեան քաղաքը՝ թէլեւ գտնվում է Կովկասեան աշխարհի ամենավերջին ծայրում եւ համարվում է նոցա ամենայնեօրին քաղաքն, որի բնակիչք համարեալ ըստ մեծի մասին աղքատք եւ աննշմարելի են բազմամարդ պարսիկ մահմետականաց մէջ, բայց այնուամենայնիւ ուսումնասիրութեան փոթիք եւ ուսման յարգանքը ճանաչելուժ, պակաս չեն միւս քաղաքացիներէց: Նոյնպէս անծանօթ չեն մեր այս փոքրաթիւ քաղաքացիները, Ձերդ Վեհափառութեան, որ անդադար տքնում էք մեզապիսի յետին եւ աղքատ քաղաքացուց մէջ տարածելու գիտութեան եւ իմաստութեան յոյր Վեհափառութեանդ հիմնած հռչակաւոր ճեմարանական ուսումնարանի միջոցաւ, որը պիտի խոստովանի ամենայն Հայազգի որ, երախտագէտ հոգով եւ օրհնարանէ Ձեր անմահ յիշատ որդի: Ինչպէս յիշեցի Ձերդ Վեհափառութեան բարի նպատակն է՝ ընդունել նոյն ճեմարանի որդեկութեան ուսումնարանի տեղերից, ուր չկայ լուսավորութիւն եւ այնպիսի մարդկանց որդիք, որոնք չունին կարողութիւն իրենց սեփական ծախք դաստիարակել տալ նոցա ըստ արժանոյն:

Վեհափառ տէր, ես իբրեւ բազմաթիւ եւ աղքատ գերդաստանի հայր եւ միւլեոյն ժամանակ տեսնելով Արշակ եւ Լեւոն անուն որդւոցս բնական ձգտումն դէպի ուսումն եւ համեստ բնաւորութիւնները, որոց առաջինը 14- ամաց եւ երկրորդ 12 ամաց, ծնողական պարտքը եւ զգացմունքը անդադար ինձ տանջում են հասուցանել նոցա մի կարտեալ ուսման, որը պիտանացու լինէր թէ ազգին եւ թէ նոցա: Բայց այս իմ ծնողական մտատանջութեան կարծիս փարատեցաւ, նկատի ունենալով Ձեր սրբութեան ազգօգուտ նպատակները եւ ընդունելութիւնը աղքատ եւ անկարող ծնողաց որդւոցը որդեգրութեան ազգաչէն ճեմարանիդ մէջ ազգի պիտոյից համար: Առաի Ձեր սրբութեան առատ շնորհից եւ Հայրական խնամքից յետ չմնալու համար, այսու խոնարհ աղերսագրութեամբ գիմում եմ յուսով հասարակաց հօրդ եւ աղաչում հիշատակեալ որդւոցս Արշակայ եւ Լեւոնի, արժանի առնել որդեգրութեան սրբութեանդ, ընդունել տալով ի մեծի ճեմարանդ: Յայտնելով միանգամայն հիշատակեալ որդիքն իմ արդէն ավարտած են համարվում իրենց ուսումն տեղւոյս ծխական հոգեւոր դպրոցում եւ որպէս յուսամ կարողք են նոքա այլեւս պատրաստել ճեմարանի կանոնագրութեանց պահանջի համաձայն, որոնք եւ ընդունելու ժամանակ իրենց հետ կներկայացնեն պատշաճական վկայաթղթերը:

Խոնարհ ծառայ Վեհափառութեան Ձերում՝ Ստեփանոս Ավետիբեանց

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, դ.3, թ.14 եւ շրջերես: Բնագիր: Ձեռագիր:

**ՄԿՐՏԻՋ Ա ՎԱՆԵՑԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸՆ ԸՆԹԱՐԱՐԱՆԻ ՍԱՆԵՐ ԿՈՄԻՏԵԱՍ, ՀՈՒՍԻԿ, ԵԶԵԿԿ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎՎԱԳԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԿՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՆ ՍԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

4 Հուլիսի 1896թ. Վաղարշապատ

Վարչութեան Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյս ս.էջմիածնի: Կամեցեալ մեր յնույ Հետզհետէ զմեծ կարօտութիւն սեկեղեցոյս եւ ճեմարանիդ վասն եկեղեցական անձանց զարգացելոց ի Հրահանգս բարձրագոյն ուսմանց, գորմէ յաճախակի բանք եղեն մեր ընդ անդամոց վարչութեանդ, տնօրինեցաք վասն սանուց ճեմարանիդ տ[եր] Կոմիտաս եւ տ[եր] Յուսիկ վարդապետաց զիմէլ ի Համայնարան արտասահմանի՝ ի կատարելագործութիւն ուսմանցն, որք եւ արդէն Հասել կան ի տեղիսն: Իսկ այժմ տնօրինեմք եւ վասն երկուց այլոց սանուց ճեմարանիդ ի միաբանից Մայր Աթոռոյս, տեղինկ վարդապետի եւ Մուշեղ սարկավազի, զի եւ նոքա փութեացին զիմել ի կատարելագործութիւն ուսմանցն, առաջինն յարտասահման, իսկ երկրորդն ի ս.Պետէրբուրգ: Ձերձաւոր վէրահասութիւն ընթացից ուսմանցն եւ մատակարարութեան ծախուց նոցա զորեցուն յանձն առնեմք վարչութեանդ ըստ յետագայիցս:

Ա. Ի պատճենից գրութեան Մարգարեական ընկերութեան Հայոց որ ի Բագու ի 27 ապրիլի տոյն ամի թ.29 եւ յայտարարութեան մեծապատիւ պ.Բերտապարի Գրիգորեան Թումայեանց յ31 մարտի այս ամի կցելոց ընդ ամին, վարչութիւնդ տեսչէ, զի առ մարգարեական ընկերութեանն Բագուի արհի գումար քստասուն Հազար ուրբեաց (40.000 ու.), տոկոսիք որոյ յատկացեալ են ի կողմանէ կտակարարացն ի պէտս ծախուց ընթացաւոր սանուց ճեմարանի զեզերելոց ի բարձրագոյն ուսմունս: Մարգարեական ընկերութիւնն պարտի յերկուս նուագս ի տարւոյ զ տոկոսիս գանձելիս ի 40000ն առաքել առ վարչութիւնդ՝ ի մատակարարութիւն ըստ Հրահանգաց մերոց: Արդ. ի գումարէ այտցիկ տոկոսեաց սահմանեմք տայ վարդապետացն Յուսիկն եւ Եզեկայ ամ ըստ ամէ ուրբիս մի Հազար վեց Հարիւր (1600), իւրաքանչիւրումն ուրբիս ութ Հարիւր (800), ցորչափ ժամանակս կացցեն մնացին նոքա ի վարժս ուսմանցն, իսկ Եզեկի վարդապետին տայ այժմէն իսկ վասն ծախուց ճանապարհի մի 150 ուրբի, այլ եւ ի մնացորդաց տոկոսեացն յաւելոյլ երիս Հարիւր ուրբիս ի վերայ թոշակի Կոմիտաս վարդապետին, որում բարերար Հանդիսացեալ է բարիպաշտօն Մանթաշեան յասկացոցանելով մնա 6000 ուրբի ի տարին:

Բ. Ձ Մուշեղ սարկավազն առաքեմք ի Պետէրբուրգ ի Հաշիւ տոկոսեաց զրամագլխոյն կտակելոյ ի յիշատակ Գէորգայ Գրիգորեան Փրիզդնեանց՝ յորդոց նորին, որոյ արժեւորման (9000 ուրբուոյ) գտանի ի գանձարանի Մայր Աթոռոյս, ուրանոր գանձեալ են տոկոսիք գումարին յերկուց ամաց Հետէ եւ գանձին 450 ուրբի ամ ըստ ամէ: Վարչութիւնդ ունի յիւրաքանչիւրում նուագի ի դէպս կարեւորութեան խնդրել եւ առնուլ զՀարկաւոր գումարն ի Սինոդէ ս. էջմիածնի, որում եւ տուեալ եմք Հրահանգս վասն այտորիկ, եւ մատակարարել սարկավազին ցաւարտ յիւլի ընթացիցն Համայնարանական ուսմանց, տայով միանուագ ի ծախս ճանապարհի ուրբիս մի Հարիւր (100) եւ ապա ի պետս այլեւայլ ծախուցն ի մայրաքաղաքին ուրբիս 700 յերիս նուագս ի տարւոյ: Սարկավազն պարտի ուսանել զիրաւարանութիւն եւ ստանձինն զեկեղեցական իրաւագիտութիւն:

Գ. Պարտս զենեմք վարչութեանդ անձանձիւր փութով Հոգ անել վասն զորեցուն դոցա, առ իւրաքանչիւրում ումեքի նոցանէ պատշաճ Հրահանգս յաղագս ուսանելի տարակալիցն եւ յերկուս նուագս ի տարւոյ Համարս պահանջելով ի նոցանէ զընթացից ուսմանցն՝ զեկեղեցանել մեզ գայնմանէ ի գիտութիւն եւ ի տնօրէնութիւն:

Մկրտիչ Ա. կաթողիկոս

ՀԱԱ. ֆ.Պ- 312, ց.1, գ.41, թ.3-4: Բնագիր: Զեռագիր:

**ՍԻՆՈՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՄԵՂՎԻՆՅԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՈՒՄԱԿԱՆ ԵՊՍՏԱԿՆԵՐՈՎ ԸՆԹԱՐԱՐԱՆԻՆ 25000ռ. ԿՏԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

24 օգոստոսի 1898թ. Ս.էջմիածին

Ձեկեղուցումն ըստ կտակի Հանգուցեալ Գրիգորի Մեղուինեանց Տիխիսեցոյ պայմանք զործարութեան տոկոսեաց կտակեալ ի նմանէ 25000 ուրբի զրամագլխոյ, որպէս երեւի ի գործոյն տնտեսական մասին Սինոզիս թ. 56/97, են այտորիկ նախ՝ ցորչափ ճեմարանն Սրբոյ էջմիածնի ի գոյութեան իցէ, տոկոսիքն պարտին ի կիրարկանիլ միմիայն ի վերայ ուսումնական կրթական պիտոյից նորին ճեմարանի, իսկ ի գաղարեյն ի գոյութէնէն ճեմարանին, թեմական դպրոցք կամ ծխական Հոգեւոր ուսումնարանք Հայոց, ըստ առաւել կարօտութեանց, պարտին օգախ ի տոկոսեացն՝ ի նոյն նպատակ, եւ կամ ըստ բարեհաճ կամաց ընտրութեան պետին եկեղեցւոյ Հայոց ի կիրառցին ի վերայ ծախուց ուսումնառութեան Հայ պատանեաց ի բարձրագոյն ուսումնարանն Ռուսիոյ կամ արտասահմանի: Եւ երկրորդ՝ ի գործոյն Հաշուարարական մասին Սինոզիս, որ միուսն այլք իսկ կտակի, տեսանի, զի տոկոսիք կտակեալ զրամագլխոյն յինին ի տարին ինն Հարիւր երեսուն եւ ութ ուրբի վաթսուն կոպէկ (938ւ. 60դ.): Հրամայեցին: Սինոզս գանձեալ ունելով արդէն կտակաւանդ գումարն քսան եւ Հինգ Հազար (25000) ուրբեաց յանուն ճեմարանի Սրբոյ էջմիածնի, կտակելոց ի Հանգուցեալ Գրիգորէ Մէղուինեանց, սունէ զտնօրէնութեան իւր ըստ մտաց կտակարարին ըստ Հետեի լոյս՝ նախ պատուէր Հրամանի տայ գանձապահի Սինոզիս ընկալնուլ յարբուցի զրամատանէ (բանկ) յիւրաքանչիւր երիս ամիս գտոկոսիս յիշեալ 25000 ուրբեաց կտակագումարին եւ տայ վարչութեան ճեմարանի Սրբոյ էջմիածնի, ըստ օրինի ստորագրութեամբ եւ երկրորդ՝ որովհետեւ ըստ այժմ կտակի ի վերայ նախահաշու ճեմարանին յաւելեալ յին ինն Հարիւր երեսուն եւ ութ ուրբի վաթսուն կոպ. գումարն, ուստի ի կազմելն գնախահաշիւ նորին ճեմարանի վասն առաջիկայ 1899 ամի ունել ի նկատի եւ գայն գումար եւ ըստ այժմ կարգադրել: Իսկ վարչութեան ճեմարանին պատուիրել Հրամանագրութեամբ, զի ընկալեալ գտոկոսիս կտակաւանդ գումարին Մէղուինեանցի ի կիր արկէց գայնս ըստ պարզ իմաստի 14-րդ յօդուածոյ կտակի Հանգուցելոյն, եւ զգործարութէնէն զրամոցք տեղեակ սունել զՍինոզս:

Անգամ Սինոզի՝ Աշոտ վարդապետ

ՀԱԱ. ֆ.Պ- 312, ց.1, գ.960, թ.2 եւ չըը: Բնագիր: Զեռագիր:

**ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԾՆՈՐ ՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԸՆԹԱՐԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25 -ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

16 սեպտեմբերի 1899թ. Սիմֆերոպոլ

Քաղաքակրթված եւ Հզոր ազգերի երջանիկ զավակներն ազատ ու ապահով եւ նախանձելի վիճակի մէջ, ուսման եւ գիտութեան նորանոր գեներբով սպառազինված՝ հսկայաբայլ զիմում են դեպի առաջ: Նրանց Հայտնի Հանճարներն իբրեւ քաջ արվեստագետներ, ուսման, գիտութեան եւ արհեստների գանազան ճյուղերը զարգացնելով եւ մշակելով, Հետզհետե կատարելագործեցին եւ ընդհանուր մարդկութեան Համար մեծամեծ բարիքներ պատրաստեցին: Հայոց ազգն եւս լուսավորութեան եւ քաղաքակրթութեան կենդանարար պտուղների Համան ու արժեքը իբրեւ գիտցող եւ յուրացնող տարր՝ անպատճառ արձակ ու Համարձակ նա կարող էր լուսավորութեան, մտավորական առաջադիմութեան եւ քաղաքակրթութեան ասպարեզում նախընթաց կարապետ Հանդիսանալ իւր զրացի

ազգիների մեջ: Բայց տարարախտարար, ամբողջ փոքր Ասիայում, միմիայն Հայոց ազգն ընդունած լինելով բրիտանական լոյս Հավատը, նրա դրացի մեծ եւ փքոր ալլախրոն, մոլեռանդ եւ արյունարբու ազգեր, երկար դարերի ընթացքում Հայաստան աշխարհը անընդհատ կռիվների եւ արյունաշագփա պատերազմների ասպարեզ դարձրին: Բազմաչարչար մեր Հայ ազգն իւր քաղաքական անկախութիւնը կորցնելուց հետո, թողեց նա զբախտանման իւր Հայրենի երկիրը, իւր արտն ու գուժանը, իւր կիսակործան տաճարներն ու սրբավայրերը, իւր պանծալի նախնիքների անմոռանալի շիրիմները եւ պանդխտութեան ջուրը ձեռքին՝ սկսեց գաղթել երկր երկիր, հեռու եւ անծանոթ աշխարհներ, գեթ միայն ազատ շունչ բաշխելու համար: Աշխարհիս չորս կողմը ցիրուցան եղած Հայոց թշուառ ժողովրդի սիրտն ու Հոգին ի մի կապող միակ աստվածակերտ օղակ եղել է եւ է Հայաստան: Բայց բազմաչարչար սուրբ է եկեղեցին իւր անձնփեր, բանիմաց եւ բնտիր Հոգեւորականներով: Բայց տարարախտարար, տարազեպ եւ աննպաստ քաղաքական Հանգամանքների շնորհիվ, Հայոց եկեղեցին չունի ժամանակին պահանջներին հարմարավոր եւ կրթված յանպիսի Հոգեւորականներ, որոնք կարողանային Հայոց քարացած զգացմունքները Հաղեցնելով, սերմանել նրանց սրբերում մարգարայ փրկիչ երկնային եւ անմահ գաղափարները: Գաղափարներ՝ կրոնական եւ բարոյական, որոնք մարդոց քարացած եւ ամայի անապատ դարձած սրտերը սրբում, մաքրում եւ ազնվացնելով՝ աստվածեղեն անուշաբույս, սրբութեան խորան է դարձնում: Հավերժահիշատակ Գեւորդ Դ Հոգեւոր- Հայրապետը՝ սրտան աչքերով դեռեց իւր սիրեցյալ Հայ Շոտի եւ մեր բազմաչարչար սուրբ եկեղեցու ամենաանհրաժեշտ կարիքները եւ պիտույքները: Եվ այս ամենահարկավոր կարիքներին լրումն տալու համար, ձեռնարկեց նա երկու դարավոր եւ ազգու միջոցներ դարձադրել: Այն է, նախ՝ Հայոց բազմաչարչար սուրբ եկեղեցու համար նախապատրաստել բնտիր եւ բանիմաց Հոգեւորականներ, որոնք կարողանային նրա (Հայոց ս. եկեղեցու) նսեմացած փառքն ու շուքը դորացնել ու բարձրացնել եւ երկրորդ՝ Հայ ժողովրդի սիրտն ու Հոգին կրթող ու դաստիարակող ժրջան եւ անձնփեր ուսուցիչներ պատրաստել: Այս վեճ նպատակին հասնելու համար մեծագործ Հայրապետը հատուկ հեռաեստութեամբ, հղացավ մի Հոգեւոր ճեմարան հիմնել, Հայոց Արարատյան աշխարհի կենտրոնում՝ մեր Հնադարյան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի ծոցում: Ընշտ սրանից 25 տարի առաջ, 1894թ. Մայր Աթոռի արեւելյան կողմը, Հայոց պատմական Մասիսի հանդեպ, մեր Հոգեւոր ճեմարանի համար նախօրոք պատրաստված փառահեղ շինութեան մեջ, Գեւորդյան ճեմարանի բացման եւ օրհնութեան շքեղաշուք հանդես կատարվեցավ: Վեճ հիմնադիրը փառավոր հանդեսի գլուխն անցած՝ ուրախ ու զվարթ եւ ժպտալով նա խաչակնքում եւ օրհնում էր իւր Հոգեւոր զավակներին, իսկ աջ եւ ձախ կողմից շար ի շար ընկած Հոգեւորականութեւնն ու բազմաթիվ աշակերտներ պատշաճավոր շարականներ երգելով՝ համբարայլ գիմում էին ճեմարանի հյուսիսային կողմը եւ խուռն բազմութեւն հետեւում էր հանդեսին: Ընտարանի բացման հանդեսի օրը՝ նրա տեսուչը՝ մեր Հայտնի Հայագետ, բարեհիշատակ Գարբիէլ] արքեպիսկոպոս] Այվազյանց մի գրաբատ ճառ կարդաց: Ահա այն, օրից մինչեւ ցարդ՝ անցել է մի բառորդ դար եւ այսքան տարիների ընթացքում Հայոց միակ բարձրագույն կրթարանը՝ շատ չար ու բարի օրեր է տեսել, շատ ահարկու մրրիկների եւ կործանիչ փոթորիկների է հանդիպել, բայց փառք եւ գոհութեւն Արարչին, որ մեծ քահանայապետի բազմաչարչար նահատակի եւ Հայաստան աշխարհի ու Գրիգոր Լուսավորչի սրբազան աջը՝ ամեն փորձանքներից եւ փտանդներից նրան ազատ է պահել ու պահպանել: Այսօր Հայագրի բնտիր եւ բանիմաց զավակները երախտագիտական լի զգացմամբ օրհնելով վեճ հիմնադրի անմահ հիշատակը, համեստ կերպով տոնում է նրա հիմնարկած ուսման տաճարի գոյութեան 25-ամյա հոբելյանը: Մայր Աթոռի Գիւորդյան ճեմարանի արդյունաշատ գոյութեան 25-ամյա տարեդարձի հիշատակը՝ իսկապես մեր կրոնական եւ բարոյական վերածնութեան քաղցր հիշատակն է: Ուրեմն՝ կեցցե՛ մեր Մայր Աթոռ, կեցցե՛ վեճ[ափառ] Հայրիկ եւ Հայրապետութեւն Հայոց, կեցցե՛ Հայն եւ Հայութեւն, կեցցե՛ Գեւորդյան Հոգեւոր ճեմարան եւ ուսուցչական խումբը: Եվ եւ նվաստ, որպես նախկին աշակերտ ս.էջմիածնի ժառանգավորաց Հոգեւոր դպրոցի, ի խորոց սրտե մաղթում եմ առ ամենաբարձրյալն Արարչին, որ մեր լուսավորութեան, կրոնական եւ բարոյական վերակենդանութեան այս միակ

լուսատու փարոքը, Հաստատուն, անխախտ եւ անասան պահե դարեկար եւ սերնդե սերունդ, ի պայծառութեւն մեր բազմաչարչար սուրբ եկեղեցւոյ եւ ի պարծանս մեր թշուառ Հայ ազգի, այժմ եւ Հավիտյանս, ամեն:

Ղազարոս քահանա Հովսեփյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.46, թ.82-83: Բնագիր: Ձեռագիր:

№ 9  
ՄԵՍՐՈՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԱՆԻՊՐՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՃԵՄԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՐԲԵՐ  
ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 սեպտեմբերի 1899թ.  
Ա.Էջմիածին

Տկարութեան պատճառով Երնջակ սուրբ Կարապետի վանքին բացակա լինելով՝ անկարացա համակրանաց հավաստիքը նաեւ նյութականով ցոյց տալ դեպի ճեմարանը եւ նորա վարչութեւնը: Ուստի անձամբ փութացա մասնակից, խնդակից եւ ուրախակից լինել ճեմարանի քսանեւհիղ ամյա հոբելյանի նշանավոր հանդեսին եւ ի ցոյց անկեղծ համակրանաց նվիրեմ հասուն ճեմարանի 50 օրինակ տպագիր եւ ձեռագիր կրոնական եւ պատմական գրքեր, ընդ որս եւ հանգուցյալ Գարբիէլ Արքեպիսկոպոս Այվազյանի ձեռագիր գրած ճեմարանի պատմութեւնը:

Մեսրոբ արքեպիսկոպոս Սմբատյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.46, թ.88: Բնագիր: Ձեռագիր:

№ 10  
ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ  
ՆՈՎԱԵԹՅԱՆԻՆ՝<sup>10</sup> ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 օգոստոսի 1905թ.  
Վաղարշապատ

Հոգեշնորհ Տ.Գարեգին վարդապետի Յովսէփեան, տեսչի թեմական Հոգեւոր դպրանոցի Հայոց երեւանայ, հարագատի Մայր Աթոռոյ ողջոյն եւ օրհնութեան հարապետական:

Դու, որ ի տղայ տիոց սնեալ եւ զարգացեալ ես ընդ յարկաւ Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյ եւ յետ բոլորելոյ գլխակատար դասընթացս նորին, ուղեւորեցար ի համայնարանս Գերմանիոյ առ ի կատարելագործել յուսմունս, զկնի վերադարձիդ անտի հաճութեամբ մերով կարգեցար ի մէնչ ի պաշտօն ուսուցչութեան աստուածաբանական գիտութեանց ի ճեմարանիս, զոր եւ վարեցիր խղճի մտք յընթացս քանի մի ամաց, գոհ կացուցանելով զմեզ եւ զաշակերտնայն միանգամայն: Այլ սակայն հարկադրեալ մեր ի բերմանց հանգամանաց ժամանակի, թոյլ տուար քեզ փոխարիլ պաշտամամբ տեսչի ի թեմական Հոգեւոր դպրանոցն Հայոց երեւանայ ըստ բնտրութեան պատուարժան Հոգաբարձութեանն: Վարեալ քո զպաշտօն տեսչի այն դպրանոցի զամս երիս, տեսար քեզ ժիւր եւ եռանդուն, որ զհետ լինէիր բարեկարգութեան յանձն եղելոյ խնամոցդ Հոգեւոր կրթարանին, ըստ ուսումնականին ասեմք եւ ըստ վարչականին:

Տեսեալ մեր գիտրձառութիւն եւ զթաղանթութիւն քո եւ մանավանդ լուեալ մեր բազմիցս զգոհունակութիւն Հոգաբարձութեանն զխոհեմ եւ աշխուշ կաւալարութեանէդ, բարուք համարեցաք կոչել քեզ ի պաշտօն տեսչութեան Հոգեւոր ճեմարանիս մերոյ ի բարոյական եւ յուսմունական յառաջադիմութիւն նորս: Պատուիրեմք քեզ շուտ ընդ փոյթ յանձնել զհաշիւս եւ զամենայն տեսչութեան գործս Հոգաբարձութեան դպրանոցին երեւանայ եւ փութալ ի Մայր Աթոռս առ ի ստանձնալ զնոր պաշտօնդ: Այլ եւ յանձն ասնեմք քեզ կոչել զկարող անգամս միաբանութեան Մայր Աթոռոյ յուսուցչութիւն կամ յայլ պաշտօն,

նախապէս ստանալով առ այդ զհաճութիւն մեր:

Տէրն տէրանց, որ տուիչն է ամենայն բարութեանց եւ իմաստութեան, լցուսցէ զհոգի եւ զմիտ քո շնորհօք, առ ի անթերի լնուլ զիրեայսն ի վերայ քո զպարտիս:

Ողջ լեր գօրացեալ ի Տէր եւ օրհնեալ ի մենջ: Ամէն:

Մկրտիչ կաթողիկոս

ՀԱԱ, ֆ.Պ-312, ց.1, գ.173, թ.126 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 11

Ս.ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐ ՀԻՂԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՇԽԱՆ ԱՔԱՄԵԼԻՔ ԼԱԶԱՐԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱՇՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆԸ: ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹՈՇԱԿԱՌՈՒ ՍԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18 դեկտեմբերի 1909թ.  
Ա.Պետերբուրգ

*В ответ на отношение академии от 7 ноября с/з за N 418, совет настоящим сообщает, что к имеющимся уже 30 стипендиатам Академия может зачислить с 1-го января 1910 года еще десять стипендиатов.*

*Таким образом с указанного времени в Эммиадзинской Духовной Академии будет всего сорок стипендиатов имени графа Ивана Лазаревича Лазарева, список коих, по примеру прошлых лет, совет просит представить своевременно.*

Председатель князь Абамелик Лазарев

ՀԱԱ, ֆ.Պ-312, ց.1, գ.188, թ.89. Բնագիր: Մեքենագիր:

N 12

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԱՐԱՍՈՎԻ (ԹՈՐՈՍՅԱՆ) ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՋ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ: ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՇՆԵՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 40000 Ռ. ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 Հունվարի 1912թ.  
Մոսկվա

*Ի պատասխան թիվ 881, Հունվար 16 թվակիր Ձեր ազնվական գրության, պատիվ ունեմ ծանուցանել, որ այսօր ս.էջմիածնի սինոդի անունով փոխադրեցի քառասուն Հազար ռուբլի (40000 ռ.) գումարը եւ փոխադրության տոմար ուղարկեցի ամենապատիվ ա. տեղակալին: Հիշյալ գումարով պետք է կառուցվի ճեմարանին առնթին բնական դիտությունների բաժանմունք, ինչպես արդեն Ձեզ Հայտնի է (отделение естественных наук при Эммиадзинской Духовной Академии) մեր չորս եղբայր Հիշատակին (Ալեքսանդրի եւ Միքայելի ու Հանգուցյալ Ղազարի եւ Գարրիելի թորոսյանց):*

*Անշուշտ այդ քառասուն Հազար ռուբլին կդնեք ընթացիկ Հաշվով գրամատանը եւ ներկա գարնան սկզբն իսկ, ինչպես որ Հայտնեցիք, գործը կսկսեք:*

*Միանգամայն լիահոյս ենք, որ այդ գործը Ձեր անմիջական ղեկավարությամբ կսկսվի, կավարտվի եւ կկազմակերպվի:*

*Ձեր ձեռնարկելիք աշխատություններուն Համար իմ, Միքայելին եւ Հանգուցյալ եղբայրներու ծառանդներուն կողմանե ընդունեցեք կանխավ ջերմ շնորհակալություններս:*

*Մ'նամ խորին Հարգանաց Հավաստիք*

Ալեքսանդր թորոսյան

*Մանթոնություն. Ալեքսանդր թորոսյանից ստացվեց 40 Հազար ռուբլի գումարը եւ փետրվարի 11-ին զբվեց Թիֆլիզի առևտրական բանկի երեւանյան բաժանմունքում ս.Սինոդի անունով Հերեյալ կերպով:*

*20 Հազար ռուբլին մի տարով 5% -ով:*

*10 Հազար ռուբլին վեց ամսով 4% -ով եւ*

*10 Հազար ռուբլին ընթացիք Հաշվով 3 1/2% -ով:*

*Բնական դիտությանց բաժանմունքի շենքը ի Հիշատակ թորոսյան եղբայր սկսվելու է 1912թ. գարնանը:\*\*\**

Բազրատ Վարդապետ

ՀԱԱ, ֆ.Պ-312, ց.1, գ.978, թ.30 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 13

ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 Հունվարի 1914թ.  
Վաղարշապատ

*Գերապատիւ նախագահի տ. Բազրատ եպիսկոպոսի եւ մեծարգոյ անգամոց մանկավարժական խորհրդոյ մասնագիտական բաժնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանի, Հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջու եւ օրհնութիւն Հայրապետական:*

*Քաջայայտ է Ձեզ, զի յ30 յուլիսի 1912 ամի թ. 698 մակագրութեամբ մերով Հաստատեցաք զմշակեալ ի ժողովս Ձեր գծրագիր յարանական բաժնի Հոգեւոր ճեմարանից, որո Հելով զբարձրագոյն բաժինն յերկուս մասնագիտութիւնս՝ յաստուածարանական եւ ի Հայագիտական բաժանմունս:*

*Գիտէք նոյնպէս, զի ի նմին իսկ 1912 ամի կոնդակաւ մերով յ8 մայիսի թ. 339 բացաւ եօթներորդ նոր դասարան զպրանոցական բաժնի ճեմարանից եւ ի 27 մայիսի 1912 ամի թ. 393 մակագրական կարգադրութեամբ մերով Հաստատեցաք զդասաբաշխումն զպրանոցական բաժնի:*

*Զարդիս ի նկատ առեալ մեր զայս ամենայն Հանգամանս, առաւել եւս անհրաժեշտ վարկանիմք կազմակերպել եւ վերածել զյսարանական բաժնին յիսկական բարձրագոյն զպրոց բոս տրամադրութեան եւ թոյլտուութեան կայսերահաստատ կանոնաց 1874 ամի:*

*Առ այս ի նկատ առեալ մեր զյայտարարութիւն գերապատիւ նախագահից մանկավարժական խորհրդոյց յ8 յուլիսի անցելոյ 1913 ամի, որով առաջի առնէ մեզ զգլխավոր Հիմունս ապագայ կանոնադրութեան բարձրագոյն բաժնի, եւ Հաճ եւ Հաւան գտեալ մեր ընդ առաջարկեալ սկզբունս բարձրագոյն զպրոցի, այսու Հայրապետական կոնդակաւ մերով պատուէր տամք Ձեզ նախ՝ մշակել զմանրամասն կանոնադրութիւն բարձրագոյն բաժնի ճեմարանից Համաձայն զլիսուոր սկզբանց, յիշատակելոց ի յայտարարութեանց, երկրորդ՝ եթէ մանկավարժական խորհուրդց անհրաժեշտ եւ օգտակար Համարիցէ վերաքննել զորեւէ խնդիր ի գլխավոր սկզբանց, ստանալ նախապէս զգրաւոր թոյլտուութիւն մեր, երրորդ՝ եթէ խորհուրդց անհրաժեշտ Համարիցէ Հրաւիրել զփորձառու եւ զձեռնՀաս անձինս վասն մշակելոյ գնախագիծ մանրամասն կանոնադրութեան, զէկուցանել մեզ եւ ստանալ ի մէնջ զթոյլտուութիւն եւ չորրորդ՝ առաջի աչաց ունելով զկանոնադրութիւնս Հոգեւոր ճեմարանից եւ բարձրագոյն զպրոցաց, զպայմանս եւ զՀանգամանս Մայր*

\*\*\* 1912թ. սեպտեմբերի 29-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից կատարվել է բնական գիտությունների Համար կառուցվելիք շենքի Հիմնաքարի օրհնությունը: «Առարատ» ամսագիր, 1912թ., Հոկտեմբեր-նոյեմբեր, 883 էջ: Ենթադրվում է, որ պատերազմը խչընդոտել է շենքի կառուցմանը -Մ.Ա.:



Աթոռոյս եւ ճեմարանիդ, նաեւ զպահանջս եւ զկարիս ազգային կենաց մերոց, ամենայն խոհականութեամբ եւ հեռատեսութեամբ մշակել եւ խմբագրել զնախագիծ մանրամասն կանոնադրութեան եւ փութով ներկայացուցանել մեզ ի տնօրէնութիւնս:

Մագիթեմք ի Տեառնէ Ձեզ կար եւ զօրութիւն վասն յաջողութեամբ ի կատար ատելոյ զեղեայս ի վէրայ Ձեր զպարտականութիւնս յօգուտ եւ ի բարգաւաճումն Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյս:

Ողջ լէրուք, զօրացեալ ի Տեր եւ օրհնեալ ի մէնջ, ամէն:

Գեորգ Ե կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.64, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 14

ԿԱԹՈՂՆԻԿՈՍԻ ԳԻՎԱՆԱՊԵՏ ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆԸ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ԾԵՆՔԸ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 Հուլիսի 1915թ.  
Ա.էջմիածին

Ազգիս Վեհափառ Հայրապետը, տեսնելով տաճկահայ իր հոտի սոսկալի վիճակը, ս.էջմիածնում ապաստանած տասնյակ Հազարավոր փախստական գաղթականներին, առանձնապես թշվառ կանանց ու մանուկների հուսահատ դրութիւնը եւ վարակիչ ծանր հիվանդութիւնները, բարեհաճեց կարգադրել, որ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանում այս ուսումնական տարին դասատուութիւնը սկսվի ոչ սեպտեմբերի 1-ից, այլ նոյեմբերի 1-ից:

Հայտնելով Հայրապետական սուլն կարգադրութեան մասին, դիվանս հանձնարարում է վարչութիւնը անմիջապէս տեղեկացնել բոլոր աշակերտներին, որպէսզի զան էջմիածին նոյեմբերի 1-ին, քանի որ ննջարանը վերածված է հիվանդանոցի, իսկ ճեմարանի չենքը ժամանակավորապէս Հատկացրած է անտեր ու Հյուծված մանուկների ապաստարանի համար:

Դիվանապետ՝ Բագրատ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.214, թ.84, 84 չըջ: Բնագիր: Ձեռագիր:

N 15

ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՆԿԵՈՐ ՀԻՆ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՄԱՐՄՆԻ ԸՆԳՈՒՆԱԾ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 Հոկտեմբերի 1917թ.  
Ա.էջմիածին

Ճեմարանի աշակերտական ներկայացուցչական մարմինը ամսոյս 24-ի եւ 26-ի նիստերում կայացրեց հետեւյալ որոշումները.

1. Պաշտոնական աղօթքը եւ եկեղեցի գնալը վերացնել:
2. Վերջին եւ նախավերջին դասարանների աշակերտները ազատ ժամերին իրավունք ունեն գուրս գալու առանց վերակացուններին հայտնելու, իսկ մյուս դասարանների աշակերտները թուլյութութիւն ստանալով ներկայացուցչական մարմնի հերթապահ անդամից՝ կարող են դուս գնալ:
3. Մանկավարժական խորհրդում աշակերտութիւնը ունենալու է 6 ներկայացուցիչ, որոնցից 3-ը վերջին երկու դասարաններից՝ վճռական ձայնով, իսկ մնացած 3-ը՝ խորհրդակցական ձայնով, ստորին 3 դասարաններից:
4. Տնտեսական հանձնաժողովում աշակերտութիւնը ունենալու է 2 վճռական ձայն:

5. Մատենադարանում ունենալ մի ներկայացուցիչ:
6. Աշակերտական կազմակերպութիւնները ճանաչել օրինավոր:  
Այսու պարտք ենք համարում հայտնել, որ վերոհիշյալ որոշումներից 1 եւ 2 գործադրութեան մեջ են մտնում հանձնված օրից:

Ճեմարանի Աշ. ներկայացուցչական մարմնի նախագահ՝ Վարդան Դեմիրճյան  
Քարտուղար՝ Ն.Ա.Հարոնյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.214, թ.159: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթութիւններ

1. Սինոզ - Հայ եկեղեցու բարձրագույն ատյան կաթողիկոսի նախագահութեամբ: Հիմնվել է 1837թ. փետրվարի 22-ին, լուծարվել 1924-ին, տեղը գիջելով Գեորգույն Հոգեւոր խորհրդին:
2. Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան Գրիգոր Պետրոսի) 1813-1882թթ., եկեղեցական Հասարակական գործիչ, 1866-ից Ամենայն Հայոց կաթողիկոս, հիմնադիրը «Գեւորգյան ճեմարանի», «Արարատ» ամսագրի, էջմիածնի թանգարանի:
3. Գարրիել Այվազովսկի (Այվազյան) Կոնստանդնի - 1812-1880թթ., մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, Հայ եկեղեցական գործիչ, «Բազմապեղ» ամսագրի հիմնադիր եւ խմբագիր (1843-48թթ.), Փարիզի Հայկազյան վարժարանի հիմնադիր, «Մասյաց աղավի» ամսագրի խմբագիր եւ հրատարակիչ:
4. Голос - քաղաքական-գրական ամենօրյա թերթ, լույս է տեսել Ս.Պետերբուրգում 1863-1883թթ.:
5. Всемирная иллюстрация - պատկերազարդ շաբաթաթերթ, հիմնադիր Գերման Գուպպե, լույս է տեսել Ս.Պետերբուրգում 1869 թվականին:
6. Մշակ - Հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ, լույս է տեսել Թիֆլիսում 1872-1921թթ. Հիմնադիր ու խմբագիր Գր.Արծրունի: Խմբագիրներ են եղել նաեւ Ալ.Քարանթարը, Հ.Առաքելյանը, Լեոն, Տ.Հախումյանը:
7. Մեղու Հայաստանի - քաղաքական-քանասիրական եւ առևտրական լրագիր: Լույս է տեսել 1858-1861, 1863-1872թթ. Թիֆլիսում: Հրատարակիչ՝ Հ.Էնֆիաճյան, խմբագիր Ստ.Մանգինյան:
8. Մկրտիչ Ա Վանեցի, նրիմյան Հայրիկ (1820-1907թթ.) - Հասարակական-քաղաքական գործիչ, 1893-ից Ամենայն Հայոց կաթողիկոս, «Արծիվի Տարնի» շաբաթաթերթի հիմնադիր, Բեռլինի կոնգրեսի Հայկական պատվիրակութեան նախագահ (1878թ.), Հեղինակ է արձակ եւ չափածո գործերի:
9. Մերոպ արքեպիսկոպոս Սմբատյան - 1833-1911թթ., Հոգեւոր գործիչ, Հայագետ, Հայտնաբերել եւ ուսումնասիրել է մեծ քանակութեամբ բեւեռագիր եւ վիմագիր արձանագրութիւններ: 1892-ին ընտրվել է Ռուսական կայսերական հնագիտական ընկերութեան անդամ:
10. Գարեգին Կարապետի Հովսեփյանց, Գարեգին Ա Հովսեփյան - (1867-1952թթ.), Հայ մշակութային գործիչ, մանկավարժ, Հայագետ, 1905-06թթ. եւ 1915-17թթ. Գեւորգյան ճեմարանի տեսուչ, 1943թ. -ից Մեծի Տանն կրիկիկո կաթողիկոս:

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՍԻՈՆԵՐ ԶՈՐՋ ՔԱՇԻՆԳ ՆԵՓԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԲԻԹԼԻՍԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԵՐԻ ՄՄԱՆԻՆ

1810թ. ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում Հիմնվել է Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը, որը ցանկանում էր բողոքականություն տարածել ամբողջ աշխարհում: Վերջինս, 1820թ., իր առաջին քաղաղչներին է ուղարկել Օսմանյան կայսրություն՝ Լիբանան: Ելնելով Օսմանյան կայսրության իշխանությունների վերաբերմունքից, միսիոներներն իրենց գործունեությունը ծավալում էին կայսրության քրիստոնյա բնակչության, մասնավորապես՝ Հայերի շրջանում: Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում ամերիկացի միսիոներները հաստատվել են 1830թվականին: Կ.Պոլսը Հանդիսանում էր կայսրության ամբողջ տարածքում գործող ամերիկյան միսիոներների կենտրոնը:

Բիթլիսի ամերիկյան միսիոներական կենտրոնը 1858թ. Հիմնել են Զորջ Քաշինգ Նեփը (Georg Cashing Knapp) եւ իր կինը՝ Ալգինա Չրբչի Նեփը: Հետագայում, Միքեի Եարլոթի էլի բույրերի հետ Համատեղ ջանքերով, նրանք 1868թ. Բիթլիսից ոչ հեռու, գեղատեսիլ մի վայրում, Հիմնում են ամերիկյան «Մատենի Նույնի» սեմինարիայի (այդ ժամանակ) մասնաճյուղը:

Ջ.Նեփերի երեխաները ծնվել եւ մեծացել են Բիթլիսում: Նրանցից ավագը՝ Զորջ Փերկինս Նեփը ծնվել է 1863թ.: Երբ նա 14 տարեկան էր, Հայրը նրան ուղարկեց Միացյալ Նահանգներ սովորելու: Դպրոցն ավարտելուց հետո, 1887թ., նա ընդունվում է Հարվարդի աստվածաբանական սեմինարիան: 1890թ. ավարտելով ուսումը, Զորջ Փերկինս Նեփը վերադառնում է Բիթլիս եւ հոր հետ միասին ձեռնամուխ է լինում միսիոներական գործունեությունը: Նա Հիանալի տիրապետում էր ինչպես Հայերենին, այնպես էլ թուրքերենին: 1896թ. Զորջ Փ.Նեփին վտարեցին թուրքալից, մեղադրելով Հայերին՝ իշխանությունների դեմ հրահրելու մեջ: 1899թ. նա վերադարձավ Արևմտյան Հայաստան Խարբերդ, ուր Հիմնեց որբանոց, վերականգնեց միսիոներությունը պատկանող շինությունները, եւ այլն: 1909թ. Նեփը կրկին վերադարձավ Բիթլիս: 1915թ. հուլիս-հուլիս ամիսներին, Բիթլիսի Հայ բնակչության ջարդերի ժամանակ, նա ամեն ջանք գործադրեց, որպեսզի վերջ դնի Հայերի կոտորածներին: Սակայն, երիտթուրքական իշխանությունները ձեռնադրեցին անցանկալի վկային եւ, պահակամերի ուղեկցությամբ, տարան Դիարբեքի: Ըստ թուրքական պաշտոնական վարկածի, Զորջ Փ.Նեփը մահացել է 1915թ. օգոստոսի 10-ին բժավոր աիֆից: Խարբերդի ամերիկյան Հյուպատոս Լ.Դեյսի եւ բժիշկ Ասկինսոնի՝ համոզմամբ, միսիոների՝ աիֆից մահանալու վարկածը, չի համապատասխանում իրականությունը: Զորջ Փ.Նեփը, ավելի քան 25 տարի ծառայելով որպես միսիոներ, իր կյանքը նվիրաբերեց Հայ ժողովրդին:

Ստորեւ ներկայացնում ենք Բիթլիս քաղաքի Հայերի ջարդը վկայող Զորջ Փերկինս Նեփի 1895թ. հոկտեմբերի 25-ի գեկուցագիրը: Փաստաթուղթը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվի Հենրի Փեննս Լինչի՝ անձնական ֆոնդում (Փ.411, ց.1, գ.226, թ.1-38): Փաստաթղթի թարգմանությունը անգլերենից Հայերեն կատարվել է մեր կողմից, եւ այն հրատարակվում է առաջին անգամ:

## Ստեփան Փայասլյան

### ԲԻԹԼԻՍԻ ԶԱՐԴԵՐԸ

Ճակատագրի դաժան հեղանակը է թվում այն փաստը, որ եվրոպական երեք հզոր պետությունների (նկատի ունի Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը՝ Ա.Փ.) կողմից Սասունի ջարդերի՝ երկարատեւ եւ մանրակրիտ հետաքննությունից հետո, Բիթլիսի շրջանում եւս տեղի ունեցան ջարդեր, որոնք շրջանը անձանաչելի դարձրին՝ նույնիսկ թուրքական իշխանությունների համար: Թուրքերն այստեղ՝ մի քանի քաղաքներում, կազմակերպեցին Հայերի նոր ջարդեր, որոնք իրենց դաժանությունը ստվերեցին անգամ Սասունի ջարդերը:

Վերջին շրջանում Օսմանյան կայսրության Հայաստան վայրերում տեղի ունեցան Հայերի ջարդեր, բայց ոչ մի շրջանում թուրքերն իրենց չմերկացրին այնքան տեսանելի, որքան՝ Բիթլիսում:

Բիթլիսի բնակչության թիվը Հասնում էր 30-40 հազարի, որից երկու երրորդը մահմեդականներ են: Անհիշելի ժամանակներից մոլեռանդ մեծամասնությունը Հայերին համարում էր իր օրինական զուհը եւ նրանց Հետ վարվում ինչպես կամենար:

Քաղաքի կենտրոնում կար մի ամրոց, որը կառուցել էր Ալեքսանդր Մեծը: Սրանից արևելք գտնվում էր մի լայն տարածք, որտեղ աեղակալված էին Բիթլիսի նեղ շուկաները (նկատի ունի այն վայրը, որտեղ վաճառում էին բնամթերք՝ Ա.Փ.): Սրանցից շատերը ծածկված էին ծանր տանիքներով եւ լուսավորվում էին դրանց անցքերից:

Չնայած Բիթլիսի Հայերի երկչտությունը եւ պաշտպանական հարցերում նրանց անկազմակերպվածությունը, Բիթլիսը, 1891թվականի աշնանից ի վեր, երբ Բիթլիսի նահանգապետ նշանակվեց Հասան Թահսի փաշան, 3-4 տարի փոթորկուն կենտրոն դարձավ:

Սասունի Տալվրիկ՝ գյուղը կասկածյալ Հեղափոխականներից «ազատելու համար, Թահսի փաշան օգտագործեց քրդերին, սակայն, երբ այս փորձը ձախողվեց եւ քրդերը պարտություն կրեցին, նա «խաղաղություն» հաստատեց Սասունի տարածաշրջանում:

Ապստամբությունը ճնշելու համար սուլթանը պարզեւտորեց Թահսի փաշային: Դիմելով սադրանքների բոլոր հնարավոր միջոցներին, վերջինս, 1893-1894թթ. ձմռանը, շարունակեց իր (հակահայկական) քաղաքականությունը: Այս ժամանակ Հայերից խնջեցին Հին հրապանները, ինչպես նաեւ՝ ժամանակակից գեներալներ (Հայերը շատ քիչ ունեին դրանցից): Հետեւաբար, քրիստոնյա համայնքը մնաց անպաշտպան: Անգամ այս դժվարին կացություն մեջ, Հայերը, դիմելով ողջամտության եւ Հեռատեսության, Համախմբվեցին, որպեսզի կարողանան դիմադրել այս հարձակումներին եւ ազատվել իրենց այն հավատակիցներից (քիչ քանակով Հայ զավաճաններից), որոնք կառավարության ձեռքին Հայերի դեմ լավագույն գեներալ էին Հանդիսանում:

Բիթլիսի Հայերը ոչ միայն խուսափում էին իրենց գործունեությունը իրենց դեմ հրահրել մահմեդականներին, այլեւ անգամ չպատժեցին իրենց դավաճաններին, ինչպես նրանց (դավաճանների՝ Ա.Փ.) Հետ վարվեցին այլ տեղեր, ինչպես օրինակ՝ Վանում: Հարկ չեմ համարում խոսել Սասունի ջարդերի (ինչպես նաեւ դրանց՝ Բիթլիսի Հայերի համար ունեցած հետեւանքների) ժամանակ Թահսի փաշայի խաղաղած դերի մասին: Երբ նրան չհաջողվեց ստանալ Հայերի աջակցությունը (օգնել ձեռքազրկելու «կասկածյալ Հեղափոխականներին»), նա ձեռքազրկեց 15-20 հեղինակավոր Հայերի եւ նրանց նկատմամբ դաժան վերաբերմունք ու տարբեր սպառնալիքներ կիրառելով, փորձեց ստիպել Հայերին՝ իրենց վրա վերցնել Սասունի դիմադրության պատասխանատվությունը:

Թահսի փաշայի Հուսահատ ջանքերը որեւէ բացատրություն տալու իր արածի համար, կանխվեց իր պաշտոնանկությունը, որը տեղի ունեցավ եվրոպական հետաքննիչ Հանձնաժողովի՝ Մուշ ժամանելուց հետո:

Հետաքննիչ Հանձնաժողովի անգամներից մեկը՝ Օմեր բեյը, նշանակվեց նահանգապետի պաշտոնակատար եւ Հանդես եկավ բարեփոխումների մեծ խոստումներով: Նա խոստացավ ազատ արձակել բանտարկված հեղինակավոր Հայերին (այն 15-20 հոգուն), սակայն, բավականին զորեղ չգտնվեց դիմադրելու քաղաքի մահմեդական բնակչության առաջնորդներին (արքեպ զեմ էին Հայերի ազատմանը՝ Ա.Փ.): Եվ այդ հեղինակավոր Հայերը բանտում մնացին այնքան ժամանակ, քանի գեռ ազատ չէին արձակվել քաղաքական բոլոր բանտարկյալները:

Թահսի փաշայի բոլոր կողմնակիցները բացառությունը մեկ-երկուսի, շարունակեցին գրադեցնել պաշտոններ իշխանություն մարմիններում: Ոչ մի ուշադրություն չգարձվեց նրանց դեմ Հայերի ներկայացրած բողոքներին:

Բիթլիսի մահմեդականներին խիստ լարվածության մեջ էր պահում Մուշի հետաքննչական Հանձնաժողովի երկարատեւ հետաքննությունը: Քանի որ բարենորոգումների ծրագիրը՝ գտնվում էր քննարկման գործընթացում, Օմեր բեյին հաջողվում էր գուպել մահմեդականներին, բայց նրանք շարունակ առում էին

Հայերին, որ, եթե անգամ այդ ծրագրից ինչ-որ բան ստացվի, վերջիններս (Հայերը) կենդանի չեն մնա եւ այն չեն տեսնի: Նրանք (թուրքերը) ասում էին, որ Հոլդ արյամբ են վերցնում եւ առանց արյան չեն Հանձնի: Նրանք, անգամ, այնքան հեռու գնացին, որ Հայությանը մահ էին, որ եթե անգամ Սուլթանը Հրաման տա գազարեցնելու Ջարգերը, իրենք այն մինչեւ վերջ կշարունակեն:

Մահճեղականներին հիմնականում զայրացնում էին Բիթլիսի Հայերի եւ միսոններին Ջանքերը, որոնք, անզիական հիմնադրամի օգնությամբ, փորձում էին իրենց ավերված տները վերագործնել Հայ փախստականներին, որոնց իրենց տները վերագաղտնալու Հոսքը, չէր գազարում: Միսոններն այս ջանքերն իրենց եւ Հայերի դեմ էր գրգռում մահճեղականներին:

Հոկտեմբերի սկզբից մեկ շաբաթ անց, Մուշից Բիթլիս եկավ Հաջի Դայերը՝ մոլեռանդ մի մահճեղական եւ միանգամից սկսեց Հայերի դեմ Հրահրել մահճեղականներին: Նա Շեյխ Ամինի Հյուրն էր, որը նույն քաղաքականությամբ շատագուց էր: Հաջի Դայերի գալուստն պես, Բիթլիսի բոլոր մահճեղականները բացաճայտորեն գինվեցին:

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ օրը, ամբոխը՝ լուրջ մտադրություն ունենալով Հարձակվել Հայերի վրա, Հավաքվել էր շուկաներին Հարող Օուլի Ջեյմ մզկիթի մոտ: Իշխանությունները լսել էին դրա մասին եւ ամբոխը ցրելու Համար մեծ ջանքեր թափեցին:

Շաբաթ առավոտյան (Հոկտեմբերի 19-ին **Ա.Փ.**), թուրք կանայք Հասարակական բազմիքում խուսում էին, որ թուրքերը պետք է կոտորեն քրիստոնյաներին եւ բազմիքում գանձող Հայ կանայք, առանց լողանալու, շատագուց էին իրենց տները: Կիրակի օրը, Հոկտեմբերի 20-ին, Հայերից ոմանք տեղեկություններ ստացան, որ սուլթանը բնդունել է բարենորոգումների ծրագիրը:

Երեքշաբթի, Հոկտեմբերի 22-ին, թուրքերը լուրեր տարածեցին, որ էրզրումում խանազադիթ է սկսվել, եւ Բիթլիսի Հայերը, այդ օրը, շուտ փակեցին իրենց խանութներն ու արհեստանոցները:

Եվ այսպես, մոտ մեկ շաբաթ, թուրքերը Հայերի Հետ կռվելու առիթ էին փնտրում եւ փորձում էին նրանց Հանել Հավասարակշռությունից: Միշտ, առանց որեւէ պատճառի, ծածուկ էին մի Հայ գյուղացու Հույսով, որ Հայերը կպատասխանեն եւ կսկսվի տուրուզմիտը, սակայն, Հայերը չէին արձագանքում:

Հինգշաբթի, առևտրի կենտրոնից (ենթադրվում է, որ սա այն վայրն է, որտեղ աշխատում էին արհեստավորները **Ա.Փ.**) մի Հայ եկավ ինձ մոտ եւ ասաց, որ ճանապարհին կռվի մեջ ներքաշելու նպատակով, մահճեղականները երեք անգամ Հարձակվել էին իր վրա, բայց ինքը չի պատասխանել նրանց:

Հայերը, շարունակելով մնալ տագնապած, շուտ էին փակում խանութները եւ աշխատում Հազվադեպ գուրս գալ փողոց:

Հինգշաբթի կեսօրին, Բիթլիսի առաջնորդը (առաքելական Հավատքի տեր Հայերի ղեկավարը), ու Հայ Համայնքի չորս ղեկավարներ գնում են Օմեր բեյի մոտ, նկարագրում քաղաքում տիրող իրավիճակը եւ անվտանգության երաշխիքներ խնդրում: Օմեր բեյը վստահեցնում է, որ անհանգստանալու կարիք չկա եւ, որ ինքը պատասխանատու կլինի, եթե անգամ Հայերի Հավերից գոնե մեկը վնասվի: Իսկ վերջում նրանց ցույց է տալիս բարենորոգումների ծրագիրը, որը Հեռագրով ստացվել էր Կ.Պոլսից: Օմեր բեյի խոստումներից Հուսադրված եւ բարենորոգումների ծրագիրը տեսնելուց Հետո, պատվերակները Հեռանում են նրա մոտից եւ վստահորեն Հանգստացնում քաղաքի Հայ բնակչությանը:

Ուրբաթ (Հոկտեմբերի 25-ին **Ա.Փ.**) առավոտյան, Հայերը (բացառությամբ մի փոքր մասի) գնում են առևտրի կենտրոն եւ բացում իրենց խանութներն ու արհեստանոցները:

Բիթլիսում աշունը առևտրի թե՛ շրջան է, մարդիկ պատրաստվում են ձմռանը:

Ուրբաթ կեսօրին, որոշ մահճեղականներ զգուշացնում են իրենց Հայ բնակներին, որպեսզի նրանք չմնան առևտրի կենտրոնում: Այդ մահճեղականների թվում էր նաև իմ ծառան, որն, իր Հերթին, ինձ զգուշացրեց, որպեսզի ես տնից գուրս չգամ:

Երբ ամբողջ քաղաքում Հնչեց աղոթքի ժամը ազդարարող ձայնը, բոլոր մահճեղականները, բացառությամբ մի քանիսի, փակեցին իրենց խանութները եւ

2. Քանի որ Արեւմտահայաստանում կազմակերպված մարտական ուժերն իրենց սահմանափակ կարողութիւնների պատճառով ի զորու չէին սեփական ուժերով իրականացնել առավել արդյունավետ ու նշանակալի մարտական գործողութիւններ, ապա ՀՅԴ մեծ կարելորութիւն էր տալիս մարտական եւ զինատար խմբերին, որոնք պիտի մեկնէին Երկիր, Համայնքին տարբեր շրջաններում գործող ՀՅԴ կառույցների մարտաշարքեր եւ կենսագործելին կուսակցութեան որդեգրած մարտավարութեան հետևյալ խնդիրները.

ա) Ձեներքի եւ զինամթերքի տեղափոխութիւնն Արեւմտահայաստանի նախանշված շրջանները: Այս խնդիրը առավելապէս վերաբերում է զինատար խմբերին, նրանցում ընդգրկված մարտիկներին, որոնց անվանում էին նաեւ շալակափորներ:

Խնամտորի Վարդանի (Վարդան Մեհրաբյան) ընտրչմամբ «խմբերը կոչւում էին «գինակիր», այսինքն՝ գէնք փոխադրող: Նրանք, սովորաբար, աւելորդ Հրացաններ էին աւելում իրենց Հետ ուժերին նայած, երկու Հոգուն՝ 3 Հրացան, իսկ աւելի ուժեղները, մի Հոգին 2 Հրացան...»:

...Հայրուկի բերք միայն Հրացանները չէին կազմում, յուրաքանչիւր Հայրուկ ունի 150-200 փամփուշտ, ատրճանակ, սուր, հացի տուրակ մէջքի վրայ...»:

բ) Արեւմտահայաստանի զանազան շրջաններում մարտական խմբերի կազմակերպում ու մարզում:

<sup>1</sup> ՀՅԴ ԿԱ, թձ.5, գ.1, էջ 1:

<sup>2</sup> «Նւրիթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան Համար», Հ. Բ., էջ 4-5:

<sup>3</sup> Մ. Վարանդյան, «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն», 1992, էջ 96:

<sup>4</sup> Նուրն տեղում:

<sup>5</sup> «Դրօշակ», 1897, թիւ 14, էջ 114:

<sup>6</sup> Նույնը, էջ 112:

<sup>7</sup> «Պատմագրութիւն Հ.Յ. Դաշնակցութեան», 1990, էջ 217:

դ) Հայ բնակչության կյանքի ու ունեցվածքի պաշտպանությունը թուրքերի, քրդերի եւ բոլոր տեսակի մահմեդական հրոսակախմբերի, հարստահարիչների տանձգութուններից:

Մարտական եւ զինատար խմբերի կազմավորման համար կուսակցությունը պետք է լուծեր մի շարք խնդիրներ, որոնց մեջ առաջնահերթ էին.

1. Խմբերի համալրումը: Որպես կանոն, խմբերը հիմնականում համալրում էին ազգային-ազատագրական պայքարին նվիրված այն անհատները, որոնք քաջ գիտակցում էին իրենց դավանած դադափարի եւ գործի կարեւորությունն ու պատասխանատվությունը: Աննրկարտրեն կարելի է պնդել, որ Հայ ազգային-ազատագրական պայքարի առավել նշանավոր գործիչների մեծ մասը իրենց մարտական մղրությունը ստացել է հենց մարտական ու զինատար խմբերի կազմում:

2. Խմբերի զինումը եւ հանդերձավորումը: Այդ խնդրի լուծումը հիմնականում կապված էր ֆինանսական անհրաժեշտ միջոցների ձեռքբերման, զենք ու զինամթերքի, հանդերձանքի գնման եւ այն համապատասխան վայրերը տեղափոխելու դժվարին աշխատանքների իրականացման հետ:

3. Երկրում գործող Հեղափոխական կազմակերպություններին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու եւ մարտական ու զինատար խմբերը համապատասխան վայրերը ուղարկելու համար, Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում պետք է հիմնվեին Հուսալի Հեմակետեր (խարխիններ), որտեղից հարկավոր պահին հնարավոր լիներ կազմակերպել անհրաժեշտ ուժերի առաքումը: Այդ նպատակով ՀՅԴ-ն իր կառույցները ստեղծում էր նաեւ Օսմանյան կայսրության սահմանամերձ վայրերում, որոնցից առավել կարեւոր էին Կարսի եւ Սպյամատի շրջանները:

Ծնորհիվ իր աշխարհազորական դիրքի, Կարսը եւ նրա մերձակա շրջաններն առանձնահատուկ նշանակություն ունեին ազատագրական պայքարում: Այդ շրջանն ոչ միայն Երկիր մեկնող մարտական ու զինատար խմբերի գլխավոր խարխիններից էր, այլև այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց առաջին եւ անհրաժեշտ փորձությունն էին ձեռքբերում Հեղափոխական գործիչները: Թուրքերի Տեր-Մինասյանի զիպուկ բնութագրմամբ «Եւ իրօք, Կարսի նահանգը վայր մըն էր, որուն յեղափոխական Հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եկուել եւ դուրս գալ թրծուած եւ յղկուած, կամ չգիմանալով այդ տեղի ծայրաստիճան գազափարական եւ սպարտական կեանքին՝ լքել յեղափոխական ասպարէզը»<sup>8</sup>:

Այսամ առաջին՝ Հունուլի (Հարություն Աղա Տեր-Մարտիրոսյան) մարտախմբից, Կարսի նահանգում 1890-1899թթ., մոտավոր տվյալներով, կազմավորվել եւ Երկիր են մեկնել ավելի քան 20 մարտական ու զինատար խմբեր, որոնց մի մասին հաջողվել էր կռիվներ մղելով եւ բազում արգելապատնեշներ հաղթահարելով հասնել Տարսնի, Սասունի, Էջրումի եւ Բասենի շրջանները<sup>9</sup>:

Ձինատար խմբերի պայքարի նշանավորէջերից է Աղբյուր Սերոբի հորեղբորդու՝ ճարտարի (Հակոբ Վարդանյան) գլխավորած ֆիդայիների՝ զենք ու զինամթերքով բեռնված խմբի բարեհաջող անցումը Կարսից Ախլաթ:

Անդրադառնալով իր արդյունավետությունը գրեթե հավասարը չունեցող ճարտարի զինատար խմբի այդ գործողությունն արժեւորմանը, Աղբյուր Սերոբի մարտախմբի անդամ Բիթլիսցի Պողոսը գրում է. «1897 տարուայ աշնանը խմբապետ Յակոբը (նկատի ունի ճարտարին -Հ.Ք.) 77 եօթանասուն եւ յօթը հոգով նեմրուտ լեռան դուռն եկաւ Սերօբ փաշայի քօլը եւ բերաւ նաեւ 77 եօթանասունյօթը հրացան (հրացաններն էին մօսին, պերտանկի եւ մարլի) եւ յանձնէց Ս. Փաշային եւ քիչ ժամանակ յետոյ խմբապետ Յակօն Հետ առաւ 25 քսանհինգ հօգի եւ դարձավ Թուսաստան»<sup>10</sup>:

Մինչեւ 1898թ., մարտական ու զինատար խմբերի կազմակերպման եւ մղելու առաքման խնդիրը, ինչպես նաեւ ֆիդայական-պարտիզանական կռիվների մղումը, ահարեկչական գործողությունների իրականացումը գեներալ մնում էր Հ.Յ. Դաշնակցության մարտավարության ամենագործուն շարժիչ ուժը:

<sup>8</sup> Թուրքն, «Հայ Սեղափոխականի մը յիշատակները», Հ. 1:

<sup>9</sup> Տե՛ս, նույնը, էջ 131-132:

<sup>10</sup> ՀՅԴ ԿԱ, թժ. 685, գ.1, էջ 7:

1898թ. տեղի է ունենում ՀՅԴ 2-րդ Ընդհանուր Ժողովը, ուր, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում են նաեւ ընդհանուր ապստամբության ու հայրուկային-պարտիզանական պայքարին վերաբերվող հարցերն ու ընդունվում է հետեւյալ որոշումը. «Ժողովը, երկար վիճարանություններից վերջ, բազմաբ մեծամասնությամբ (2 ձայն դէմ) սկզբունքնով ընդունեց ուժերու կեդրոնացումը Երկրին մէջ, ցույցը Պոլսի եւ Ժովեղերեայ քաղաքները, եւ մերժելով ֆէտայական սպասակալին գործունէութիւնը՝ ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»<sup>11</sup>:

Համաձայն այս որոշման, ՀՅԴ փաստորեն հրաժարվում է իր՝ ֆիդայական-պարտիզանական կռիվներ մղելու մարտավարություններից եւ ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար, պատրաստվում է ուժերը կենտրոնացնել Երկրի առավել կարեւորագույն վայրերում՝ Բարձրավանդակ եւ Վասպուրահան:

Գործունեություն նոր եղանակի որդեգրումը բնականաբար թելադրում էր, որպեսզի կուսակցությունն ավելի մեծ ծավալի աշխատանքներ իրականացնեք «կեդրոնացման» վայրի մարտական ուժերն ըստ ամենայնի կազմակերպելու եւ այն առավելագույնս զինելու գործում:

Իսկ Ընդհանուր Ժողովի որոշումների կենսագործումը պարտադիր էր ՀՅԴ բոլոր ապակենտրոն կառույցների, ինչպես նաեւ «Դուրան-Բարձրավանդակ» կենտրոնական կոմիտեի համար:

«Աերո (նա Ընդհանուր Ժողովի կողմից ընտրվել էր Բարձրավանդակի Պատասխանատու Կենտր. կոմիտեի անդամ -Հ.Ք.), - գրում է Կ. Սասունին, - տեղեակ էր, որ Հ.Յ. Դաշնակցության Բ Ընդհանուր Ժողովը տեղի կունենայ Կովկասի մէջ: Տեղեակ էր նաեւ այն արամազրույթեան, որով Սասունը կը նարէին որպես միջնաբերդ Հայ յեղափոխական շարժման»<sup>12</sup>:

Քանի որ ճարտարի Գլխավորած զինատար խմբի անցումը Կարսից Ախլաթ պտակվել էր աննախադեպ հաջողությամբ, իսկ զենք ու զինամթերքը ձեռքբերումը, մարտական խմբերի կազմակերպումը եղել եւ մնում էր Հ.Յ. Դաշնակցության գործունեության կարեւորագույն բաղադրամասերից մեկը, ուստի «Դուրան-Բարձրավանդակ» կենտրոնական կոմիտեի եւ անձամբ Աղբյուր Սերոբի հանձնարարություններով, ճարտարը, գարձայ նույն՝ զենք ու զինամթերք տեղափոխելու առաքելությունով, 25 մարտիկներով մեկնում է Կովկաս»<sup>13</sup>:

Ճարտարը բարեհաջող հասնում է Կարս, ՀՅԴ տեղի կենտրոնական կոմիտեից ստանում որոշակի քանակության զենք ու զինամթերք եւ միաժամանակ, նոր մարտիկներով համալրելով իր զինատար խումբը, պատրաստվում է վերադառնալ Ախլաթ:

Համաձայն Կ. Սասունու եւ Թուրքնի տվյալների, ճարտարի խումբը բաղկացած է եղել 66, իսկ Ա. Նորյանի, որի վկայությունն, իր իսկ հավաստման, գրի է առել սկանառեսի պատմածի հիման վրա, 78 մարտիկներից<sup>14</sup>:

Ձինատար խմբի կազմում են եղել Բիթլիսցի Մուշեղը, Առաքելը, Բայաբեկ Կարապետը, Երկար Նադոն, Զուլումաթը, Առլուծ Ավազը եւ այլ փորձառու ուղեւորվորներ, որոնք մինչ այդ մասնակցել էին Աղբյուր Սերոբի գլխավորած Ախլաթի ինքնապաշտպանական եւ գրեթե բոլոր ֆիդայական-պարտիզանական մարտերին:

1898թ. սեպտեմբերի սկզբներին զինատար խումբը ճարտարի գլխավորությամբ Կարսից տեղափոխվում է Կողզվան, այսպ անցնում ուսու-թուրքական սահմանը եւ փորձում Այազկերտ-Մանազկերտ-Բուլանուխ գծով աննկատ ուղեւորվել Ախլաթ: Սակայն, այս անգամ նույն հաջողությունը, ինչպիսին առաջին անգամ ժամանակ էր, չի ուղեկցում Հայ մարտիկներին:

Մինչեւ ճարտարի 2-րդ զինատար խմբի մեկնումը, Կարսից գեպի Երկիր էին ուղեւորվել մոտավորապես 16 մարտական ու զինատար խմբեր<sup>15</sup>: Որեւէ

<sup>11</sup> «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Հ. Բ., էջ 58-59:

<sup>12</sup> Կ. Սասունի, «Պատմութիւն Տարսնի աշխարհոյ», Պէլլութ, 1957, էջ 600:

<sup>13</sup> Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, թժ. 681, գ.1, էջ 7:

<sup>14</sup> Տե՛ս, Կ. Սասունի, «Պատմութիւն Տարսնի աշխարհոյ», Պէլլութ, 1957, էջ 600,

Թուրքն, «Հայ Սեղափոխականի մը յիշատակները», Հ. 1, էջ 131-134:

կասկած չի՛նել չէ՛ր կարող, որ Հայ մարտական ուժերի երթուղիները կարող էին դուրս մնալ թուրք իշխանությունների տեսազաշտից: Ամենուրեք գործող գործակալների ու մատնիչների աջակցութեամբ, ակնդես հետեւելով Հայ Հեղափոխական գործիչների գործողութիւններին, թուրք իշխանությունները մեծ Քանքեր էին գործադրում կանոնավոր զորամասերի եւ քրդական աշիրեթների ուժերով Ջախճախի բոլոր այն խմբերը, որոնք փորձեր էին ձեռնարկում անցնել առաջնորդական սահմանն ու ուղեւորվել Արեւմտահայաստանի որեւէ շրջանը:

Ճարտարի 1-ին խմբի բարեհաջող անցումին ամիսներ էին Հաջորդել: Իսկ թուրք իշխանություններն այդ ընթացքում ավելի ու ավելի էին ուժեղացնում սահմանամերձ շրջանների, հատկապես Կարսից դեպի Բագրեւանդ (Այաշկերտ) - Տարոնք ձգվող ուղիների հսկողութիւնը: Կարսի նահանգից մինչեւ Էրզրում, Տարոն եւ Սասուն ընկած տարածքում տեղաբաշխվել էին բազմաթիվ համադեհի գնդեր, որոնց գլխավոր պարտականութիւններից մեկը` Հայ մարտական ուժերին ու Հեղափոխական գործիչներին հետեւելն ու ոչնչացնելն էր: ԻՀարկե, Հ.Յ. Դաշնակցութիւնը ղեկավար մարմիններն, իրենց գաղմտած ռազմավարութիւնը կենսադրոժեկու նպատակով Համապատասխան մարտավարութիւն մշակելիս եւ որոշակի քայլեր ձեռնարկելիս, տեղյակ էին թուրք իշխանութիւններին ձեռնարկումներն եւ իրենց գործունեութիւնը խոչընդոտող բոլոր կարգի զժվարութիւնները մասին: Բայց Արեւմտահայութեան ազատագրական պայքարը կազմակերպելու Համար անհրաժեշտ էին կարող եւ նվիրյալ գործիչներ, մարտական ուժեր, գէներ ու զինամթերք:

Ճանապարհելով Հերթական զինատար խումբը, ճանապարհողները չէին կարող կասկածել, որ այս անգամ Ճարտարին եւ նրա գլխավորած մարտիկներին սպասվում էին ավելի դժման փորձութիւններ:

Եվ իրոք, Ճարտարի խումբն այս անգամ ենթարկվում է դժման փորձութիւնների: Ձինատար խմբի մղած հերոսամարտերը, որոնք պատմութեանը Հայտնի են «Խաթնալին եւ Ավերակ Ջրաղացի կռիվներ» անվամբ, ազատագրական պայքարի այն նշանավոր դրվագներից են, որոնց մասին Հյուսիսէ երգերը ժողովուրդը երգում է մինչ օրս:

Ձինարար խմբի անվտանգութիւնն ու աննկատ անցումն առաջնագույնս ապահովելու նպատակով, խումբը բաժանվում է երկու մասի: Առաջին փոքրբաբանակ մասը երկար Նազոյի գլխավորութեամբ, որպես առաջապահ, չարժվում է առջեկց: Այդ խումբը հակառակորդին անակնկալորեն հանդիպելիս, առաջինը պիտի դիմադրապէր հարձակումը եւ այդ մասին անհապաղ տեղեկացնել իր հետեւից շարժվող հիմնական խմբին:

Առաջապահ խումբը մտնում է Այաշկերտի սարահարթը եւ հասնելով մի քրդական գյուղի, հանդատանալու նպատակով, որոշում է փոքր-ինչ դադար առնել: «Այդ բանի համար, - նշում է «Դրօշակ»-ի հոդվածագիրը, - թուրքին կը վճարեն որոշ գումար մը, որպէսզի գիրենք պատասպարէ մինչեւ երեկոյ: Քիւրդը կը խաբէ տղաներին եւ կը լեցնէ է սոււնը ու գումարն էլ առնելուց յետոյ, կը վազէ լուր կը տայ գիւղապէտին»:<sup>16</sup>

Գյուղապետն անմիջապես հավարում է գյուղի բնակիչներին եւ նրանց առաջնորդում պաշտպանելու այն սոււնը, որտեղ իր զինակիցներով հանգրվանում էր Նազոն: Հայ մարտիկները հայտնվում են անելանելի իրավիճակում: Քրդերը չորս կողմից պաշարելով սոււնը՝ կրակ են տեղում Հայ մարտիկների վրա: Երբ միակն էր հարկավոր էր դուրս գալ անից եւ սրընթաց գրոհով ճեղքել պաշարման շղթան ու արագորեն հեռանալ: Տնից դուրս գալու փորձ կատարելիս ֆիդայիներից մի քանիսը զոհվում են, իսկ Նազոն երեք զինակիցներով կարողանում է դուրս գալ անից եւ գրուում շարունակել մարտը:<sup>17</sup>

Բարերախտարար, հիմնական խումբը, որը նույնպես անցնում էր այդ գյուղի մերձակայքով, լսում է Հրացանների ձայնը եւ ճիշտ կողմնորոշվելով՝ շտապում օգնութեան ու պաշարում գյուղը:

«Մի քանի, - նշում է «Դրօշակը», - ժամւայ մէջը բնակչութիւնը պատուհասելէ յետոյ, կենդանի մնացած մեր զինւորների կազատի:

...Խաղամթերքը, որ մինչեւ Հոս շալավով կը բերէին, բեռցնելով քիւրդ գիւղի գրաստների վրա, մայրամուտին կը շարունակեն իրենց ճանապարհը»:<sup>18</sup>

Արագորեն Հաղթահարելով առաջին արգելքը, խումբը ձգտում է որքան կարելի է արագորեն անցնել Այաշկերտի տարածքը եւ խուսափելով կռիվների բռնվելուց՝ Մանազկերտ-Բուլանուխ գծով ուղեւորվել Ախլաֆ:

«Անպոքմբերի 3-ին, - գրում է Ա. Նորյանը, - խումբն Հանդիստ է առնում Սիպկեցոց սահմանի մէջ՝ Քեօշկայ լեռան արեւելեան (Քեօշք՝ սիպկեցոց քիւրդ բէկերի գիւղն էր, որ իր մէջ խոչոր ապստանք ունի, որի համար եւ գիւղն ու շրջակայքը Քէօշք են կոչվում)»:<sup>19</sup>

Ապարանքի պահպան քրդերը հեծվից նկատում են զինված խմբին եւ հասկանալով նրանց՝ ոչ յուրալին լինելը, եւ Համաձայն իրենց սովորութեան, իսկույն վայտառնում (հավար) են բարձրացնում եւ շատ չանցած ավելի քան 2000-2500 համադեհի զինվորներ, հեծյալ ու հետեւակ զինյալ քրդեր արագորեն հայտնվում են գեղքի վայրում:

Թեպետ Հայ մարտիկներն ամեն կերպ ձգտում էին խուսափել ավելորդ կռիվների թռնվելուց, բայց այս պարագայում այլընտրանք այլեւս չկար:

Փիդայիները, դուրս ինչ չեղկնչելով թշնամու բազմաքանակութիւնից, սառնասրտորեն բռնուհում են Հակառակորդի մարդահրավրը եւ պատրաստվում մարտի:

Վստահ իրենց թվական գերակշռութեամբ, քրդերը համազարկեր տեղայով, նետվում են գրոհի: Հայ մարտիկներն այդ ընթացքում հասցնում են հարմար դիրքեր գրավել մերձակողներին եւ խորացնել բնդհարումը: Սակայն, իրավիճակը փոխվում է, երբ քրդերն ավելի ու ավելի սաստկացնելով կրակն ու գրոհները, սպանում են Ախլաֆից Գեւորգին:

Քանի որ Այաշկերտի սարահարթում կային բազմաթիվ հայկական գյուղեր, ուստի ֆիդայիները, նկատի ունենալով Հայ բնակչութեանը սպառնացող վտանգը, կռվի սկզբում այնքան էլ արամադրված չեն եղել դիպուկ հարվածներով դիմադրավել հարձակողներին եւ խորացնել բնդհարումը: Սակայն, իրավիճակը փոխվում է, երբ քրդերն ավելի ու ավելի սաստկացնելով կրակն ու գրոհները, սպանում են Ախլաֆից Գեւորգին:

«Մուշեղը երբ կը տեսնէ Գէորդի անշնչացած դիակը, կը հրամայէ, - «Տղե՛ք, լաւ նշան բռնեցէ՛ք զէպի թշնամին: Մեր ֆիդայիները մէկի փոխարէն 20-ի չափ դիակներ կը փոեն»:<sup>20</sup>

Կռիվը, չթուլացող ուժգնութեամբ, շարունակվում է մինչեւ կեսօր: Քրդերը, փոքր-ինչ դադար առնելուց եւ իրենց մարտաշարքերը նոր հրոսակախմբերով համարելուց հետո, առավել սաստկութեամբ կրակ են բացում Հայ մարտիկների դիրքերին եւ վերսկսում գրոհները: «Սակայն, ապարդյուն են անցնում քրդերի ձեռնարկած բոլոր հարձակումները, ֆիդայիներն անխորտակ պաշտպանութեամբ պահում են իրենց դիրքերը»:

«Քրդերը, - նշում է Ա. Նորյանը, - մի քանի անգամ գրոհ են տալիս, խտացրած շարքերով, բայց քաջարի մարտիկների մօտիկներն անմիջապէս յետ են մղում նրանց: Թշնամին բազմաթիւ դիակներ է տալիս»:<sup>21</sup>

Ռուբեն Տեր-Մինասյանը, նույնպես անդրադառնալով այդ կռվի լուսարանմանը, գրում է. «Կէսօրէ ետք, սկսած կռիւր կը շարունակուի անընդհատ, մինչեւ ուշ երեկո: Հայերը կուտան մէկ-երկու զոհեր, իսկ քիւրդերը տասէն աւելի»:<sup>22</sup>

Փիդայիները նախորդ կռիվներից քաջատեղյակ էին քրդերի կռիվներ մղելու սովորութեանը: Որպես չգրված օրենք, քրդերը կռվում էին մինչեւ մուլթն ընկնելը: Աններեք դիմադրավելով հակառակորդի շարունակաբար կրկնվող

<sup>15</sup> Խուրէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 1, էջ 131-134:

<sup>16</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:

<sup>17</sup> Տե՛ս «Պիթիւսի Մուշեղ», Կ. Պոլիս, 1919, էջ 24:

<sup>18</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:

<sup>19</sup> Ա. Նորյան, «Դրւագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից», Բոստոն, 1917, էջ 332:

<sup>20</sup> «Պիթիւսի Մուշեղ», Կ. Պոլիս, 1919, էջ 54:

<sup>21</sup> Ա. Նորյան, «Դրւագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից», էջ 332:

<sup>22</sup> Խուրէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 164:

Հարձակումներին, Հայ ֆիդայիները կոչում են մինչև մուլին ընկնելը եւ այսպէս, օգտվելով մթութեան պատճառով քրդերի դադարեցրած գրոհներէր, կարողանում են անկորուստ իջնել դիրքերէրց եւ «...Դուգախի մօտէն աննկատելի կերպով կանչնին եփարար: Ամբողջ գիշեր ճամբայ կտրելով կը Հասնին Քեօշի գիւղը, Հոգնած, բեզարած»:<sup>23</sup>

Ֆիդայիները, թեեւ չափազանց Հոգնած էին, բայց ձգտում էին ինչքան Հնարավոր է կտրվել Հակառակորդէրց եւ բարձրանալ գյուղի մերձակա ինքնավի սարը, փոքր-ինչ Հանդատանայ, այսպէս նոր ուղեւորվել Ախլաթ: Բայց, քանի որ շատ Հոգնած էին ու քաղցած, ուստի անտեսելով վտանգը, Հարկադրված մտտեցում են Հայ-քրդական խտրութեան իտար բնակչութիւն ունեցող Քեօշի գյուղէն (Ա.Նորյանի ներկայացրածը՝ Հենց այս գյուղն է -**Հ.Գ.**): Նախորդ օրվա կռիվ արձագանքները տարածվելով, Հասել էին նաեւ այդ գյուղին: Քրդերը, երկյուզելով Հայ ֆիդայիներին Հայտնվելուց, յուրաքանչյուր գյուղի մօտ կարգել էին զինված պահակախումբեր: Գյուղին մոտենալիս, խուճրդ գարձայ նկատվում է քրդերի կողմէր, որոնք, փորձելով խոչընդոտել նրանց առաջնադասումը, անմիջապէս կրակ են բացում Հայ մարտիկներին վրայ, ու միաժամանակ ֆիդայիներին Հայտնվելու մասին տեղեկացնում Համիդիէի գնդին եւ մոտակայքում գտնվող քրդական աշիրեթներին: Քանի որ քրդներ այս անգամ փոքրաքանակ էին, ուստի ֆիդայիներն անաղմուկ գործելու նպատակով, մերկացնում են դաշույները եւ Հարձակվելով նրանց վրայ՝ արագորեն ընկճում են նրանց գիմադրութիւնն եւ շարունակում իրենց ուղին: Բայց, մի քանի քրդերի այնուամենայնիվ Հաջողվում է խույս տալ Հայ մարտիկներին գաշույներին Հարվածներէրց եւ նրանց Հայտնվելու մասին տեղեկացնել Համիդիէի զինվորներին, որոնց կենտրոնը գտնվում էր Պնտոսի մոտակայքում:

«Հնու, - նշում է Կ. Սասունին, - կը նստէր Քէօշ Հիւսէին փաշան, որ կանգնած էր 2000-3000 Համիդիէներուն գլուխը: Քիչ մը աւելի դէպի արեւմուտք - Հարաւ կը տարածուէին Հասանացի Համիդիէներն ու գիւղերը, որոնց գլխաւորներու՝ Փաղէհի եւ Ռըզախի Հրամանատարութեան տակ կը գտնուէին 800 ամենաընտիր քիւրտ հեծեալները: Մօտ էր նաեւ Արիփանցի աշիրէթը, որ արդէն ընդհարում ունեցող էր խուճի Հնու եւ փնտրուուքի մէջ էր, ուզելով վրէժ լուծել երէկուայ գոհերուն Համար»:<sup>24</sup>

Նույն վկայութիւնը բառացիորեն մեջ է բերում նաեւ Ռուբենը: Մինչ Համիդիէի գնդերն ու քրդական աշիրեթները կ'Հասցնէին շտապել դեպքի վայրը, Հայ մարտիկները, Հաղթահարելով քաղցն ու Հոգնածութիւնը, Հասնում են ինքնավի սարին եւ որոշում գիշերն անցկացնել սարի վրայ:

Հաջորդ օրը, լույսը բացվելուն պէս, Համիդիէի գնդերն ու աշիրեթները պաշարում են ինքնավի սարը եւ առանց փոքր-ինչ դադար առնելու, Հարուրավոր Հրացանների Համադարկերի պաշտպանութեամբ՝ նետովում գրոհի:

«Լըրըճ կէտիւկէն, - նշում են Ռուբենն ու Կ.Սասունին, - մինչեւ Արիփան, մինչեւ ինքնավի սար եւ Մանազկերտի դաշտը՝ քրտական գիւղերը, գիւղէ գիւղ Հաւարի ազգանշան տալով, կը Հաւարուին գունդագունդ՝ պաշարելու Համար ֆետայիներու փոքրիկ խումբ մը...»:<sup>25</sup>

Իսկ Ա.Նորյանը, ներկայացնելով քրդերի առաջին Հարձակման պահը, գրում է. «Արշալույսին, երբ Հայդուկները թշնամուց շրջապատել իմանում են, չնայած յոգնածութեան եւ քաղցին, մի բույլ կը մոռանան ամէն ինչ եւ խմբի «Մահ կամ Ազատութիւն» վերտառութեամբ ծապաւէնեայ դրօշն են բարձրացնում»:<sup>26</sup>

Դիրքեր գրավելով սարի լեռնայանջրէրին, ֆիդայիներն անկտրում Համառութեամբ են անվերայ Հարվածներով կասեցնում են թշնամու գրոհները: Այդ օրը քրդերը, նախորդ կռիվ Համեմատ, ավելի կատաղութեամբ ու Համարձարութեամբ են գրոհում Հայ մարտիկների դիրքերը:

«...Ալիար քիւրտ գիւղի շէյխի երկու «թոտու» (կտիճ) տիտղոսը կրող որդիներն առանջ ընկան, եւ գնդակների տարափի տակ, կրօնական կանչերով եւ ՀայՀայտնքներով «կուռ է խորսէ՛, ամ Հաթթըն (Հոտաներու տղաներ, մենք եկանք) կանչելով՝ դէպի դիրքերը վազեցին»:<sup>27</sup>

Ֆիդայիները, տեսնելով քրդերի նման ինքնապատահ եւ արհամարական կեցվածքը, որոշում են նրանց դերի վերցնել ու արժանավույն պատժել: Այդ նպատակով, նրանք դադարեցնում են կրակը եւ Հնարավորութիւնը բնձնում քրդերին ավելի մոտենալ իրենց: Ոգեւորվելով, քրդերն ընդհուպ մոտենում են Ֆիդայիների դիրքերին:

«Այդ ժամանակ տղաներն Հրացանները դէպի նրանց ուղղեցին, պահանջելով «Թէհիւմ, թէհիւմ(անձնատուր, անձնատուր) եղէք, իշու՛ ծնունդներ...»: Հայդուկները երկուսին էլ բռնելով, ոտն ու ձեռքը կապելով՝ մօտակա խոտի դէպի մէջ ձգեցին ու լուցկիով կրակ տուին...»:<sup>28</sup>

Մինչեւ կեսօր Հնու մղելով քրդերի մեկը մյուսին Հաջողող գրոհները, ֆիդայիները կարողանում են ամուր պահել իրենց դիրքերը: Կեսօրին, քրդերը առակել մեծաքանակ ուժերով ու եռանդով, ուժգին գրոհ են ձեռնարկում եւ մի պահ արդեն մոտ էին Հաջողութեանը, գրավելու էին երկու կարեւոր դիրքեր: Եթէ քրդերին Հաջողվեր գրավել այդ երկու դիրքերը, այսպէս մարտիկները կ'Հայտնվէին անյանելի կացութեան մեջ: Բայց ֆիդայիները, զժպարագույն պահին անգամ գրեւորելով իրենց մարտական Հզոր կամքն ու ոգին, կատարում են աներեւակայելին. «... յանկարծ Աւուժ Աւազը, Բայաբեխ Կարապետը, Առաքելն ու Մուշեղը իրենց տասնեակ մը բնկերներով գրոհ կու տան յարձակողներու վրայ եւ, մեծ գոհնք պատճառելով թշնամին, կը փրկեն Երկար Նատույի վտանգուած դիրքը»:<sup>29</sup>

Այդ խիզախ գրոհէրց ոգեւորված, վճռական Հարվածներով, քրդերին իրենց դիրքերէրց Հնու են մղում նաեւ մյուս ֆիդայիները: Թեպէս Հայ մարտիկները տոնում են իրենց Հերթական Հաղթանակը, բայց նրանց շարքերն, անընդմեջ կռիվների Հետեւանքով, արդեն զգալիորեն նստացել էին: Դրան Հակառակ, քրդերի քանակը, չնայած Հարուրավոր սպանվածների, գնալով ավելի ու ավելի էր շատանում:

Ֆիդայիները, էթե նույնիսկ օժտված լինէին գերմարդկային կամքով ու գիմադրականութեամբ, այսպէս գոհված չէին գորու լինելու գիմադրելու Հակառակորդի Հերթական գրոհները: Արդեն զգացնել էր տալիս նաեւ զինվորներով, կարողանում է խույս տալ քրդերի Հետապնդումէրց եւ բազում գոհարութիւններ Հաղթահարելով, վերջապէս Հասնում Ախլաթ:

Մուլին բնկնելուն պէս, խմբի Հրամանատար Ճարտարը, Հաշվի առնելով գոհերի քանակն ու տիրող կացութիւնը, Հաժարում է դիրքերում գտնվող 25 մարտիկների եւ իջնելով սարից, փորձում է կտրվել Հակառակորդէրց ու շարժվել Ախլաթ:

Սակայն, Համիդիէի զինվորները նկատում եւ կրակ են բացում նրանց վրայ: Ֆիդայիներէրց մի քանիսը գոհվում են, իսկ Ճարտարը, մի քանի զինվորներով, կարողանում է խույս տալ քրդերի Հետապնդումէրց եւ բազում գոհարութիւններ Հաղթահարելով, վերջապէս Հասնում Ախլաթ:

Ճարտարը, որը մինչ այդ Հմտորեն ու քաջարար էր վարել կռիվները, այդ պահին մարտավարական սխալ է թույլ տալիս: Այն պահին, երբ նա 25 մարտիկներով իջնում էր սարից, այնտեղ գեռեւս մտացել էին ֆիդայիների մի մասը:

«Մինչ Ճարտարը, - նշում են Ռուբենն ու Կ. Սասունին, - կը ջնջր գաշտ եւ կռու տալով Ճարայ կուզեր բանալ իր խուճիին Համար, Բայաբեխ Կարապետը իր

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 601:

<sup>25</sup> Ռուբեն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 165, Կ. Սասունի,

<sup>26</sup> «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 601:

<sup>27</sup> Ա. Նորյան, «Դրականեր Հ.Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից», էջ 333:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 334:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Ռուբեն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 166, Կ. Սասունի,

«Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 602:

տասնեակ մը զինուորներով ինքնախնայ բարձունքներու վրայ կը փնտռէր ձարտարը»։<sup>30</sup>

Չգտնելով ձարտարին, Բայրբեխ Կարապետը իր մարտիկներով անկարող լինելով սարից իջնել, Հարկադրված տեղափոխվում է սարի մեկ այլ տեղ եւ ապաստանում չորացած խոտերի մեջ: Նկատելով դա, քրդերը վառում են չորացած խոտը, եւ կրակը տարածվելով՝ մոտենում է այն տեղին, ուր պատասպարվել էր Կարապետի տասնյակը: Քրդերը, համոզվելով, որ ֆիդայիներն այլեւս չունեն փրկվելու որեւէ հնարավորութիւն, կրակի հետեւից բարձրանում եւ բնօրէնու պատանում են ֆիդայիներին: Ելքը միակն էր. Բայրբեխ Կարապետի ֆիդայիներն, անպասկոյորեն դուրս են թռչում բոցերի միջից եւ անվրեպ հարվածներ ստղայով, շարունակում են կռիվը մինչեւ երեկո: «Նորէն, - գրում է Խուբենը, - մութը կիյնա եւ Բայրբեխ Կարապետ իր խուճրով աննկատելի կերպով կը բռնէ Քաքաուլի ճամբան: Քանի մը օր ետք կը հասնի Նէմրութ, գարմանք պատճառելով իր ընկերներուն եւ Աղբիւր Սերբին»։<sup>31</sup>

Իսկ Մուշեղի, Առաքելի եւ Առյուծ Ավագի մարտիկներին սպասում էին նոր զոժարին փորձութիւններ: Այդ խումբը, ինքնավար կռիւց հետո Ախլաթ ուղեւորվելիս, նույն օրը երեկոյան հասնում է Չավուշ եւ Բալմոնց սարերի մոտ ու փորձում մի փոքր հանգստանայ այդ սարերից մեկի վրա: Համիդէի զինվորներն ու քուրդ զինյալները, որոնք կրնկակոխ հետապնդում էին, հասնում են նրանց եւ դարձնալ ֆիդայիները հայտնվում են թշնամու օդակում: Հայ մարտիկները, մտահայտով հոգնածութիւնը, սրագործն դիրքեր են գրավում եւ սպասում հակառակորդի հարձակմանը:

«Տղաներու, - նշում է «Դրօշակ»-ը, - ապաստանած ամբողջ լեռը պաշարում էր թշնամիի բազմաթիւ զօրքերով: Ե՛վ ահա սկսւում է համազարկերը թշնամու յառաջապահներու կողմից դէպի մէջ հայդուկներու դիրքերը»։<sup>32</sup>

Այդ օրը, քրդերը հակառակ իրենց սովորութիւնը, թեեւ ոչ այնքան ուժգնութեամբ, գրոհներ են ձեռնարկում նաեւ գիշերը: Առավոտյան, շարտադրչտում են հայտնվում քրդական նոր հրոսակախմբեր եւ կռիվը բորբոքվում է առավել մեծ ուժգնութեամբ ու ծավալով:

Մուշեղը, որը տասնձնել էր ֆիդայիների հրամանատարութիւնը, «նկատի առնելով, որ թշնամին իր պաշարման օդակը ավելի պիտի թանձրացնէ, կը հրահանգէ ընկերներուն լեռն ի վեր մերթ կուէլ, մերթ առաջանալ դէպի

Մարմարու գետը»։<sup>33</sup>

Ֆիդայիներին, ճկուն մարտավարութիւն կիրառելով, հաջողվում է կտրվել հակառակորդից եւ անընդհատ առաջանալով, հաջորդ օրն առավոտյան հասնում են Հայկական Գարապայա գյուղի մոտ եւ ապաստանում Առահուտ բերդի ստորոտում գտնվող քարայրում: Քանի որ չափազանց հոգնած էին, փակում են քարայրի բոլոր մուտքերն ու քնում: Առավոտյան ֆիդայիները դուրս են գալիս քարայրից եւ հանդիպում ճիշտ նույն պահին այդ տեղով անցնող թուրք ոստիկաններին:

Դիպուկ հարվածներով փախուստի մասնելով ոստիկաններին, հայդուկները «... կերթան Մանազկերտի Բերդի վրայով դէպի Եփրատ գետի եզերքը գտնուող աւերակ ջրաղացը, ու հոն կը մընան գիշերը: (Ավէրակ ջրաղացը Մանազկերտի գյուղաքաղաքէն կէս ժամ հեռու է, ինքնուր եւ Եփրատ գետերի միացման տեղը)»։<sup>34</sup>

Մի քանի օր անընդմեջ կռվելով ու տեղաշարժվելով, ֆիդայիները, չունենալով սնվելու որեւէ հնարավորութիւն, հարկադրված հավաքում են ջրաղացի պատերին ու անկյուններում մնացած այլուրը, եւ քանի որ թշնամին գետեւ չէր երեւում, կրակ են վառում եւ բաղարջ թխում: Առավոտյան, ջրաղացի մտակայքով անցնող մի քուրդ, նկատելով ծխնելույցից բարձրացող ծուխը եւ կարծես հասկանալով, որ այնտեղ կարող են ապաստանել միայն հայ ֆիդայիները, շտապում է

Մանազկերտ ու այդ մասին հայտնում ոստիկանութեանը: Տեղեկանալով ջրաղացում ֆիդայիների գտնվելու մասին, ոստիկանական ուժերը, համիդէիական ջոկատներն ու քրդական աշխրեթները, որոնք ամենուրեք որոնում էին նրանց, անմիջապէս ուղեւորվում են քրդի մասնանշած վայրն ու չորս կողմից պաշարում ջրաղացում ապաստանած ֆիդայիներին։<sup>35</sup>

Պաշարելով ջրաղացը, զորքի եւ ոստիկանների հրամանատարութիւնը, նախքան ուղեւորական գործողութիւններ ձեռնարկելը, իրենց տեղեկութիւն հայտնած քրդի ուղարկում են պարզելու հայ մարտիկների այնտեղ գտնվելու իսկութիւնը:

«Քիւրդը վարանումով կը մօտենայ ջրաղացին, բայց դէռ չմտնեցած՝ կը նշմարէի Մուշեղին ամենատես աչքերէն: Մուշեղ խորհելով, որ իրենց դիրքի մասին կրնար տեղեկութիւն հաղորդել՝ մուտէնիի գնդակով մը գետին կը տապալե գայն»։<sup>36</sup>

Տեսնելով իրենց լրտեսի վախճանը, թուրք զինվորներն ու քրդերը չորս կողմից կրակում են եւ փորձում առաջնայ գեպի ջրաղացը: Պատասպարվելով պատերի ետեւում եւ խնայելով փամփուշտները, ֆիդայիները, մերթ ընդ մերթ արձակած, բայց անվրեպ հարվածներով, խափանում են ջրաղացին առավելագույնս մոտենալ ձգտելու հակառակորդի փորձերը:

Իրենց զարկերն առավել արդյունավետ ու ազդեցիկ դարձնելու եւ թշնամու հարձակումներն ավելի դյուրութեամբ հետ մղելու նպատակով, հայդուկները փոքրիկ ճեղքեր են բացում պատերի մէջ եւ այնտեղից սկսում են դիպուկ նշանառութեամբ գնդակահարել հարձակվողներին: Հայ մարտիկների հերոսական դիմագրութիւնից դազազած, թուրք զինվորներն ու քրդերը, կեսօրին համարելով իրենց մարտաշարքերը, կատաղի գրոհ են ձեռնարկում:

«Հարիւրապետ մը, - նշում է «Դրօշակ»-ը, - բանակին մէջ կը գտնուէր, կատարուած եղերական ամուլթենէն կատող՝ զօրաց խուռն բազմութեամբ մը կը խուժէ դէպի կամուրջ, բայց դէռ կամուրջին կէսը չհասած, Մուշեղը իր հրաշայի նշանառութեամբ, գնդակը կը գետեղէ անոր ճակտին...»։<sup>37</sup>

Թուրք հարուրապետի ճակատագրին են արժանանում հարձակվողներից շատերը, որոնք փորձում էին անցնել Եփրատ եւ ինքնուր զետերի կամուրջներն ու մոտենալ ջրաղացին: Տեսնելով, որ սուկ գրոհներով հնարավոր չէ ընկճել ֆիդայիների դիմադրութիւնը, հակառակորդը որոշում է ցախ, չոր խոտ, փուշ եւ տոտակ լցնել ջրաղացի չորս կողմերն ու այն կրակի տալ: Իսկ քրդերից մի քանիսը բարձրանում են տանիքն ու փորձում երդկից քարոլու լցնել ջրաղացի ներսը ու չորս բոլորն եւ ապա այրել: Սակայն, հայդուկները, լսելով քրդերի ոտնաձայները, վարպետներն գնդակահարում են տանիք բարձրացնողներին ու խափանում թշնամու այդ ձեռնարկումը։<sup>38</sup> «Մութն, - գրում է Խուբենը, - իյնալուս պէս ֆետայիները դուրս կելլեն ջրաղացի ծորակով...»։<sup>39</sup> Լուսարացին, թշնամին անտեղյակ ֆիդայիների՝ գիշերային աննկատ հեռանալուց, վերսկսում է կրակ տեղալ ջրաղացի վրա, իսկ ֆիդայիներն արդեն հետացել էին: Հաջորդ օրը, առավոտյան, նրանք հասնում են Բուլանուխի Շեխ-Աղուս գյուղը եւ նրա մտակա ձորերից մեկում մի փոքր հանգստանում, ու ապա շարունակելով իրենց ուղին, երեք օր անց՝ վերջապէս հասնում են Ախլաթ գավառ եւ որոշում փոքր ինչ դադար առնել Փրիտուս եւ Ալրաձոր գյուղերի արանքում գտնվող Սուլխան ձորում:

Կարսից մինչեւ Տարոն ձգվող տարածքը, ինչպէս արդեն նշել ենք, ամենախիստ կերպով Տակվում էր թուրքական զորամասերի, համիդէական գնդերի, քրդերի ու չերքեզների կողմից: Ե՛վ պատահական չէ, որ նրանք շատ արագ տեղեկանում են Սուլխան ձորում ֆիդայիների գտնվելու մասին եւ անհապաղ ձեռնարկում համապատասխան միջոցներ. «... Փրիտուէն զօրքեր, թիւով 200, Ախճալեքան եւ Խուլիկի գիւղերի չերքերգները Ալի Բէգի առաջնորդութեամբ,

<sup>30</sup> Խուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 166, Կ. Սասունի.

<sup>31</sup> Պատմութիւն Տարօնի աշխարհոյ», Պէլլութ, 1957, էջ 602:

<sup>32</sup> Խուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 167:

<sup>33</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

<sup>34</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

<sup>35</sup> Խուլի տեղում:

<sup>35</sup> Տե՛ս, «Պիթլիսից Մուշեղ», էջ 39:

<sup>36</sup> Խուլի տեղում:

<sup>37</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

<sup>38</sup> Խուլի տեղում:

<sup>39</sup> Խուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 168:

Ախլաթի զորքերն ու թիւրքերը մօտ Հարիւր ձիաւորներ կը դան ու կը պաշարեն Մուշեղի ապստանած վայրը»:<sup>40</sup>

Փիղալիներն, այս անգամ եւս, բնալ չընկճվելով թշնամու բազմաբանակութիւնից, աննահանջ դիմադրում են: Այաշկերտից մինչեւ Ախլաթ գինատար խմբի մղած զարմանահրաշ կռիվների արձագանքները տարածվելով, արդեն Հասել էին նաեւ Ախլաթ: Այն պահին, երբ թշնամին շտապում էր պաշարել Մուշեղի ձորում ապստանած Հայ մարտիկներին, Աղբյուր Սերոբը, տեղեկանալով իր զինակիցներին սպառնացող վտանգի մասին, նեմրութի բարձունքներից շտապում է օգնութիւն: Հակառակորդի ուշադրութիւնը չգրգռելու եւ նրան անակնկալ մատուցելու նպատակով, նա, իր զինվորներին ծպտելով քրդական համազգեստներով, աննկատ Հայտնվում է մարտադաշտում ու, թիկունքից սրընթաց հարձակում ձեռնարկելով, ճեղքում է թշնամու մարտաշարքերը եւ մոտենում իր զինակիցների զիրքերին: Առաքելը, Մուշեղն ու մյուս ֆիղալիները, կարծելով, որ իրենց զիրքերին մոտեցողները քրդերն են, կրակ են բացում Աղբյուր Սերոբի մարտիկների վրա:

«Յանկարծ անսպասելիորէն կը լսի Սերոբ Աղբիւրի ձայնը, որ կը պոռայ.

- «Մուշեղ ջան, այդ ի՞նչ է քո արածը, ես ահաւոր կռիւներ մղելով Հագիվ յաջողեցայ թշնամու շղթան պատռել ու անցնել եւ ձեզ օգնութեան հասնել, դուն մեր վրա կրակ կը բանաս»:

Մուշեղը գիրքէն ցատկելով կը վազի դէպի կտրիճ Սերոբը, ու կը փաթաթւի նրա վզով»:<sup>41</sup>

Մարտադաշտում Աղբյուր Սերոբի անսպասելի Հայտնվելն ավելի է ոգեւորում մինչ այդ էլ արիւարար մարտնչող ֆիղալիներին: Հայ մարտիկների երկու խմբերը միանալով, այս անգամ արդեն իրենց Հայդուկապետի՝ Աղբյուր Սերոբի առաջնորդութեամբ, վճռական եւ անկասելի հարվածներով խորտակում են թշնամու արգելապատնէներն ու բարձրանում նեմրութ:

«Զինատար խումբի, - նշում է Ռուբենը, - այս կռիւները խոր սպառնութիւն ձգեցին Հայերուն եւ քիւրդ աշիրեթներու վրայ: Այդ բոլս մը Հայ զինուորները, ուռսական սահմանէն սկսած, շատ մը կռիւներ ունենալով Հասած էին մինչեւ նեմրութ...»

Իրենց երգերուն մէջ քիւրտերը անէցք եւ գովք կուղղէին ջան ֆետալիներուն: Հայերն ալ երգեր հիւսեցին ինքնախոյզ կռիւներուն համար: Այդ երգերէն ամենէն տարածուածն է. «Առաքել, Մուշեղ, լեռներից իջան, աւերակ ջաղաց իջեան եղան» երգը»:<sup>42</sup>

#### Համլետ Գեւորգյան

պատմական գիտութիւնների թեկնածու

### ОТРЫВКИ ИЗ ИСТОРИИ БОЕВЫХ И ОРУЖЕНОСНЫХ ГРУПП (1898Г.)

#### РЕЗЮМЕ

В национально-освободительной борьбе армянского народа в кон-це 19 и в начале 20 веков особенное значение имела деятельность боевых и оруженосных групп.

Подавляющее большинство групп, отправляющихся в Западную Армению, было образовано по инициативе и непосредственном участии армянского революционного союза Дашнакцутюн.

Они частичными действиями и показательными выступлениями должны были осуществить самое главное — свергнуть вековое ярмо Османской империи и освободить Западную Армению.

Форму такой борьбы обосновали в своих взглядах некоторые дашнакские руководящие деятели, как например Кр. Микаелян.

<sup>40</sup> «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

<sup>41</sup> «Պիթիսցի Մուշեղ», էջ 48:

<sup>42</sup> Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 168:

Отправляя боевые и оруженосные группы в Западную Армению, армянский революционный союз Дашнакцутюн важное значение придавал также Карсскому вилаету.

Начиная с первой боевой группы — группы Гуно (Арутюн Ага Тер-Мартirosян), в Карской области, но приблизительным данным, в 1890-1899 годах были сгруппированы и отправлены в Западную Армению более чем 20 боевых и оруженосных групп, из которых нескольким группам удалось дойти до Тарона, Сасуна, Эрзрума и Басена.

Примером борьбы оруженосных групп служит переход фидаинов в Ахлат из Карса под руководством племянника Ахбюр Сероба Чартара (Варданян Акон).

В 1898г. группа выходит из Карса и пытается незаметно перейти через Алашкерт, Маназкерт, Буланух в Ахлат.

По пути группа имела множество вооруженных столкновений с турками и курдами. Группе удалось освободиться от преследователей и продолжить свой путь.

**Գамлет Եգորյան**  
кандидат исторических наук

### ԱՆՏՈՒԱՆ ՊՈՒԱԴԻԲԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անտուան Պուադերարը, սկզբում որպէս Ֆրանսիայի Լիոնի նահանգի ճիզվիտների միախնդիր Անատոլիայում, հետո Հայաստանի Հանրապետութիւնում (1918-1920թթ.) ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ, ապա Բելլուրթի Սուրբ Հովսեփի Համալսարանի դասախոս ակտիվ գործունեութիւն է ծավալել Արեւելքում՝ տարածաշրջան, ուր խաչածեւով էին երեք կայսրութիւնների՝ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Պարսկաստանի ճանապարհները եւ այն ժամանակաշրջանում, երբ տեղի էին ունենում Առաջին աշխարհամարտի քաղաքական փոփոխութիւնները, ինչպիսիք էին՝ Օսմանյան եւ Ռուսական կայսրութիւնների անկումը: Նրա ամբողջ գործունեութիւնն արտացոլված է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարութեան (Բե դե Օրսէյի) արխիվի, Վիսենի երկրի ռազմական պատմութեան արխիվի եւ Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում եւ նյութերում:



Անտուան Պուադերարը ծնվել է 1878թ. հոկտեմբերի 11-ին Լիոնում<sup>1</sup>: Լիոնի ճիզվիտների Սուրբ Հովսեփ քոյեջի ինտերնատում ուսումնալսողության ընթացքում, 1897թ. հունիսի 2-ին մտել է էքսան-Պրովանսի ճիզվիտների եղբայրության շարքերը: Իր գինվորական մասայությունն ավարտելուց հետո (1900թ.), նա մեկ տարի դասական գրականություն է ուսանում Լավալում, մինչ այդ ձեռնարկելով փրիլոսոփայության ուսումնասիրությունը, ինչը նա շարունակում է Ժերոնյ կղզում (1901-1904թթ.):

19-րդ դարի վերջերին, Ֆրանսիայում բարձրանում է հակակղերական ուժերի ալիք, որն ուղեկցվում է Ֆրանսիայից ճիզվիտների արտաքսումով: Ֆրանսիայից սեղանահանված ճիզվիտներն իրենց տեղն ամրապնդում էին արտասահմանում գործող իրենց առաքելություններում, որտեղ վայելում էին կառավարությունից օգնությունն ու աջակցությունը, քանզի, կառավարությունը, հանձնին նրանց, տեսնում էր տարածաշրջանում ֆրանսիական մշակույթի ու ազգայնությունից արդյունավետ տարածողների: Իսկ Ֆրանսիան, իր վրա էր վերցրել տարածաշրջանի, հատկապես արևելքի «քրիստոնյաների հովանավորող» դերը:

1904թ. գալով Թոքսո (Փոքր Ասիա), Ա. Պուադերարը ստանձնեց Հայաստանյան Առաքելության պաշտոններից մեկը: Թոքսոսում նա մնաց մինչև 1907թ., որտեղ եւ սովորեց Հայերեն եւ թուրքերեն: Աստվածաբանություն գծով ուսումը շարունակելու նպատակով, նա վերադարձավ Եվրոպա (1907-1910թթ.): 1910թ. հուլիսի 10-ին Լիոնում, նա դարձավ քահանա: Կրկին որպես միսիոներ, Պուադերարը մեկնում է Հայաստան, սկզբում Մարսիվան (1911-1912թթ.), ապա՝ Ավալ (1912-1914թթ.):

### Հայաստանյան Առաքելությունը<sup>3</sup>

Հայաստանյան Առաքելությունը ստեղծվել է 1881թ. ճիզվիտ Ամեդե դե Դամարի կողմից: 17 տարեկանում մտնելով ճիզվիտների շարքերը, ապա Դրեմի պատերազմի տարիներին (1854-1856թթ.) նշանակվելով գինվորական քահանա եւ դաւնալով Միլիտան Առաքելության պրոկուրոր, երկար տարիներ եղել է Մերձավոր Արեւելքում:

Նա 60 տարեկան էր, երբ Լեոն XIII պապի կողմից ստանձնեց Հայաստանյան Առաքելության Հիմնադրումը<sup>4</sup>: Այս հաստատությունը կազմում էր կաթոլիկ միսիոներների ռազմավարության բաղկացուցիչ մասը: Պապը հույս ուներ, որ «օրթոդոքս» (արեւելյան քրիստոնյաները) գանգաձեռներ կկրթադասնան Հռոմեական եկեղեցու գիրկը: Լեոն XIII-ը ցանկանում էր նաև արձագանքել Օսմանյան կայսրության բազմակարգ մեծաթիվ կաթոլիկ Հայերի (1880թ. կազմում էին 57 000 մարդ) կոչին, որը վերջ էր դնում իրար դեմ դուրս եկած հասունյաններին եւ հակահասունյաններին<sup>5</sup>:

<sup>1</sup> Կենսագրական տվյալների հետ կապված բազմաթիվ մանրամասներ գեոեղված են Անտուան Պուադերարի անձնական գործում, որը պահվում է Ֆրանսիայի ճիզվիտների արխիվում՝ Վանվիտում (92):

<sup>2</sup> Հայաստանյան Առաքելության մասին տես հաջորդիվ-Ա.Տ-Մ.:

<sup>3</sup> Տես՝ Հայաստանյան Առաքելության մասին 1914-1921թթ. նյութերը՝ Վանվիի Ֆրանսիայի ճիզվիտների արխիվային փաստաթղթերում (այսուհետ ԱԺԲ - Ֆրանսիայի ճիզվիտների արխիվ):

<sup>4</sup> Մինչև XIX-դ. կեսերը Լեմոնիտան (Հայաստան) հասկացությունը օսմանյան արխիվներում նշանակում է անտի Գոքը եւ Մեծ Հայաստանների տարածքները: Հասկացությունն ու արտահայտությունը անհետացավ վիլայիթների ռեֆորմից հետո (1864թ.), բայց շարունակում էր օգտագործվել արեւմտյան գրասենյակների, արեւմտյան ճանապարհորդների եւ Հայ գրողների մոտ:

<sup>5</sup> Պատակումը վիճաբանության արդյունք էր, որն իբր էր հակադրում Պիոս IX պապի կողմից Կոնստանդնուպոլսում նշանակված եւ Օսմանյան իշխանությունների կողմից ճանաչված Հայ կաթոլիկ նշանավոր մեծահարուստ, արքեպիսկոպոս Հասունի (1845թ.) եւ Կլիկիայի կաթոլիկ Հայերի պատրիարք Միլեթյան Պիոս VIII (որի նստավայրը գտնվում էր Բլումբուրգում՝ Լիբանան) հետադարձի միջև: Այս վերջինիս մահից հետո (1866թ.) նրան ժառանգեց Հասունը՝ Անտոնիոս Պիոս IX անվամբ եւ ապիտով Պոնտիֆիկատի թուլյալությունների վերածված Հայ կաթոլիկների միակ հոգեւոր առաջնորդը: Նրա նվիրվածությունը Պիոս IX, նրա հնազանդությունը Հռոմին, նրա տիրապետչությունը իր դեմ հանեցին Հայ

Ամեդե դե Դաման ուղեւորվեց Անատոլիա եւ ընտրեց Հայաստանյան Առաքելության վեց առաջին կայանների վայրը՝ Ադանա, Կեսարիա, Ավալ, Թոքսո, Ամասիա, Մարսիվան, որոնց, չնայած բազմաթիվ դժվարություններին, ավելացան Ավալի եւ Կեսարիայի միջև տեղակայված վեց գյուղական կայանները եւ Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված Սամսունի պրոկուրորին: Որպեսզի իրավուն ունենա բանակցել թուրքական եւ ֆրանսիական իշխանությունների հետ, Դաման Առաքելության բարձրագույն եւ տնտեսական ղեկավարության նստավայրը տեղակայել էր Կոնստանդնուպոլսում, որտեղից եւ ղեկավարում էր բոլորին: Առաքելության տարբեր բաժանմունքներում տեղավորվել էին 40 ճիզվիտ միսիոներներ, Սուրբ Մարիամի 3 վանական, Լիոնի Սուրբ Ժոզեֆի միաբանությունից 78 հոգեւորական, «որոնց պետք է ավելացնել 3 հոգեւորական, 78 տեղաբնակ ուսուցիչ եւ ուսուցչուհի»<sup>1</sup>: Կոնստանդնուպոլսում նա կազմեց իր «Հայացք դեպի Հայաստան»<sup>2</sup> Հիմնավոր պատմական աշխատություն-վերլուծությունը, որում հաստատվում է Հայ առաքելական եկեղեցու դիմագրությունը ճիզվիտներին, որոնք գրասարկվում էին որպես հերետիկոսներ: 1892թ. Դաման վերադառավ Ֆրանսիա: Այսպիսով, Հայաստանյան Առաքելությունը տարածվում էր Միջերկրականից դեպի Սև ծով ընկած տարածքների վրա եւ ընդգրկում Ավալի եւ Ադանայի վիլայեթները, որ բնակվում էր Հայկական բնակչության զգալի հատվածը<sup>3</sup>:

Առաքելության աշխատանքները իրականացվում էին չորս ուղղություններով. կրթական, բարեգործական ավետարանական (դավանափոխություն իրականացում), օպագրական: Մինչև 1914թ., Օսմանյան կայսրությունում կրթական բնագավառը եղել է կաթոլիկ կամ բողոքական՝ ֆրանսիացի, ամերիկացի, իտալացի կամ գերմանացի միսիոներների աշխատանքային Հիմնական ուղղությունը: Հայաստանյան Առաքելությունը չէր խախտել այս կանոնը. «Առաքելության աշխատանքի Հիմնական նպատակը իր Հիմնադրումից սկսած եղել է դպրոցը: Զանքերը, որ գործադրում են մեր մրցակիցները, որպեսզի իրենց կողմը գրավեն բոլոր երեխաներին, վիայում են, որ մեզ անհրաժեշտ է անհապաղ վերսկսել այս կարևոր ու Հիմնարար աշխատանքը»<sup>4</sup>: 1910թ. մարտին, արական անվճար դպրոցներում սովորում էր 1218 աշակերտ, իսկ իգականում՝ 1975: Վճարովի դպրոցներում, որտեղ ուսուցման մոլարդական ավելի բարձր էր, սովորում էր 590 տղա եւ 525 աղջիկ: Բոլորը միասին՝ 4308 աշակերտ: 1912 թ. մարտին այս թիվը հասավ 4978-ի, իսկ 1913թ. մարտին՝ 5740-ի: Արդյունքները բավականին ակնառու եւ ազդեցիկ էին: Այս դպրոցներում, գրասկան առարկաների հետ մեկտեղ սովորում էին նաև Հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն եւ «Հիմնական լեզուն»<sup>5</sup>: Չնայած դպրոցների մի մասը ընդունում էին միայն մահմեդական երեխաների, սակայն դպրոցականների Հիմնական գանգաձեռ ուներ Հայկական ծագում. «Հայերը հասկանում էին գիտելիքների կարևորությունը եւ անհրաժեշտությունը: Նրանք շատ ընդունակ էին, դուրսվելու սովորում էին օտար լեզուները եւ Հիմնականում ցուցաբերում էին մեծ աշխատասիրություն: Օրինակ,

հոգեւորականության մի մասին: 1870թ. Վատիկանի ժողովից հետո գծությունը սրվեց «արեւելյան կաթոլիկների» պատկանումով, որոնք պոնտիֆիկալ անդադրություն սկզբունքների եւ հակահասունյանականներին եկեղեցուց վտարելու կողմնակիցներ էին: Սակայն IX -ից առավել ճնշված Լեոն XIII-ը հասավ նրանց հնազանդության: Հասունի նշանակեց կարդինալ (1880թ.) եւ նրան հրավիրեց Հռոմ, որտեղ էլ 1884թ. նա մահացավ:

<sup>1</sup> ԱԺԲ, Հայկական Առաքելություն, 6-րդ փաթեթ, փաստաթուղթ 13, (ca 1919): Կատարված է արքա Ժալյերի ստորագրությամբ:

<sup>2</sup> Amédée de Damas, Coup d'oeil sur l'Arménie. Փոքր Ասիայում Լեոն XIII պապի հրամանով ճիզվիտների Առաքելության բացման վերաբերյալ», Լիոն եւ Փարիզ, 1888թ.:

<sup>3</sup> Համաձայն Կոնստանդնուպոլսի Հայկական պատրիարքարանի մարդահամարի (1914թ.), Ավալի վիլայեթում հաշվվում էր 204 472 հայ, իսկ Ադանայում՝ 83 733 մարդ: Տես Ռ. Kevorkian et P. Paboudjian «Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide», Paris, 1992.:

<sup>4</sup> ԱԺԲ, Հայաստանի, Եգիպտոսի եւ Սիրիայի Առաքելությունները, 28, էջ. 384, «Կլավիտո Դանտոյի նամակը Առաքելության Հայերին եւ Եղբայրներին, որն արվել է Արեւելք իր վերադառնալուց հետո 1914թ. հունվարի 16-ին»:

Ավագում Հասարակ ընտանիքների զավակները, որոնք անշուշտ չգիտեին ժամացույցի մասին, դպրոց էին գալիս առավոտյան ժամը 4-ին»<sup>1</sup>:

Ի Հակակչիս միսիոներների կրթական գործունեությունը, Կ.Պոլսի Հայ պատրիարքարանը Հայկական մշակութային ընկերությունների միջոցով ստեղծում էր «ազգային» դպրոցներ, որոնք Համապատասխանելու էին կրթական պահանջներին և Հավասարակշռելու էին միսիոներների ազդեցությունը<sup>2</sup>:

Բարեգործական աշխատանքն իրականացվում էր նրկու որբանոցում, փոքրիկ Հոսպիտալում, վեց դիսպանսերում, որոնք բաց էին բոլորի Համար՝ անկախ կրոնական պատկանելությունից: Տպագրություն աշխատանքը կայանում էր նրանում, որ Հայերեն և թուրքերեն էին թարգմանում Աստվածաշնչի որոշ Հատվածներ: Այս առումով ճիզվիտները, ոչ առանց Հուճորի, պնդում էին, որ ամերիկյան միսիոներներն ի շնորհիվ ֆինանսական մեծ ռեսուրսների, ավելացնում էին բրոշյուրներ, ամսագրերի և թերթերի Հրատարակությունը և դրանով այդ բնագավառը վերցնում ֆրանսիացիներէց:

Չնայած Ամասիայում և Ավագում արձանագրված՝ կաթողիկոսություն ընդունելու որոշ դեպքերի, ճիզվիտների Համար սա մեծ ձախողում էր:

#### Անտուան Պուաղեբարն Անատոլիայում

Ճիզվիտների արխիվներն աննշան բեկորներ են պահպանել Փոքր Ասիայում Անտուան Պուաղեբարի անցկացրած յոթ տարիների գործունեությունը վերաբերյալ: Ոչինչ չի կարելի գտնել նրա նաեւ այն գեկուցագրում կամ «միսիոների պատմվածքում», որը Հրատարակվել էր նրա անունից: Կարելի է միայն ասել, որ լինելով Հավատքի մարզ և Հիմնվելով Առաքելության իր գործընկերների վրա, Պուաղեբարը չէր խախտում իր պարտավորությունները, կատարում էր իր աշխատանքը, եմթարկվում էր Միաբանության կարգ ու կանոնին և չէր դրսևւորում առանձնահատուկ կրոնական մոլեռանդություն:

Յոթ տարի շարունակ ճանապարհորդելով Անատոլիայում, յուրաքանչյուր քալլի Ա.Պուաղեբարը ծանոթանում էր տեղական բնակչության՝ Հայերի, ինչպես նաև թուրքերի, Հերբեզների և այլ թրքախոսների ապրելակերպին և նրանց՝ միջնորդի փոխհարաբերություններին, ինչպես նաև Օսմանյան իշխանությունների քաղաքականությունը:

Նա, սակայն, գարմանայի լուսնություն պահպանեց Հայաստանյան առաքելության մաս կազմող Ադանայի Հայության կոտորածների (1909թ. մարտ-ապրիլ) վերաբերյալ:

Ավագ՝ Փրանսիայի իշխանավորին ուղղված երկու նամակում (1913թ. փետրվարի 15 և փետրվարի 18) Հստակ երեւում է Պուաղեբարի աշխատանքը. «Ի՞նչ ասենք Ավագի մասին: Ցրտաշունչ ձմեռ է: Հարավային քամին Հայեցնում է ձյան կույտը, որը ծածկել է տները, փակել է ճանապարհներն ու փողոցները: Կ.Պոլսի փոստը Ավագ Հասով միայն անցյալ շաբաթ՝ 20 օրում... Դրամի բացակայություն պատճառով բոլորին սով է սպառնում... Մեր քաղաքը ավել է մեծ թվով զինվորներ, որոնք լավ անտեւավարողներ էին, սակայն նրանց մեկնումն իրենց ընտանիքներին մատնել է չքավորություն: Պատերազմը կանգնեցրել է ամբողջ առևտուրը»<sup>3</sup>: Նույն նամակում նա ուղարկում է Կոստանդնուպոլսի Հայկական «Բյուզանդիոն» ամսագրում «որը, որպես կանոն, չէր թարգմանում իր սերը կաթողիկ միսիոներների նկատմամբ», Ավագի ճիզվիտների Հասցեին տպագրված գովաբանական հոդվածի թարգմանությունը: Կարելի է նաև տեղեկանայ, որ Ա.Պուաղեբարը Հիմնել է Ավագի «Փրանսիական խմբակը», որը բերել էր Հակասիֆային շիճուկ և Առաքելության դիսպանսերի օգնությամբ անվճար արամազրել տեղական բնակչությանը: Այս սանիտարական գործունեությունը զուգահեռ, Պուաղեբարն Առաքելության Բուլբրերի շրջանում անցկացնում էր Հայերենով

գաղնթացներ: Նա պահում էր «անձնական օրագիր», որը ցանկանում էր վերանայն ֆրանսիական Հասարակության Համար նախատեսված փոքրիկ ամսագրի<sup>4</sup>:

Ա.Պուաղեբարի միսիոներական գործունեությունը Հանդիպում էր տեղի Հայկական կուսակցությունների Հակազդեցությանը: Այդ պատճառով, նա բոլորովին չէր թարգմանում իր գայությունը Ավագի Հայության նկատմամբ. «Հեղափոխական կոմիտեները աշխատում էին ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների շրջանում, և Հակակրոնական գաղափարները տարածվում էին ամենուր...»: Այս քննադատությունը անհիմն է: Հայկական կուսակցությունները՝ Հայ Հեղափոխական գաղնակցությունը (ՀՅԳ) և սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը՝ երկու Հակամարտու և Հակակրոնական սոցիալիստական կուսակցություններ, որոնք օրինական էին և սկսած 1908թ.-ից<sup>5</sup> ներկայացված Օսմանյան Թուրքիայի խորհրդարանում, ակտիվ քարոզչություն էին տանում քաղաքների Հարաբերականորեն բազմաքանակ երիտասարդ աշակերտության շրջանում, որտեղ՝ ինչպես և ողջ Անատոլիայում, դպրոցական Հակամարտություն կար օտարալեզու դպրոցների և Հայկական «ազգային» դպրոցների միջև (1903թ. Ավագում կար 46 դպրոց, որն ուներ 4621 աշակերտ): Այս վերջինները (կուսակցությունները - Ա.Տ.Մ.) չէին թարգմանում իրենց Հակակրոնաբար ամերիկացի կամ ֆրանսիացի միսիոներների նկատմամբ, որոնք կարու էին գալթակղել իրենց երիտասարդության լավագույն Հատվածին:

#### Մեծ պատերազմը

Առաջին Համաշխարհային պատերազմը վճռական բեկում մտցրեց Անտուան Պուաղեբարի կյանքում և նրան պոկեց Հայաստանյան Առաքելությունից, ուր նա այլևս չվերադարձավ: Վերադառնալով Փրանսիա, նա որպես զինվորական քահանա, 1914թ. օգոստոսին, կամավոր անդամագրվում է 2-րդ Դրագունյան, ապա 13-րդ օդային նավատորմ, ուր և մնում է մինչև 1917թ. նոյեմբեր:

Պատերազմի ժամանակ Հրատարակած «Օդային նավատորմի զինվորական քահանայի ճանապարհորդություն օրագիրը» վերնադրով նրա ամսագիրը գրավեց Փրանսիական Հրամանատարության ուշադրությունը: Առաջին էջերը նվիրված էին Թուրքիայի ասիական շրջանների իրավիճակին (1914թ. մայիս-Հունիս): 1914թ. Հունիսի 27-ին Սարայելոյի մահափորձի ժամանակ Պուաղեբարը կրկին Ավագում էր.

«Ուսումնական տարին վերջացել էր: 1913թ. խոստումնայինց էր: Չնայած Հայկական ավանդական դպրոցների թշնամական Հակամարտությանը, մեր՝ Փրանսիական բոլջ էին գալիս Հայ ազգեցիկ ընտանիքների երեխաները... Ավարտական Հանդիսությունը, ի գարմանս թուրք բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքի բազմաշատ ազնվականություն, խոսք վերցրեց գեներալ Ավինի փաշան,

<sup>1</sup> Այս օրագիրը անհետացել է կամ Հանձնվել իր եղբորը, որպես կովկասյան Հայաստանում անցկացված օրերի օրագիր: Պուաղեբարը պահանջում էր, որ այն Հրատարակվի « միայն իր կողմից խմբագրվուց հետո »:

<sup>2</sup> A. Ter Minassian, «The Role of the Armenian Community in the Foundation and Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey 1876-1923», in M. Tunçay et J.Zürcher dir. <Socialism and Nationalism in the Ottoman Empire>, Լոնդոն և Եյու. Յոքբ. 1994թ., էջ.109-156:

<sup>3</sup> 1914թ. մարտին Ավագի ճիզվիտներն ունեին 1166 աշակերտ, մի փոքր պակաս քան նախորդ տարին: Այժ, Հայաստանյան Առաքելությունը, փաթեթ 1:

<sup>4</sup> Փրանս-թուրքական պատերազմի ժամանակ, ճիզվիտները պետք է լքեին իրենց կայանները և 1914թ. դեկտեմբերին արտագաղթեին, բացառությամբ Մամուսում գտնվող մի Սր. Հոր, որն ազգությունը թուրք էր: Իր ընկերները փախել էին, իսկ նրանց գույքը բռնագրավվել: Հայտնությունը հետո, 1919թ. որբանով որ դա Հնարավոր էր, Հայերից ոմանք վերադարձան, ֆրանսիական բանակի օգնությամբ ետ գրավեցին իրենց ունեցվածքը և Ադանայում, Մարսիվանում, Ավագում ու Ամասիայում բացեցին իրենց կայանները, որոնք մեծ զգալություններով գործեցին մինչև 1921թ., ապա փակվեցին:

<sup>5</sup> Օրագիրը պատկերում է 1914թ. Հունիսի 24-ից մինչև 1917թ. նոյեմբեր ընկած ժամանակաշրջանը: Այն Հրատարակվել է «Etudes»- ում 1917թ. մայիսին, Հ.151 և 1918թ. Հունվարին, Հ.154:

<sup>1</sup> ԱԺ, Դայաստանի, եգիպտոսի և Սիրիայի Առաքելությունները, 28, էջ. 384:

<sup>2</sup> A. Ter-Minassian, «Sociétés de culture, écoles et presse arméniennes à l'époque d'Abdul-Hamid II», Revue du monde arménien moderne et contemporain, 1997թ., էջ. 7-30:

<sup>3</sup> Տես 1909թ. մարտից-մայիս Հայր Պ.Բենուսիյին, Պ.Տաբեին, Ա.Աբադալիին գրված մանրամասն նամակները: ԱԺ, Missions de Syrie, d'Egypte et d'Armenie, 28:

<sup>4</sup> ԱԺ Mission d'Armenie, փաթեթ 1:

որի տղան մեր աշակերտներից մեկն էր. «Փրանսիային է, որ մենք պետք է վստահենք մեր գավազների կրթությունը գործը, նա է, որ աշխարհում տարածում է իսկական քաղաքակրթությունը»։ Ես բնազդաբար նայում եմ Կլյավյոր Հրամանատարության (Թուրքական բանակի-Վ.Տ.Մ.) Համար նախատեսված տեղերի շարքում գտնվող գերմանացի գնդապետի բազկաթոռին։ Բարեբախտաբար թե գժբախտաբար, բազկաթոռը դատարկ էր։ Հետո խոսեց էնվեր փաշան, սակայն, պատմադրանից սպած նրա գովաբանական խոսքում երևում էր երիտթուրքերի ազգային ֆանատիզմը... Այն (մեր ֆրանսիական խմբակն-Վ.Տ.Մ.) իր շուրջն էր Համախմբում լրջախոհ եւ աշխատասեր երիտասարդների, ովքեր Համախմբում էին Փրանսիային։ Մեր ազգային ազդեցությունը կարծես թե գործնական արդյունքների էր հասնում։ Թուրքիայի Ասիական շրջաններում Օսմանյան վարկի (Փրանսիայի կողմից հաստատված-Վ.Տ.Մ.) շուրջ ըուր բանակցություններից Հետո, վերջապես որոշվեց, որ Սամսուն-Սվազ երկաթգծի աշխատանքները եւ Սեւ ծովի նավահանգիստները տրվելու են ֆրանսիական ընկերություններին։ Արդյոք մենք կտեսնե՞ր թե ինչպես է բարձրանում ֆրանսիական ազդեցությունը՝ ուղղահայաց իլեցնելով գերմանականը (խոսքը գերմանացիների կողմից Բազկազի երկաթգծի շահագործման մասին է)»։

Մի քանի տեղ արդեն սակ էնք, որ Պուադեբարը թշնամանք էր տաժում գերմանացիների նկատմամբ, որոնց ներկայությունը թուրքիայում, նա տաքնապալի էր Համախմբում։ Բեռլինից թուրքիա ժամանած գերմանացի սպաները Կովկասյան ճակատի 10-րդ կորպուսում ինտենսիվ գինյորական մարզումներ էին անցկացնում, ինչպես նաև կրուպի հրանոթի վերջին մոդելն էին տարածումը թուրքիայում։ Գերմանացիների նկատմամբ ունեցած թշնամանքը, Պուադեբարին հանգեցնում էր Հետևյալ Հարցադրմանը. «Թուրքիայի վրա ունեցած գերմանական մեծ ազդեցությունը կործանարար չի՞ գտնա նաև Հայերի Համար։ Արդյունաբերությունը եւ առևտրով զբաղվող Հայ ազգը, որը Համախրի է Փրանսիայի եւ նրա գաշնակիցների Համար, չի՞ դառնա արդյոք մեծ խոչընդոտ գերմանական գաղութացմանը»։ 1915թ. երիտթուրքերի Հրամանով Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայերի տեղահանություններից եւ Զարդերից Հետո Հրատարակված այս գուշակությունը, որը մինչ օրս մերկացնում է գերմանացիների պատասխանատվությունը Հայերի ցեղապանության գործում, մտել է պատմագրության մեջ<sup>2</sup>։

Ծայրամասային ռազմավարություն  
1917թ. դեկտեմբերին, լեյտենանտ, ապա ժամանակավորապես կապիտան, «Մարտական ինչի» սպան Պուադեբարը, բաժանվում է գնդապետ Շարդինյի կողմից դեկավորվող Կովկասի ֆրանսիական գինյորական Առաքելությունից եւ որպես թարգմանիչ սպա գործուղվում ֆրանսիական Բանակի Կլյավյոր գորակայան<sup>3</sup>։ Կովկասում, Պարսից ժոցի Հաղորդակցության քարտեզը կազմելու այս պաշտոնում, նա նշանակվել էր մարշալ Փոչի կողմից, որի մոտ նրան տեղավորել էր գեներալ Վեյդարը<sup>4</sup>։ Փարիզում Կովկասը ընկալվում էր որպես պատանձ ուսուական եւ օսմանյան կայսրությունների ու ճանապարհների խաչմերուկ

<sup>1</sup> 1914թ. Հուլիսի 6-ին Պուադեբարը Սամսունում էր։ Փրանսիայի Հյուպատոսարանում նա ծանոթացել էր երկաթգծի մի ինժեների Հետ, որը ժամանել էր ճանապարհը շահագործելու եւ լիսհույս էր ակնկալվող եկամուտներից՝ արտահանել ցրեն, ծխախոտ, ախաուս, բժշկական օգնություն ցուցաբերել լեռնական բոցվոր քրդական ցեղերին, նպաստել ֆրանսիական ընկերության կողմից Մարզանի քարածխի Հանքի շահագործմանը, որպեսզի ֆրանսիական ինժեներները կողմից տեղանշվեն քարածխի ու պղնձի Հանքերը։

<sup>2</sup> Sbu. R. Pınon-ի պաշտպանած թեզը «La suppression des Armeniens. Methode allemande, travail turc» (Հայերի Զարգը. գերմանական մեթոդ. թուրքական աշխատանք), Փարիզ, 1916թ., V. Dadrian «Histoire du genocide armenien», Պրինսթոն, 1967թ.։

<sup>3</sup> H. de Courtivron, La Mission militaire française au Caucase, Maîtrise d'histoire, Փարիզ, Սորբոնի Համալսարան, 198թ.։ Արդյունքները վերցված են Վրինսնի SHAT-ի հիմնական արխիվներից։ Առաքելությունը ստեղծվել է 1916թ. Հոկտեմբերին։ Հղումը անհրաժեշտ է։

<sup>4</sup> Մյուսլեր Սիմոնիսը արդեն Հաստատել էր այս տարածաշրջանի կարևորությունը Կովկասում եւ Պարսից ծոցում, որն անցնում էր Հայաստանի, Գուրգեստանի եւ Միջագետքի վրայով։ Փարիզ-Լիոն, 1892թ.։

Եվրոպայի եւ Պարսկաստանի միջև, ինչպես նաև կարևորագույն ճանապարհ գեպի Հնդկաստան ու Կենտրոնական Ասիա։

Հոկտեմբերյան Հեղափոխության արդյունքում, ուսական բանակը լքեց Կովկասյան ճակատը եւ այն քաղաքվեց։ Թագավոր էնվեր փաշայի օսմանյան բանակը գրոհեց քաղաքվող ճակատը։ Նպատակը մեկն էր՝ «Իրեղեհան Հողերի» (Կարսի, Արդահանի, Բաթումի) ազատարումը, այդ շրջաններում մահմեդական բնակչության ավելացումը եւ Հետագա արշավանքը գեպի Բաքու եւ Կենտրոնական Ասիա։ 1917թ. դեկտեմբերին, Անգլիան ու Ֆրանսիան ստորագրեցին Բուշեիկյան Ռուսաստանի իրենց ազդեցություն գոտիների բաժանելու մասին կոնվեցիան։ Կովկասը (այդ թվում նաև Անդրկովկասը) բաժին հասավ Անգլիային, որը ինչդիր ուներ Սեւ եւ Կասպից ծովերում դիմադրության պատանձ ստեղծել գերմանա-թուրքական ուժերի, իսկ այնուհետև՝ բուշեիկյանի դեմ։ Անդրկովկասում ազգային ուժերի վրացական, հայկական եւ թաթարական խմբավորումների տարերային կազմակերպումը թույլ չէր տալիս կանգնեցնել օսմանյան բանակի առաջնադասումը, առավել եւս, որ նրանք ունեին տարբեր շահեր։ «Թուրքական վստահին» Հանդիման, միայն Հայերը ցուցաբերեցին պատերազմն ավարտելու պատրաստակամություն եւ 1918թ. գարնանից վաղում էին «Հայ-թուրքական պատերազմ»։ 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովկիի եւ 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրերի ընդունման միջև ընկած ժամանակահատվածում, թուրքիայի պահանջով, Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը, որը նախնական պայման էր խաղաղության ըուր բանակցությունների ժամանակ։

Ռուսաստանի անկումը փոխհատուցելու, պանթուրանիզմի նպատակների իրականացմանը խոչընդոտելու, Պարսկաստանում, Հետագայում՝ մինչև Թիֆլիս, ամենուրեք, գերմանական քարոզչությունը զբաղվող գործակալների գործունեությունը կանխելու Համար, Դաշնակիցները ցանկանում էին Համագործակցել Ադրբեջանի քրիստոնյաների՝ ջղուցիների, ասորա-սալդակալների, նեստորականների, Հայերի Հետ։ Ազգային խմբավորումները ոտքի կանգնեցնելու մասին Փարսիցի եւ Լոնդոնից հանձնարարականներ ստացած Շարդինյին, Թիֆլիսից Ուրմիա է ուղարկում լեյտենանտ Գասֆիելդին եւ ֆրանսիական շտապօգնության ներկայացուցչին։ Վերջիններս մարզախրական նպատակներով քողարկված, պետք է ստեղծեին ասորական եւ հայկական գորամիավորումներ, որոնց նպատակն էր դիմակայել օսմանյան բանակին։

Պարսկական Հերոսապատումը

1918թ. Հունվարի 26-ին, Ա. Պուադեբարը գալիս է Պարսկաստանի Համադան քաղաքը։

Սովից ավերված այս քաղաքում է, որ նա գտավ դեպի Կասպիական իր ճանապարհը դադարեցրած ու անդիակական փոքրաթիվ գորամիավորման գլուխ կանչանա՝ գլխավոր Հրամանատար Դանաթերվիլին եւ Բարաթովի ուսական բանակի մի քանի փրկված կազակների։

Շարդինյից, որին նա պետք է միանար Թիֆլիսում, լուրեր չունենալու պատճառով, Պուադեբարը ժամանակավորապես ծառայության էր մտնում Պարսկաստանում գտնվող գորակայանում ու Համարվում էր 36-րդ Հնդկական բրիգադի 2-րդ բաժնի (իմա՝ Հետախուզական բաժնի) պետ։ Այդ պաշտոնին նա մնաց մինչև պատերազմի ավարտը։ 30 մարդուց բաղկացած գորամիսին, որի կազմում էր նաև Պուադեբարը Հանձնարարվել էր Հասնել Թավրիզ եւ միանալ Նյումիայի Հայերին ու ասորիներին։ Սակայն գրկված լինելով օգնությունից եւ նյութատեխնիկական աջակցությունից, գորախումբը չի հասնում Թավրիզ եւ

<sup>1</sup> S.Afanasyan, L'Arménie, l'Azerbaïdjan et la Géorgie de l'indépendance à l'instauration du pouvoir soviétique /1917-1923/, Փարիզ, 1981թ.։

<sup>2</sup> F. Helloit, <L'ambulance française d'Urmia (1917-1918) ou le ressac de la Grande Guerre en Perse>, Studia Iranica, 1996, Հ. 25, մ. 1 էջ. 45-80։ Ուսումնասիրությունը նշանավորում է տարածաշրջանային քաղաքակրթությունը եւ դաշնակիցների պատասխանատվությունը մի ղՀասարակագրային բունություններին 1917-1918թթ.։

Հետևաբար, չի կարողանում օգնել Ուրմիայի 45.000 գաղթականներին (որոնցից 25.000-ը Վանի Հայերն էին):

1918թ. Հոկտեմբերի 30-ի Մուզրոսի զինազաղարից Հետո, Փրանսիան վավերացնում է Համաձայնագիր, որով թուրքական զորամիավորումները պետք է Հեռանային նաև Անդրկովկասից, իսկ գաշնակիցները գրավեին Բաքուն եւ Բաթումը: Այդ իսկ պատճառով, նույն օրը, վերականգնվելով և Հոմիկասի Փրանսիական ուսմական Առաքելությունը, որը հաջորդաբար ղեկավարվում է երեք նշանավոր մարդկանց՝ գնդապետ Շարդինյի, հրամատար Նոնանյուրի եւ գնդապետ Կորբելի կողմից: Դեկտեմբերի 20-ին վերագառնալով Թիֆլիս, Շարդինյին, որը միաժամանակ Անդրկովկասում եւ Գաղստանում կատարելու էր Փրանսիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի պարտականությունները, իր հրամանները ստանում էր Փրանսիայի ռազմական նախարարությունից: Նա, Համադրժակցելով անգլիացիների հետ, պետք է ստիպեր թուրքերին եւ գերմանացիներին Հեռանալ Կովկասից, վարեր Ռուսաստանի նկատմամբ Հակառուչելիկան քաղաքականությունը եւ Կովկասում անգլիական նկրտումներից պաշտպաներ Փրանսիական շահերն:

«1916 թվականի Փրանս-անգլիական Համաձայնագրեր ճանաչեց Փրանսիայի գերիշխանությունը Փոքր Հայքի (Վերին Կլիվկես), Ալազի եւ Մամուրեթ-էլ Ազիզի վրայեթների հայաշատ շրջանների նկատմամբ: Որպեսզի զժվարին հաղթանակից Հետո Փրանսիան կարողանար հաջողությամբ գործեր Արեւելքում, անհրաժեշտ էր, որ հայկական այս միջավայրում նա բաց չթողնի երես աւ երես հայ ժողովրդին իր Համակրանքը հայտնելու առիթը»:

Փրանսիայի կառավարությունը նպատակ ուներ գնդապետ Շարդինյի միջոցով «Կովկասի սովյալ հայերին» բաժանել 500 հազար Փրանկ, որը նրանց հնարավորություն կտար 20 միլիոն ռուբլու վարկ ստանալ: Այդ վարդը, գեռուս, Փրանսիայի նախարարների խորհրդի որոշմամբ բացվել էր 1917 թվականի գեկտեմբերի 17-ին «Իրչեւիկների անկարգությունն ու գերմանացիների կողմից Ռուսաստանի գրավմանը դիմակայող Կովկասի ազգաբնակչությանը օգնելու համար»:

### Չմեղը Հայաստանում<sup>3</sup>

1918թ. նոյեմբերի 5-ին Պուազերաբը ժամանեց Բաքու, ուր նա վերստին հանդիպեց անգլիական օկուպացիոն գորամիավորման հրամանատար, գեներալ Թոմսոնին եւ գնդապետ Շարդինյին: Այստեղից, նա ժամանակավորապես գործուղվեց Հայկական բանակի հրամանատար գեներալ Նազարբեկովի մոտ: 1918 թվականի դեկտեմբերի 13-ին Երեւան հասնելու համար, Պուազերաբը պետք է նախ գնար Թիֆլիս. «Հարավային Կովկասի բարձրակետ Արարատը (ուր հասնում էին Պարսից շղթան ու երեք ռուսական, թուրքական եւ պարսկական սահմանները) տեսնելուց գատ, ես երկու տարվա ընթացքում ազատ ժամանակ կունենամ ուսում-նասիրելու Կովկասի իրադարձությունները: Պարտված թուրքիան չէր ցանկանում պարտված մնալ: ...Հենվելով իր երիտասարդ, կարգապահ եւ հայրենասեր սպաների վրա, նա դուրս եկավ գաշնակիցների դեմ եւ հենարան փնտրեց խորհրդային Ռուսաստանի մոտ»:<sup>4</sup> Իրավամբ, Պուազերաբը երեւանում բացերբաց ոխակի դիմեց: Նա առաջին եկրոպացիին էր, որը հայերին ցույց տվեց Փրանսիական սպայի իր հմտությունները Կովկասի ռազմավարական եւ քաղաքական հարցերում:

Ցուրտ ձմեռանը, չվախենալով ցրտից եւ համաճարակներից, արհամարհելով սննդի եւ ընուուցման բացակայությունը, հաղթահարելով խոչընդոտները, ուշադրություն դարձնելով հաղորդակցության միջոցների (գնացք, հեռադրատուն) հազվագեղություն կամ բացակայության վրա, Պուազերաբը 1918թ. դեկտեմբերի սկզբից ախտիվ գործունեություն է ծավալում, որն արտահայտվում էր Թիֆլիս - Ալեքսանդրապոլ - Կարս - Երեւան - Ղարաբաղիսա անընդմեջ տեղաշարժերով՝ 10 օր անցկացնելով վագոններում: ...Դա դեկտեմբերի 10-ից 29-ը ընկած ժամանակա-

հատվածն էր՝ Առաջին շիումներն անմոտանալի տպավորություններ թողեցին նրա վրա: Երեւանի կայարանում Հայաստանի կառավարության անունից նրան դիմավորում են եւ ներկայացնում գեներալ Նազարբեկովի զլիավորած զորամիավորմանը. «Այս լեռնականների սրտի խորքից հնչող ողբույնում ես զգում էի 1914, 1915, 1916 թվականների հին ռուսական բանակի ոգին, որը 1918 թվականին հայոց մարմնում գեռուս ի հեճուկս ամենի փորձում էր մարտնչել հանուն մեզ»:<sup>5</sup> Անորոշ սահմաններով (ՀՀ սահմանների չափը գեռուս չէր որոշվել) Հայաստանի Հանրապետությունը շատ փոքր է, մարդիկ շատ հուգիչ են, ունեն իրենց հավաքն ու հարգանքը, որը թե ռազմական, թե քաղաքացիական բնագավառներում ձեւավորվել է ռուսական դպրոցի ազդեցության ներքո: Սակայն միեւնույն ժամանակ նրանք ռուսացած են՝ գեներալներ Նազարբեկյան, Կորգանով (Ղորղանյան), (Հայաստանի Հանրապետության) ռազմական նախարար կամ Թիֆլիսի նախկին քաղաքապետ եւ Կովկասյան քաղաքների գաշնուխյան նախկին նախագահ Հախվերզով (Հախվերզյան), Ալեքսանդր Խատիսյան (Խատիսով կամ Հատիսով)՝ սկզբում (Հայաստանի Հանրապետության) արտաքին գործերի նախարար, ապա՝ 1919-1920 թվականներին՝ վարչապետ: Վերջինս, որին երկու պատերազմների ընթացքում Պուազերաբը հանդիպում էր Փարիզ կատարած իր յուրաքանչյուր այցի ժամանակ, նկարագրում է իրենց առաջին հանդիպումը.

«Ինձ հայտնեցին Փրանսիացի սպա Պուազերաբի մասին: Նա տեսակցություն էր խնդրում: Ասացի, որ ամիթպապես ներս թողնեն: Նա 40 տարեկան էր ու Փրանսիական համագրեստ էր կրում: Մեր հանդիպման ընթացքում պարզացեց, որ Պուազերաբը խոսում է հայերեն, քանի որ որպես միսիոններ (քարոզիչ) վեց տարի անցկացրել է Թուրքիայում: Այդ կապակցությամբ կարող եմ հետաքրքիր մանրամասներ հարդրել: Անցկացնելով մեկ օր Ալեքսանդրապոլում, Պուազերաբը հայերենով ուլույնի խոսք հղեց նրանց, ով պատիվ ուներ կայարանում նրան դիմավորելու: Հայերենին չտիրապետող (Հայկական) զորամասի հրամանատարությունը այն հասկանալի գարձնելու համար անհրաժեշտ եղավ նրա խոսքը թարգմանել ռուսերեն: Հետագայում Պուազերաբը դարձավ հայերի անկեղծ բարեկամը: Մեզ հետ կիսեց մեր բոլոր դառնություններն ու ուրախությունները»:

Սակայն, արձանագրենք, որ Պուազերաբն իր հաղորդագրություններում չի հիշատակում անկախ Հայաստանի ստեղծման գործում առաջնային դեր խաղացած այնպիսի հայ գործիչների, ինչպիսիք են Արամ Մանուկյանը կամ Հովհաննես Քաղապետունին: Միգուցե նրա համար, որ վերջիններս Հայաստանում իշխող՝ ՀՅԴ կուսակցության ղեկավարներ էին, որոնց պետական գործունեությունն առավել վճռական էր, քան նույն կուսակցության անդամ Խատիսյանին: Իրավիճակը, որը նա իր համար բացահայտում է Հայաստանում՝ կործանարար էր: Մինչեւ Երեւան ժամանելը, նա ականատես եղավ Հայաստանի եւ Վրաստանի միջև ծագած պատերազմին (1918 դեկտեմբեր - 1919 հունվար): Երկու կողմն էլ պահանջում էին Խորհրդային եւ Ախալքալաքի շրջանները: Վրացիները ճանապարհին կանգնեցրել էին Հայաստան օգնություն բերող գնացքը, որին երկու օր է սպասում էր լեռներով շրջապատված, Ագրբեջանի հետ Ղարաբաղին, Չանդեկոլրին եւ Նախիջևանին տիրանալու համար հակամարտության մեջ ներքաշված եւ մշտապես սովի վտանգի առկա կանգնած Հայաստանի բնակչությունը: Կովկասյան ազգությունների խճակարտում զժվարությունը բաժին էր ընկել միայն հայ ժողովրդին եւ

<sup>1</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 32-66, 10.XII.1918 au 29.XII.1918.

<sup>2</sup> A. Poidebard, <Le rôle militaire des Arméniens sur le front du Caucase après la défection de l'armée russe (décembre 1917 à novembre 1918)>, Revue des études arméniennes, t. 1, 1920, էջ. 5-23: Պուազերաբը սրտանց հիանում էր, հեղափոխությունից Հետո ռուսական բանակի կուսից լքված, Կովկասյան ճակատում օսմանյան հարձակմանն ընդդիմացու հայկական ջակատների ինքնապաշտպանությունը: Սուրի պայմանագրի վերաբերյալ 1920 թվականից Փարիզի անսազրբերից մեկում հրատարակված հոգվածում Պուազերաբը ներկայացնում է քաղաքական նպատակները: Այս հարցի շուրջ տես. Ա.Ֆանասյան, նշվ. աշխ.: Ter Minassian, La République d'Arménie, նշվ. աշխ.: G. Korganoff, La participation des Arméniens à la guerre mondiale sur le front du Caucase (1914-1918), Paris, 1927.

<sup>3</sup> Ա.Խատիսյան, նշվ. աշխ., էջ 173: Ա.Խատիսյանը (1874-1945) Հայաստանի խորհրդայնացումից Հետո, արտասովից Փարիզ, որտեղ դարձավ Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ, ապա՝ նախագահ:

<sup>1</sup> H. de Courtivron, նշվ. աշխ., էջ 49:

<sup>2</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 1. Fol. 117, 18.IX.1918.

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության պատմության հատվածի համար տես. R. G. Hovannissian, The Republic of Armenia, 4 vol., Berkeley, Los Angeles et Londres, 1971-1996.

<sup>4</sup> A. Poidebard, Au carrefour..., նշվ. աշխ., էջ 126:

Հայաստանի Հանրապետությանը, որն անընդհատ Հակամարտությունների աղբյուր էր նորաստեղծ պետությունների միջև:

Պուադեբարն անմիջապես համարում է Հայերին, քանի որ ի տարբերություն Հարեանների, նրանք 1918թ. չէին դիմել գերտերությունների օգնությունը: Իրավամբ, վրացիներն ընդունել էին «Գերմանիայի առաջարկները», իսկ ազերիները՝ թուրքերին՝ ընդունում էին իրեն իրենց ազատարարների: Համաձայն Մուսրուսի գինադադարի, թուրքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասից: Գեներալ Շեվքի փաշայի ջոկատները, հեռանալով Ալեքսանդրապոլի շրջանից, իրենց հետ տանում էին նաև շրջանից թալանած գույքը: Միաժամանակ, գերեզին եւ իրենց հետ տարան 13-45 տարեկան տղամարդկանց: Ալեքսանդրապոլ-Կարս ճանապարհի ճակատային զինանոցը լքված էր: Թալանած գեներալ մահմեդական գյուղացիությունը բաժանելուց հետո, Շեվքի փաշան Կարսից հանգիստ հեռացավ Էրզրում: Տարածվող սովը եւ հետագա հուզումները կանխելու նպատակով Պուադեբարը ձգտում է դաշնակիցների միջոցով անհապաղ վերականգնել Ալեքսանդրապոլ-Յավրիզ երկաթգիծը եւ այնտեղ ուղարկել Կովկասում գտնվող դաշնակիցների միակ ուժի՝ անգլիական գլխավոր զորակայանի ներկայացուցչին:

Երեւանում նա իր համար բացահայտում է գաղթականների խնդրի խորությունը, որոնց բաժանում է երեք խմբի՝ տանկաչայերի, Կարսի Հայերի եւ կովկասաչայերի: Պուադեբարը մեջբերելով Հայաստանի գլխավոր սանիտարական տեսուչ Պապիրյանի գեղույցը, քստ որի, հայ ժողովուրդը՝ ենթերկվելով կոտորածների, համաճարակների ու սովի, փչրված է, խնդրում է ֆրանսիական Կարմիր խաչի օգնությունը: Նա իր ստորագրությունը հաստատում եւ երաշխավորում է նաև մատակարարման նախարարի գեղույցը: Թուրքական բանակի կողմից թալանված եւ աշխարհից կտրված Հայաստանում կար ընդամենը՝ 3 լոկոմոտիվ, 5 վագոն եւ ցիստերն, մինչդեռ տեղական բնակչության թիվը կազմում էր 800 000 մարդ, գաղթականներինը՝ 300 000 եւ զինված ուժերինը՝ 16 000: Հետագա ամիսների ընթացքում ափիկ քան 200 000 հոգի դառնալու են սովի եւ համաճարակների զոհը:

Վերադառնալով Սանահինից, ուր անգլիացի կապիտան Գրինի եւ Հայկական խորհրդարանի պատգամավորների հետ մեկնել էր մասնակցելու Վրաստանի հետ կնքվելիք գինադադարի բանակցություններին, Պուադեբարը վերոնշյալ տվյալների հիման վրա, անմիջապես տագնապալի մի գեղույցագիր է ուղարկում Բաբուն՝ գեներալ Թոմսոնին, խնդրելով նրա անմիջական միջամտությունը հայ-վրացական Հակամարտությունը կարգավորելու հարցում: «Վիճահարույց տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքն անվիճարկելի է: Ես հետադուռել եմ Բաթումի եւ Կ.Պոլսի կոնֆերանսների բոլոր քննարկումները: Վիճահարույց Բորջալուի, Ախալքալաքի եւ Ղարաբաղի շրջանների բնակչությունը, (1917թ.) ուստական հեղափոխության ժամանակ, իրենց՝ իսկ վրացիների հավաստմամբ, մեծամասամբ, իսկ որոշ տարածքներում, ամբողջապես Հայկական է եղել»:

Դժվար է ասել, թե արդյո՞ք Եւրոպայի միջոցով Փարիզ ուղարկված Պուադեբարի գեղույցագրերը հաջի առնվել են Ֆրանսիական կառավարության կողմից որոշումներ կայացնելու ժամանակ: Սակայն այն պահին, երբ բացվում է Փարիզի խաղաղության կոնֆերանսը, որպես նախազգուշացում հնչում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի ելույթը: «Հայաստանը դարեր շարունակ գոյություն է ունեցել իրեն անկախ պետություն՝ յուրբանջյուր անգամ տարբեր սահմաններով: Նրա անցյալը կամաց-կամաց հանգեցրեց իր հողում տարբեր եւ մեկեւույն ժամանակ հակադիր էթնիկական տարրերի երեւան գալուս: Ինչպե՞ս այս պայմաններում, XX դարում կրկին կառուցել մեկ միասնական եւ ինքնուրույն Հայաստան: Հայաստանի առջև ծառայած բաժանված տարածքների եւ բնակչության խնդիրները լուծելու համար, ցանկալի կլինի ստեղծել գաշնային պետություն, պայմանով, որ նրա կազմակերպումը իր ձեռքը վերցնի եվրոպական մի գերտերություն»<sup>1</sup>:

<sup>1</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 70-84. M.de Montbas, Գրառումներ Հայաստանի մասին:

Փարիզում, խաղաղության կոնֆերանսի բացման Հայտարարությունը լրացուցիչ հույսեր է արթնացնում Պոդոս Նուբար փաշայի՝ գլխավորած ու Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի եւ Եթովպիայի Հայկական կոմիտեների կողմից պաշտպանության արժանացել Հայկական ազգային պատվիրակության մոտ, որը կամենում է ի ցույց դնել Հայերի, իրեն «պատերազմող» կողմ լինելու հանդեմաբը:

1916 թվականին Արեւելյան լեզոնում հայ կամավորներ ընդգրկելու հարցի շուրջ Պոդոս Նուբար փաշայի հետ բանակցող Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնի ձայներանդ փոխվում է Հայերի կողմից Կլիվիլիան (որը Ֆրանսիայի վերահսկողության տակ էր եւ գաղթականների մեծ ներհոսք էր նկատվում) ետ պահանջելուց հետո: 1919 թվականի մարտին Տարիզի լիին Հասցեագրված հեռագրում նա հստակեցնում է.

«Ֆրանսիան ստանձնել է Հայերին թուրքական լծից ազատագրելու եւ լուսավոր ապագայի հասցնելու պարտավորություն: Նա հաճույքով աջակցում է կամավորներին թուրքիայի արեւելյան նահանգներում Հայկական պետություն ստեղծելու գործում, որը կմիանա Երեւանի Հայկական Հանրապետությանը եւ Օբսիտի կամրժով կապվելով Հունաստանի հետ էլք կուսնան դեպի Տրապիզոն: Ուստի, այս հարցի շուրջ Հայաստանաբնակ Հայերի կարծիքի արտահայտումը օգտակար կլինի, որպեսզի կասեցվեն այն հայ քաղաքական գործիչների տեղեկեցրող նրտումները, ովքեր պատվելով Հայկական պատվիրակության շուրջ, փորձում են նրան ներքաշել հակաթավալ Հայկական տերություն (որտեղ բացակայում են միայն Հայերը) պահանջատիրական խնդրի մեջ: Ազգային շահերից ելնելով, նրանց ուղղորդողները պետք է կասեցնեն վեհուխյան մոլուցքով տառադողներին»<sup>2</sup>: Թիֆլիսում Տարիզիյին, իր հերթին, շոշափում էր Փարիզ ուղեւորվող Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակության մոտեցումը: «Հավաստում եմ, որ Հայկական կառավարությունից հրահանգ եմ ստացել Խաղաղության կոնֆերանսում պաշտպանել Հայաստանի (Միացյալ Ռուսահայաստանի եւ Տաճահայաստանի) անկախության սկզբունքը... Հայ ժողովրդի կրած տառապանքները, ընդհանուր գործի համար թափված արյունը նրան իրավունք են տալիս պահանջելու իր անկախությունը»<sup>3</sup>: Սակայն, պատերազմի ընթացքում Ռուսահայաստանը ավերվել էր, իսկ «Տաճահայաստանից մնացել էր միայն անուշը»<sup>4</sup>: Նրա վերականգնանցման համար անհրաժեշտ էր ժամանակ, միջոցներ եւ ազդարանություններ: Պատվիրակների ինձ հաղորդած խոսքերից պարզվեց, որ 500 հազար հայ գաղթականները կկարողանան այստեղ վերադառնալ մի քանի տարվա ընթացքում»<sup>5</sup>:

Ֆրանսիան եւ Հայ գաղթականների վերադարձը

Մի կողմ գնելով Կլիվիլիայի եւ Հայաստանի գաղթականների (որոնց մասին Պուադեբարը մշտապես հիշեցնում էր) խնդիրները կարգավորելու անհրաժեշտությունը, Տարիզիյին սպասում է հրահանգներին, որպեսզի օգտագործելով անպիտակ ուժերին, ստացն արյուն թափելու կազմակերպի «ռուսահայերի» պաշտպանությունն ու վերադարձը: Ինչ վերաբերում է իրենց բնակավայրերը տանձահայերի վերադարձին, ապա դա բավականին դժվար է:

Իսկապես, տարածաշրջանի անցուղարձեղներն քաղաքացիական Պոլ Լեպիսյերը<sup>4</sup> Տրապիզոնից հաղորդում է Կ.Պոլսում մշակված «Հայ-հունական պետության»

<sup>1</sup> Եգիպտոսի Հայ նախարարի որդի Պուոս Նուբար փաշան (1851-1930) եվրոպայում թուրքիայի Հայկական նահանգների բարեփոխումների խնդիրը պաշտպանելու նպատակով Կեւորք Ե կաթողիկոս կողմից 1912 թվականին նշանակվել է Հայկական ազգային պատվիրակության ղեկավար: Տե՛ս A. Beylerian, Les Grandes Puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les Archives françaises (1914-1918). Recueil de documents, Paris, 1983.

<sup>2</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 4. Խոսքը Հայերի կողմից Կլիվիլիան վերադարձնելու պահանջներով Փարիզում Ֆրանսիայի գեմ կազմակերպված ցույցերի մասին է:

<sup>3</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 32-66, 10.XII.1918 au 29.XII.1918.

<sup>4</sup> Ֆրանսիացի ղեկանապետ Պոլ Լեպիսյերն (1884-1954), որը տարբեր պաշտոններ էր զբաղեցրել, իր լավ աշխատանքի համար արժանացել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության բարձր գնահատականին: Գործուղվելով Տրապիզոն իբրեւ Կ.Պոլսի

նախագծի դեմ տեղերում կազմակերպված ելույթների և «մեծամասնության համար սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք» պահանջող թուրքերի «ազգային պաշտպանության կոմիտեների» ստեղծման մասին: Խուս-թուրքական սահմանում և արևելյան վիլայեթներում խաղաղության վերահաստատման համար Պ.Լեպոյսյերը խորհուրդ է տալիս «ամրապնդել Կովկասի մեր (Ֆրանսիական) ռազմական առաքելությունը, որին Տաճկահայաստանը գրավելու ակնկալությամբ հնարավոր կլինի Հանձնարարել ներկայումս ամբողջությամբ կազմալուծված և ռազմական արժեք չենթկայացնող Հայոց բանակի վերակառուցումը»: Նա խորհուրդ է տալիս Տրապիզոն ուղարկել Փրանսիացի սպաների, որոնք կկարողանան հասնել Ալազ, Խարբերդ, Էրզրում, Բիթլիս, վերակազմակերպել ոստիկանությունը, գինեթափել թուրք բնակչությանը և «Հայ գաղթականների վերաբնակեցնել իրենց բնակավայրերում»<sup>1</sup>:

1919 թվականի մարտի 6-ին, Պուադեբարը Երևանում ստացավ Հովաստապարե, Համաձայն որոնց, Հայաստանի կառավարությունը՝ երկրի անվտանգության պահպանման հարցում (Հայկական բանակի կազմակերպում և նրանց՝ սպառազինությունների մատակարարում)՝ Փրանսիայի աջակցությունը Հայցելու նպատակով, Երևանում ֆրանսիական ռազմական առաքելության ներկայացուցիչ կապիտան Պուադեբարին, իրեն միջոցով, օժանդակել լիազորություններով»:

Նույն օրը Եսթրոնի թիֆլիսից Փրանսիայի արտգործնախարարություն 2-րդ բյուրոյին է ուղարկում Պուադեբարի կողմից իրեն փոխանցված և Փրանսիական կառավարությունն ուղղված նամակ-հավաստագրերն ու բազմաթիվ այլ փաստաթղթեր:

Հայաստանը Փրանսիայից ակնկալում էր պաշտպանություն համար նախատեսված խիստ անհրաժեշտ ռազմական տեխնիկա (ինքնաթիռներ, բանակ և ինժեներական գործերի համար անհրաժեշտ մեքենաներ և այլն): Եսթրոնի կողմնակից էր այս խնդրանքին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ էր, որպեսզի գերտերությունները մեկ միասնական վստահված ներկայացուցիչ ունենան Հարավային Կովկասում և Հայաստանում. «Քանի որ ես (Եսթրոնի) խաբուսված եմ համարում բոլոր կոնվենցիաները, որոնք ֆրանսիական ազդեցություն տակ կդնեն ամբողջ Հայկական վիլայեթները (Թուրքահայաստանը), իսկ անպիսկան ազդեցության տակ կթողնեն Հարավային Կովկասի հարուստ գաշտերը»:

Պուադեբարը Փրանսիական կառավարությանը փոխանցում է նաև Հայաստանի արտաքին գործերի նախարարի գրությունը, որը բազկացած էր մի շարք խնդրանքներից՝ Հայկական տարածքներից շուտափույթ Հեռացնել թուրքական սպաներին ու գինեթափելի և գինեթափելի Ախալքալաքը, Ախալցխեն, Կարսը, Արդահանը, Նախիջևանը, Էրզրումը, Երզնիշանը, Բիթլիսը, Վանը ասպատակող թուրքական սպաների կողմից ղեկավարվող հրոսակախմբերը, վերականգնել Հայաստանն արտաքին աշխարհին կապող հաղորդակցության ճանապարհները և Փրանսիական սպաների աջակցությունը ստեղծել բանակ, Հայ գաղթականներին վերադարձնել իրենց բնակավայրերը՝ ապահովելով նրանց սնունդը, բնակարանների վերականգնումն ու սանիտարական ծառայությունը: Փարիզի հաստատության կոնֆերանսի նախագահ և Փրանսիայի ռազմական նախարար Կլեմանսոյի պատասխանը հստակ էր. «Հայաստանում ռազմական ներկայացուցչության պաշտոնը պետք է հանձնվի այն տերությունը, որը ինչպես կարողանա կոնֆերանսում կատանա Հայաստանի մանդատը: Եթե այդ մանդատը չարվի Փրանսիային, ապա անիմաստ է ընթացք տալ այս խնդրանքին»:

գլխավոր կոմիտար (1918թ. դեկտեմբեր) ու միամասնակ ստանձնելով Տրապիզոնի Հյուպատոսի պաշտոնը (1919թ. հունվար), նա քեմալական և բոլշևիկյան շարժումների փայտուն ուսումնասիրողներից էր: 1921թ. նոյեմբերի 24-ին նա օգնել է Կիլիկիայի ֆրանսիական առաքելությանը: 1924թ. Վեյգանգը նրան նշանակել է Բելյուսթի գլխավոր կոմիտարիատի գլխավոր քարտուղար:

<sup>1</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 235-236, 12.IV.1919.

<sup>2</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 241. Կնքված և ստորագրված է 3 նախարարի կողմից՝ Ս. Տիգրանյան, Հախիբբեկով, Ա.Խաթիսյան:

<sup>3</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 240, 13.IV.1919.

Մերժումը չհուսահատեցրեց ոչ Պուադեբարին, ոչ էլ Եսթրոնիին: Երկուսն էլ ոգևորված էին Հայկական Հարցի լուծմանը մասնակցելու փաստով: Նրանք համոզված էին, որ Հայ գաղթականների «վերադարձի իրավունքը» պետք է կիրառվի, սակայն եւ՝ մեկը եւ՝ մյուսը գուրգ էին գործելու միջոցներից և վշտացած՝ անդրուձեռն զգացումից: Ապրիլին, Հայաստանի վիճակի և անհրաժեշտ աջակցությունների վերաբերյալ Եսթրոնիին ուղարկված Պուադեբարի գեկուցարները գառնում են ամբիջի ու ամբիջի թախանձարին: Դա ուներ իր պատճառը: Այդպեսանց, ուր հազարավոր գաղթականներ էին խմբված, արդեն 20 օր է հայահառույթ և ալյուր չէր ստացել. «Մինչդեռ ես ամերիկյան օդուժության կոմիտեի համար իմ գնացքով բերել էի 11 վագոն ալյուր»: Իսկ երեւանում, ուր իրազրույթները միշտ առավել ծանր էր, ինչպե՞ս էին կարողանում կերպարել բնակչությանը: Եվ այսպես երկու տարի շարունակ: Փոխարենը, Ղարաբաղի Կարսի մարզում մեծ հարգանք էր վայելում մահաբեկական բնակչության մոտ. «Հայերի վարչակարգն ու բանակը նույնպես լավ էին բնորոշվում Կարսի մահաբեկական բնակչության կողմից: Տարագիրներից բեռնակառ Այբքանյանից առաջին գնացքները առանց գովարտությունների հասել էին Կարս: Ապաստում ենք գյուղերում նրանց բնակեցման հետ կապված մանրամասն տեղեկությունները»:

Պուադեբարը նշում է նաև, որ անգլիական զորակայանը Կարսում առգրավել է թուրքերի կողմից ուսուների գինանոցից վերցրած գները: ՀՀ կառավարությանը հանձնելու փոխարեն, արդեն Թիֆլիս է ուղարկվել 65 հրատեժ, վեց վագոն արկ և մի քանի միլիոն փամփուշտ, որի պատճառով, Հայերը զրկել են վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ գներից և գինեթափելից: Միևնույն ժամանակ, 1919թ. ապրիլի 21-22-ը, գեներալ Բիչը եկել էր խորհրդակցելու Երևանի կառավարության հետ Հայաստանի սպառա սահմանների և «Հայ տարագիրների՝ ղեկի Հայաստան վերադարձի» տեխնիկական հարցերի շուրջ: Բիչը դեմ էր Պոդոս Նուբար փաշայի՝ Մեծ Հայաստանի ծրագրին: Եւ կողմ Հայաստանի Հանրապետության հետ Հայաստանի ապագա սահմանների և «Հայ տարագիրների՝ ղեկի Հայաստան վերադարձի» տեխնիկական հարցերի շուրջ: Բիչը դեմ էր Պոդոս Նուբար փաշայի՝ Մեծ Հայաստանի ծրագրին: Եւ կողմ Հայաստանի Հանրապետության հետ Հայաստանի ապագա սահմանների և «Հայ տարագիրների՝ ղեկի Հայաստան վերադարձի» տեխնիկական հարցերի շուրջ: Բիչը դեմ էր Պոդոս Նուբար փաշայի՝ Մեծ Հայաստանի ծրագրին: 10 000 Հայ գինեթափող կողքին անհրաժեշտ է ունենալ 5 000 անգլիացի զինվոր: Անգլիական կամ գաղտնիների զորամիավորումները նշանակում էր պարտադիր է, քանի որ Հայկական բանակը գուրկ էր գեներալ, գինեթափելից, հագուստից, կոշիկից և չունի անհրաժեշտ միջոցներ միայնակ գործելու համար. «Հայկական զորամիավորի կողմից տարագիրների ուղեկցումը նշանակում է անխուսափելիորեն նրանց գառապարտել ջարդի»: Չնայած, անգլիական զորքերի Հայաստանից հեռանալու մասին գեներալ Միլնի Հայտարարությանը, բրիտանական գլխավոր զորակայանի և Նախիջևանի տարագիրների ուղեկցումը նշանակում էր անխուսափելիորեն նրանց գառապարտել ջարդի»: Այնպես, անգլիական զորքերի Հայաստանից հեռանալու մասին գեներալ Միլնի Հայտարարությանը, բրիտանական գլխավոր զորակայանի և Նախիջևանի տարագիրների ուղեկցումը նշանակում էր անխուսափելիորեն նրանց գառապարտել ջարդի»: Այնպես է մնում թաթարական բնակչության զիրքորոշումը: Անգլիացի գնդապետ Տեմպերլի կարծիքով, նրանց դիմադրությունը կասկածի վեր էր, սակայն Հայ գեկավարների՝ Դուլի, Նազարբեկովի, Խատիսովի կարծիքներով, այդ պարագայում պատասխանատուները կընկներ անգլիական զորքերի վրա:

Պուադեբարը Եսթրոնիին ուղարկած գեկուցագրերում, անդրադառնում է նաև թուրքական ընդդիմություն (Մ.Քեմալի կողմնակիցների) վերելքին, թուրքերի և բոլշևիկների միջև ընթացող գաղտնի բանակցություններին և Հայ գաղթականների կողմից կազմակերպված կամ անկանոն կերպով իրենց բնակավայր

<sup>1</sup> Դրո /Դ.Կասյան, 1884-1956թթ./ ՀՅԴ ակնավոր ֆիգուրի: Նա գեկավարում էր թուրքերի դեմ Բաշ-Ապարանի ճակատամարտը /1918թ. մայիսի վերջ/: 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին եղել է ռազմական նախարար:

րերը վերադառնալու փորձերին: Իրավիճակը լարված էր նաև անգլիական զինվորականների վերահսկողության տակ գտնվող Բաթումում: Այստեղ կարելի էր Հանդիսիլ Բիչերակովի կազմակերպչի, հազարավոր հայ գաղթականների, ինչպես նաև ուսանողի, աշուրների և վրացիների աջակցությունը վայելող բուլղարացիների: Լազիստանում՝ օգտագործելով բանակը և Ախալքալաքի ու Նախիջևանի կապը, իթիթի հարակալների կողմից Կ.Պոլսի կառավարությունը և բաշակիքների դեմ ընդդիմադիր շարժում էր կազմակերպվել: Տրապիզոնի վրլայիթում Միություն և Առաջըլիթություն կրճատեմ մեծամասնություն էր, սակայն Իթիթիլյաթ (իբերալ համաձայնություն) կուսակցությունը Կ.Պոլսի էր ուղարկել երկու պատվիրակի, տեղեկացնելու, որ Տրապիզոնը ոչ չուսանական, ոչ էլ հայկական չի գտնու: Թուրքերը թշնամաբար են տրամադրված Վիլսոնի և «մեկ ազգային դրոշի ներքո աճող բուլղարիկյան շարժման» դեմ: Թուրք բնտանիքներում կարելի էր գտնել բազմաթիվ հայ երեխաների (համառ աղջիկների), և եթե 100 հայ մեկ ամսում վերադառնել էին Տրապիզոն և վերաբնակվել իրենց տներում, ապա սարերում վիճակի անկարգության էր: Մի քանի տասնյակ հայ բնտանիքներ վերադարձել են՝ Բերազուռ, Սասուն, Ջնդուլյակ: Կ.Պոլսում, ուր հայերը դիմում էին որպես ֆրանսիացիների, անգլիացիների և իտալացիների գաշնակիցներ, նրանք թիվն ավելանում էր: Կիրիլիան ևս իր մասնաբաժինն ուներ այս գործընթացում՝ այժիբ քան 100 000 հայ վերադարձել էին ֆրանսիական ուժերի հովանու տակ: Այսինքն, գաղթականների վերադարձը հնարավոր էր միայն դեպի Թուրքիայի ծովափնյա շրջանները և բացարձակապես անհնար դեպի հայկական տարածքների խորք՝ էրզրում կամ Մուշ<sup>1</sup>:

Ֆրանսիական պարտավորությունների դադարմանն ընդառաջ Փարիզում, Տարգիսիի հետադրերը (գեկուցադրերը) սպառնալից արդյունքը չեն ունենում և Կովկասի ֆրանսիական Առաջըլիթությունը չի ուժեղացվում: Ընդհակառակը, ինչպես ինքն է տեղեկացնում, իր գերը, դժբախտաբար, միայն «տեղեկություններ հաղորդելն է»: Պուազերարը ներկա էր գեներալ Միլիի և ինտերսոլի 1919թ. ապրիլի 30-ին երեւանում կայացած հանդիպմանը: Քննարկվել էին Հայաստանի կարգերի և սահմաններին առնչվող, անգլիացիների կողից Դարբազը արբերը նշանակելու և տաճկահայերի՝ իրենց բնակավայրերը վերադառնալու հարցերը: Միլիը հայտարարում է, որ բացառությունը գրեթե դադարով նախատեսված ռազմավարական կետերի, Թուրքիա այլ գործեր չեն ուղարկվի: Այնուամենայնիվ, Պուազերարը, Տարգիսիի խնդրանքով, նրան նախազգուշացնում է, որ գաղթականների վերադարձը ուսուսական նախնի կայսրության սահմանամերձ շրջանները պետք է կատարվի նախանշված երթուղիներով: Ավարտելով այդ հանդիպման նկարագրությունը, նա ավելացնում է. «Անչափ ուրախ եմ հանդիպելու անգլիացի գեներալի, որը գիտակցում է առ գաշնակիցները տաժած հայերի սերը: Ոչ ոք նրանց այսքան արագ չէր ճանաչել: Ես այդ մասին ասացի նրան և նա հավատաց իմ անկեղծությանը: Բայց ինչպես լուր, երբ քո առջև տեսնում ես հազարավոր խեղճ մարդկանց մահը: Քանիսը գեո կմեռնեն, մինչև ևս, պարզ կգառնա այս, իսկապես ուշացած, ճշմարտությունը: Այժմ ամեն գնով անհրաժեշտ է խանդարել Հայաստանից անգլիական զորքերի հեռանալուն: Մենք կատարվածի վկաներն ենք... Մարդկային կյանքը անձնական շահից գերազանցելի է և մեր անկեղծությունը կարու է հազարավոր մարդկանց կյանք փրկել»:

Սակայն անկեղծությունը բավարար չէ ևս դրանով չես փոխարինի Կովկասում բացակայող ֆրանսիական քաղաքականությունը, որտեղ ֆրանսիացիների և անգլիացիների հարաբերությունները մտել են «բարեկամական տարածայնությունների» փուլ: Մայիսի 20-ին Պուազերարը հեռագրում է, որ անգլիական հրամանատարությունը թուլ է տվել Այազի կազմավորի գաղթականների վերադարձը, սակայն առանց ուղեկցություն՝ կցելով ընդամենը մեկ սպա: Թիֆլիսում Տարգիսիի վրդովում է. «Եթե վերաբնակեցումը իրականացվում է այս պայմաններով, ապա բազմաթիվ եմ ցավալի միջադեպերն անխուսափելի են:

<sup>1</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 4. Fol. 22-26, 332-337.  
<sup>2</sup> MAE, Levant 1914-1929, Arménie, 5. fol. 23-27, 7. V. 1919.

Մյուս կողմից, Կարսի անգլիական զորքերի նահանջը վաղամամ է, ինչի վրա ես բազմիցս, սակայն ապարդյուն, հրավիրել եմ անգլիական հրամանատարության ուշադրությունը... Որպես հետեւանք կփոխվի քուրդ և թուրք բնակչության վերաբերմունքը»:

Հայ գաղթականները շարունակում էին վերադառնալ Կարս, սակայն սննդի պակասը հարկադրում է նրանց վերադառնալ Ալեքսանդրապոլ, որտեղ ժամանակավոր ճամբար էր մոտ 60 000 մարդ: Անգլիացի գեներալ Դեվիի հետ ինտերսոլը գնաց Ջուզա (Ջուլֆա), որպեսզի պաշտոնապես ընդունի Նախիջևանը: Արտաբուսու բարյացկամությունը ցուցաբերելով թաթարական խաների և մահմեդական խորհրդի նկատմամբ, նա կոչ է անում գինյել կենթարկվի թաթար և աշակցել Ռուսաստանից հայ գաղթականների վերադարձին: Լավատեսությունը չէին կիսում հայ գեներալականները, որոնք կանխատեսում էին որ անգլիական զորքերի հեռանալուց հետո երեւան-Նախիջևան հատվածը գրոհի կենթարկվի թաթար հրոսակների կողմից: Հայկական ուժերի գորացման համար Դրոն կոչով դիմում է ուսուսական բանակում ծառայած մարդկանց, սակայն վերջիններս գենը և սպասակցիություն չունենին<sup>2</sup>:

Ապրիլի 28-ին երեւան ժամանած Հայնցը՝ Հուլիերի դիվանորած ARA-ի (ամերիկյան օգնության վարչություն) ներկայացուցիչը, առաջարկում է ինտերսոլին հասակցելի Փարիզում Պոդոս Նուբար Փաշայի և Ա.Ա.Հարոնյանի կողմից ստորագրված նախագիծը: Հայնցն առաջարկում է 3-ամսվա բնթացքում Հայաստանը մտակարարել ցածր գներով այլուրով՝ ամսական 400 000-ական փութ: Նա նաև առաջարկում է վճարման արտոնյալ ժամկետներ (Ոստիսոլը խնդրում է 4 տարի) և պայմաններ<sup>3</sup>: Հայաստանը մարդասիրական օգնությունը մատակարարելու հարցում, ամերիկացիները անգերազանցելի էին: Մայիսից սկսած, նրանք այլուրի բեռներ էին ստանում Հայաստանի համար: 1919թ. վերջին, սովը հաղթահարվել էր, և պետական հաստատությունները սկսել էին գործել:

Անդրանիկ. ըմբոսի դիմանկարը

Այդ նույն ժամանակ, հայ հերոսներից ամենաժողովրդականը՝ գեներալ Անդրանիկը՝ եկել էր երեւան: Պուազերարի համար սա հնարավորություն էր մտորկից ճանաչելու մի մարդու, որի խիզախությունը նա հիանում էր հեռվից, թեև վերջինիս թավրիցի արշավանքը ձախողվել էր<sup>4</sup>: Անդրանիկի, իբրև «անասանելի բնավորության» տեր մարդու՝ ճիշտ բնույթագրումը ցույց է տալիս, որ նրան խորթ է գրասենյակային աշխատանքը: Խոռոված ՀՅԴ կուսակցությունից, հրաժարվելով ճանաչել «թուրքերի ձեռքով ստեղծված Հայաստանը», Անդրանիկը՝ թավրիցի ասորիներից և տաճկահայերից կազմված իր ջոկատները ցրելուց և իր գեները Կաթողիկոսին հանձնելուց հետո, ապրիլի 27-ին անգլիացի գնդապետ Գիբբոնի ուղեկցությամբ թողնում է էջմիածինը: Անդրանիկին Կովկասից հեռացնելու անգլիական հրամանատարության որոշումն, ընդհանուր առմամբ, հավանություն էր արժանացել... Կառավարությունն ու հրամանատարությունը, ներառյալ Դրոն, միասնական էին նրա ջոկատները ցրելու և երեւանի շրջակայքում գեոեւս գործող ոչ պետական (ոչ կանոնավոր) զորամիավորումը գինթափելու իրենց պահանջում: Այդ ամենը արվում էր ի օգուտ կազմակերպված և կարգապահ

<sup>1</sup> Նույն տեղում, 177, 20.V.1919:  
<sup>2</sup> Նույն տեղում, 178-179, 17.V.1919:  
<sup>3</sup> Նույն տեղում, 217:  
<sup>4</sup> Անդրանիկ Օղանյան (1866-1927), ծնվել է Եաբին Գարահիսարում: Ֆիզայի և ակտիվ գաշնակցական (ՀՅԴ): 1904թ. դիվանորում է Սասունի պատամարտությունը: Հակառակ իր կուսակցության կարծիքի, նա բուլղարացիների կողքին մարտնչում է թուրքերի դեմ (1912թ.), ապա դիվանորում է հայ կամավորների ջոկատները Կովկասում (1915թ.): Մինչև գեներալ գառնալը, գլխավորել է ուսանելի հասուակ դիվիզիոնը (1917թ.): Բազմաթիվ զենաթաճիկից հետո, նա հավաքում է Ուրմիայի 20 000 գաղթական քրիստոնյաների, որոնց հետ մարտնչելով հասնում է մինչև Ջնդուլյակ: Դարբազի վերահսկողությունը ստանձնած անգլիացիների կողմից ձերբակալվելով, նա որոշում է լքել Անդրեպոլը և գնալ Արևմուտք:

<sup>5</sup> MAE, Levant 1918-1929, Arménie, 5. fol. 218-219.

բանակի, որն ի վիճակի կլինի «վերադարձնել Հայ գաղթականներին իրենց բնակավայրերը»: Խորհուրդ տալով շնորհակալությամբ բանակում ընդգրկել Անդրանիկի առակն ազգային սպաների ու մի քանի հարյուր զինվորների եւ չմոռանալով իր գործառնությունների հետ կապված պարտականությունները, Պուադեբարը ազատություն է տալիս իր զգացմունքներին.

«Շատ էր ցանկանում անձամբ նրա հետ ծանոթանալ... Անդրանիկն անհաստակն գրավիչ է, ինչպես այս հերոսական շրջանի բոլոր առաջնորդները, ովքեր ջոկատներ էին կազմավորում ջարդարար թուրքերից անօգնական հայերին պաշտպանելու համար: Նրա լեզուն կոպիտ է եւ շիտակ, սակայն նրա աչքերը, որոնցով նա գրավում է մարդկանց իր գաղափարներով, շատ խորամանկ են: Իր թշնամիների կարծիքով, նա երբեք մանրամոլոր, անաղնիվ բալլեր չի կատարել: Այսպիսի թափառական կյանքից հետո, հաջողություն բարձունքներին հասնելու փոխարեն, նա մնացել էր աղքատ, բայց հենց այդ հանգամանքն էր, որ նրան լավագույն դոկտոր էր արժանացնում: Մահճեղականներին ջարդելու հարցում, նա Կաթողիկոսի ներկայացուցչի առջև իր կոչումն է հայտարարում հավասարբար. «Ես երբեք չեմ կոտորել անմեղներին, միայնակներին, ես պատժել եմ միայն մեղավորներին»: Կարծում եմ, որ այդ ջոկատների կողմից կատարած ջարդերը ուռճացվում էին: Նա Աստված էր իր զինվորների եւ հաղաբալոր այն մարդկանց համար, որոնց փրկել էր: Վերջին ժամանակներս, նա էր, որ ցորեն էր մատակարարում Ջանդեղուր եկած Հայ գաղթականներին: Նա գիտակցում էր, որ իր մոտ Բուզղարիս եկած մարդիկ իր սովամահ եղող եւ հուսախաբված ժողովուրդն է, որոնց նա չի կարողանում օգնել: Անհրաժեշտ է լսել այդ թշվառ Հայ գաղթականների դրուշագատումները, որպեսզի հասկանանք այն մեծ գաղափարը, որ կար այս մարդու մեջ: Հակառակ իր բարեկամների կարծիքի, Անդրանիկը ի վիճակի է 100 մարդուց բաղկացած ջոկատով խիզախորեն մարտնչել ոչ փոքրաթիվ կանոնավոր բանակի դեմ: Նա կազմակերպություն ստեղծելու որեւէ մտադրություն չի ունեցել եւ ի վիճակի է եղել ղեկավարել մեծ զորամիավորումներ: Խնթթություն կլինի նրան հանձնարարել դիվիզիոնի ղեկավարումը: Նա որեւէ մեկի չի եմթարկվի եւ չի կարող վերադառնա ունենալ: Չնայած բոլոր բանակցություններին, որ մայրը Գիրբունը եւ Կաթողիկոսը ունեցել էին նրա հետ, նա չի ճանաչել Երեւանի ներկայիս կառավարությունը...

Դրոյի գորբերը խուճապի մեջ են եւ Անդրանիկը մենակ պետք է լուծի գաղթականների խնդիրը: Ի դեպ Անդրանիկն այժմ շատ ծեր է եւ ի վիճակի չէ այն իրականացնել: Ես անչափ երջանիկ էի անձամբ ուսումնասիրելու այս մարդուն, որի մասին այդպես խոսում էին տարբեր զգացումներով: Նախորդ մի քանի դիտարկումներս կարծում եմ հասկանալի են դարձնում, թե ինչ էին ստում Անդրանիկի մասին:

Անձամբ ես հանուրով մի քանի ժամ անցկացրեցի Էջմիածնում, մոտիկից շփվելով նրա հետ, երբ նա պատրաստվում էր ազատ արձակել իր զինվորներին: Մեզ համար, ովքեր ապրում են՝ արդեն հինգ տարի է այս անվերջանալի տառապանքները կրող եւ հակառակ այդ ամենին կրկին ապրել ցանկացող, անասնաման համարելություն ցուցաբերող Հայ ժողովրդի կողքին, Անդրանիկի նման մարդիկ շատ սիրելի են: Եվ մենք ասում ենք, որ չնայած ամեն ինչին, մենք նրանցով հիանում ենք: Դյուրին է պարսպել անկարգությունը: Իժմվար է վատ հաղված, վատ զինված, վատ սնված զինվորներով, մշտապես սպառելով արտաքին օգնությունը, տարիներ շարունակ պաշտպանել Հայրենակիցներին: Հետաքրքիր կլինի ունենալ այս ջոկատի հրամանատարի մասին թուրք հրամանատարների կարծիքը, որոնք ուզում են չափվել նրա հետ: Կարծում եմ, որ որոշ թուրքական դիվիզիաներ վատ հիշողություններ ունեն Անդրանիկից:

Բոլոր երեւելուս, ես կարող եմ միայն դրական արտահայտվել այս առաջնորդի եւ նրա խմբի առնչությամբ Կոփկասում անգլիական զլխավոր զորակայանի ընդունած որոշման եւ այն ի կատար ածելու ձեւերի մասին»:

#### Անգլիացիների նահանջը

Փաղթականների վերաբնակեցման խնդրից զատ, Եւրոպայի կողմից Փարիզ ուղարկված անվերջանալի հեռագրերի (որոնք խթանվում էին Պուադեբարի գեկուցագրերով) մյուս հիմնադատաճար Հայկական բանակին ուղարկված տեխնի-

կայի տրամադրումն էր: 1919թ. հունիսին, երբ Դարարդում իրադրությունը կարուկ ծանրացել էր, անգլիական հրամանատարությունը բավարարվում էր Հայկական բանակին լծվածներ վաճառելով: Ունենալով Լեբեյի 40 մլն. փամփուշտ, սակայն չունենալով այդ մոդելի հրագեն, նրանք (մեա՝ Հայերը) խնդրում են Ֆրանսիային իրենց համար գնել Լեբեյի 10 000 հրագեն. «Ճանապարհի հարցն ինձ թվում է չի կարող որեւէ դեր խաղալ այս հարցում», - ավելացնում է Շարիդյանը:

Փարիզը նույնպես տեղակայվել էր Երեւանում ընդունված քաղաքական նախաձեռնություններով: Նշանակվելով վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար, Խառիսյանը հաստատել էր տաճկահայ 12 պատգամավորի նշանակումը, կոչ անելով վերջիններին նիստեր գումարել Երեւանի խորհրդարանում: 1919թ. մայիսի 28-ին՝ անկախության առաջին տարեդարձի առիթով, նա ընդունում է նոր պատգամավորներին եւ հաստատում Միացյալ Հայաստանի փաստաթուղթը, որը Հայաստանում է Ռուսահայաստանի եւ Տաճկահայաստանի միավորումը: Այդ փաստաթուղթը խոր ճգնաժամ է առաջացնում ՀԽԻ-ի կողմից կրեմլիցիներին եւ Պոզոս Կուրբար փաշայի բարեկամների միջև: Իսկապես, միասնական Հայաստանի հռչակումը խանդարում է Կիլիկիայի ապագա կարգավիճակի շուրջ բանակցություններին, որ նա վարում էր Փարիզում:

Պուադեբարի՝ մայիս ամսվա գաղտնի գեկուցագրերի շարքը պատկերում է Հայաստանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը: Արեքսանդրապոլում հաց չկար, իսկ տաքանալու նպատակով գաղթականները քանդում էին քաղաքի տները եւ օգտագործում դրանց փայտերը: Ինչ վերաբերում է Կարսին, ապա Կարսից արտագաղթած Հայերը, շատ վատ ճանապարհներով, շարունակում էին վերադառնալ այնտեղ (Թաթուս-Արքահան-Կարս ճանապարհը վերահսկվում էր անգլիացիների կողմից), իսկ վերադարձը Նախիջևան՝ կասեցվել էր գեներալ Թոմսոնի հրամանով: Խառիսյանի եւ անգլիական բարձր հրամանատարության, գեներալներ Թոմսոնի, Բիդլի ու Բրուեզի միջև մայիսի 9-ին թիֆլիսում կայացած հանդիպումն ամբողջ խորությունը բացահայտեց կատարված սխալները: Թոմսոնը ուզում էր Դարարազը զիջել Հայերին: Խառիսյանը հրաժարվում է եւ կրկին կենտրոնանում Նախիջևանի վրա: Ինչ վերաբերում է տաճկահայերի Արաշխուս վերադառնալուն, Թոմսոնը հայտնում է, որ «անգլիական զորքերը չեն կարու անցնել թուրքական սահմանը, ուստի գաղթականները մենակ կլինեն»: Պուադեբարը կարծում է, որ Խառիսյանը չէր գզուշանում թաթարներից, եւ ավելացնում է. «Թաթարը կարող է բարեհամբուրը հյուրընկալել, սակայն, հաջող օրը սպանել»: Ահա թե ինչու, անհրաժեշտ էր ամրապնդել Հայկական բանակը եւ վերադառնալ տալ այս հարցի վերաբերյալ խնդրագրերը հղել Ֆրանսիային: Նա նաև նշում է, որ «Հայերի ժամանումը Նախիջևան եւ Կարս, հակառակ արտահույս է առաջացնում Կարսի եւ Նախիջևանի թաթարների մոտ, որոնք ցանկանում են վերադառնալ Երեւան եւ նրա շրջակայքը: Սակայն, ներկայումս, թաթարական նախկին գյուղերը մեծածառասամբ զբաղեցված են տաճկահայ գաղթականների կողմից: Որտեղից էլ առաջանում է այս գաղթականների շտապ վերադառնալու խնդիրը: Անդրորը կվերականգնվի միայն, երբ յուրաքանչյուրը մոտ կլինի իր նախկին բնակավայրին»:

Անգլիական զորքերի հեռանալու եւ Հայկական զորքերի անտարբերություն պատճառով, Եւրոպա-Նախիջևանի շրջանի թաթարական ընդվզումներն ամռան ընթացքում վերածվեցին զինված ապստամբության: Մտահոգված Պուադեբարը բույս առ բույս նկարագրում է Դրոյի եւ թաթարական զորքերի միջև հուլիսի 12-ին Բուշուբ-Կեփում տեղի ունեցած դաժան ընդհարումը: Կային «շատ սպանված եւ վերավոր Հայեր: Այս կորուստները թուրք սպաների կողմից ղեկավարվող թաթարական հրանոթներից էին»: Նա հիշատակում է պարագուհիների անունները՝ Խան Թեքինսի եւ «փոքր» Խան Նախիջևանսի - եւ խոսքում անհապաղ անգլիական զորաջոկատ ուղարկել թաթարական շարժումը ճնշելու համար. «Կարծում եմ, անմիջապես անհրաժեշտ է մեկ գումարտակ մեկ հեծելախումբ եւ մի քանի աէրոպլան»<sup>1</sup>: Միեւնույն ժամանակ, նա չի մոռանում Երեւանում Ֆրանսիա-

<sup>1</sup> MAE, Levant 1918-1929, Arménie, 5. fol. 223, 22. VI. 1919.

<sup>2</sup> MAE, Levant 1918-1929, Arménie, 6. fol. 117-127, 27. VI. 1919.

<sup>3</sup> Կուլյն տեղում, 76, 13. VII. 1919:



յի Հանրապետության ներկայացուցչի իր պարտականությունները: Իրբեւ Ֆրանսիայի գեսպանություն ծառայող, իր նստավայրում, նա 1919թ. Հուլիսի 14-ի առիթով պարահանդես է կազմակերպում<sup>1</sup>:

Խորամուխ լինելով գաղթականների խնդրի մեջ, Պուադերարը ավելի էր քննադատում գեներալ Թոմսոնին, որի քաղաքականությունը խոչընդոտում էր նրանց (պաղթականների) վերագրածը: Նա իր անհանգստությունն է Հայաստան Շարժիչի «Գեներալի իրական մտադրություն մասին, որը պաշտպանում էր նախիջևանի (մեծամասնությունը թափարներ էին) միացումը Հայաստանին եւ Ջանդեղուրի ու Ղարաբաղի (մեծամասնությունը Հայեր էին) միացումը Ադրբեջանին»:

Պուադերարի Հոռետեսական կանխատեսումները Հաստատում է ամերիկյան գեոգրաֆիկ Վիլյամ Հասթելը, որն օգնություն կազմակերպելու եւ խաղաղությունը պաշտպանելու առաքելությունը ինադադունական կոնֆերանսի կողմից, Հուլիսի խորհրդով, նշանակվում է Հայաստանի գլխավոր կոմիսար: Ժամանակից Հետո, նա տեղեկանում է, որ 1919թ. օգոստոսի 15-ին, անգլիական զորքերը վերջնականապես Հեռանում են Կովկասից:

Նա շտապ մի Հեռագիր է ուղարկում ինադադունական կոնֆերանսի Գերագույն խորհրդին: Անգլիացիների Հեռանալը նշանակում է շրջանը հունձնել անիշխանության ու «Բաթումը, Թիֆլիսը, Երեւանը թողնել առանց միխոնավոր գոյարների օգնության... եւ կանգնեցնել գոյությունը բոլոր միջոցները, որոնց բացակայությունը պատճառով, Ռուսահայաստան գաղթած Հազարավոր Հայեր սովամահ են լինելու: Հայերը շրջապատված են թշնամիներով եւ հունեն բավարար զենք, գինեմթերք կամ ուժ՝ պաշտպանվելու համար»<sup>2</sup>: Դաշնակիցների պատասխան պարունակվում է Գերագույն խորհրդի այս բանաձեւում. «Այսպեսով, ոչ մի կառավարություն գործեր չի ուղարկի Հայաստան: Գեոգրաֆիկ Հեռագիրը բարձրացված հարցը... Հետաձգվում է, առանց որոշում կայացնելու»<sup>3</sup>:

#### Քեմալական շարժման վերելքը

1919թ. սեպտեմբերին, լեյտենանտ-գեոգրաֆ Եարդինյին, որը Հաջողի էր արձակուրդ ստանալ, Փարիզում էր<sup>4</sup>: Նրա այցելությունը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն, ավարտվում է Հայաստանի ճգնաժամի վերաբերյալ իրատեսական վերլուծական գեկուցագրով. չկա Հայաստան առանց դաշնակիցների զորքերի, չկա Հայաստան առանց Հայերի, չկան բավարար թվով Հայեր՝ Հայաստան կառուցելու համար: Լրացուցիչ նա Հայաստան է. «Հայաստանին սպառնացող նոր վտանգի կամ քեմալականների շարժման մասին»<sup>5</sup>: Եարդինյին խորհուրդ է տալիս Կովկասի ռազմական առաքելությունն ընդգրկել Ֆրանսիայի զիվանդիտական անձնակազմում: Նա առաջարկում է նաեւ, գորացրումից Հետո Պուադերարին թողնել Երեւանում որպես Հյուպատոսական գործակալ:

Ժամանելով Թիֆլիս, Եարդինյին փոխարինած հրամանատար Նոնան-կուրը, խորամուխ եղավ իր առջեւ ծառայած խնդիրների մեջ: Պուադերարի գեկուցագրերը, որոնք նա, իր շրջապալություն ժամանակ, փոխանցում է Փարիզ, վկայում են վերջինիս անաչատ գործունեության մասին: Երեւանից ուղարկված, 1919թ. Հոկտեմբերի 3-ի, գեկուցագիրը պատմում է Կարսի շրջանի հարաբերական

Հանգստի մասին: Իրավիճակն առավել սրված էր Սուրմալուի շրջանում (Երեւանից հարավ-արեւմուտք), որտեղ ըմբոստացել էին Արարատի քրդերը: Սակայն առավել իրական է Ադրբեջանի կողմից Ջանդեղուրի վրա կախված վտանգը. «Այս շրջանը միակն է, որ ներկայումս խոչընդոտում է Բաքու-Էրզրում հաղորդակցության հաստատմանը, ճանապարհ, որն այդքան ցանկալի է պանթուրքական շարժման համար»:

Պո Լեպիսիբից (Տրապիզոնում Ֆրանսիայի Հյուպատոս) տեղեկություններ ստանալու նպատակով, մեկ շաբաթ անց, Պուադերարն, ականակիրի վրա, ճանապարհորդություն է կատարում Բաթումից Տրապիզոն: Հայերի թիվը Տրապիզոն քաղաքում հասնում էր 400-ի, նույն վիլայեթում նրանց թիվն այժմ կազմում է 4 000 մարդ՝ «նախապատերազմյան 60 000-ի փոխարեն»: Քեմալ վաշայի հրոսակախմբերի ահից, ոչ ոք չէր համարձակվում ճանապարհորդել Թուրքիայի ներքին շրջաններում: Աշխատանք չունենալով, շատերը մտածում էին Հեռանալու մասին: Մյուսները վախենում էին, որ Հայաստանի վերաբերյալ Փարիզի խաղաղություն կոնֆերանսի որոշումները, կոտորածների պատճառ կգտնան: Տրապիզոնում Կ.Պոլսի կողմից Հաստատված պաշտոնապես գոյություն ունեցող վաշակագմը՝ «Քեմալի հրոսակախմբերն են (թիվը հասնում է 12 000-ի), որոնք տնօրինում են ամեն ինչ»:<sup>6</sup> Ամենուր գյուղացիները զինված են, իսկ ճանապարհները լցված են ավազակներով. «Թուրքիայի ներսում նույն թշվառությունն է, նախապատերազմյան անկազմակերպվածությունը: Այս գանապատության մեջ Օսմանյան ուղեղում խարսխի նման գցած է մյուս ուսուսների նկատմամբ իր գերիշխանության գազափարը»: Իսկ Փարիզում կընդունվի այսպիսի որոշում՝ նախազգուշացում. « Քեմալի շարժումը ճնշելու համար դաշնակիցներից կպահանջվի մեծ ջանք եւ մեծաթիվ ռազմական ուժեր»:

նալից անդրադառնալով մանդատի խնդրին, խտորեն քննադատեցին նրա զեկուցագրի գրությունը։ Ուշագրավ պետք է համարել այն փաստը, որ նրանք, որդին գրական համարելով միայն ամերիկյան զինվորական փոքր օժանդակությունը պահանջում էին իրենց հետո։ «Ազգային Պատվիրակության մանդատի քաղաքականությունը ջուրը կրնի, սակայն միայն նա է, որ կուզե մանդատ»։ ԱՄՆ-ի քաղաքականության անկերպաշ գոմերգմանը նվիրված նման խմբագրականները եւ հոգվածները բացմանով են։ Բննարկելով ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի մերժման հարցը, նրանք որպես հիմնական պատճառներ նշում էին հետեւյալը. 1. Մոնրոյի դոկտրինան, 2. Միջկուսակցական հակամարտությունը, 3. Վերջինի քաղաքների նկատմամբ անգլո-ֆրանսիական վերաբերմունքը։<sup>4</sup>

Կ. Պոլսի ուսովար մամուլը անթաքուցեւ միանշանակ պաշտպանում էր Պողոս Նուբարի անձը։ Բավական է հիշել 1918թ. վերջին հրապարակված նրանց հետեւյալ լուզուկը. «Հայաստանի անկախությունը հուշակամ Պողոս Նուբար փաշա նախագահը»։ Նրանց բնորոշ էր՝ Չ՛հի հանդեպ ծայրահեղ քննադատական եւ Պողոս Նուբարի հանդեպ գուռ գովարանական մեակողմանի գերբորոշումը։ Նրանք Պողոս Նուբարին աներկրա համարում էին «առաջին հայ քաղաքացին»։ Անտեղի կուսակցականացնելով հարցը, օրինակ՝ Չ՛հի de facto ճանաչումից հետո, նրանք փորձում էին ապացուցել, որ Պողոս Նուբարը դրանով «երբեք իր ներկայացուցչի հանդեմանը չկորսնցուց», եւ բողոքում էին Ավ.Ահարոնյանի դեմ, որով Տօգուտ Հունաստանի՝ նա հրամարվել էր Տրապիզոնից։<sup>5</sup>

ՉԲԸՄ-ի ղեկավար գործիչներից երվանդ Աղաթոնը, գնահատելով Ազգային պատվիրակության գործունեությունը, միանշանակ փաստում էր, որ նրա մեջ՝ եթե «հոգով, սրտով աշխատող մեկը կար, այն նախագահ Պողոս փաշա Նուբարն էր»։<sup>6</sup> Ամերիկահայ ուսովար գործիչ Միհրան Ալազլյանը անկերպաշ բարձր էր գնահատում Պողոս Նուբարի փարիզյան գործունեությունը. «Իր ստանձնած առաքելությունը հարած էր ոչ թե միայն հավատքով, այլ պիտի բուսե խանդավառությունը եւ կամ թագակիրի ոգիով։ Հարմար մարզը, հարմար տեղը, որ կրկավ կարելու ազգականը իր շուրջը համախմբել։ Ամբաստանվեցավ, թե դիտատորը պես կգործե եղբր։ Բցիվ թե այդպես լիներ»։<sup>7</sup>

Ամերիկահայ ուսովարամեա շրջանակները նույնպես նման տեսակետի էին հարում։ Նրանք Պողոս Նուբարի հանդեպ գերազանցապես որդեգրել էին միմիայն գովարանական կեցվածք։ Օրինակ, «Կոչնակ Հայաստանի» պարբերականն առաքելում էր նրա գլխավորած Ազգային պատվիրակությունը հուշակել «Համազգային առճամ կոստալարություն»։ Եվ հակառակ, գտնում էին, որ իրենց բնորոշմամբ՝ «Արարատյան Հանրապետությունը» երբեք չի կարող նկատվել «համազգային կոստալարություն եւ հեղինակորեն խոսել համայն Ռուսիայի եւ Թուրքիայի հայերուն անունով եւ կամ իր իշխանությունը ենթարկել էջմիրածնի կաթողիկոսությունը եւ Ազգային Պատվիրակությունը»։ Այսուհանդերձ, ողջունելով Չ՛հ երկրորդ տարեգարձը, դրան նվիրված հատուկ խմբագրական ավարտում էին հետեւյալ կոչով. «Կեցցե Հայկական Հանրապետությունը, Կեցցե Միացյալ Հայաստանը»։<sup>8</sup>

Թամկավարներն անխոր բացասական կեցվածք որդեգրեցին Միացյալ Հայաստանի ակտի հանդեպ։ 1919թ. մայիսին, ՉՄԻԿ որոշ կառույցների հիման վրա ձեւավորված Ազգային Թամկավար կուսակցությունն իր քաղաքում որպես նպատակ հուշակում էր՝ Միացյալ Հայաստանի անկախության ապահովումը եւ պահպանումը, եւ ըստ այդմ, անկախ հայրենիքի քաղաքական, տնտեսական, բարոյական վերականգնման ուղղությունը աշխատանքները։<sup>9</sup>

ՉԻԿ Հայաստանի խորհուրդը, խիստ դատարարելով ակտը, միանշանակ հետեւյալ գնահատականն էր տալիս. «Միայն դաշնակցական պոլիտիկոս պետք էր

<sup>1</sup> Մրազիր Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն, ա. տ., ա. թ. :

<sup>2</sup> «Պահակ», Պոստոն, 1919, գեկտեմբերի 30:

<sup>3</sup> «Պահակ», Պոստոն, 1919, հուլիսի 25:

<sup>1</sup> «Պահակ», Պոստոն, 1919, փետրվարի 21, հոկտեմբերի 31; 1920, հունիսի 12:

<sup>2</sup> «Նոր Հայաստան», Կ. Պոլիս, 1918, գեկտեմբերի 9:

<sup>3</sup> «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1919, գեկտեմբերի 26, 1920, օգոստոսի 4:

<sup>4</sup> Աղաթոն եր., Կեանքիս Յիշատակներ, Ժնեւ., 1924, էջ 236:

<sup>5</sup> Ի Յիշատակ Միհրան Ալազլյանի, Պոստոն, 1944, էջ 107:

<sup>6</sup> «Կոչնակ Հայաստանի», Նյու Յորք, 1919, փետրվարի 1, 1920, մայիսի 29:

<sup>7</sup> «Ազգ», Պոստոն, 1919, մայիսի 20: Մրազիր ԱԻԿ, Պոստոն, 1919:

դառնալ անտեսելու համար այն իրավական եւ քաղաքական սխալը, որ գործեց Երեւանի կառավարութիւնը, մունեստիկյան մեծ ծանուցումով Միացյալ Հայաստանը ուսուներից եւ թուրքերից խլելով»։ Ակտի անմիջական արդյունքը բազասական համարելով, եղբայրացնում էին. «Հայկական հարցը ուսուականի մեջ թաղվեցաւ»։<sup>1</sup>

ՀՌԿ Հայաստանի խորհրդի նախագահութիւնը, ասի առթիվ, իր «ամենարուեստ գալուցիւթն ու բողոքն» էր հայտնում կառավարութիւնի քայլի համար, որով նա, առանց նախապես «արեւմտահայերի գերագույն մարմին Պողոս Նուպարի» հետ բանակցելու, «ապօրինի եւ հեղափոխական» քայլով դեմ գնաց «ամբողջ թրքահայութիւնի շահերուն, որու համաձայնութիւնը չունի», եւ արդյունքում, միացնելու փոխարեն բաժանելով, իբր թէ խորացրեց երկու հատվածների միջեւ եղած «վիճը»։<sup>2</sup>

Հետաքրքիր է, որ ՀՀ-ի ղեկավարութիւնը հետ բանակցելու նպատակով Երեւան ժամանած Վ.Թեքեյանը եւ Ն.Տեր-Ստեփանյանը հանդիպումներ ունեցան ՀՌԿ Հայաստանի խորհրդի անդամների հետ։ Վ.Թեքեյանը նշում էր, որ ակտի ընդունումը անակնկալ էր, «քաղաքականապես եւ իրապես սխալ քայլ»։ քանզի՝ Հայկական Հարցը «ծանրութիւն կենտրոնը թուրքահայաստանն է, եւ անտեսելը արեւմտահայ գաղութի հեղինակավոր ներկայացուցչութիւնն իրավասութիւնը»։<sup>3</sup>

Ն.Տեր-Ստեփանյանը, անդրադառնալով ակտի ընդունման հետեւանքներին, ավելց հետեւյալ բնորոշումը. «Մեծագույն ամբաստանութիւնը, որ կհանրանա Երեւանի կառավարութիւնի վրա, արհամարհած ըլլալն է արեւմտահայութիւնը եւ քաղաքական բարձրագույն ներկայացուցչութիւնն եղող Ազգային Պատվիրակութիւնը»։

Անդրադառնալով Վ.Թեքեյանի եւ Ն.Տեր-Ստեփանյանի ծրագրին, Ա.Վրացյանն այն անվանում է «վրդովեցուցիչ», որով առաջարկում էին՝ Հայաստանը «կապալով տալ Պողոս փաշա Նուբարին եւ նրան չըթապատող ազգայիններին»։ Նրա գնահատումը. «Հայաստանի պետականութեան պետակցութիւնը չէր, որ խոսում էր այդ մարդկանց մեջ, այլ իշխանութեան տենչը կամ լավաբույնի դեպքում՝ քաղաքական տհասութիւնը։ Հայաստանի վիճակով ծանր պայմաններում կռալիստեր անհրաժեշտ էր նախ եւ առաջ մեզ՝ դաշնակցականներին համար, թեկուզ հենց աշխատանքի ծանրութիւնն ու պատասխանատվութիւնը բաժանելու համար»։<sup>4</sup>

Ազգային ուսմկավարների համոզումը, ՀՀ-ն ամբողջական Հայաստանի անուկից խոսելու իրավական հիմքեր երբեք չունեն, քանզի «գրքախտարար անոր ուսուական պետութիւնն անջատորեն գոյութիւնն իսկ տակալին խնդրո առարկա է»։ Համազգային համերաշխութեան սկզբունքին դեմ էր նրանց նաեւ այն պնդումը, թէ «Երեւանի կառավարութիւնը թիզ մը հող չունի Ռուսահայաստանն գուրս, որպեսզի իրավական հիմք ունենա արեւմտահայութեան անունով խոսելու»։ Ի հակառակ այս մեղադրանքի, նրանք անվերապահ փաստում էին, որ Ազգային Պատվիրակութիւնը վայելում է հայ ազգի փաստութիւնը եւ իրավունք ունի ղեկավարել Հայաստանի դատը։ Ավելին, Ազգային պատվիրակութիւնն էր համարվում այն միակ մարմինը, որը կարող է իրականացնել Հայկական Հարցի նպատակով լուծման որեւէ հնարավորութիւն։ Ազգային ուսմկավարները նման անհիմն քննադատական գնահատական էին տալիս նաեւ «Երեւանի խումբի» (ՀՀ - Ա. Հ.) ընդունած ակտին, որը համարում էին Ազգային Պատվիրակութեան դեմ ուղղված «պետական հարված», ապագա Հայաստանի իշխանութիւնը, ի հաշիվ ՀԹԻ-ի, «հափշտակելու մեղադարտ փորձ», ինչն եւ առաջ բերեց «հայ ժողովրդի պառակտումը»։ Այսպիսի մոտեցմամբ նրանք ի վերջո հանգում էին հակապետական եզրակացութիւնների. «Ամբողջ աշխարհի մեջ անկարելի է երեւակայնի ավելի անճարակոված կառավարութիւն մը՝ քան Երեւանինը։ ՀՀ ոչ թէ

բառին բուն իմաստով ազատ եւ անկախ երկիր մըն է, այլ թրքական զբոյժով վեհասպետութեան ներքեւ փոքրիկ ինքնօրինութիւն»։<sup>5</sup>

Ռամկավար գործիչ Տիրքան Զալեմը Միացյալ Հայաստանի ակտը համարում էր իրավական ու գործնական հիմքից զուրկ՝ «մեր կյանքում պառակտում եւ քայքայում մտցնող», իսկ Հասկելի նշանակումը առանց չափազանցութեան որպես «սկիզբը Միացյալ եւ Անկախ Հայաստանի կազմակերպութիւն»։<sup>6</sup> Ակտի ընդունումը քննադատեց նաեւ ՀՌԿ Աշակերտական միութիւնը։<sup>7</sup>

1917թ. սեպտեմբերի 27-ին ընդունված ծրագրով ազգային-քաղաքական կյանք մտած Հայ ժողովրդական կուսակցութիւնը իրեն Հռչակում էր համազգային եւ ապադասակարգային։ ՀժԿ-ն ազգային հարցը տարարածանում էր երկու մասի՝ Ռուսահայաստան եւ Հայկական հարց։ Ըստ ՀժԿ-ի, Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց «սահմանները պետք է փոփոխել ըստ ազգային համարմունքների», հայերը պետք է ունենան տարածքային ինքնավարութիւն եւ տեղական նշանակութեան հարցերը լուծեն թեմաքանակ մարմնի միջոցով։ Իսկ արդեն Հայկական (նկատի ունեն Արեւմտահայաստան - Ա.Հ.) հարցը համարվում էր «միջազգային, որ կարող էր լուծվել միջազգային կոնգրեսում»։ Ըստ այդմ, ՀժԿ-ն պետք է աշխատեր, որպեսզի այդ հարցը լուծվի արեւմտահայերի ցանկութեան համաձայն։<sup>8</sup>

1919թ. սեպտեմբերի 7-15-ը կապած 2-րդ համագումարում, ՀժԿ-ն ընդունեց նոր ծրագիր, որտեղ, նախորդի համեմատ, արդեն կատարվել էին որոշակի փոփոխութիւններ։ Արդեն, որպես գլխավոր նպատակ հռչակելով «բովանդակ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանումը եւ ազգային պետականութեան զարգացմանը ծառայելը», ՀժԿ-ն, ՀՀ-ի ստեղծումից հետո, ազգային հարցը առանց որեւէ տարարածանման էր ներկայացնում՝ Հայաստանի անջատված մասերից սեփական ծովային ելքով Միացյալ ու Ազատ Հայաստանի, իսկ Հայաստանից զուրս ապրող հայերի համար՝ ազգային մշակութային ինքնավարութեան ստեղծումը նպատակ հայտարարում։<sup>9</sup> Փաստորեն, նույնիսկ Փարիզի վեհաժողովին Հայկական Հուշագրի ներկայացումից հետո անգամ ՀժԿ-ն իր ծրագրում այդ հարցին շատ անորոշ ձեւակերպում ավելց։

Երկրորդ համագումարում ընդունած (որին մասնակցում էին նաեւ ուսմկավար ու վերակազմյալ հնչակյան կուսակցութեան պատգամավորներ) բանաձեւում ՀՀ ներքին իրադրութեան եւ հասարակական-քաղաքական կյանքի գնահատման ուղղութիւնում ՀժԿ-ի հայեցակետերը հստակեցվեցին։ Նշելով այն հանդամանքը, որ ՀՀ «օրհասական» օրեր է ապրում, ինչը «անխուսափելի հաջողութեամբ» երկիրը դեպի «պետականութեան կատարյալ խորտակում եւ բնակչութեան ոչնչացում» է մղում, անհրաժեշտ էին գտնում, որպեսզի «ոչ պետական շահերով» ղեկավարվող ՀԹԻ կառավարութիւնը անհապաղ հրաժարական տա, պառլամենտը լուծարվի եւ նոր ժամանակավոր կառավարութիւն կազմվի։<sup>10</sup>

Քեմալական ագրեսիայի ժամանակ, 1920թ. հոկտեմբերի 2-ի կոչում ՀժԿ Հայաստանի Կենտկոմը հռչակում էր. «Ամեն ինչ պիտի զոհարելու հանուն հաղթանակի, հանուն մեր ժողովրդի փրկութեան եւ Միացյալ ու անկախ Հայաստանի։ Սեղմենք մեր շարքերը, նորից ցուցադրենք ապրելու եւ հաղթելու մեր կամքը, կազմենք մի համազգային ճակատ»։ Նման հոգատար վերաբերմունքի արդյունք էր ՀՀ կառավարութեանն ուղղված հուշագրերը, ուր, ՀՀ անկախութիւնը ապահովելու համար, կոչ էր արվում շարունակել պայքարը արտաքին թշնամու դեմ։ Ըստ այդմ, նրանք առաջարկում էին Հայաստանի անկախութիւնը բնդունող բոլոր հայկական քաղաքական հոսանքներից կազմել կռալիցիոն կառավարութիւն եւ պայման դնում, որ նրանում ՀԹԻ-ն լինի փոքրամասնութիւն, իսկ վարչապետը՝ ոչ դաշնակցական։ Առաջարկվում էր բոլոր կուսակցութիւնների մասնակ-

<sup>1</sup> «Հայաստանի ձայն», Երեւան, 1919, հոկտեմբերի 9:

<sup>2</sup> «Վան-Տոսպ», Երեւան, 1919, հունիս 9:

<sup>3</sup> «Հայաստանի ձայն», Երեւան, 1919, հոկտեմբերի 19, 24:

<sup>4</sup> «Հայաստան», Փարիզ, 1919, օգոստոսի 30:

<sup>5</sup> Վրացյան Ա., Խաբախումներ, Պոսթըն, 1924, էջ 53:

<sup>1</sup> «Ազգ» Պոստն, 1919, հուլիսի 17, 26, 31, օգոստոսի 5, 23:

<sup>2</sup> «Ժողովուրդ», Կ. Պոլիս, 1919, հուլիսի 2, 10:

<sup>3</sup> ՏԽ - «Վերածնունդ», Երեւան, 1919, հունիսի 8:

<sup>4</sup> Մրազիբի ՀժԿ, Թիֆլիս, 1917, ՀԱԱ, ֆ. 1021, ց. 7. գ. 11:

<sup>5</sup> Մրազիբի ՀժԿ, Երեւան, 1919, էջ 3:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 39:



ցույթյամբ կազմակերպել բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորություններով օժտված պետական խորհուրդ: Թեպետ, ստեղծված իրազրույթյունում ՀԺԿ-ն մյուս ընդդիմադիր քաղաքական Հոսանքների նման իրեն պատասխանատու չէր համարում և գիտակցում էր իշխանության պատասխանատվության ծանրությունը, սակայն, նման քայլի գնում էր «Հանուն մեր ժողովրդի ու պետության փրկության»: Հավասար գեպըրում, եթե ՀՅԴ-ն կրկին մերժեր նման առաջարկը, ապա ՀԺԿ-ի կարծիքով նրա վրա պետք է ծանրանա պետության վիճակի Համար պատասխանատվությունը «ներկա եւ ապագա սերունդների առաջ»:<sup>1</sup>

ՀԺԿ-ի Աշակերտական ֆրակցիան գլխավոր նպատակ էր հռչակում՝ «ազգային առողջ ինքնագիտակցություն» գարգացումը ու իրականության հաշվի առնումով «իլյուզիաներով եւ երեւակայություններով կերակրվելուն» վերջ տալը:<sup>2</sup>

ՀԺԿ Այլբնասնորապալի կոմիտեն ձգտելով հավաստել, որ իրենց կուսակցությունը հակադր ուժ է մի կողմից աշակերտյան՝ «նեղ ազգայնական եւ ազդեցիկ տարրերի, որպիսիք են դաշնակցականները-ուեակցիոն ուժ», եւ մյուս կողմից՝ «ծայրահեղ սոցիալիստական տարրերին, որոնք ամեն բանից վեր դասում են դասակարգային խոխորը», ղեմ է արտահայտում հեղափոխական ցնցումներին, եւ ողջունում Հայաստան եկած անդլո-ամերիկյան դաշնակիցներին՝ որպես «մեր բարեկամների եւ հողթողների» ու հույսը դնում նրանց վրա:<sup>3</sup>

ՀԺԿ երեւանի Աշակերտական ֆրակցիան, քննադատելով ՀՅԴ-ին, փորձում էր հետեւյալն ապացուցել. «Հայաստանի երիտասարդ սերնդի մեջ մենք առաջ ենք դնում մի ուղղություն, որ հենվելով ազգային գաղափարների եւ գիտության նվաճումների վրա, անպայման պիտի հաղթանակ տանի»:<sup>4</sup>

ՀԺԿ Հայաստանի կոմիտեն ակտի ընդունումից հետո կայացած խորհրդարանի ընտրությունների նկատմամբ ընդգծված բացասական դիրքորոշում որդեգրեց եւ բոլիտեց: Այս փաստը պետք է բացատրել մասնավորապես հետեւյալ նկատառումներով, նախ՝ վերջնականապես արդեն բացառվում էր կոալիցիոն կառավարության ստեղծման որեւէ հնարավորություն, ապա՝ նոր խորհրդարանում ՀԺԿ-ին տեղեր զբաղեցնելու չնչին շանսեր էին մնացել, եւ ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում նրա համար միմիայն ընդգծված ընդդիմության կեցվածքն էր ձեւաւորում: Այդպիսի իրավիճակի ձեւավորմանը մեծապես նպաստում էր նաեւ արտաքին դիվանագիտական ասպարեզում ՀՅԴ եւ Պոլոս Նուբարի խմբավորման միջեւ հակամարտության սրումը: Այսուհանդերձ, նման կեցվածքը չէր խանգարում, որպեսզի ՀԺԿ Հայաստանի կոմիտեն, 1920թ. մայիսի 28-ին, «Քերմ» շնորհավորական ուղերձ հղի ՀՀ վարչապետին, որն ավարտվում էր հետեւյալ կոչով. «Կեցցե՛ ազատ, անկաս, միացյալ Հայաստանը»:<sup>5</sup>

Ի դեպ, ինչպես հայտնի է, Միացյալ Հայաստանի ակտի ներքո ստորագրել էր նաեւ ժողովրդական Հ.Չմշկյանը, որ նախարարի պաշտոնում մնալու կապակցությունից չբխող», եւ պահանջում էր այն չեղյալ հայտարարել: Այս ամենից հետո, ՀԺԿ Հայաստանի կոմիտեն, 1919թ. հունիսի 25-ին, միաձայն որոշեց նրան կուսակցությունից արտաքսել՝ տեղեկացնելով այդ մասին կուսակցական բոլոր մարմիններին:<sup>6</sup>

Միացյալ Հայաստանի ակտի ընդունումը քննադատեց նաեւ ՀԺԿ Բաքվի կոմիտեն:

Ս.Վրացյանի վկայությամբ, ՀԺԿ-ի առաջնորդ Ս.Հարությունյանը ակտին ղեմ էր, որովհետեւ այն համարում էր «միակողմանի բնույթի կողք, Պոլոս Նուբարի հավանությունը չունեցող եւ Հայկական Հարցի միջազգային կացությունից չբխող», եւ պահանջում էր այն չեղյալ հայտարարել: Սակայն, Ս.Վրացյանի վկայությամբ, ժողովրդականներին նման կեցվածքը թելադրված էր Փարիզից: Այդ տարիներին, Թիֆլիսն էր Փարիզի հետ արագ եւ անմիջական

հարաբերության մեջ եւ ավելի իրազեկ այնտեղի անցուղարձին, իսկ ինչպես հայտնի է, ՀԺԿ-ի կենտրոնը գտնվում էր Թիֆլիսում:<sup>7</sup>

ՀԺԿ-ն, թեպետ գրական վերաբերվեց ՀՀ անկախությանը եւ մայիսի 28-ը համարեց «պատմական տարեդարձ», ու ողջունեց Միացյալ եւ Ազատ Հայաստանը, սակայն ակտը համարեց պետական հեղաշրջում, որը կատարվել էր «քաղաքական եւ նեղ կուսակցական շարժառիթներից, եւ ամենամեծ հարվածը հասցրեց ժողովրդական նեկալացուցչության գաղափարին»: Իսկ Միացյալ Հայաստանի իշխանությունը, ՀԺԿ-ի կարծիքով, պետք է կազմակերպվեր Ազգային պատվիրակության եւ ՀՀ կառավարության փոխադարձ համաձայնությունը:<sup>8</sup>

ՀԺԿ-ն ուշաբուրյան կենտրոնում էր պահում ինչպես Հայկական Հարցը, այնպես էլ ՀՀ արտաքին քաղաքականության խնդիրները: Անդրադառնալով Հայ-խորհրդային հարաբերությունների կարգավորմանը, ՀԺԿ-ն գտնում էր, որ միջազգային իրավունքի համաձայն, պետք է անհապաղ «բարեկամական եւ տնտեսական» հարաբերություններ ստեղծվեն ՀՀ-ի եւ խորհրդային Ռուսաստանի միջև: Անհրաժեշտ էր համարվում, որ Ռուսաստանը միջոցներ ձեռք առնի անսահմանորեն Հայաստանի բոլշևիկների հակապետական գործունեությունը եւ ազդի Արբեղյանի վրա: Քննադատելով 1920թ. օգոստոսի 10-ի Հայ-խորհրդային համաձայնագրի, Ռուսաստանից պահանջում էին՝ վերադարձնել Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, քեմալականներին ստիպել ազատել Արեւմտահայաստանը եւ չխոստնել ՀՀ-ի ներքին գործերին:<sup>9</sup>

1920թ. Թուրք-հայկական պատերազմի օրհասական շրջանում, «Ո՛ւր է մարդկությունը» վերտառությունը հոգվածում, քննադատելով եվրոպայի, ԱՄՆ-ի եւ Ազգերի Լիգայի բացարձակ անդրժույթությունը ՀԺԿ-ն, որպես փրկության միակ միջոց համարում էր՝ Հայ ժողովրդի համար «իրեն վաղել, իր ձեռքն եւ բաղձանքներին համապատասխան իշխանության» ձեւավորումը»: Հայրենիքի պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ կոչեր կատարած ՀԺԿ-ն խիստ պատասխանեց պատերազմի վերջում ՀՀ կառավարության որդեգրած թուրքական կողմնորոշումը, հասկանալի նկատի ունենալով այն պարագան, որ ՀՅԴ-ն 30 տարի պատասխանակալ պայքար է մղել թուրքերի դեմ:<sup>10</sup>

ՀԺԿ-ն, գովասանքով ողջունելով Հասկելի գալուստը, շեշտում էր, որ նրա՝ «Հայաստանի դիկտատոր» նշանակվելը եղել է ԱՄՆ-ի ազդեցության ներքո, ինչի արդյունքում «այդպիսով հիմք է դրվում Միացյալ Հայաստանի քաղաքական վերածնունդի գործին»:

Սան-Ռեմոյում պայմանագրի հաստատումից հետո, վերլուծելով Հայաստանի վերաբերող հոգվածները, ժողովրդականները խնդրում պնդում էին, որ անկասկած Հայկական Հարցը կուժվի դրական եւ Միացյալ Հայաստանի անկախությունը կհամազգի «մեծ դաշնակիցների կողմից»: Ցավայի էր համարվում միայն Հայաստանի սահմանների վերաբերյալ Հարցի անորոշ թողնվելը, բանցի, նրանց կարծիքով, Առաջավոր Ասիայում խաղաղություն չի կարող լինել, եթե Հայաստանը մնա առանց Երզրումի եւ սեփական ծովային ելքի:<sup>11</sup>

Սեւրի պայմանագրի կնքման փաստը, ՀԺԿ-ն գիտարկում էր ներքաղաքական հակամարտության եւ միջուկակցական պայքարի կանոնավորման համապատկերում: Այն համարում էին «ամենալավ եւ ամենահարմար ժամանակը» ներքին խուլ եւ անվայել պայքարին՝ վերջ տալու եւ Միացյալ Հայաստանի «արգար եւ ճշմարիտ միացյալ խաղը կառավարություն» կազմելու համար:<sup>12</sup>

Ի տարբերություն ժողովրդական եւ ռամկավար մյուս հոսանքների, «Մշակ»ը, ընդհանուր առմամբ, անաչառ էր դնահատում ներքին եւ արտաքին քաղաքական բնագավառների հարցերը: Մասնավորապես, թուրք-հայկական պատերազմի ընթացքի եւ արդյունքների քննարկման ժամանակ, սեղին

<sup>1</sup> Նույն տեղում, ֆ.1021, ց.7, դ.21:

<sup>2</sup> «Բայլեր», Թիֆլիս, 1919, մարտի 23:

<sup>3</sup> «Նոր կյանք», Այլբնասնորապալ, 1919, փետրվարի 9:

<sup>4</sup> «Նոր ուղի», Երեւան, 1920, մայիսի 16; ՀԱԱ, ֆ.4004, ց.1, դ.40:

<sup>5</sup> Տես մանրամասն - ՀԱԱ, ֆ.1021, ց.7, դ.12-16, 18-19:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ.404, ց.1, դ.38:

<sup>7</sup> «Երկիր», Բաքու, 1919, հուլիսի 7:

<sup>1</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 1993, էջ 281-83:

<sup>2</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1919, մայիսի 28; հունիսի 1, 4, 6:

<sup>3</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1920, մայիսի 20, սեպտեմբերի 21:

<sup>4</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1920, նոյեմբերի 10, 23:

<sup>5</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1919, օգոստոսի 17, 22:

<sup>6</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1920, մայիսի 23, հունիսի 23:

<sup>7</sup> «Ժողովուրդ», Երեւան, 1920, օգոստոսի 27:

քննադատում էին, ինչպես քեմալականների ու բոլշևիկների քաղաքականությունը, այնպես էլ՝ ՀՀ ղեկավարության պահվածքը: Այս առումով, անդրադառնալով ստեղծված իրավիճակից ելքի փնտրություն, սկզբունքային ձևով հավաստում էին. «Ամենից առաջ՝ սթափվել ցնորքներից: Մեզ ոչ ոք չի օգնել եւ չպիտի օգնի: Ամեն ինչ վաճառք է, ամեն ինչ արշին է եւրոպական դիպլոմատիայի կրծքի սափ»: «Մշակ»-ը պիտարակիչ ձևով քննադատեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքած ՀՀ կառավարությունը եւ ՀԹԴ-ին, որը նրա գնահատմամբ «գեռ երկի հրկանցած, բարձրագույն էր, իսկ հիմա այդքան անգույթ կերպով թաղեց իրեն իր ձեռքով պարտատած գերեզմանի մեջ»:<sup>1</sup>

«Մշակ»-ի շուրջ խմբված մտավորականները եւ գործիչները (օրինակ՝ Լեոն) բավական ակտիվորեն անդրադառնում էին ներքին եւ արտաքին քաղաքականության խնդիրներին: ԱՄՆ-ի մանդատի մերժումից հետո իրադրությունը ավելի իրական ձևով գնահատականներ տալով խոստովանում էին, որ հայ ժողովրդի ու Հայաստանի «միակ առողջ ու միակ շահավետ» քաղաքականությունը սեփական ուժերի վրա հենված քաղաքականությունն է, միակ փրկությունն էլ՝ բոլոր հատվածների «սերտ համերաշխության եւ կուռ միարանություն մեջ է, եւ միայն մենք կփրկենք մեզ», եւ համարում պահի «սրբազան պատվիրան ամեն մի հայի համար»: Սեւրի պայմանագրի կնքումը «թուրքիան ոչնչացավ» մեկնակետով գնահատվեց. «Անկախ եւ Միացյալ Հայաստանը երազ չէ: Նա ճանաչված է, օրինականացված: Մնում է նրա հողային տարածքի խնդիրը: Մեր փրկությունը, մեր ուժը դրսից չէ, այլ մեզանից պիտի բղխե: Ամենագլխավորն այս է»:<sup>2</sup>

1919թ. մայիսի 28-ից հետո, դաշնակցականները ՀԺԿ-ին բնութագրում էին որպես «բուրժուաների կուսակցություն, որ ժողովրդի մեջ հեղինակություն եւ դիրք չունի եւ այդ պատճառով բնորոշություններին չմասնակցեց, եւ որին ծայր էին տալիս միայն խանութպանները, չարչիները, շահագործող դասակարգերի անդամները, նրանք գաղափարում են մեր կյանքում որեւէ դեր խաղալուց եւ ինքնապահ եղան»:<sup>3</sup>

ՀԺԿ-ի բնութագրման առումով ուշագրավ է Ս.Վրացյանի կարծիքը: Նրա վկայությունները, ՀԺԿ ղեկավար Ս.Հարությունյանը, ժամանակին՝ հակառակ իր դիմումի, ՀԹԴ շարքերը չէր բնորոշվել սոցիալիստ չլինելու պատճառով: Նրա գնահատմամբ ՀԺԿ-ն «անպայման ապագա ունեցող մի կազմակերպություն էր, դժբախտաբար նրա ղեկավարները ահաս գտնվեցին բմբուխի ու համար իրենց վերապահված պատմական դերը»:<sup>4</sup>

Փաստորեն, ուսմավարները եւ ժողովրդականները ակնհայտորեն միասնական դիրքորոշում էին ցուցաբերում, թե ՀՀ ներքաղաքական ու ներկուսակցական պայքարի, թե համազգային նշանակության ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրների, եւ թե, հատկապես, Հայկական Հարցի միջազգայնորեն լուծման ուղիների առումներով: Այս խմբավորումը, օբյեկտիվ պատճառներով, գերազանցապես գտնվում էր Պողոս Նուբարի անառարկելի ազդեցություն ներքո եւ ներքին ու արտաքին քաղաքական հարցերում հանդիսանում ՀԹԴ-ի բնորոշմամբ:

**Ավագ Հարությունյան**  
ՀԱԱ տնօրենի  
սեղակալ

## ПОЗИЦИИ ЛИБЕРАЛЬНО-НАРОДНОЙ КОАЛИЦИИ ПО ВОПРОСАМ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ В 1918-1920 ГОДАХ

### Резюме

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1920, նոյեմբերի 7, դեկտեմբերի 22-23, 1921, հունվար 25:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1920, հունիսի 1, հուլիսի 30, օգոստոսի 15:

<sup>3</sup> «Հայաստանի Աշխատավոր», Երևան, 1919, հունիս 5:

<sup>4</sup> Վրացյան Ա., Կեսեքի ուղիներով, հ. Գ, էջ 146-147:

Среди армянских политических партий по своему влиянию и масштабу деятельности, второй по значимости после Армянской Революционной Федерации Дашнакцутюн была Либерально-Народная коалиция (Либерально-Демократическая и Армянская Народная партия). Если во внутриполитической жизни Республики Армении активной была роль АНП, то на международной дипломатической арене для ЛДП главной задачей была защита и справедливое решение Армянского вопроса.

Либералы и Народники привели в соответствие свои программные концепции согласно изменениям внутреннего и международного положения.

Они отрицательно отнеслись к принятию правительством РА акта об объединенной Армении.

Либералы и Народники полностью защищали принятие мандата США над Арменией. Подписание Севрского договора они также рассматривали в контексте урегулирования внутриполитического противостояния и межпартийной борьбы.

Фактически, Либералы и Народники явно проявляли единую позицию как во внутриполитической борьбе в РА, так и по отношению к основным проблемам внешней политики, и особенно в поисках международного решения Армянского вопроса.

Эта коалиция по объективным и субъективным причинам находилась под безусловным влиянием Председателя Национальной Делегации в Парижской мирной конференции Погоса Нубара как во внутренних, так и во внешних политических вопросах, находясь в оппозиции к правящей АРФ Дашнакцутюн.

**Авак Арутюнян**  
замдиректор НАА

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԴԻՐԵԶԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ (1918 - 1920թթ.)

Հայաստանի Առաջին Հանրապետությունը իր գոյությունը առաջին իսկ օրերից հայտնվել է ծանր, եթե չասենք օրհասական կացություն մեջ: 10 հազ. քառ. վերստ հողատիրի վրա շուրջ 300 հազար անտուն ու քաղցած գաղթականություն, քառամյա ավերիչ պատերազմի հետեւանքով քայքայված ու կազմալուծված անտեսություն:

Նորաստեղծ Հանրապետության կառավարությունը անհրաժեշտաբար ու անհապաղ պետք է լուծեր երկու կարևոր խնդիր՝ ապահովել երկրի անվտանգությունը եւ ժողովրդին փրկելը սովի ու հիվանդություններից: Հայաստանը չըջափակված ու մեկուսացված էր. հաղորդակցության ուղիները չէին գործում. Երեւան-Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղին թուրքիայի ու Գերմանիայի եւ վերջինիս բարեկամ Վրաստանի տնօրինության ներքո էր. Երեւան-Ջուլֆա-Թավիր գերաթուղին՝ Նախիջևանի թուրք-թաթարների:

Երկիրն ու ժողովրդին փրկելու խնդրում Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների կարեւորությունը Հայաստանի իշխանությունները քաջ գիտակցում էին: Վրաստանով էր անցնում աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ երկաթուղին, ինչպես նաեւ փոստային ու հեռագրական կապը, իսկ էներգակիրները ստանում էին Ադրբեջանից: Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետը՝ Հ.Քաջազնունին խոսելով արտաքին քաղաքականության ապարեզում կառավարության խնդիրների մասին մատնանշում էր. «Բարեկամական ու բնականոն կապ հաստատել հարեւան երկրների հետ, մասնավորապես վերականգնել ապրանքափոխանակությունը նրանց եւ Հայաստանի խնդիրն օրհնել»:

ՀՀ կառավարությունն այդ չափազանց դժվարին խնդիրն իրագործելու ուղղությամբ ջանքեր էր գործադրում: Նախ եւ առաջ անհրաժեշտ էր դիվանագի-

տական Հարաբերություններ Հաստատելի Հարեւան երկրների Հետ: Վրաստանի Հետ այդ Հարցը լուծվեց 1918թ. ամռանը, Պարսկաստանի Հետ՝ 1919թ. ամռանը, իսկ Ազրբեյջանի Հետ, ոչ առանց անգլիական իշխանությունների միջամտության, զիվանագիտական Հարաբերություններ Հաստատվեցին 1919թ. փետրվարից<sup>1</sup>: Ընդհանրապես իրազրույթունն Անդրկովկասում որոշ չափով բարելավվեց պատերազմի ավարտից հետո, 1918թ. նոյեմբերի կեսերին, երբ Հաղթանակած Անտանտի զինվորական ներկայացուցչությունը սկսեց գործել Անդրկովկասում<sup>2</sup>:

Միջպետական առևտրա-տրանզիտային եւ տնտեսական Հարաբերություններն իրականացնելու Համար անհրաժեշտ էին կարգավորող փաստաթղթեր, պայմանագրեր, Համաձայնագրեր: Վրացական Հանրապետության կառավարությունը 1919թ. փետրվարի 21-ին Արտաքին գործերի նախարար Գեղոցիորու ստորագրությունը մի նամակ է հղում Ազրբեյջանի եւ Հայաստանի կառավարություններին եւ՝ ելնելով ընդհանուր տնտեսական ու քաղաքական շահերից, առաջարկում. 1) կարգավորել երկաթուղու աշխատանքը, 2) մշակել միասնական օրենսդրություն փոստ հեռագրական ծառայությունների ու նրանց փոխանակման վերաբերյալ, 3) մշակել օրենսդրություն մաքսային ծառայությունների եւ փոխադարձ արտոնությունների վերաբերյալ, 4) կարգավորել ֆինանսական փոխհարաբերությունները, 5) կարգավորել ու ճշտել ապրանքափոխանակության Հարցերը: Վրաստանը գտնում էր, որ բացի երեք անդրկովկասյան Հանրապետություններից, վերոհիշյալ Հարցերի քննարկմանը պետք է մասնակցի նաեւ Լեւնակալների միությունը՝ Հանրապետությունը<sup>3</sup>:

Ազրբեյջանի կառավարությունը 1919թ. մարտի 6-ին պատասխանում է Գեղեցիորուն եւ նոր առաջարկություններ անում. 1) նախ եւ առջ ճանաչել միմյանց անկախությունը, այդ մասին Հանդիսավոր եղանակով Հայտարարել Անտանտի երկրներին, 2) Խաղաղարար կոնֆերանսում եւ այլ միջազգային Համաժողովներում Համերաշխություն գրանցելու կ պաշտպանություն Հանրապետությունների անկախության, 3) նախազգուշական միջոցներ կիրառել Հանրապետություններից որեւէ մեկի վտանգի ենթարկվելու դեպքում, 4) բոլոր վիճելի Հարցերը լուծել արբիտրաժի միջոցով, 5) կարգավորել փախուսականների՝ իրենց բնակավայրերը վերադառնալու Հարցը: Ազրբեյջանը «ցանկալի եւ անհրաժեշտ» էր Համարում Հարավ-Արեւմտյան Հանրապետության՝ մասնակցությունը այդ Հարցերի քննարկմանը, որն ըստ Ազրբեյջանի պետք է տեղի ունենա Հատուկ կոնֆերանսում: Նշվում էր կոնֆերանսի գումարման ժամանակը՝ մարտ 1919թ. եւ տեղը՝ Բաքու քաղաքը, անհամաձայնության դեպքում՝ թիֆլիսը<sup>4</sup>:

Ինչպես տեսնում ենք վրացական ծրագիրը առավելապես տնտեսական բնույթ էր կրում, մինչդեռ ազրբեյջանականը գերազանցապես՝ քաղաքական: Չնայած դրան փոխադարձ քննարկումներ ու ճշտումներ կատարելուց հետո առևտրատրանզիտային պայմանագիր է կնքվում Հայաստանի եւ Ազրբեյջանի միջև 1919թ. հունիսի 17-ին<sup>5</sup> եւ արնագիտային պայմանագիր՝ Հայաստանի եւ Վրաստանի միջև՝ 1919թ. նոյեմբերի 3-ին<sup>6</sup>: Բայց եթե վերջինս Հաստատվել էր Հայաստանի պաշտպանությունում 1919-ի նոյեմբերի 12-ին, եւ Վրաստանի պաշտպանությունում՝ նոյեմբերի 17-ին<sup>7</sup>, ապա Ազրբեյջանի պաշտպանությունը մինչեւ 1920թ. փետրվարի 15-ը այդ Հարցին չէր անդրադարձել<sup>8</sup>: Ավելորդ չենք Համարում նշելու, մինչեւ անկ պայմանագրերի կնքումը Հայաստանին Հասցեագրված բեռնափոխադրումները իրականացվել են անգլիական կամ ամերիկյան դրոշի ներքո:

ՀՀ կառավարությունը երկրի տնտեսական կյանքը, մասնավորապես արտաքին առևտուրը կազմակերպելու ապարեզում որոնումների մեջ էր: Չունենալով կառավարման փորձ, նաեւ մասնագիտական որակավորում, սխալների

էր գործում: Մյուս կողմից երկրի ու ժողովրդի օրհասական վիճակը, քայքայված, ավերված տնտեսությունը անհապաղ լուծումներ էին պահանջում: Անկախ քաղաքական, սահմանային վեճերից ՀՀ կառավարությունը փորձում էր ճեղքել շրջափակման շղթան, լուծել ժողովրդին կենսական միջոցներով, սննդամթերքով ապահովելու խնդիրը: Փորձում էր առևտուր անել սահմանակից երկրների, Հատկապես Վրաստանի ու Ազրբեյջանի հետ: Ֆինանսների նախարարությունը, վերջինիս առևտրաարդյունաբերական բաժինն Արտաքին գործերի նախարարության միջոցով 1919թ. մարտի 28-ին, երբ նոր-նոր էին զիվանագիտական Հարաբերություններ Հաստատվել Հարեւան երկրների հետ, դիմում է Արտաքին գործերի նախարարությանը, որ նա իր ներկայացուցիչներին Հրահանգի ստեղծում պարզել եւ Հայաստանի Համապատասխան մարմիններին սպառիչ տեղեկություններ Հաղորդել նավթամթերքների, էլեկտրական սարքերի, լամպերի, ծխախոտի արքիզի, արտահանության մաքսի, արտահանության Համար թույլատրված ապրանքների, շուկայական գներն եւ այլ նման Հարցերի վերաբերյալ: Նույն գրությունում մեջ Հայտնվում է, որ Հայաստանի կողմնակից է ազատ ապրանքափոխանակության<sup>9</sup>: Ինքը եւս պարտավորվում է զիվանագիտական ներկայացուցիչներին պարբերաբար տեղեկություններ Հայտնել Հայաստանի տնտեսական վիճակի ու շուկայի մասին:

Կառավարություն անդամների անփորձությունը, մասնագիտական գրեհատարժույթության պակասն ու շտապողականությունն իրենց կնիքն էին դնում, բացասական ազդեցություն գործում Հանրապետության առևտրատրանզիտային գործունեության վրա: Հիշյալ գործունեները բացահայտվում են վարչակազմակերպչական ասպարեզում: Թիֆլիսում, Բաթումում, ավելի քիչ թվով Բաքվում, տեղակայված էին Հայաստանի տարբեր նախարարությունների լիազոր-պաշտոնյաներ, անկախ զիվանագիտական ներկայացուցչություններից ու Հյուսիս-ատուլություններից:

Արդյունքը լինում էր այն, որ գործարքներ էին կատարվում առանց միմյանց հետ Համաձայնեցնելու, երբեմն գործարքներ էին կնքվում ասպարեզի հետ կապ չունեցող անհասանելի կողմից<sup>2</sup>, չէին պահպանվում պայմանագրային ժամկետները Հատկապես վճարների Հարցում: Երկաթուղու անկախոն աշխատանքը մշտական բանակեճերի առարկա էր:

Որոշակի լիազորություններով ու իրավունքներով օժտված առանձին կառույցներն բնականաբար ստեղծում էին խռոնաշփոթ իրավիճակ, որին գումարվում էր Հաշվառման գործի անբավարար գրվածքը:

Հայաստանի եւ Վրաստանի միջև առևտրատնտեսական բնականոն Հարաբերություններ սկզբում գոյություն չեն ունեցել: Բայց կա մի վավերագիր, որում առևտրական գործարքը Հիմնավորվում է Վրաստանի կառավարության 10 մլն. գումարի արտահանության թույլտվությամբ<sup>3</sup>: Գոյություն ունեցող եւ մեր ձեռքի տակ եղած արխիվային վավերագրերը Հաստատում են այդ իրողությունը եւ այն, որ Հատուկեհետ գործարքների Հեղինակները, սակավ քաղաքում, Վրաստանի Հայազգի քաղաքացիներ էին: Մի կարեւոր Հանգամանք եւս. գործարքների վերաբերյալ վավերագրերը հիմք չեն տալիս կարծելու, թե դրանք իրագործվել են:

Ապրանքափոխանակության Հարցը Հայաստանի եւ Վրաստանի միջև, ըստ վավերագրերի, ծագում է 1918թ. օգոստոսից: Ի պատասխան Վրաստանում Հայաստանի զիվանագիտական ներկայացուցչի գրություն, ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի ստորագրությամբ նամակում Հայտնվում է, որ Հայաստանը Համաձայն է ապրանքափոխանակության՝ Հաց, յուղ, շաքար ստանալու Համար տալ տավար, ոչխար եւ այլն<sup>4</sup>:

«Գ. Ձ. Սարաջեւ» ընկերությունը 1918թ. օգոստոսի 21-ին գրություն է հղում Հայկական կառավարությանը առ այն, որ նա ցանկանում է Երեւանի իրենց

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.223, ց.1, գ.51, թ.26:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.111, թ.14:

<sup>3</sup> Հարավ-Արեւմտյան Հանրապետություն ստեղծվել էր Թուրքիայի կողմից, ընդգրկում էր Կարսի մարզի արեւմտյան մասի եւ Արդվինի շրջանի մահադեղանակ գյուղերը -Վ.3:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.111, թ.14:

<sup>5</sup> Նույն տեղում, գ.433, թ.511:

<sup>6</sup> Նույն տեղում, գ.168, թ.71,76,84:

<sup>7</sup> Նույն տեղում, գ.496, թ.13:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.130, թ.16:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.108, թ.97:

<sup>3</sup> Վեճակագրական բյուլետեն N 2, Հայաստանի ապրանքափոխանակությունը 1919 - 1920թթ., խմբագրությամբ Բ.Իշխանյանի, Երեւան, 1920 թ., էջ 24:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.64, թ.13:

<sup>5</sup> Նույն տեղում, գ.40, թ.2:

պահանջներից արտահանել երեք վազոն սպիրտ թիֆլիսի իր գործարանի կարիքների համար, եւ որ այդ առթիվ նախագես ստացել է Վրաստանի իշխանութիւնների համաձայնութիւնը<sup>1</sup>: Ոմն Վարդան Վարդանյան 1918թ. սեպտեմբերի 4 -ին դիմելով Հայաստանի Մինիստրների խորհրդին, հայտնում է, որ ինքը տեղյակ է Հայաստանի բնակչութեան ու բանակի ծխախոտի կարիքներին: Միախոտը Վրաստանից արտահանելու խնդիրը նույնպես համաձայնեցրել է Վրաստանի կառավարութեան Հետ մի պայմանով, որ ներմուծված ծխախոտի արժեքին համացոր ապրանք արտահանի Հայաստանից<sup>2</sup>: Վ.Վարդանյանը խնդրում է արտահանութեան թույլտվութիւն: Վրաստանում Հայաստանի պարենափորձան մասի լրացրի 1918թ. դեկտեմբերի 5-ի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրված բացատրազրկից պարզվում է, որ հայ կողմերատորները Անգրիո-կասի կողմերատորների միութեանից, վերջինիս միջոցով ձեռք են բերել զգալի քանակութեամբ սննդամթերք (կաղին, թեյ, լոբի) եւ կառուարիկ սոգա<sup>3</sup>: Բեռներն միանահնում արտիւնական կարգով արգելափակված են եւ լրացրել խնդրում է Սիջնորդել անդիլը հանելու: Վրաստանի տարածքում գնումներ է կատարել Հայաստանի գրեթե նախարարութեան ներկայացուցիչը: 1918թ. հոկտեմբերի 19-ին Վրաստանում Հայաստանի գործերի հավատարմատարը դիմել է Վրաստանի արտաքին գործերի նախարարին Հայկական բանակի կարիքների համար 1000 փութ սոխ ու 1000 փութ բազուկ մթերելու խնդրանքով, որը մերժվել է<sup>4</sup>:

Հայաստանը, ինչպես նաեւ Վրաստանը որեւէ ապրանք ձեռք բերելու եւ արտահանելու, ինչպես եւ ներմուծելու համար յուրաքանչյուր դեպքում պետք է դիմեր ու ստանար թույլտվութիւն եւ որը հաճախ չէր ստանում եւ այդ հանգամանքը թմվարեցնում էր բուն առեւտրի գործը:

1918թ. հոկտեմբերի 5-ի գրութեամբ Հայաստանի ֆինանսների նախարարը պատասխանելով ինչ-որ գրութեան, որը վերաբերում էր Վրաստանի համար Հայկական երկաթուղով բեռնափոխադրմանը, հայտնում է, որ քանի դեռ Հայաստանի համար Վրաստանի սահմանը փակ է, փակ կմնա նաեւ Հայկականը<sup>5</sup>: Եվ հերակի, վրացական սահմանը փակ էր եւ երկաթուղին չէր գործում: Այդ մասին է վկայում Հայաստանի արտաքին գործերի նախարարի 1918թ. նոյեմբերի 21-ի դիմումը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որով առաջարկում է պարզել, թե ինչ պայմաններով վրացական երկաթուղով կարելի է Հյուսիսային Կովկասից ապրանք ներկրել Հայաստան<sup>6</sup>:

Վրաստանի քաղաքացիներ Ա. Չապչակիյան եւ Ս. Մամազեբ 1919թ. մարտի 5-ին դիմում են Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ առաջարկելով մատակարարել հայկական երկաթուղուն անհրաժեշտ փայտակոճեր, մեկ հատի դինը՝ 18 եւ 25 ու եւ խնդրում շտապ պատասխանել<sup>7</sup>: Չոր, սղոցած անտառանյութը քարուղով փոխանակելու առաջարկութեամբ Վրաստանի քաղաքացի Չիկովանին 1919թ. հուլիսի 5-ին դիմել է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին<sup>8</sup>:

Ամենախոշոր առեւտրական գործարքը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ վերաբերում է Տկվիրուլի քարածխի վաճառքին: Այդ կապակցութեամբ 1919թ. նոյեմբերի 7-ին թիֆլիսում պայմանագիր է ստորագրվում Տկվիրուլի ձեռնարկութեան վարչութեան «բացառիկ ներկայացուցիչ» Արշակ Միրզոբեի եւ ՀՀ ներքին գործերի նախարարի միջեւ<sup>9</sup>: Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին Ա.Միրզոբեի դիմումից պարզվում է, որ հայկական կողմը խախտելով պայմանագիրը, ուշացնում է վճարումները: Ներկայացուցիչը Ա.Միրզոբեի գրութիւնն ստանալով, 1919թ. դեկտեմբերի 12-ին, հասուկ գրութիւն է հղում Մինիստր-նախագահին երկրին այդքան անհրաժեշտ է ներգա-

<sup>1</sup> Նույն տեղում, գ.57, մ.II, թ.68:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.83, թ.9:

<sup>3</sup> Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.64, թ.13:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.86, թ.113, գ.64, թ.35:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.83, թ.22, տես նաեւ ֆ.276, ց.1, գ.91, թ.13:

<sup>6</sup> Նույն տեղում, գ.168, թ.2:

<sup>7</sup> Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.100, թ.2:

<sup>8</sup> Նույն տեղում, գ.108, թ.11,12:

<sup>9</sup> Նույն տեղում, թ.179:

կիրների ներմուծումը կարգավորելու նպատակով՝ վճարումները ժամանակին կատարելու պահանջով<sup>1</sup>: Դատելով վիճակագրական տվյալներից 1919թ. երկրորդ կիսամյակում պետական հիմնարկների միջոցով Հայաստան է ներմուծվել 32.070 փութ քարածուխ: Հայաստան-Վրաստան ապրանքափոխանակութեան տեսակետից հետաքրքրութեան է ներկայացնում Վրաստանի ծխախոտ հայկական բամբակով փոխանակելու գործարքը: Գործարքի մասին առաջարկութիւնը արվել է 1920թ. փետրվարի 26-ին: Եվ Հենց այդ օրն էլ ՀՀ կառավարութիւնը «հույզ չտապ» մակարդակումը Ֆինանսների նախարարութիւնից պահանջել է այդ առաջարկութեանը վերաբերող գրագրութիւնը<sup>2</sup>: Միախոտի տերերը օգտագործվելու էր կառուցվելը գործարանի կարիքների համար, իսկ գործարանի կառուցումը կառավարութիւնը հավանութիւն էր տվել<sup>3</sup>:

Դեղորայքի հայթայթումը Հայաստանի համար կարեւոր նշանակութեան է ունեցել, գրեթե սննդին հավասար: Երկրում մոլեգնում էին վարակիչ հիվանդութիւնները: Դեղորայքի ձեռքբերման գնման գործարքների մեծ մասը կատարվել է թիֆլիսում: 1919թ. ապրիլի 30-ին Հայաստանի խնամատարութեան նախարարութեանը ուղղված գրութիւնից պարզվում է, որ թիֆլիսում գործող հայկական պաշտոնական մարմինների առաջարկութեամբ ստեղծվել է Բժշկական բյուրո, որն ունեւր ղեկամիջոցների պահեստ: Բյուրոն ունեցել է մասնագետ շախատակիչներ, գործում էր ինքնուրույն, սակայն Վրաստանում Հայաստանի պարենափորձան մթերումների ու մատակարարման կոմիտեի կազմում: Այդ նույն գրութեամբ բյուրոյի նախագահը հայտնում է, որ թիֆլիսում դժվարացել է դեղորայքի ձեռքբերումը, խնդրում է թույլ տալ գնումներ անել այլ վայրերում եւ հրահանգել ինչ եւ ինչքան գնել, հատկապես, ուշագրութիւն է դարձնում խոլերայի պատվաստի ձեռքբերմանը<sup>4</sup>: Հարկ ենք համարում բերել օրինակներ՝ դադափար կազմելու համար դեղամիջոցների ներկրման ծավալի մասին: «Տիֆլիս» բնկերութիւնը 1920թ. հունիսի 11-ին երեւան է առաքել 30 արկղ (106 փութ 15 փութ) դեղամիջոց, որի միայն առաքման ծախսերը կազմել են 84.544 ու<sup>5</sup>: Ոմն Ա.Օզանեզով երեւանում 1920թ. մարտին Հայաստանի խնամատարութեան նախարարութեան է հանձնել 599.020 ուրբուր դեղորայք<sup>6</sup>: Այս վավերական, ի դեպ, հետաքրքրական է նաեւ այն առումով, որ Ա. Օզանեզովը քաղցրուկից հորնած եւ իր արարների արժեքը ստանալու հույսը կորցնելով՝ առաջարկում է համաժեք գնումարի՝ 420 փութ բամբակ տրամադրել իրեն: Այս փաստաթղթում Ա. Օզանեզովը նշում է, որ ՀՀ նկատարութեան նախարարութեանը հանձնել է նաեւ 200 փութ արժիճ (անագ):

Վրաստանի եւ Հայաստանի առեւտրական հարաբերութիւնները առավելապես բնութագրում են տրանզիտային բեռնափոխադրումները: Այս ասպարեզում նշանակալից է երկու գործոնների՝ վրացական կողմի «օրինական» պահանջների եւ համատարած բնույթ կրող թայանի դերը:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը 1919 թ. մայիսին միջնորդում է, որպեսզի վրացական իշխանութիւնները թույլ տան «Էնֆիալյանցի ծխախոտի ֆարրիկա» փայտորակյան բնկերութեանը վրացական երկաթուղով Հայաստան տեղափոխելու 30 վազոն տարրեր արարանքներ. թուղթ, մեքենայի մասեր եւ 1400 փութ ծխախոտատերե<sup>7</sup>: Վրացական կողմը համաձայնում է պայմանով, որ թղթի եւ մեքենայի մասերի 50% մնա Վրաստանում<sup>8</sup>: Պահանջ է ներկայացվել նույնիսկ Ամերիկայի կողմից օգնութեան կարգով Հայաստանին տրամադրվող այլուրից: 1919թ. հունիսի 24-ին Հայաստանի Արտաքին գործերի նախարարին ուղղված գեկույցում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում է, որ վրացական իշխանութիւնները տրանզիտը թույլատրելու համար պահանջում են ապրանքի՝ այլուրի 15% -ը:

<sup>1</sup> Նույն տեղում, թ.177:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.199, ց.1, գ.157, թ.67:

<sup>3</sup> Նույն տեղում, թ.137 - 138:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ.205, ց.1, գ.462, թ.79:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.462, թ.97:

<sup>6</sup> Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.88 եւ շՐԷ:

<sup>7</sup> Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.91, թ.74:

<sup>8</sup> Նույն տեղում, ֆ.202, ց.1, գ.38, մաս 2, թ.44:

ել ներյով քաղաքական նպատակահարմարությունից, նա խոհեմարար խորհուրդ է ապիս համաձայնվել, քանի որ ամերիկյան կողմը ընդառաջելու է<sup>1</sup>:

1920թ. Հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծվում է Վառելիքը տնօրինող կենտրոնական բյուրո, որը ձեռնարկում է նավթամթերքների կենտրոնացմանը իր ամբարներում: Բաթումի շէ ընդհանուր լիազորը 1920թ. Հոկտեմբերի 18-ին Հայտնում է Բաթումի Հայաստանի գլխավոր Հյուպատոսին, որ վտանգ է սպառնում Հայաստանին պատկանող 14.124 փութ 23 ֆունտ նավթամթերքին եւ խնդրում միջոցներ ձեռնարկել<sup>2</sup>: Գլխավոր Հյուպատոսը նույն օրը դիմում է Բաթումի մարզի արտակարգ կոմիսարին, Հաստատում հիշյալ նավթամթերքի Հայաստանի սեփականությունը լինելու օրինականությունը, տեղեկացնում, որ 8.725 փութը ձեռք է բերվել Վրաստանի մատակարարման նախարարության թույլտվությամբ, մնացածը անգլիացիների տիրապետության ժամանակ<sup>3</sup>, 1920թ. Հունիսի 18-ին<sup>4</sup>: Գլխավոր Հյուպատոսը 1920թ. Հայտնում է, որ անձամբ դիմել է գեներալ Մոլիվանտև, որը խոստացել է նավթամթերքը թողնել Հայաստանի տնօրինության ներքո<sup>5</sup>: Սակայն Նորդի ներկայացուցիչը Հոկտեմբերի 21-ին նորից է ահազանդում վրացական կառավարության պահանջի մասին<sup>6</sup>: Ինչպես որակել վրացական իշխանությունների քայլը: Պարզ չէ նաև գլխավոր Հյուպատոսի ջանքերը պակվելի<sup>7</sup> և Հաջողությամբ: Մինչդեռ Թուրքիան արդեն ներխուժել էր Հայաստան եւ երկիրը նավթամթերքի խիստ կարիք ուներ:

Պահպանվել են բազմաթիվ վավերագրերը երկաթուղու վազոնների թայման մասին: Սակայն այդ առումով առավել բնութագրական է եգիպտացորենի թայմանման փաստը: Հայաստանի պարենավորման նախարարության գլխավոր լիազորը 1919թ. ապրիլի 14-ին Հայտնում է շէ գլխավորագրողական ներկայացուցչին, որ Թերեքի մարզում Հայաստանի համար մթերած 3610 փութ (665 պարկ) եգիպտացորենը, հասցեագրված Թիֆլիսում գտնվող Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնություն կոմիտեին, Կաղբեղի կայարանի շրջակայքում թայմանվել է վրացի գյուղացիների եւ զինվորների կողմից: Այդ դեպքի մասին զիջանագրողական ներկայացուցիչը 1919թ. ապրիլի 28-ին տեղեկացնում է Վրաստանի Արտաքին գործերի նախարարին, պահանջում բռնագրավել եգիպտացորենն ու վրացարձանը, հետաքննել տեղի ունեցածը<sup>8</sup>: 1919թ. մայիսի 6-ի գրուկթամբ շէ ընդհանուր լիազորը նորից է դիմում գլխավորագրողական ներկայացուցչին՝ ճշտելով թվերն ու պահանջները: 1) թույլ տալ անմիջապես Վրաստանից Հայաստան ներկրել նույն քանակությամբ եգիպտացորեն, Հայաստանի պարենավորման ու մատակարարման կոմիտեի մթերած եգիպտացորենից, 2) գտնել կողոպույտած ապրանքի արժեքի հատուցման միջոցները ու եղանակները: Ըստ որում հեղինակը մատնանշում է, որ եգիպտացորենը նախատեսվում էր ցանքի համար, որի ժամանակն անցնում է<sup>9</sup>:

Վրացական երկաթուղու գերը առևտրական Հարաբերությունների զարգացման ասպարեզում առանձին քննության խնդիր է: Միայն նշենք, որ արեղիքներ ու խոչընդոտներ են հարուցվել ինչպես մինչև տրանզիտի վերաբերյալ պայմանագրի կնքումը, այնպես էլ հետո: Իսկ Հայկական երկաթուղու վառ աշխատանքը պայմանավորված էր նաև վառելիքի անկանոն մատակարարմամբ ու անբավարարություններով:

Վրաստանի եւ Հայաստանի միջև առևտրական Հարաբերություններում որոշակի ներդրում է ունեցել Հայաստանի կոոպերատիվները: Վերը նշվել առևտրական մի գործարքի մասին: Հայ կոոպերատիվները ջանքեր են գործադրել վրաց կոոպերատորների հետ համագործակցելու ուղղությամբ, սակայն անարդյունք: Այդ է վկայում Հայկոոպի ներկայացուցիչների 1920թ. Հոկտեմբերի

նամակը շէ Արտաքին գործերի նախարարին եւ կից բացատրողիբը, որն ուղղված է եղել Թիֆլիսում շէ գլխավորագրողական ներկայացուցչին: Հայ կոոպերատորների կարծիքով. «Այդ խնդիրը լիկվիդացիայի չենթարկելով, վրաց պաշտոնական շրջաններ ամեն կերպ աշխատելու են չահագործել Հայրը հօգուտ իրենց եւ ամեն քայլափոխում մեր անասական աշխատանքների ընթացքում խոչընդոտներ են առջ բերելու, պաշտոնական բանակցությունները ձգձգելու իրենց նորմալ պատճառաբանություն իրենց անբարյացակամ վերաբերմունքն արտահայտելու համար»: Եվ այդպես նկատի ունենալով այդ հանգամանքը խնդրում են «խնդիրը ամբողջությամբ լուծել»<sup>1</sup>:

Պարզվում է, որ Հայ եւ վրաց կոոպերատորների ու անտեսական այլ կազմակերպությունների համատեղ քննարկումների ընթացքում առևտրատնտեսական բնականոն Հարաբերությունների նախապայմանը վրացական կողմը համարել է Մակվից Վրաստանի համար ցորենի արտահանությունը Հայկական երկաթուղով, որի գրական լուծումը կախված էր Հայաստանից:

Աղբյուրները հետ գլխավորագրողական եւ առևտրատնտեսության Հարաբերությունների հաստատման խնդրում շատ որոշակի ազդեցություն է ունեցել Բաբլում հաստատված Համաձայնության երկրակրի ներկայացուցչությունը<sup>2</sup>: Բանն այն է, որ Աղբյուրների գեմոկրատական Հանրապետության իշխանությունները ամեն կերպ ջանում էին խափանել նավթի ու նավթամթերքի արտահանումը Հայաստան եւ իրենց նպատակին հասնելու համար վկայակոչում «հիմնավոր» պատճառներ. պայմանագրի բացակայությունը, ցիտոներների պակասը, վճարումների ձգձգումն ու ուշացումը: Այս փաստարկներից էականը պայմագրի բացակայությունն էր: Անգլիական օկուպացիոն իշխանությունները քանիցս առավորակն են Հայաստանի Հանրապետությանը անհասպող պայմանագրի կնքել Աղբյուրների հետ: Պայմանագրի նախագիծը Հայկական կողմը 1919թ. մարտի 25-ին ներկայացրել է աղբյուրական կողմին: Վերջապես, որոշ նկատառումներ հաջվի առնելուց հետո, 1919թ. Հունիսի 17-ին պայմանագիրը ստորագրվում է: Հայկական կողմը ներկայացնում էր Աղբյուրականում շէ գլխավորագրողական ներկայացուցիչ Տ. Բեկյանը, իսկ աղբյուրականը՝ Հանրապետության առևտրի, արգյունաբերության եւ պարենավորման նախարար Ա. Ալիմովը:

Պայմանագիրը բաղկացած էր 17 կետից, որոնց շարքում ամենաուշագրավը 2-րդն էր, ըստ որի. «Աղբյուրական կառավարությունը թույլատրում է Հայաստան արտահանել նավթ, մագուլ, կերոսին, բուռկային յուղեր՝ Հայկական երկաթուղու կարիքների համար անհրաժեշտ քանակությամբ, որը սակայն ամբողջ պայմանագրային ժամկետի ընթացքում չպետք է գերազանցի 8 մլն. փթից: Ընդ որում, սույն հոդվածում նշված կարիքների համար անհրաժեշտ քանակությունը որոշվում է երկու կողմերի համաար թվով ներկայացուցիչներից բաղկացած խոտը հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի նստավայրը նշանակվում է Բաբլում քաղաքը»<sup>3</sup>: Պայմանագրի ժամկետը սահմանված էր մեկ տարի, սկսած ստորագրելու օրվանից: Սահմանվում է նաև առանց տուրքի, ազատ, տրանզիտային բեռնափոխադրություններ:

Ըստ պայմանագրի Աղբյուրական հնարավորություն է ստանում խոտնվելու Հայաստանի ներքին գործերին, հսկողություն սահմանելով ներմուծվող նավթի ու նավթամթերքների վրա, զրկելով նրան նավթի ավելցուկը հացահատիկի հետ փոխանակելու հնարավորությունից եւ ապա՝ ցանկացած քանակի ու տեսակի ապրանք արտահանել Հայաստանից: Աղբյուրական 1918թ. դեկտեմբերի 26-ին նույնաբնույթ պայմանագիր էր կնքել Վրաստանի հետ: Սակայն Աղբյուրականից Վրաստան ներմուծվող նավթի, նավթամթերքների համար սահմանվել էր քվոտան ոչ ավելի քան 20 մլն. փութ<sup>4</sup>:

Աղբյուրականի հետ կնքված պայմանագրի կարևորությունը նկատի ունենալով՝ մատնանշենք նրա գործադրմանն առնչվող մի քանի հանգամանքներ: Պայմանագրի առկայությունը չէր խանգարում աղբյուրական կողմին խափա-

<sup>1</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.81, թ.422 շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.157:

<sup>3</sup> Նույն տեղում, գ.19, թ.40:

<sup>4</sup> Նույն տեղում, գ.7, թ.158:

<sup>5</sup> Նույն տեղում, թ.160:

<sup>6</sup> Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.172:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.118, թ.25,26,27, ֆ.368, ց.1, գ.7, թ.74 եւ այլն:

<sup>8</sup> Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.118, թ.82:

<sup>9</sup> Նույն տեղում, թ.81:

<sup>1</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.560, մ. III, թ. 363:

<sup>2</sup> Նույն տեղում, գ.168, թ. 25:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.199, գ.157, թ.257:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.168, թ.40 - 41:

<sup>5</sup> Նույն տեղում, թ.41:

նելու նազմի արտահանումը Հայաստան: Այսպես, Ազրբեջանում ՀՀ ներկայացուցչի 1920թ. փետրվարի 15-ի թվականի նամակից պարզվում է, որ այն Ազրբեջանի պատմամեթոդի կողմից չի հաստատվել<sup>1</sup>, թեև Մինիստրների խորհրդի կողմից հաստատվել էր, ինչը խանգարում էր նազմի առաքմանը: Պարզվում է նաև, որ 1919թ. նոյեմբերի 19-ից մինչև 1920թ. հունվարի 5-ը, Հայաստանը ոչ մի ցիտերն նազմ չի ստացել: Եղել են միայն նազմի եւ կերտսինի պատահական մեկական առաքումներ<sup>2</sup>:

Դրուժյուներ առավել վատթարանում է Ազրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո. «... Բազուն դադարեց Հայաստանին նազմ մատակարարել եւ ամբողջ չորս ամիս անկանոն գրուժյան մեջ գնելով մեր հաղորդակցությունը. թանգուժյունն առաջացրեց եւ ծանրացրեց կրկին անտեսական վիճակը»<sup>3</sup>, - գրում է Մ. Արզումանը իր տեղեկագրում 1920թ. սեպտեմբերին:

Ազրբեջանի եւ Հայաստանի միջև առևտրական հարաբերությունները սահմանափակ բնույթ են կրել: Ըստ հուլիսյան բացի նազմից ու նազմամթերքներից մնացած բնագավառների վրա չեն տարածվել: Այսպես, 1918թ. նոյեմբերի 28-ին Վրաստանում Ազրբեջանի գլխավորապես ներկայացուցչին են դիմում երկու ազրբեջանցի (Թուրք) վաճառականներ՝ խնդրելով միջնորդել ՀՀ կառավարությանը որպեսզի թույլատրվի Հայաստանից արտահանելու 57 փուլ 30 ֆունտ այծի կաշի, որը նրանք մտադիր էին ներմուծել Ելիզավետպոլ եւ որի համար թույլատրվելու էին ստացել թուրքական իշխանություններից: Ապրանքը կայանվել էր Քոյազբանի մաքսատանը<sup>4</sup>: ՀՀ ֆինանսների նախարարությունը 1919թ. փետրվարի 18-ի գրուժյանը մերժում է նրանց խնդրանքը, նկատ ունենալով օրենքով նախատեսված Ազրբեջանի հետ արանդիտի վերաբերյալ պայմանագրի, ապրանքի ծագման մասին տեղեկանքի եւ ֆինանսների նախարարության թույլտվության բացակայությունը<sup>5</sup>:

1919թ. ամռանը ազրբեջանցի գործարար ներսուլա Աղա-զազեն դիմում է ՀՀ առևտրի նախարարությանը՝ խնդրելով թույլ տալ ապրանքափոխանակության կարգով Հայաստան ներկրել 8000 փուլ կերտսին եւ 800 փուլ մեքենայի յուղ, փոխարենը համապատասխան արժեքով 93<sup>6</sup> սպիրտ ստանալու եւ արտահանելու պայմանով: Սակայն, Բոյուք Վեդիի դեպքերի պատճառով հարկազրկված է լինում թողնել իր ապրանքի մի մասը եւ վերադառնալ Բաքու<sup>6</sup>:

Ավելի լայն շրջանակներ է ընդգրկել Հայկական կողմի առևտրական գործունեությունը Բաքվում եւ Ազրբեջանում ընդհանրապես: Միանգամայն հասկանալի մի հանդամանք, այն է Հայ տարրի ներկայությունը Բաքվում, որը դեռ պահպանել էր երբեմնի իր տնտեսական հզորություն մնացորդները:

Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ ձևավորվում էր Սրանգիտի Պ. Լեւինից ձեռք է բերվում 9 վագոն ձուկ (սելգ), որը «Ռբբակ» ընկերության միջոցով Հայաստան է առաքվում Վլադիկավկազի երկաթուղով: Տրանգիտի պայմանագրի բացակայության պատճառով վագոնները հասցեագրվում են մինչև նազմի կայարանը: Ազգային խորհուրդը խնդրում է Վրաստանում ՀՀ գլխավորապես ներկայացուցչին, որ վերջինս ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները ձուկը երեւան հասցնելու համար<sup>7</sup>:

Թիֆլիսում գտնվող Հայկական գյուղատնտեսական ընկերությունը Ազրբեջանի Ուլարի կայարանում ն. Կաճկաճյանից ՀՀ համար գնում է 4-6 վագոն սերմացու հացահատիկ: Վրաստանում ՀՀ գլխավորապես ներկայացուցչից 1919թ. մարտի 22-ին դիմում է ազրբեջանական իշխանություններին խնդրելով թույլ տալ սերմացուն արտահանել Ազրբեջանից<sup>8</sup>: Սույն գործարքի ճակատագիրը պարզել հնարավոր է: Իսկ ահա մի այլ գործարքի ավարտը հայտնի է: ՀՀ ննա-

մատարությունից նախարարությունը 1919թ. ապրիլի 26-ի գրուժյամբ դիմել է Վրաստանում Ազրբեջանի գլխավորապես ներկայացուցչին 25.000 փուլ տարեկան արտահանելու խնդրանքով: Ազրբեջանի Առևտրի, արդյունաբերության եւ պարենազրկության նախարարությունը 1919թ. հուլիսի 3-ին պատասխանել է, թե Ազրբեջանում նշված քանակությամբ տարեկան չկա<sup>9</sup>:

Վրաստանից Ազգային խորհրդի Ախալքալաղյանների օգնությամբ հասուկ կոմիտեի նախագահը եւ ՀՀ պարենավորման նախարարության ներկայացուցիչ Ս. Մելիք-Շահնազարյանը 1919թ. մայիսի 24-ին Թիֆլիսում պայամանագիր են կնքում ոմն Ն. Լահրամանյանի հետ առ այն, որ վերջինս պարտավորվում է 30.000 փուլ կորեկ մթերել Ազրբեջանում եւ Ակստաֆա, Եվլախ, Լյաքի կայարաններում հանձնել Հասուկ կոմիտեի ներկայացուցչին ու Ս. Մելիք-Շահնազարյանին<sup>10</sup>: Հացահատիկը տեղափոխելու նպատակով վրացական իշխանություններին 1919թ. մայիսի 28-ին դիմում է ներկայացվում 5000 պարկ արտահանելու եւ Ազրբեջան ուղարկելու խնդրանքով, իսկ հունիսի 26-ի գրուժյանը խնդրվում է վրացական իշխանություններից միջնորդել Ազրբեջանի կառավարությանը չխոչընդոտել կորեկի արտահանմանը: Ըստ որում գրուժյանի հեղինակները խոստանում են Վրաստանին եւս բաժին հանել<sup>11</sup>: Ժամանակն անցնում է, բայց Հացահատիկը տեղ չի հասնում: Հակառակ իշխանություններին հայտնի է գտնում, որ Եվլախում ոմն Իսկանդեր ինքնավար այն վաճառում է, որի կապակցությամբ Վրաստանում ՀՀ գլխավորապես ներկայացուցիչը 1919թ. նոյեմբերին իր բողոքն է հայտնում Ազրբեջանի գլխավորապես ներկայացուցչին<sup>12</sup>: Ազրբեջանում ՀՀ գլխավորապես ներկայացուցչի՝ Բաթումի ՀՀ առևտրա-արդյունաբերական հանձնաժողովի նախագահին ուղղված մանրամասն նամակից պարզվում է, որ 30.000 փուլ կորեկն ու 9.500 պարկերը խոչոր գումարների հետ անհետացել են ոչ առանց հայերի մասնակցության<sup>13</sup>:

Ազրբեջանահայկական առևտրական կապերի տեսնակյունից ուշագրավ են մի այլ գործարքին վերաբերող վավերագրերը: 1920թ. փետրվարի 12-ին գնդապետ Հասկելը՝ հայտնում է Մինիստր-նախագահ Ա. Խատիսյանին, որ ազրբեջանական մի հեղինակավոր ֆիրմա պատրաստ է 50.000 փուլ սերմացու ցորեն ու կորեկ փոխանակել այլուրի հետ: Առաջվում է 100-ի դրամ 100, քրոս դրամ 100 սերմացուի 60-ը ցորեն, 40-ը՝ կորեկ, նաև 2 փուլ բրինձ՝ 1 փուլ այլուրի դրամաց: Հասկելն իր տարակուսանքն ու անհամաձայնությունն է հայտնում նման ոչ-համարժեք փոխանակության կապակցությամբ, խնդրում է շտապ պատասխանել<sup>14</sup>: Նրա գրուժյանի համար՝ այլուրը հավահատիկով փոխանակելու մասին, հիմք է հանդիսացել Բաթումում ՀՀ ֆինանսական ներկայացուցչի տեղեկատվությունը<sup>15</sup>:

Վերը նշեցինք Բաքվի հայության դերի մասին: Այլ կապակցությամբ ուշագրավ է Մայիլյան եղբայրների գործունեությունը, որը կարող է հասուկ ուսարանություն: Մեր խնդրո առարկայի տեսանկյունից անհրաժեշտ է շեշտել նրանց հիմնարկած գիտա-տեխնիկական արշավանքի նպատակաուղղված աշխատանքները, որ կոչված էր նպատելու հայրենիքի վերանորոգմանը: Բացի այդ, որոշ վավերագրեր վկայում են Հայաստանին օգնելու Մայիլյանների որոշ քայլերի մասին: Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական ընկերության համար գյուղատնտեսական մեքենաներ գնելու նպատակով Լ. Մայիլյանը Բրիտանական բանկում պայմանագիր է կնքել, հրամարվելով որեւէ գործատրությունից<sup>16</sup>: 1920թ. հունիսի 20-ի գրուժյունից պարզվում է, որ Լ. Մայիլյանը ՀՀ գլխավոր Հյուստանսին բանավոր համաձայնություն է տվել ու ապառիկ նազմ արմագրել

<sup>1</sup> Նույն տեղում, գ.341, թ.4:

<sup>2</sup> Նույն տեղում, գ.496, թ.13:

<sup>3</sup> Նույն տեղում, գ.427, թ.406:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ.276, գ.1, գ.5, թ.9:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ.276, գ.1, գ.5, թ.5:

<sup>6</sup> Նույն տեղում, ֆ.200, գ.1, գ.433, թ.179:

<sup>7</sup> Նույն տեղում, ֆ.276, գ.1, գ.118, թ.1:

<sup>8</sup> Նույն տեղում, թ.22, 23, 42:

<sup>1</sup> Նույն տեղում, թ.47:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.205, գ.1, գ.945, թ.3-4:

<sup>3</sup> Նույն տեղում, թ.6:

<sup>4</sup> Նույն տեղում, թ.7:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ.276, գ.1, գ.136, թ.195:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ.205, գ.1, գ.946, թ.3-4:

<sup>7</sup> Վիլյամ Հասկել՝ Անդրկովկասում Դաշնակեցիների գլխավոր կոմիտար:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.638, թ.107:

<sup>9</sup> Նույն տեղում, ֆ.368, գ.1, գ.7, թ.9:

<sup>10</sup> Նույն տեղում, թ.39:

եմփատորիա առաքելու եւ ՀՀ կարիքների համար անհրաժեշտ գույքի հետ փոխանակելու նպատակով<sup>1</sup>:

Ազրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը քաղաքական գործունեութեանը գուգահեռ նշանակալից չափով զբաղվել է առևտրա-տնտեսական խնդիրներնրով: Որոշակի ավյալներ են պահպանվել ներկայացուցչութեան իրականացրած գործարքների վերաբերյալ: 1919թ. օգոստոսի 17-ից մինչև 1920թ. փետրվարի 13-ը ընկած ժամանակամիջոցում ներկայացուցչութեանը է Հայաստան է ներկրել 10.250 փութ անդամթեք<sup>2</sup>:

Բերված փաստերն ու վավերագրեր հաստատում են, որ Ազրբեջանի հետ առևտրական հարաբերութեանները կրել են գրեթե միակողմանի բնույթ, մի հանգամանք, որ ժամանակին հիրավի գնահատել ու լուսարանել է Ազրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ԱԳ նախարարին 1920թ. օգոստոսի 27-ին ուղղված իր ղեկուցագրում: «Մեր դիվանագիտական անհաջողութեաններն Ազրբեջանում բացատրվում են նաև այն տնտեսական հարաբերութեամբ, որ կա այդ երկու երկրներների միջև, - ասվում է այդ ղեկուցագրում, - իսկ այդ հարաբերութեանները գոնե մինչև այսօր գուտ միակողմանի են, այսինքն մենք ամբողջապես կախված ենք Ազրբեջանից, իսկ նա մեզից՝ ոչ: Առանց Բաքվի նավթի եւ կերոսինի Հայաստանի երկաթուղիները, արհեստանոցները, փոերը, բաղնիքները եւ այլն եւ այլն կկանգնեն, ժողովուրդը կմնա անույս: Մինչդեռ այս վայրկյանիս Հայաստանը չունի մի այնպիսի ապրանք, որը Ազրբեջանի համար նույնքան կարևոր լինի, ինչպես նավթը եւ կերոսինը Հայաստանի համար»<sup>3</sup>:

Ամփոփելով 1918 - 1920 թթ. Վրաստանի եւ Ազրբեջանի հետ Հայաստանի առևտրա-տնտեսական հարաբերութեանների վերաբերյալ շարագրանքը, կարելի է հանգել հետևյալ եզրակացութեաններին:

1. Առևտրա-տնտեսական հարաբերութեանները ընթացել են Հայաստանի համար չափազանց դժվարին ու աննպատ պայմաններում:
2. Այդ հարաբերութեանները կարգավորելու հարցում որոշակի դրական դեր են խաղացել Համաձայնութեան երկրների դիվորական բարձր իշխանութեանները, որոնք հաստատվել էին Անդրկովկասում 1918թ. նոյեմբերին:
3. Հարեւան երկրները՝ Վրաստանը եւ Ազրբեջանը օգտագործել ու շահարկել են Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը:

### Վարդան Ցոլակյան

## ТОРГОВЫЕ ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АЗЕРБАЙДЖАНОМ И ГРУЗИЕЙ (1918 - 1920гг.)

### РЕЗЮМЕ

Правительство Первой Республики Армении с первых дней своего существования, в условиях заблокированности и изолированности страны, ясно осознавало жизненную необходимость установления нормальных отношений с Грузией и Азербайджаном, что удалось осуществить только после ухода с

<sup>1</sup> Կուլյն տեղում, թ.66:

<sup>2</sup> Վիճակագրական բյուլետեն, N 2, էջ 24:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.30, թ.30:

Закавказья турецких войск, благодаря вмешательству представителя Антанты - английской военной миссии в Закавказье.

В течении второго полугодия 1919г. в соседних республиках были учреждены дипломатические представительства, заключены транзитно-торговые договора, предусматривавшие свободные грузоперевозки. Однако торговые отношения с Грузией и Азербайджаном при ограниченном объеме носили частный характер. Торговля на государственном уровне не состоялась. Создавались трудности, препятствующие нормальному процессу грузоперевозок в Армении. Торгово-транзитные отношения с Азербайджаном прекратились с установлением в этой стране советской власти.

Вардан Цолакян

## ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԽՍՀ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ (1945 - 1965թթ.)

Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գործում էական նշանակություն ունեցավ գյուղական մտավորականութեան տեսակարար կշռի եւ պատմական դերի աճը:

Գյուղական մտավորականութեանը բաժանվում էր ներխաժային երեք հիմնական խմբերի: Դրանք էին. վարչակառավարչական խումբ (գյուղատնտեսական ձեռնարկութեանների ղեկավարներ, բրիգադավարներ ու ֆերմայի վարիչներ, կուսակցական, խորհրդային, կոմերիտական, արհմիութենական եւ այլ հասարակական կազմակերպութեանների ղեկավար աշխատողներ), արտադրական խումբ (գյուղատնտեսներ, անասնաբույժներ, ինժեներներ, տեխնիկներ) եւ ոչ արտադրական խումբ (մանկավարժներ, կուլտուրղոսավորական, առողջապահութեան բնագավառների աշխատողներ):

Քննարկվող ժամանակաշրջանում փոփոխութեաններ են կատարվել գյուղական մտավորականութեան վարչակառավարչական խմբում: Մտավորականութեան այս խումբը ամբողջովին կազմավորել էր խորհրդային պետութեան վարչահրամայական (բյուրոկրատական) համակարգը բավականին արագ տեմպերով ձեւավորելով սոցիալիստական վերնախավային շերտը: Այն իր արտահայտութեան էր գտել նաև գյուղատնտեսութեան բնագավառում: Այսպես՝ արդեն 1946թ. գյուղատնտեսական ձեռնարկութեանների վարչահրամայական անձնակազմի ոււճացման հետեւանքով նրանց պահպանման համար նախատեսված ծախսերը 8%-ից աճեցին մինչև 11,2%-ի:<sup>1</sup> Ուստի նույն թվականին կատարվեցին

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.1, ց.26, գ. 43, թ.17-18:

կոյտնեսուսթյունների վարչակառավարչական անձնակազմի ավելորդ Հաստիքների կրճատումներ:

Մինչև 1946թ. նոյեմբերի 20-ը ՀԽՍՀ կոյտնեսուսթյուններում կրճատվեցին 4378 ավելորդ եւ կոյտնեսուսթյունների հետ առնչութիւն չունեցող, բայց աշխօրով վարձարկող՝ 350 Հաստիքներ: Արդյունքում, հաջողվեց տնտեսել 923215 աշխօր:

Ավելորդ Հաստիքների կրճատման գործընթացը շարունակվեց նաև հետագա տարիներին: Սակայն, Հարկ է նշել, որ այն ակնկալվող արդյունքը չապահովեց: Այսպես, եթե 1948թ. հունվարի 1-ի դրությամբ կոյտնեսուսթյուններում վարչակառավարչական անձնակազմը կազմում էր 8104, մեկ տարի անց՝ 8386, ապա 1950թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 8252 միավոր: Այդ նվազումը հետևանք էր ոչ թե ավելորդ Հաստիքների կրճատման, այլ՝ 33 կոյտնեսուսթյունների խոշորացման:<sup>1</sup>

1950-ական թվականների երկրորդ կեսին կատարվող բարեփոխումները վարչահրամայական համակարգի թուլացման միտումներ ցուցաբերեցին: Սակայն, ներկուսակցական եւ Հասարակական կյանքի ժողովրդավարացումն ուղեկցվում էր կյանքում կրճատվող գերի ամրապնդմամբ: Տնտեսութեան էքստենսիվ զարգացման գույզակցումը ուսնացած վարչահրամայական համակարգի հետ կրկին էր արտացոլումը գտած վարչակառավարչական անձնակազմի արտոնութեանների ընդլայնման մեջ: Արդեն 1965թ. խորհրդահայ գյուղում վարչակառավարչական աշխատողների տեսակարար կշիռը կազմում էր ամբողջ գրագրված բնակչութեան շուրջ 17%ը:<sup>2</sup>

Գյուղական մտավորականութեան վարչակառավարչական խմբի կարեւորագույն ենթախումբ էին գյուղատնտեսական ձեռնարկութեանների ղեկավարները (կոյտնեսուսթյունների նախագահներ, խորհուրդատեսութեանների եւ օժանդակ գյուղատնտեսական ձեռնարկութեանների տնօրէններ), բրիգադավարներն ու ֆերմայի վարիչները: Մասնագիտական այս խմբերի ներկայացուցիչները, անիշխականորեն ներգրավված լինելով գյուղատնտեսական արտադրութեան մեջ, Հանդիսանում էին վերջինիս կազմակերպման եւ ղեկավարման վերին եւ միջին օղակները: Նրանք անմիջական պատասխանատւութեան էին կրում գյուղատնտեսական արտադրութեան հաջող կազմակերպման ու ղեկավարման համար, սակայն, միաժամանակ, հանդիսանում էին նաև հանրապետական եւ շրջանային կուսակցական կազմակերպութեանների նոմենկլատուրայի անդամներ, ուստի պարտավոր էին կյանքի կոչել կուսակցութեան որոշումներն ու հրահանգները:

Վերը նշված խմբերին ճիշտ է դասել վարչակառավարչական խմբի մեջ, քանի որ իրենց գործունեութեան համար առաջին հերթին անմիջականորեն պատասխանատւութեան էին կրում կուսակցութեան անդամներ: Խորհուրդատեսութեանների եւ գյուղատնտեսական օժանդակ այլ ձեռնարկութեանների վերին ու միջին օղակների ղեկավար աշխատողները օրենսդրորեն նշանակվում էին ՀԿԿ Կենտկոմի կազմակերպչական խմբի ղեկավարներն ու ֆերմայի վարիչները՝ կուսակցութեան շրջանային կոմիտեաների նոմենկլատուրայի անդամներ: Ելնելով գրանցել կոյտնեսուսթյունների նախագահներին աշխատանքի ընդունելը, աշխատանքից ազատելը կամ այլ աշխատանքի փոխադրելը կատարվում էր ՀԽՍՀ գյուղատնտեսութեան նախարարութեան նախնական հրամանի եւ ՀԿԿ Կենտկոմի կարգերի բաժնի թուղթովութեանից հետո միայն:<sup>3</sup>

Հետևաբար, կոյտնեսուսթյան նախագահները կատարված աշխատանքի համար պատասխանատու էին ոչ այնքան կոյտնեսուսթյան ընդհանուր ժողովի, որքան գյուղատնտեսութեան նախարարութեան եւ ՀԿԿ Կենտկոմի համապատասխան բաժնիների անընդմեջ:

Կազմերի ընտրութեան եւ տեղաբաշխման՝ վերը նշված ոչ ճիշտ քաղաքականութեան հետեւանքով, նշված ենթախմբերում տեսակարար մեծ կշիռ էին կազմում պրակտիկ (նրանք, ովքեր չունեին համապատասխան բարձրագույն կրթութեան, սակայն, փոխարենը, ունեին գործնական աշխատանքի մեծ փորձ) աշխատողները: Այսպես, եթե 1950թ. ՀԽՍՀ 661 կոյտնեսուսթյունների նախագահներից բարձրագույն կրթութեան ունեին միայն 36-ը, միջնակարգ մասնագիտական կրթութեան՝ 336-ը, ապա ավելի քան 275 կոյտնեսուսթյունների նախագահներ արժանանան կրթութեամբ պրակտիկներ էին:<sup>4</sup>

Այդ վիճակը բնորոշ էր նաև հետագա տարիներին: Այսպես՝ 1955թ. 846 կոյտնեսուսթյունների նախագահների կրթական աստիճանը Համապատասխանաբար կազմում էր 71, 191 եւ 584 մարդ:<sup>5</sup>

Այն բարձրացավ Հատկապես 1960-ական թվականներից սկսած. 1965թ. 536 կոյտնեսուսթյունների նախագահներից 204-ն ուներ բարձրագույն, 117-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթութեան: Սակայն, դեռևս 215 կոյտնեսուսթյունների նախագահներ շարունակում էին մնալ պրակտիկներ: Համեմատաբար բարձր էր խորհուրդատեսութեանների տնօրէնների կրթական աստիճանը: Այսպես, 1965թ. դրութեամբ ՀԽՍՀ 204 խորհուրդատեսութեանների տնօրէններից 157-ն ուներ բարձրագույն, 24-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթութեան: Նրանցից միայն 21-ն էր պրակտիկ:<sup>6</sup>

Առավել քան վատ էր գյուղատնտեսական ձեռնարկութեանների միջին օղակի ղեկավարների կրթական վիճակը. 1958թ. Հանրապետութեան կոյտնեսուսթյունների 2931 բրիգադավարներից եւ 1782 ֆերմայի վարիչներից միայն 814-ն ունեին բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթութեան, 1960թ.՝ 879-ը՝, իսկ 1965թ. 2970 բրիգադավարներից գյուղատնտեսութեան մասնագետներ էին 457-ը, եւ 1033 ֆերմայի վարիչներից միայն 382-ը:<sup>6</sup>

Այս հանգամանքը պայմանավորված էր նաև Հանրապետութեան բուհական համակարգի անկատարութեամբ եւ կազմերի տեղաբաշխման բնագավառում տեղ գտած այլ թերութեաններով: Գյուղատնտեսական մասնագիտացող մարդկանց զուլումը օգտնական էր շրջանավարտների գերակշիռ մասը քաղաքայիններ էին, հետևաբար, խուսափում էին գյուղատնտեսական արտադրութեան մեջ ներգրավվելուց, իսկ իշխանութեաններն այդ ուղղութեամբ լուրջ քայլեր չէին ձեռնարկում:

Գյուղական մտավորականութեան վարչակառավարչական խմբում առաջնակարգ տեղ էին գրավում նաև սկզբնական կուսակցական կազմակերպութեանների քարտուղարները: Նրանք գյուղում իրավամբ կենտրոնական դեմք էին համարվում: Կուսակցական կազմակերպութեան քարտուղարը վերահսկում էր ոչ միայն Հասարակական կյանքը, այլ նաև՝ արտադրական բոլոր գործընթացները: Եվ պատահական չէ, որ ՀԽՍՀ գյուղատնտեսական բոլոր ձեռնարկութեաններում գործում էին կուսակցական սկզբնական կազմակերպութեաններ:

Պետական կառավարման գործում որոշակի իրավասութեաններ ուներ նաև տեղական խորհուրդների ղեկավար աշխատողների ենթախումբը: Օրենսդրորեն, խորհուրդները համարվում էին իշխանութեան գերագույն մարմիններ, սակայն, քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում պարզութեան չմտցվեց տեղական խորհուրդների եւ նրանց տարածքում գործող գյուղական արտադրական վարչութեանների փոխհարաբերութեաններում: Ուստի անորոշ էին մնում գյուղատնտեսութեան ղեկավարման գործում խորհուրդների ղեկավար աշխատողների իրավասութեան սահմանները: Մինչդեռ նրանք, լինելով իշխանութեան տեղական մարմինների ներկայացուցիչներ, պատասխանատու էին լինելին իրենց տարածքում գտնվող բոլոր ձեռնարկութեանների գործունեութեան համար: Սակայն, տնտեսական հարցերի լուծման ասպարեզում խորհուրդները

<sup>1</sup> ՀԱՍ, Ֆ. 1, ց. 31, գ. 54, թ. 84:  
<sup>2</sup> Նույն տեղում, ց. 35, գ. 45, թ. 70-74:  
<sup>3</sup> Խաչատրյան Գ. Մ., Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Երևան, 1968, էջ 185:  
<sup>4</sup> Գեղամյան Գ.Մ., Հայաստանի կոյտնեսուսթյուն սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946-1958թթ.), Երևան, 1968, էջեր 134-137:  
<sup>5</sup> Հայաստանի գյուղատնտեսութեան 40 տարում, Երևան, 1960, էջեր 174-175:  
<sup>6</sup> Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 186:



ղեկավար աշխատողները ստվերում էին մնացել: Միանշանակ էր, որ խորհուրդները չէին կարողանում ամբողջովին օգտագործել խՍՀՄ սահմանադրու-թյամբ իրենց բնձնույնիված իրավունքները:

1962թ. նոյեմբերին, չհամապարզված կերպով եւ շտապողականության մթնոլորտում, խորհրդային մարմինները վերակառուցվեցին արտագրական սկզբունքով: Արդյունքում՝ ՀԽՍՀ շրջանային խորհուրդների փոխարեն (որոնցում ներգրավված էին 1501 աշխատող) կազմակերպվեցին 19 գյուղական շրջանային խորհուրդներ (927 աշխատող): Միաժամանակ, 761 գյուղական խորհուրդների փոխարեն (որոնցում ներգրավված էին 1861 աշխատող) կազմակերպվեցին 432 գյուղական խորհուրդներ (1173 աշխատող):<sup>1</sup>

Սակայն, խՄԿԿ Կենտկոմի 1964թ. նոյեմբերյան պլենումի որոշմամբ տարածքային սկզբունքով գործող խորհրդային մարմինները, կրկին վերակառուց-վեցին, ինչպես նաև՝ ընդլայնվեցին նրանց իրավասութունները: Վերջիններս իրավունք ստացան՝ մասնակցել գյուղատնտեսական աշխատանքային ծրագրերի կազմմանը եւ վերահսկել գյուղատնտեսական մթերքների գնման պետական առաջգրանքների ժամանակին կատարումը:

Օժտված լինելով կառավարչական որոշակի իրավասութուններով՝ վարչաճարմայական Համակարգի մաս էին կազմում նաև կոմերիտական, արհմիութենական, Հասարակական այլ կազմակերպությունների ղեկավար աշխատողների ենթախմբերը: Նրանք գյուղատնտեսական արտադրության մեջ անմիջա-կանոսին չէին ներգրավված: Քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում, նրանք քանակական առումով որոշակի կայունություն են պահպանել:

Գյուղական մտավորականության մյուս ինքնուրույն խումբն արտագրա-կան մտավորականությունն էր (գյուղատնտեսներ, անասնաբույժներ, անասնա-բույժներ, ինժեներներ, տեխնիկներ): Այս խումբը, անմիջականորեն ներգրավված լինելով գյուղատնտեսական արտադրության մեջ, Հանդիսանում էր նրա կազմա-կերպման ու ղեկավարման ստորին օղակը: Ուստի պատասխանատվություն էր կրում արտադրական գործընթացների Հաջող կազմակերպման ու ղեկավարման Համար: Արտադրական մտավորականության կազմում կատարված քանակական ու որակական փոփոխությունները պայմանավորված էին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

Օբյեկտիվ գործոններից ամենակարեւորը գիտատեխնիկական առաջըն-թացն էր, սակայն, ի տարբերություն ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի, գյուղատնտեսության մեջ այն Համեմատաբար դանդաղ էր արձատարվում, ուստի այս ենթախմբին ներկայացվող պահանջներն այնքան էլ մեծ չէին: Սուբյեկ-տիվ բնույթի գործոններից կարեւորվում էին մասնագիտական կազմերի պատ-րաստման եւ տեղաբաշխման ասպարեզում տեղ գտած մի շարք սխալներն ու թերությունները:

Դրանց Հետեւանքով քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում գյուղ-ատնտեսական արտադրության մեջ զգացվում էր մասնագետների խիստ կարիք: Արդյունքում՝ արտադրական մտավորականության կազմում մեծ էր պրակտիկ աշխատողների տեսակարար կշիռը: Գյուղատնտեսության մասնագետներն անմի-ջական գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավվելու փոխարեն, տարի-ներ ի վեր կենտրոնացված էին շրջործակումներում, ՄՏԿ-ներում (մեքենա-տրակտորային կայան) եւ վերագաս այլ մարմիններում, ինչի Հետեւանքով՝ նրանցից յուրաքանչյուրը որեւէ գյուղատնտեսական ձեռնարկության Համար կոնկրետ պատասխանատվություն չէր կրում: Հարկ է նշել, որ անգամ այդ Հաստիքներն ապահովված չէին մասնագետներով: Այսպես, 1948թ. շրջործ-կումների գյուղըթափներում 270 գյուղատնտեսության մասնագետների Հա-տիքներից զբաղված էին 236-ը կամ 87.4%-ը, որոնցից միայն 131-ը կամ 41.5%-ն ունեին բարձրագույն մասնագիտական կրթություն:<sup>2</sup> Գրեթե նույնն էր պատկերը նաև Հետագա տարիներին:

Բուն գյուղատնտեսության մեջ Համապատասխանաբան մասնագետների Հագեցվածություն Հարցն ստավել վատ փեճակում էր: Այսպես, եթե 1952թ.-ին՝

1940թ.-ի Համեմատությամբ, Հանրապետությունում շուրջ 3 անգամ ավելացել էր գյուղատնտեսության մասնագետների թիվը, ապա, նույն թվականին գյուղա-ցիական արտադրության մեջ աշխատում էին 629 գյուղատնտես, 194 անաս-նաբույժ, 270 անասնաբույժ, 643 ագրոտեխնիկ:<sup>3</sup> 1952թ. Հանրապետության բարձրագույն կրթությունը 480 գյուղատնտեսից միայն 124-ը, 125 գոտտեխնիկից՝ 38-ը, 145 անասնաբույժից՝ 37-ն էին աշխատում կոլտնտեսութուններում:<sup>4</sup>

1955թ. կոլտնտեսությունների սպասարկող 905՝ գյուղատնտեսներ ու գոտտեխնիկներ ՄՏԿ-ներից փոխադրվեցին կոլտնտեսություններ: Միջոցառման արդյունքում այդ մասնագետների թիվը 315-ից Հասավ 1270 մարդու:<sup>5</sup> Սակայն, նրանց գերաշխարհ մասը, բնակիչները այն մի շարք գոյություն ունեցող Հետեւան-քով կարճ ժամանակ անց թողեց աշխատանքը: Արդեն 1956թ. Հունվարին ՀԽՍՀ կոլտնտեսություններում աշխատում էին ընդամենը 559 գյուղատնտես եւ գոտտեխնիկ:<sup>6</sup>

Չնայած 1946-1958թթ. երեւանի գյուղատնտեսական եւ անասնաբուծա-նասնաբուծական ինստիտուտները գյուղատնտեսության նախարարության արձանագրել էին շուրջ 3.3 Հազար շրջանավարտ, սակայն 1958թ. ՀԽՍՀ կոլտնտե-սութուններում ու խորհրդատեսություններում աշխատող 3088 մասնագետներից բարձրագույն կրթություն ունեին ընդամենը 1205-ը:<sup>7</sup>

Այս փեճակը պահպանվեց նաև Հետագա տարիներին: 1961թ. Հանրապե-տությունում գյուղատնտեսական բարձրագույն կրթությամբ 4886 մասնագե-տներից անմիջականորեն գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատում էին 1183-ը՝ այն գեպքում, երբ 760 կոլտնտեսություններից 214-ը՝ գյուղատնտես, 346-ը՝ անասնաբույժ, 409-ը՝ անասնաբույժ չունեին: Ինժեներ-մեխանիկ ունեցող միայն 5 կոլտնտեսություն, 58 կոլտնտեսություն սահասարակ մասնագետներ չունեին՝ իսկ 1963թ., բարձրագույն եւ միջնակարգ գյուղատնտեսական կրթությամբ 5807 մասնագետների առկայության պայմաններում, 141 կոլտնտեսություն՝ գյուղատնտես, 152-ը՝ անասնաբույժ, 425-ը՝ ինժեներ-մեխանիկ չունեին:<sup>8</sup>

Բավական է նշել, որ 1965թ. ՀԽՍՀ յուրաքանչյուր կոլտնտեսությամբ միջին Հաշվով ընկնում էր 2,5 մասնագետ, այդ թվում՝ ինժեներների եւ տեխնիկների յուրաքանչյուր մասնագետը ընկնում էր միջինը 3 կոլտնտեսության:<sup>9</sup>

Եվ սա՝ այն գեպքում, երբ Հանրապետությունում Հաշվվում էր 4555 գյուղատնտեսության գծով մասնագետ: Նման պայմաններում արտադրական մտավորականության տեսակարար կշիռը գյուղական բրազիլում բնակչության մեջ կազմում էր մոտ 2%:

Փոփոխություններ կատարվեցին նաև գյուղական մտավորականության մյուս խոշոր խմբի՝ ոչ արտադրական մտավորականության կազմում: Համեմատա-բար բարձր էր նրա դերը գյուղի սոցիալական վերափոխման գործընթացում: Ի տարբերություն արտադրական մտավորականության՝ ոչ արտադրական մտա-վորականության կառուցվածքը աչքի էր ընկնում որոշակի կայունությամբ: Ուստի մեղ Հետաքրքրող ժամանակաշրջանում կանոնադառնաբ նրա քանակական փոփոխություններին:

Ոչ արտադրական մտավորականության միջուկը Հանդիսանում էին ուսուցիչները: Հետպատերազմյան շրջանում ժողովրդական կրթության զարգաց-ման Հիմքի վրա աճեց գյուղական մանկավարժների թիվը, ինչպես նաև բարելավվեց նրանց մասնագիտական կազմը: Այսպես, եթե 1939թ. ժողովրդական կրթության գյուղական Հատվածում ներգրավված էր 6110 ուսուցիչ, 1959թ.՝

<sup>1</sup> Խաչատրյան Ի.Ղ., ՍՄԿԿ պայթյուրը գյուղատնտեսության զարգացման Համար, (1945-1965թթ.), Երևան, 1980, էջ 44:

<sup>2</sup> Գեղամյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 55:

<sup>3</sup> Ջառիկյան Թ.Ա., Սոցիալիստական էկոնոմիկայի եւ ֆինանսական սխեմի ստեղծումն ու զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1984, էջ 190:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.1, ց.36, գ.81, թ.123:

<sup>5</sup> Խաչատրյան Ի. Ղ., նշվ. աշխ., էջ 115, Գեղամյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 134-135:

<sup>6</sup> Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 185:

<sup>7</sup> Ուժմազյան Հ. Մ., Հայաստանի կոմկուսը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման Համար մղվող պայքարում, Երևան, 1974, էջ 384:

<sup>8</sup> Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 185:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.1, ց.42, գ.58, թ.80:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ.1, ց.28, գ.215, թ.104:

11459<sup>1</sup>, ապա 1965թ նրանց թիվը հասավ 13470-ի: Եթե 1939թ. նրանց՝ միայն 21.6 %-ն ուներ թերի կամ բարձրագույն կրթություն, ապա 1965թ. այն կազմեց 66.8 %:

Այնհասակ է, որ ուսումնասիրվող ամբողջ ժամանակաշրջանում մտավորականության այս խումբն ունեցել է քանակական ու որակական մեծ աճ: Նույնը չէր կարելի սակ նախապարտական հիմնարկների դաստիարակչական աշխատողների թվի աճի վերաբերյալ: Եթե 1946թ. ՀնՍՀ գյուղերում գործող նախապարտական հիմնարկներում աշխատում էին 221 դաստիարակներ, ապա 1960թ. նրանց թիվը հասավ 369-ի:<sup>2</sup> Եվ պատահական չէ, որ այդ ցանցի բնագրկման նեղ շրջանակների հետևանքով գյուղաբնակ երեխաների 96%-ը ներգրավված չէր մասերման կապարտեցներում:

Քանակական աճի բարձր տեմպեր ապահովվեց նաև բուժաշխատողների ենթախմբում: Այն հատկապես վերաբերում էր 1960-ական թվականներին: Այսպես, եթե 1955թ. խորհրդահայ գյուղում աշխատում էր 379 բժիշկ, 1963թ.՝ 510, ապա կարելի էր տեղաբաշխման ճիշտ քաղաքականության արդյունքում, 1965թ. գյուղերում աշխատող բժիշկների թիվը կազմեց 632:<sup>3</sup>

Ի տարբերություն բժիշկների՝ համեմատաբար դանդաղ աճեց միջին բուժաշխատողների թիվը. 1953թ. 2719-ի դիմաց 1965թ. նրանց թիվը կազմում էր 3018 մարդ:<sup>4</sup>

Աճի նշանակալից ցուցանիշներ արձանագրվեցին նաև կուլտուր-լուսավորչական հիմնարկների աշխատողների թվակազմում: Այսպես, եթե 1941թ. այդ ոլորտի գյուղական հատվածում ընդգրկված էր 3.2 հազ. մարդ, ապա 1965թ. նույնների գրուկթյամբ, նրանց թիվը կազմեց 23.8 հազ. կամ աճեց ավելի քան 7.4

անգամ:<sup>5</sup>

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում գյուղական ամբողջ բնակչության կազմում կայուն կերպով բարձրացավ ոչ արտադրական մտավորականության տեսակարար կշիռը: Այն քանակական զգալի գերակշռություն ուներ վարչակառավարչական ու արտադրական մտավորականության նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված էր արտադրական ոլորտների զարգացման համեմատ ոչ արտադրական ոլորտների զարգացման բարձր տեմպերով:

## Արամայիս Կոխլիկյան

# КАЧЕСТВЕННЫЕ И КОЛИЧЕСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ В СОСТАВЕ СЕЛЬСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ АРМЯНСКОЙ ССР (1945-1965ГГ.)

## Резюме

В Армянской ССР в изучаемый период одним из изменений классового состава сельского населения являлся рост удельного веса интеллигенции, а

<sup>1</sup> ԵաՀինյան Ա. Խ., Վերածնված ժողովրդի կուլտուրան, Երևան, 1959, էջ 95:

<sup>2</sup> Փարսադանյան Թ. Ա., Հայաստանի առողջապահության պատմություն (1828-1965թթ.), Երևան, 1973, էջ 406:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 443:

<sup>4</sup> Состояние здоровья и медицинского обслуживания населения Арм. ССР, Статистический сборник, Ереван, 1965, с.31-32.

<sup>5</sup> Օհանջանյան Բ., Հայաստանի բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Երևան, 1970, էջ 212-213:

также ее историческая роль в деле обеспечения социально-хозяйственного и культурного развития. Вследствие преодоления различий между физическим и умственным трудом выдвинулась тенденция сближения интеллигенции и других классов.

Осуществляемые социальные сдвиги в обществе предлагали характеристику требования, уточнения критерий интеллигенции, как самостоятельного социального слоя. В целом освещая критерии различия интеллигенции и ее занимаемую роль в социально-классовом строе, представили характеристику внутриклассового строя сельской интеллигенции и ее количественные и качественные изменения.

Особенно в отношении сравнения развития производственных сфер во всем составе сельского населения, обусловленное высокими темпами развития непроизводственных сфер, превосходство непроизводственной интеллигенции над административно-управленческой интеллигенцией.

## Արաման Կոխլիկյան

# ԳՐԱԴԱՐԱՆԱԹԻՆ ՀԱՎԱՔԱՇՈՒՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գիտություն եւ տեխնիկայի զարգացման արդի պայմաններում գրադարանային ցանցն այն ոլորտն է, որն այդ զարգացմանը պետք է առաջինը արձագանքեր թե՛ իր ֆունդային բովանդակությամբ, թե՛ նոր սարքավորումների կիրառմամբ: Այսօր արդեն ոչ մեկի համար նորություն չէ, որ ժամանակակից գրադարանային հավաքածուն՝ իր գրացուցակային եւ քարտարանային ամբողջ համակարգով, պետք է արտացոլի համակարգչային տեղեկատվության մեջ, այլապես գրադարանային գործն առանց համակարգչի դանդաղընթաց զարգացում կունենա:

Ժամանակակից հասարակությունը պահանջում է ժամանակակից տեղեկատվություն: Չի կարող լինել գիտություն, արդյունաբերություն, տնտեսություն, մշակույթի եւ արվեստի զարգացում առանց գիտական տեղեկատվության:

Տեղեկատվության արդիական մասշտաբները ահեկի են, եւ դրա համակարգումը, տեսակավորումը եւ ճշգրտումը լայնածավալ մի գործընթաց է, որն ի սկզբանե գրադարանային ոլորտին վերաբերող աշխատանք է: Բազմազան են ոչ միայն տեղեկատվության աղբյուրները, այլեւ ձևերը:

«Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էլեկտրոնային համակարգով տեղեկատվության «բովանդակային» փոխանցումը, բացի օպերատիվությունից, արձատարական փոփոխություն առաջ չի բերում, քան տեխնոլոգիական ձեւերի ներմուծում եւ կատարելագործում: Իրականում մենք գործ ունենք տարարնույթ բայց մեկը մյուսի «օրգանական» մասը կազմող տեղեկատվական օբյեկտների հետ...»:

Նախկինում գրադարանային հավաքածուն ընդգրկում էր գրքեր, պարբերական մամուլ, նոտա-երաժշտական, քարտեզագրական նյութեր, ինչպես

<sup>1</sup> Սուբխաթյան Գ.: Մատենագիտության զարգացման կոնցեպցիայի համատեքստում: Գիտ. աշխ. ժող. II հատոր: Մանկավարժ: Երևան, 2002., էջ 215:

նաև որոշ քանակությամբ այլ բնույթի նյութեր: Այսօր, սակայն, այդպես կոչված «այլ բնույթի նյութեր» Հսկայական ծավալ են կազմում:

Ժամանակակից Հասարակության առջև ծառայել է մի լուրջ եւ արժատական գերխնդիր: Դա բազմաբնույթ, բազմառժ, բազմաձև եւ բազում աղբյուրներից տեղացող տեղեկատվական Հոսքն է:

Արդյունքում Հասարակության յուրաքանչյուր անդամ կանգնում է տրամաբանական որոշման առջև. նա պետք է ընտրություն կատարի: Արդյոք Հնարավոր է որոշել եւ գտնել իրոք ճշգրիտ տեղեկատվություն, որը եթե չի նույնանում՝ փրկոստիպական տեսանկյունով բացարձակ ճշմարտության Հասկացու-թյան Հետ, ապա Հարում է նրան, մոտենում է այդ ճշմարտությանը:

Եթե ժամանակակից մարդուն չի Հետաքրքրում տեղեկատվության տեսակը (գիրք, մամուլ, Հեռուստատեսություն, ուղիտ, թվային-էլեկտրոնային կրիչներ...), ապա, կարծում ենք, սկզբունքային նշանակությամբ նրան շատ կՀետաքրքրի տեղեկատվության աղբյուրը, որակը, ճշմարտացիությունը եւ, իհարկե, թույլատրելիությունը:

«Իսկական գեմոկրատական Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ապահովված լինի գործնական Հնարավորությամբ օգտվել տեղական Հանրային գրադարանից, ձեռք բերել իրեն անհրաժեշտ նյութը կամ ստանալ տեղեկատվություն ՄԳԱ-ով»:<sup>2</sup>

Հասկանալի է, որ տեղեկատվական Հասարակության գեպըում անհրաժեշտ են նաև Համապատասխան օրենքներ, որոնց Համար նախապայման են Հանդիսանում տեղեկատվության տեսակափոխումը, դասակարգումը:

Տեղեկատվությունը կարելի է դասակարգել տարբեր Հայեցակարգերով: Գիտական տեղեկատվության նկատմամբ Հետաքրքրությունը բոլոր ժամանակներում եղել է ամենաորոշիչ տեղում եւ առաջային նշանակություն է ունեցել մարդկային գործունեության բոլոր բնագավառներում:

Միաժամանակ Հսկայական ծավալ է ստացել կեղծ տեղեկատվությունը՝ այսպես կոչված «գեղին մամուլը», ինչպես նաև այդ տեղեկատվության տարածումը Հեռուստատեսության, էլեկտրոնային բազմաբնույթ միջոցներով եւ այլն:

Ինչպես Հայտնի է, այսօր Հրատարակչական գործը լուրջ վերահսկողություն չունի, ինչի արդյունքում Հրատարակվում է ամեն ինչ եւ ամենուր, իսկ Հրատարակված նյութերը վաճառվում են առանց թույլտվության եւ տարիքային սահմանափակման:

Տեղեկատվության որակական Հատկանիշը որոշիչ է բոլոր տիպի եւ տեսակի գրադարանների Համար: Սակայն դա լրջմիտ վերաբերմունք է պահանջում, եթե խոսքը գնում է Հատկապես մանկական գրադարանների առաջարկած տեղեկատվության մասին: Իսկ մանկական ինքնատիպ գրադարանային ֆոնդերը մշտապես ողջախոհ ուսումնասիրություններ են պահանջում, որոնց արդյունքում մասնուկ ընթերցողի, գեռահասի գրասեղանին պետք է գրվեն բարձրորակ նյութեր: Այս ընթերցողական կազմը պետք է սպասարկվի լավագույն տեղեկատվությամբ:

Երեխային չի կարելի սպասարկել գիրք, որը թե բովանդակությամբ, թե Հրատարակչական ավյուններով ցածրորակ է, թույլ գունավորմամբ, փոքր տառատեսակով: Սա խիստ կարևոր է այն առումով, որ մեծահասակը կարող է ընտրել լավի եւ վատ միջև. իսկ մանուկ ընթերցողը գուցե սխալ ընտրություն կատարի:

«...Իմ մտածմունքի առարկան եղել է այն, որ երեխայի ձեռքը չընկնի ոչ մի վատ գիրք, որ երեխաներն ապրեն Հետաքրքիր ստեղծագործությունների աշխարհում, որոնք մտել են ազգային եւ Համամարդկային կուլտուրայի ոսկե ֆոնդի մեջ»,- գրում է վաստակաշատ մանկավարժ Վ.Ա.Առեստմյունսկին:<sup>3</sup>

Գիտական գրադարանների Հավաքածուների տեղեկատվությունը պետք է լինի նորատուր, արտահայտի գիտության առաջընթացի վերջին քայլերը, այլապես գրադարանավարը ստիպված կլինի վերաբուժելն առաջարկել գիրք, որում

խորհուրդ է տրվում վերահաստատել կատարելահի մեթոդներով, այնինչ նորագույն գիտությունը Հայտնաբերել է առավել արդյունավետ ձևեր:

Այս երեւույթն իհարկե ավելի Հեշտ կուծվի, եթե գրադարաններն ապահովվեն նորագույն նյութերով, տեղեկատվության բազմազան կրիչներով:

Մեր Հասարակական գիտակցության մեջ, իհարկե, գրադարանային Հավաքածուն մեծապատար գեռ կազմված է գրքերից եւ մամուլից, սակայն գիտության առաջընթաց ժամանակակից սարքավորումներով փոխում է մարդու գիտակցության, կենցաղի, Հոգեբանության գործոնները:

Այս արժատական փոփոխությունները տեղի են ունենում նաև գրադարանային ոլորտի, ոչ ը Համակարգի, գրադարանային ֆոնդերի, սպասարկման եւ մատենագիտական տեղեկատվության բնագավառներում:

«Ժամանակակից տեխնիկական միջոցները, նորագույն սարքավորումները, տեղեկատվության կրիչները ոչ միայն Հոքր եւ արդյունավետ միջոցներ են գրադարանների տեղեկատվության «գիտուժում», այլև իրական սարքավորումներ, որոնք թույլ են տալիս խնայել ինչպես ընթերցողների, այնպես էլ գրադարանավարների ժամանակը»:<sup>4</sup>

Ամենեւին պետք չէ տարվել էլեկտրոնային տեղեկատվության Հրատույններով, պետք չէ կարծել, թե գրադարանը կարող է թվայնացվել ամբողջովին, եւ կարելի է վերացնել մեր ավանդական գրադարանները: Սա թյուր կարծիք է. Հսկայակ դեպքում ինչ պետք է լինի մարդկության ստեղծած այդ Հսկայական Հարստությունը՝ թղթային տեղեկատվությունը, որը թե Հոգեւոր, թե նյութական, թե Ֆինանսական մեծ արժեք է ներկայացնում: Միեւնույն է, այն պետք է պահպանվի, ուրեմն, ավանդական գրադարանները բոլոր ժամանակներում գոյություն են ունենալու: Թրեւս փոխվեն գրադարանային աշխատանքային մեթոդները, սկզբունքները, բայց նպատակը միշտ լինելու է նույնը:

Հարց է առաջանում. ինչ անհրաժեշտություն կա գրադարանային ֆոնդերը ամբողջովին թվայնացնել: Իսկ ինչ կլինի, եթե աստված մի արանց, գրադարանը Հոսանքարկվի որեւէ վթարի, աղետի, արտակարգ իրավիճակի պատճառով: Դա կհշանակի գրադարանների կործանում:

Գրադարանային բոլոր աշխատանքային պրոցեսները կանգ կառնեն առանց էլեկտրոնային շտեմարանների՝ տեղեկատու-մատենագիտական ապարատի: Սակայն բոլորիս էլ քաջ Հայտնի է, որ 1990-ական թվականների սկզբներին առաջացած սոցիալ-տնտեսական, Հասարակ-քաղաքական ծանր ճգնաժամի տարիներին գրադարանները գործել են առանց Հոսանքի եւ առանց ջեռուցման:

Այսպիսով, անմտություն է գրադարանի լիարժեք թվայնացումը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ եւ ուսցիտնայ որոշում ընդունել. ժամանակակից էլեկտրոնային սարքավորումները պետք է լինեն ոչ թե գրադարանի գոյության Հիմք՝ գրադարանային Հավաքածուն, այլ պետք է գառնան այն օժանդակ, լրացուցիչ միջոցը, որը Հնարավորություն կընձեռի ընթերցողին եւ գրադարանավարին ժամանակ խնայելու, լրացուցիչ, առավել որակյալ տեղեկատվություն ձեռք բերելու Համար:

Այդ ուղղությամբ իր կարծիքն է Հայտնում Գ. Սուքիասյանը. «Գրադարանների գոյության կամ չգոյության բանավեճը, որ գալիս է անցյալ դարի ճՕ-ական թվականներից կղադարի այն ժամանակ, երբ ստեղծվի այնպիսի Համակարգիչ, որը կկարողանա փոխարինել ավանդական գրադարանների ամբողջ գործունեությունը եւ կպատասխանի պահանջողների տեղեկատվական բոլոր Հետաքրքրություններին»:

Հետեւաբար, գրադարանային Հավաքածուն միշտ առաջային նշանակություն ունի, իսկ էլեկտրոնային սարքավորումները չեն կարող գերիշխող դառնալ գրադարանային աշխատանքում, քանի որ առկա գրադարանային ֆոնդերը չեն վերածվի էլեկտրոնային տեղեկատվության:

<sup>2</sup> Айрапетян Н. Общество, библиотека, информация. Libraries — access to information. Conference Proceedings.-Tbilisi, Georgia, 3-5 june.-1998. — с.26.

<sup>3</sup> Առեստմյունսկի Վ.Ա.: Սիրտս նվիրում եմ երկխաներին: -Երեւան, 1977, էջ 224:

<sup>4</sup> Айрапетян Н. Общество, библиотека, информация. Libraries — access to information. Conference Proceedings.-Tbilisi, Georgia, 3-5 june.-1998. — с.26.

Այս խնդիրն արժարժվել է նաև 1996թ. Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած միաջողգային գիտաժողովում, որի ժամանակ նշվել է. «...չնայած ստեղծված նոր տեխնոլոգիաներին գրադարանի Հիմնական առաքելությունը կայանում է փաստաթղթերի բնագրի տեսքով պահպանելու մեջ»:

Մենք եկանք այն եզրակացությունը, որ յուրաքանչյուր գրադարան՝ անկախ տեսակից եւ աշխատանքային նպատակադրվածությունից, պետք է օգտագործի գիտական առաքելացի ցանկացած նորություն, որն արագասարել է գրադարանային Հավաքածուի զարգացման, սպասարկման, պահպանման, մատենագիտական տեղեկատվությունն է Համայրման առումով:

Պետք է ինչպես Հարկն է գնահատել էլեկտրոնային տեղեկատվության արժանիքները: Այն Հնարավորությունները, որ ընձեռում է գրադարանի թվայինացված ֆոնդը բազմազան է եւ բարունակ, քանի որ կան տեղեկատվության տեսակներ, նյութեր, փաստաթղթեր, որոնց պահպանումը, սպասարկումը առավել նպատակահարմար է թվայինացման սկզբունքով:

Օրինակ՝ շատ նյութեր Հեշտ է փնտրել էլեկտրոնային շեմարաններով, որանց բազմացումը կատարվում է շատ արագ, բացի այդ, Հրատարակվող թղթային կրիչ-նյութերը շատ ավելի մեծ տեղ են պահանջում. գրանից էլ պատճառահետեւանքային կապով բխում է գրադարանների ֆինանսական Հնարավորությունների նվազումը: Թղթային կրիչները երբեմն ավելի թանկ են լինում, որանց վերականգնողական-կոնսերվացիոն աշխատանքները շատ թանկ են:

Բացի այդ շատ է կարեւորվում գրադարանային բազմաբնագավառ տեղեկատու Համակարգում կողմորոշվելը, այն՝ որպես մեկ միասնական, ընդհանրացված կառույց օգտագործելը:

Մեծ նշանակություն է ստանում տվյալների բազայի ստեղծումը ընթերցողական սպասարկումը բարձրորակ կազմակերպելու նպատակով:

Համակարգչայինացումը Հնարավորություն է տալիս նաև միջրագարանային տեղեկատվական Հարաբերություններ ստեղծելիս:

Թվայինացման Համար պահանջվում են բարձրակարգ մասնագետներ, որոնք պետք է ունենան թե ինֆորմատիկայի, թե բուն մասնագիտության որակավորում: Աս կնպաստի նաև մասնագիտական որակի կտրուկ բարձրացմանը:

Ի վերջո, էլեկտրոնային տեղեկատվությունը Հիանալի ասպարեզ է բացում Հետադարձ Համայրման արդյունավետության Համար: Ոչ միայն մեր նպատակադրումներում, այլև ողջ աշխարհում լիարժեք գրադարանային Հավաքածու ստեղծելու Հնարավորությունը վերացել է ընդմիջում եւ իսպառ կապված տեղեկատվության լայնամասշտաբ ծավալների Հետ:

Անգամ այնպիսի գրագացած երկրում, ինչպիսին Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունն է, Հնարավոր չէ ձեռք բերել Համաշխարհային գրականության Համեմատաբար լիարժեք ֆոնդ: Գրականության այն մասը, որ մենք կարող ենք գնել, նվազում է տարեցտարի: Ապագայում, Հավանաբար, այս միտումը կպահպանվի: Ծնշումը մեր բյուջեի գնողունակության վրա լինում է ինչպես ազգային շրջանակներում, այնպես էլ արտերկրում:

Պետք է նաև խուսափել տարբեր տեղերում նմանատիպ ֆոնդեր ստեղծելուց: Դրա Համար պետք է օգտագործել էլեկտրոնային սարքավորումներն առավելությունները՝ կրճատելով ֆոնդերի կրկնությունը եւ բարելավելով ընթերցողներին անհրաժեշտ նյութերի նկատմամբ Հասանելիությունը միջազգային չափանիշներով:

Այս Հարցում Հաջողություններ ունենալու Համար պետք է ընդարձակ Համագործակցություններ գործադրել: Հնարավոր չէ պահպանել ամեն ինչ յուրաքանչյուր գրադարանում: Անհրաժեշտ է կազմակերպել գիտական մակարդակով գրադարանային Հավաքածուների կոորդինացում, որը կհեղաշրջի տեղեկատվության պահպանման, առաքման, տեղում սպասարկման, Համայրման մասին մեր ավանդական պատկերացումները:

Գրադարանագիտության մեջ գոյություն ունեն Համայրման Հետեւյալ սկզբունքները՝ գաղափարայնություն, պրոֆիլավորում եւ կոորդինացում, Համակարգվածություն, պլանավորում:

Առավելագույն արդյունավետություն է բերում գրադարանային ֆոնդերի Համայրման գործում պրոֆիլավորման Համակցումը կոորդինացման Հետ: Որքան

գրադարանային Հավաքածուն խորացնում է իր պրոֆիլավորումը, այնքան այն Հեռանում է բազմաբնագավառ տեղեկատվությունից: Դրանից երևում է անհրաժեշտություն է ծագում կոորդինացնել Համայրումը Համակարգի մյուս գրադարանների Հետ Համապատասխանեցնելով: Կոորդինացում ենթադրում է Հաշվի առնել նաև Համակարգի մյուս գրադարանների ուղղվածությունը: Համայրման կոորդինացումն այն աշխատանքն է, որն իրականացվում է գրադարանների առանձին Համայրման եւ Համայրված ֆոնդերը միասնական եղանակով օգտագործելու նպատակով: Կոորդինացված Համայրման ժամանակ յուրաքանչյուր գրադարանային Հավաքածու գիտվում է որպես առանձին, ինքնուրույն Համայրման օբյեկտ եւ որպես այդ ամբողջի մի մաս:

Պետք է նշել նաև, որ յուրաքանչյուր կոորդինացում Հարաբերական է, քանի որ գրադարանային Համայրման ուղղությունը չկա Հստակ սահմանափակում: Քանի որ Հայագիտական գրականություն կարող է ձեռք բերել թե Ազգային գրադարանը, թե Նիկո-Ապոլոն անվան ազգային մանկական գրադարանը, թե ԳԱ Հիմնարար գրադարանը եւ թե Երեւանի պետական Համայրարանի գրադարանը: Նույնը կարելի է ասել գիտատեխնիկական, մանկավարժական, բժշկական գրականության եւ Համապատասխան գրադարանների վերաբերյալ:

Կոորդինացումն իրականացվում է տարածքային եւ գերատեսչական Հատկանիշի Համաձայն, թեև գործնականորեն գրադարանի ներսում ֆոնդերը կոորդինացվում են ըստ Հրատարակության տեսակների:

Կոորդինացումը տարածքային Հատկանիշի Համաձայն կարելի է կազմակերպել Հանրապետության, մարզի, քաղաքի, տարածաշրջանի մասշտաբով: Կոորդինացման Հարուստ փորձ է կուտակված արտասահմանում, քանի որ կոորդինացումը ծագել է այնտեղ: Սկանդինավյան երկրներում (Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա) գործում է Սկանդինավյանը. դա կոորդինացման մի եղանակ է, ըստ որի մասնակից երկրներից յուրաքանչյուրը կոորդինացնում է որոշակի բնագավառների գրականություն, որն օգտագործվում է բոլոր երկրների կողմից: ԱՄՆ-ում գործում է MEDLINC-ը բժշկական գրականություն: Այս Համակարգը ընդգրկում է ավելի քան 70 երկիր: ՀՀ Գիտաբժշկական գրադարանն ունի իր էլեկտրոնային միջոցները, որը MEDLINC Համակարգչային ցանցում: Կոորդինացման նպատակ ֆինանսական միջոցների խնայումն է, միաժամանակ ցանկացած գրականություն ֆոնդի օգտագործման Հնարավորություն:

Կոորդինացումն իրականացվում է նաև գերատեսչական, միջգերատեսչական Հատկանիշի Համաձայն: Այն Հիմնարկությունը, որն ունի գրադարան, շահագրգռվում է կոորդինացնել Համայրվող գրականությունը: Հիմնարկությունները Համաձայնության են գալիս՝ կոորդինացված գրականությունը Համատեղ օգտագործելու եւ ձեռք բերելու մասին: Կոորդինացվում են ոչ միայն նյութական միջոցները, այլև ղեկավարությունը, որը նյութական միջոցները ծախսում է Համապատասխանաբար յուրաքանչյուր գրադարանի Համար: Գուրաքանչյուր գրադարանի ինքնատիպությունը պահպանելու Համար պետք է նախօրոք ունենալ Համահավաք թեմատիկ-տիպարանական պլան (ԹՏՊ): ԹՏՊ-ի կազմման Հարուստ փորձ է կուտակել խորհրդային գրադարանագիտությունը: Նմանատիպ պլանավորումը մեծ Հաջողություն ունեցավ Հատկապես 1980-ական թվականներից, երբ Հանրապետությունում վերջնականապես ավարտվեց գրադարանային ցանցի կենտրոնացումը: «ԹՏՊ կազմելը ժամանակ պահանջող, աշխատատար գործընթաց է: Պլան կազմելուն մասնակցում են Համակարգի բոլոր աշխատողները: Սակայն ծանրությունն ընկնում է կենտրոնական Համայրման բաժնի վրա»:

ԹՏՊ-ը նախատեսված էր առաջիկա Հինգ կամ Հինգից ավելի տարիների Համար: ԹՏՊ-ի կազմմանը մասնակցում էին բոլոր մասնաճյուղ-գրադարանները, որպեսզի ստեղծվեր Համահավաք, միասնական ֆոնդ: Համակարգի աշխատողները քաջատեսչակ պետք է լինեն սպասարկվող տեղանքին, նրա առանձին անկախյալներին, սոցիալ-տնտեսական Հեռանկարներին ու տեղեկեցներին, որպեսզի միասնական ֆոնդն ապահովվի Համապատասխան մասնագիտական գրականությունը:

Փոնդի ձեռքբերումից Հետո սպասարկումն իրականացվում է ՄԳԱ-ով: Այսպիսով, կարծում եմ, որ Հին, ավանդական մեթոդների վերագործարկումը շատ

տեղին կիրնի մեր ժամանակների գրադարանների լիարժեք կոորդինացված համարման համար: Գրադարանային ֆոնդերի կոորդինացիան մեր օրերում միակ հնարավոր միջոցն է, որի շնորհիվ կիրառործվի բոլոր ժամանակների համար գերիանդր հանդիսակցող հասանելի և մատչելի տեղեկատվություն սպասարկումը: Հոգովածում խոսվում է նաև մեկ այլ կարևոր խնդրի մասին՝ հաշվի առնելով մեր ազգային ինքնատիպությունը: Հայտնի է, որ պատմական տարբեր ժամանակահատվածներում հարյուրներից հեռացած հայուկները ամենուր ստեղծել է իր մշակութային, ազգային կոյրբուր ներկայացնող օջախներ՝ դպրոցներ, ուսումնական կենտրոններ, գրադարաններ, մատենադարաններ, ինչպես նաև բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ևս համազգային նշանակություն ունեցող տեղեկատվության յուրջ աղբյուրներ են:

«Միջազգային նշանակությամբ կենտրոնի անհրաժեշտությունը պատճառարանվում է նաև աշխարհասփյուռ հայության հետ մատենագիտական փոխադարձ կապերի զարգացման առումով. հայկական գաղթօջախները այսօր գրկված են ազգային մտավոր մշակույթից օգտվելու հնարավորությունից»<sup>5</sup>

Ժամանակակից հասարակության տեղեկատվական պահանջները լիովին բավարարելու նպատակով ճիշտ ուղի է կանխագծում ազգային տեղեկատվական կենտրոնի ստեղծումը: Այդ հնարավորությունը ստեղծված է ժամանակակից սարքավորումների տրամադրած տեղեկատվությամբ: Տեղեկատվության աղբյուրների համակենտրոնացումն ու ինտեգրումը ոչ միայն գիտական, այլև ազգային-պետական խնդիր է, որի լուծումը հրատապ է 21-րդ դարում տեղեկատվական հաղորդակցական համակարգերի զարգացման չափանիշներով:

Արդյունքում ստացվում է, որ այժմեականությունն ապահովող ոչ մի գրադարան էլ կարող գրյուկություն ունենալ տեղեկատվական զարգացման նման աճի գեպրում, և հետաքրքրականն այն է, որ տեղեկատվության աճի միտում է նկատվում՝ դրանով իսկ բացառելով տեղեկատվության վերահսկողությունը, դասակարգումը:

Ժամանակակից գրադարանը պետք է կարողանա համակենտրոնացնել ոչ միայն տեղեկատվությունը, այլև համակենտրոնացնել տեղեկատվության աղբյուրները: Տեղեկատվության հսկելություն և հասարակության վերընթաց 21-րդ դարում ապահովելու նպատակով՝ չափազանց կարևոր են տեղեկատվական գործընթացների և տեխնոլոգիաների, գրադարանային և արխիվային գործի, մատենագիտության և փաստաթղթագիտության, հաղորդակցության զանգվածային միջոցների և այլ ճյուղերի ուսումնասիրումը և նորի ներդրումը:

Հավաքածուն գրադարանային գործունեության հիմքն է, առանց որի գրադարան՝ որպես գործող համակարգ, գոյություն ունենալ չի կարող: Գրադարանային ֆոնդը տեղեկատվական պահանջների բավարարման գլխավոր աղբյուր է ինչպես ողջ հասարակության, այնպես էլ նրա առանձին անհատի համար: Գրադարանային հավաքածուն» բարդ հասկացություն է: Գրադարանային հավաքածուն հասկացությունն անցել է էվոլյուցիոն զարգացման ճանապարհ: «Գրադարան» ուսերեն բառն ունի հունական ծագում և բառացի նշանակում է գրապահոց: Դեռևս 1904թ. Լյուսիվիանյան գտնում էր, որ գրադարանը շատ կամ քիչ գրքերի ամբողջություն է: Հայաքցների այս նույն համակարգի կողմնակիցներ էին հանդիսանում այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք էին Ի.Շուստայնը, Վ.Տափաչչևը, Ն.Ռուբակինը, Ա.Պոկրովսկին և ուրիշներ:

Սակայն պետք է նշել, որ մեր օրերում գրադարանը շատ է հեռացել այդ պարզունակ բնորոշումից, և գրադարանը պատկերացնել զուտ որպես գրքերի հավաքածու, նշանակում է գրադարանի, նրա անսպառ հնարավորությունների, ընձեռած սպարեզների մասին պատկերացում չունենալ: Այժմեական գրադարանը ոչ միայն տարբերվում է իր բովանդակությամբ, ֆոնդային ընդգրկմամբ, այլև գործունեության ծավալով, աշխատանքի որակով և հնարավորություններով:

Ժամանակակից գրադարանը, հատկապես թվային գրադարանը, հսկայական հորիզոններ է բացում զարգացած մարդու առջև, միայն թե այդ մարդը

երբեք էլ չպետք է մոռանա գրադարան տանող ճանապարհը: ԱՄՆ-ը, լինելով «թվային գրադարան» գաղափարի ստեղծողը, հսկայական փորձ է կուտակել այդ սպասարկում: Այնտեղ արդեն գործում են բազմաթիվ թվային գրադարաններ. նյութերը պահվում են համակարգիչներում և օգտվողին մատչելի են միայն համակարգիչի առկայությամբ, այն էլ դրա՝ համաշխարհային սարդոստայնի հանգույցներից մեկին միացած լինելու պարտադիր պայմանով: Այսինքն, թվային գրադարանը այսօր օրինաչափ իրողություն է, և վերհիշյալ կոնցեպցիան արդեն վարույց սպառել է իրեն: Խոսելով նշանավոր գիտնականների՝ նշված կոնցեպցիայի մասին՝ կարելի է պնդել, որ ֆոնդը գրադարանի գոյություն հիմքն է, սակայն չի կարելի հավասարման նշան դնել գրադարանի և գրադարանային հավաքածուի միջև: Սա գերազանցատու է գրադարանային հավաքածուի նշանակությունը, միաժամանակ նսեմացնում գրադարանի՝ որպես ինքնուրույն հիմնարկության դերը: Փաստորեն ստացվում է, որ գրադարանային հավաքածուն այն հիմնական գիտնական է, որով իրականացվում է գրադարանային աշխատանքը՝ իր բոլոր բնագավառներով:

Գրադարանային հավաքածուն «գրադարան» հասկացության գոյն է, որի հետ փոխկապակցված են գրադարանի՝ որպես հավաքական հիմնարկության, բոլոր ենթաճյուղերն ու ենթակառուցյունները: Միայն քանակական թվայինների «ֆոնդ» բառն օգտագործվեց խորհրդային գրադարանագիտության մեջ՝ որպես առանձին ենթաին: Երեսուներկան թվականների օգտագործվեց «ֆոնդեր» բառը, քառասունական թվականների գիտնականները եկան այն երկրացույթյանը, որ ֆոնդ և ֆոնդեր բառերն ունեն ինքնուրույն և տարբեր իմաստներ, և որ ֆոնդը գրադարանի բաղադրիչ մասն է: Ներկայումս ընդունված է ֆոնդերը փոխարինել հավաքածու բառով:

Յուրաքանչյուր գործող գրադարան ունի իր գրադարանային հավաքածուն: Այդ պատճառով.

1. Առանձին գործող յուրաքանչյուր գրադարանի համար՝ որպես ամբողջական, լիազույժ հավաքածու, պետք է կիրառել «գրադարանային հավաքածուն» գիտարարը՝ անպայման հոգնակի թվով: Օրինակ՝ Խնկ-Ապրո անվան ազգային մանկական գրադարանի հավաքածուները 2002 թվականին Հունվարի 1-ի դրությամբ կազմել են 451399 միավոր:

Երբ խոսքը գնում է առանձին գրադարանի մասին (մասնաճյուղ-գրադարան), նույնպես պետք է օգտագործել «գրադարանային հավաքածուներ» գիտարարը: Օրինակ՝ Գյումրու քաղաքապետարանի ԳԿՀ-ի տարածքային կենտրոնական գրադարանի հավաքածուները 2002թ.Հունվարի 1-ի դրությամբ կազմել են 4445 միավոր:

2. Որեւէ գրադարանի ներսում գործող մի ենթաբաժնի ֆոնդի մասին խոսելիս պետք է օգտագործել «գրադարանային ֆոնդ» գիտարարը՝ անպայման եզակի թվով: Օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Արխիվային կամ դիվանական վավերագրերի բաժնի ֆոնդը կազմում է շուրջ 300000 միավոր:

Միաժամանակ պետք է նշել, որ գրադարանային գործնական և տեսական աշխատանքում հանդիպում են ենթաբաժնի-ֆոնդեր, որոնք բովանդակությամբ և տարատեսակներով միտադար չեն, և յուրաքանչյուրն իր ներսում ունի իր ենթաֆոնդերը: Այդպիսի օրինակները բազմաթիվ են (Մատենադարանի Արխիվային բաժնի ֆոնդը, Խնկ-Ապրո անվան ԱՄԳ-ի օտար լեզուների գրականության ֆոնդը և այլն):

Երբ խոսքը գնում է գրադարանային ֆոնդ լայն, ընդարձակ հասկացության մասին՝ գիտական բնութագրմամբ, կարելի է օգտագործել «գրադարանային հավաքածու» գիտարարը: Օրինակ՝ գրադարանային հավաքածուն անցել է աստիճանական զարգացման ճանապարհ:

Այդպիսով, գրադարանային ֆոնդ և ֆոնդեր հասկացությունները սահմանադրված են միմյանցից բովանդակային, քանակական, ընդգրկման հատկանիշներով: Այս գիտարարների կիրառությունը պետք է ճշգրիտ լինի, քանի որ գրանք ամբողջովին տարբերվում են քերականապես և իմաստով:

Գրադարանի մյուս բաղադրիչ մասերն են գրադարանի անձնակազմը, նյութատեխնիկական բազան, արձեմենտի կազմը, որոնցից յուրաքանչյուրը փոխադարձ կապով պայմանավորված է մյուսի հետ: Յոթնասունական թվա-

<sup>5</sup> Սուքիասյան Գ.: Անհրաժեշտ է տեղեկատվական մատենագիտական միջազգային կենտրոն://ՀՀ,1999.-13 Հունվարի-թիվ 5.-էջ 5:

կաններին այս կոնցեպցիան ձևակերպեց Յ. Վ. Գրիգորեւը, որը զարգացվեց Հետագա ուսումնասիրողների կողմից:

Գրադարանային ֆոնդերի կապը մյուս ենթահամակարգերի հետ:

- գույքային-տնտեսական փաստաթղթեր
- փաստաթղթեր ու նյութեր ֆոնդառաջանողի մասին
- ազգականների փաստաթղթեր
- կերպարվեստի փաստաթղթեր ու նյութեր
- Հավաքածուներ:

Փաստաթղթերի համակարգման ուղիվազի բաժինների անուններն ու Հաջորդականությունը սահմանվում է երևելով կոնկրետ ֆոնդի փաստաթղթային կազմից (տես Հավելված ):

Ճարտարագետների, կոնստրուկտորների, ճարտարապետների եւ նման կարգի այլ անձնական ֆոնդերի կազմում առկա կերպարվեստի փաստաթղթերի խմբին դասվում են միայն ֆոնդառաջանողների ստեղծագործության հետ առնչությունը չունեցող փաստաթղթերն ու նյութերը (անձնական ու ընտանեկան լուսանկարներ, այլ անձանց բացիկներ, նկարներ, գծագրեր եւ այլն):

5. Ընտանեկան եւ տոհմի ֆոնդերի փաստաթղթերի համակարգումը

Ընտանեկան եւ տոհմի ֆոնդերի կազմում ներառված փաստաթղթերը, որոնցով բնութագրվում է ընտանիքի (տոհմի) յուրաքանչյուր ներկայացուցիչ գործունեությունը, համակարգվում են ըստ անձերի (տես Հավելված 10):

Ընտանեկան ֆոնդերում սկզբում գրվում են Հիմնական (գլխավոր) ֆոնդառաջանողի փաստաթղթերը, ապա ըստ ազգակցական կապի հաջորդականություն տեղաբաշխվում են ընտանիքի անդամների փաստաթղթերը:

Ընտանիքի կամ տոհմի անդամների փաստաթղթերը համակարգվում են տարբերակված ուղիվազներով, երևելով նրանցից յուրաքանչյուրի փաստաթղթերի կազմից ու բովանդակությունից:

Տոհմի ֆոնդում փաստաթղթերը համակարգվում են ընտանիքների ծագումնաբանական Հաջորդականությունով: Ամբողջ տոհմին վերաբերող փաստաթղթերը (ծագումնաբանական աղյուսակներ, տոհմածառ եւ այլն) տեղադրվում են ֆոնդի սկզբում:

Անձնական գրագրությունը համակարգվում է ըստ Հասցեատերերի եւ կցվում յուրաքանչյուր անդամի մնացած փաստաթղթերին: Այն դեպքում, երբ ընտանեկան գրագրությունը Հնարավոր է տարանջատել ըստ Հասցեատերերի, կամ էլ այն Հասցեագրված է ընտանիքի մի քանի անդամներին միաժամանակ, գրագրությունը ներառվում է ազգակցական կապի առումով ավագ ձևի անհանուր շարքում, իսկ եթե այդպիսիք մեծ քանակ են կազմում՝ արվում են առանձին խմբով:

Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերը ընտանեկան ու տոհմի ֆոնդերում կազմում են մեկ առանձին միասնական խումբ, եթե Հնարավոր է գրանց տարանջատել ըստ անձերի:

Ընտանեկան կամ տոհմի ֆոնդի փաստաթղթերի համակարգման տիպային (օրինակելի) ուղիվազի կարող է կազմվել հետևյալ բաժիններից՝

- տոհմի (ընտանիքի) պատմության վերաբերյալ փաստաթղթեր
- ընտանիքի (տոհմի) անդամների անձնական ֆոնդեր (անձանց ժամանակագրական Հաջորդականություն)
- ամբողջ ֆոնդի համար ընդհանրական փաստաթղթեր՝ ընտանեկան գրագրություն, կերպարվեստի նյութեր, Հավաքածուներ եւ այլն:

6. Գործերի ձեւավորումը եւ տեխնիկական

ձեւակերպումը ըստ փաստաթղթերի Հիմնական խմբերի (բաժինների) ինչպես ընդհանուր, այնպես էլ անձնական ծագման ֆոնդերում նկարագրման ու Հաշվառման հիմնական միավոր է Հանդիսանում Ֆիզիկապես զատված գործը, որը կարող է ձեւավորվել՝

- մեկ առանձին փաստաթղթից
- Հեղինակային, թղթակցային, աշխարհագրական կամ այլ հատկանիշով միավորված փաստաթղթերի (նյութերի) խմբից: Վերոնշյալ հատկանիշներից յուրաքանչյուրը գործերի ձեւավորման հիմքում կարող է դրվել ինքնուրույնաբար, կամ համապատասխան այլ հատկանիշների հետ զուգակցված:

Այս կամ այն խմբի (բաժնի) շրջանակներում ֆոնդի փաստաթղթերից գործերի ձեւավորումը նպատակ ունի ապահովելու դրանց պահպանությունը եւ օգտագործման հարմարավետությունը:

Որոշակի հիմունքով համակարգված փաստաթղթերից ու նյութերից գործեր ձեւավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել ֆոնդառաջանողի հանրածանոթ լինելը եւ, որ շատ ավելի կարևոր է, փաստաթղթերի արժեքավորությունը հանգամանքը: Այսպես, պետական, հասարակական, գիտություն, մշակույթի եւ որոշ այլ ոլորտների գործիչների անձնական ծագման արխիվային ֆոնդերում գործերը ձեւավորվում են նաև քիչ քանակությամբ փաստաթղթերից: Գործերի ծավալը չպետք է գերազանցի 100 թերթից, իսկ առանձնապես արժեքավոր ձեռագրերից ձեւավորված մեկ միավորինը՝ 40-50 թերթից, բնօրինակ գծագրերից, նկարներից եւ նման այլ փաստաթղթերից կազմվող գործերինը՝ 10-15 թերթից: Եթե գործերի փաստաթղթերի թերթերի քանակը գերազանցում է վերոհիշյալ թերթերը, դրանք բաժանվում են երկու կամ ավելի գործերի՝ թեմատիկ կամ ժամանակագրական Հաջորդականության կարգով:

6.1. Գիտություն եւ մշակույթի բնագավառի գործիչների ստեղծագործական նյութերից գործերը ձեւավորվում են տարբերակված մոտեցմամբ՝ նկատի ունենալով ֆոնդառաջանողի գործունեության բնույթը (ոլորտը) եւ արդյունքում

առաջացած փաստաթղթերի ժանրային ու տեսակային պատկանելությունը: Օրինակ՝ փոքր ժանրի յուրաքանչյուր ստեղծագործություն կարող է առանձին (ինքնուրույն) գործ դասնալ կամ թեմատիկ, ժամանակագրական սկզբունքով միավորվել մեկ գործի կազմում:

- Օրինակ՝
1. Ա.Խանգաղյանի «Գիրքը եւ մարդը» Հոգվածը կամ «Եմ գրքի Հերոսը» Հոգվածը
  2. Ա.Խանգաղյանի «Հոգվածները» նվիրված Գուսան Աշոտին
  3. Զ.Կիրակոսյանի «Միքայել Նայրանդյան» Հեռուստատեսային գիտահանրամատչելի ֆիլմի սցենարը:

Մեծածավալ ստեղծագործությունները ինքնուրույն գործ են դառնում: Թերթերի քանակը, սահմանվածից ավելին (150-200 թերթ) լինելու դեպքում դրանք բաժանվում են մասերի (Հատորների), յուրաքանչյուրը կազմելով առանձին գործ:

- Օրինակ՝
1. Ա.Քալանթարյան՝ «Մարաթոն», վեպ
  2. Ա.Սահյանի՝ «Խաչողիներ», վեպ, առաջին մաս
  3. Նույնը՝ երկրորդ մաս:

Նույն անվամբ տարբեր ժանրի ստեղծագործություններից ձևավորվում են առանձին գործեր:

- Օրինակ՝
1. Ա.Խանգաղյան «Մխիթար Ապարպետ», վեպ
  2. «Մխիթար Ապարպետ» կինոսցենար

Տարբեր գրողների (Հեղինակների) ստեղծագործություններից կառարված թարգմանություններից գործերը ձևավորվում են ըստ Հեղինակների: Այս ստու-մով բացառություն են կազմում մեկ ժողովածուի համար կառարված թարգմանությունները:

- Օրինակ՝
1. Մ. Գրիգորյան. Ալ. Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» ստեղծագործության թարգմանությունը (ուսուերենից)
  2. Գ. Բորյան. թարգմանություններ Վ. Զվյագինցևայի «Ձեռնային աստղեր» բանաստեղծությունների ժողովածուից
  3. Կ. Միմոնովի «Բարեկամներ եւ թշնամիներ» ժողովածուից (ուսուերեն) Գ. Բորյանի կողմից թարգմանված բանաստեղծությունների հավաքածու:

Փոնդառաջացողի ստեղծագործություններից թերթերի կտրածոները ամփոփվում են մեկ գործում՝ ըստ ժանրերի կամ ժամանակագրական կարգով:

- Օրինակ՝
1. Զ. Բայլյան. «Երկնագույն ճանապարհ» ուղեգրու-թյունից հատվածներ, թերթային կտրածոներ
  2. Գ. Մեղնիկյան. Հոգվածներ նյարդային Հիվանդություն-ների բուժման մասին: Կտրածոներ «Կավկասկայա գրավիչից» թերթի 1971-1978թթ. համարներից:

Հեղինակի որեւէ ստեղծագործության ձեռագիրը (աշխատանքի տարբեր փուլերում ստեղծված տարբերակներով, խմբագրու-թյուններով հանդերձ) կազմում է մեկ գործ:

Յուրաքանչյուր տարվա գրառումների 3 գրքույկից (ժողատետր) կազմվում է մեկ գործ:

Օրինակ՝ Ա. Սարոյան, գրառումների գրքույկներ, 1976թ.: Քաղվածքներից, սեւագիր գրառումներից գործերը ձևավորվում են ըստ թեմատիկայի կամ ստեղծագործությունների եւ փաստաթղթերի տեսակների:

- Օրինակ՝
1. Պատմության եւ մշակույթի Հուշարձանների յուսանկարներ
  2. Հավաքած նյութեր (քաղվածքներ թերթերից, ամսագրերից, գրառումներ եւ այլն) «Հայրենապատում» գրքի համար:

Փոնդառաջացողի հետաքրքրած եւ իր աշխատանքների համար օգտա-գործված սպագիր նյութերը (գրքեր, ամսագրեր, թերթեր եւ այլն) կարելի է

գետեղել ֆոնդի փաստաթղթերի համապատասխան «Փոնդառաջացողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր» բաժնում:

6.2. Փոնդառաջացողի կենսագրությունն առնչվող փաստաթղթերից ու նյութերից գործերը ձևավորվում են առավելագույն թեմատիկ կամ ժամանակագ-րական սկզբունքով: Գործնականում կիրառելի է նաեւ անվանական հատկանիշի հիման վրա գործերի ձևավորումը: Եթե ֆոնդառաջացողի կենսագրու-թյանն առնչվող փաստաթղթերը մեծ ծավալ չեն կազմում, ապա կարելի է դրանք միավո-րել մեկ գործի մեջ:

6.3. Մտապահան եւ Հասարակական գործունեությունն արտացոլող փաստա-թղթերից գործերը ձևավորվում են առավելագույն թեմատիկ սկզբունքով: Սակայն գործնականում չի բացառվում նաեւ այդ շարքի փաստաթղթերից գործերի ձևա-վորման համար Հեղինակային, անվանական, աշխարհագրական, ժամանակագրա-կան եւ այլ հատկանիշների առանձին-առանձին կամ դրանց զուգակցման սկզբունքի կիրառումը:

- Օրինակ՝
1. ՀՀ կառավարության առնթրի գլխավոր արխիվային վարչություն պետ Ա. Հարությունյանի գեկուցումը Հորեյանական գիտաժողովին՝ Հանրապետությունում արխիվային գործի արդի վիճակի եւ նրա զարգացման Հիմնական ուղղությունների մասին
  2. Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանի գեկուցումը ՀՀ արխիվային գործի 2003թ. ծրագրերի կատարման արդյունքների եւ 2004թ. առաջնային խնդիրների մասին:

Մեկ կազմակերպությունում (Հիմնարկում) ֆոնդառաջացողի գործու-նեությունն արտացոլող փաստաթղթերի ոչ մեծ ծավալի դեպքում դրանք կարող են խմբավորվել մեկ գործի մեջ:

Օրինակ՝ փաստաթղթեր (գեկուցագրեր, հարցազու-մների, էլույթների տեքս-տեր, ծրագրեր եւ այլն) ՀեՄՀ պատմական պետական կենտրոնական արխիվում Ա. Սարգսյանի (բաժնի վարիչ) գործունեությունից:

6.4. Փոնդառաջացողի թղթակցության (գրադրու-թյան) գործերը ձևավորվում են ըստ թղթակցների: Փոնդառաջացողի նամակները (տարբեր թղթակցների կողմից, որոնք կարող են լինել հասցեատերերին չուղարկված, եւ վերադարձված, սեւագիր նամակներ) եւ ֆոնդառաջացողի թղթակցների հաս-ցեագրած նամակներից ձևավորվում են առանձին գործեր: Նամակների մեծ թվի դեպքում դրանք խմբավորվում են ժամանակագրական կարգով կազմելով մասեր:

- Օրինակ՝
1. Ա. Բալանթարյանի նամակները (սեւագրեր, պատճեններ, ձեռագիր, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն) 1963-1970թթ.
  2. Նույնը՝ 1971-1978թթ. (ձեւագիր, հայերեն, Հուշարձան):

Մեկ գործի մեջ կարելի է գետեղել ֆոնդառաջացողի եւ իր թղթակց-ներից ստացած նամակները:

Օրինակ՝ Նամակագրություն (գրադրու-թյուն) Ն. Տեր-Միքայելյանի եւ իր հարազատների միջև 1972թ.:

Տարբեր թղթակցների՝ նույն Հարցի մասին նամակներից գործերը ձևավորվում են թեմատիկ սկզբունքով:

- Օրինակ՝
- Ընթերցողների նամակներ Զ. Կիրակոսյանին՝ նրա «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատության մասին

Նամակներին առգիր փաստաթղթերը (յուսանկարներ, բացիկներ, ծրագրեր եւ այլն) Հիմնական փաստաթղթերից չեն առանձնացվում եւ վերջիններին հետ կազմում են մեկ գործ: Հավելվածների առկայությունը եւ դրանց կազմն ու բովանդակությունը համառոտակի ծանոթագրվում են գործի վերնագրում:

- Օրինակ՝
1. Ստ. Զորյանի նամակը Նար-Դոսին (1928թ.) Առկա է Նար-Դոսի մեկ թղթակցու-թյան լրագրային կտրածոն:
  2. Կ. Սմբատյանի նամակը Կ. Սիմոնյանին (1987թ.)

Կա նաեւ ընծայագրով մեկ ճեպանկար:

Անձը չճշտված թղթակիցներին ֆոնդատաջացնողի նամակները միավորվում են մեկ գործի մեջ, կատարելով «Անձը ճշտված չէ» կամ «Անձը Հայտնի չէ» նշումները:

Օրինակ՝ 1. Ա.Հարությունյանի նամակները (թղթակցի (կամ թղթակիցների) անձը ճշտված չէ)  
2. Պ.Սեւակի նամակը Վաչեհի (անձը Հայտնի չէ):

Այցեքարտերը միացվում են նամակներին (եթե ֆոնդում առկա են տվյալ թղթակցի նամակներից) կամ (եթե թղթակիցը ֆոնդում նամակ չունի) այլ-բնական կարգով խմբավորվում են մեկ գործի մեջ:

Նամակներից գործեր ձևավորելիս դրանց ծրարները առանձնացվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ թղթակցի անունն ու ազգանունը եւ (կամ) Հասցեն, փոստային առաքման թվագրումը եւ այլն կարելի է պարզել միայն ծրարի վրա կատարված նշումներից: Նման դեպքերում ծրարը (կամ դրա Համապատասխան Հատվածը) կցվում է նամակին: Այցեքարտերից ձևավորված գործերը գրվում են «Նամակներ» խմբի վերջում:

6.5. Անձնական ծագման ֆոնդերում որոշակի ծավալ են կազմում նաև բնօրինակները: Սովորաբար բնօրինակները են գրքերը, նոտաները, բրուշյուրները, ազգագրերը, լուսանկարները, Համացանկերը (կատալոգ), բուկլետները եւ այլն:

Գործերի անՀարկի մանրացման դեպքերը բացառելու Համար թույլատրվում է տարբեր մարդկանց բնօրինակներից ձևավորել մեկ գործ՝ դրա Համար ներքին ցուցակ կազմելու պայմանով: Ներքին ցուցակը կազմվում է բնօրինակների ազգանունների ալբերանական կարգով:

Օրինակ՝ Մշակույթի բնագավառի գործիչների բնօրինակներ  
բուկլետներ

09.12.59

12.03.73

Տե՛ս ներքին ցուցակը

24 թերթ

Ընծայագրերով գրքերի տիպոգրաֆիայից կամ դրանց պատճեններից կազմված գործերը (եթե ուղղակիորեն դրա Համար Հատուկ բաժին չի նախորշված) գրվում են գրագրուձևի (նամակների) բաժնի վերջում:

6.6. Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերն ու նյութերը գործերի մեջ խմբավորվում են անվանական կամ թեմատիկ Հատկանիշով: Փաստաթղթերի քիչ ծավալի դեպքում նման բնույթի փաստաթղթերը միանում են «Կենսագրական բնույթի փաստաթղթեր» խմբին: Ձևավորված գործերը Համակարգվում են ժամանակագրական կարգով:

6.7. «Փաստաթղթեր ֆոնդատաջացնողի մասին» խմբի նյութերից գործերը ձևավորվում են անվանական, թեմատիկ կամ Հեղինակային Հատկանիշով:

Օրինակ՝ 1. Գրախոսություններ, կարծիքներ Յու.Լալայանի «Գործավարություն հիմունքներ» ուսումնական ձեռնարկի մասին:

2. Փաստաթղթեր (նամակներ, սղագրություններ, Հրավերատոմսեր, Հեռագրեր եւ այլն) գիտություն փաստակալոր գործիչ Ա.Հարությունյանի Հիշատակի Հավերժացման ու մեծարման մասին:

3. Ա.Գրիգորյանի նամակը Ա.Քայանթարյանի այրուն՝ ամուսնու մահվան տարելիցի կապակցությամբ

6.8. «Կերպարվեստի նյութեր» շարքի փաստաթղթերից գործերը ձևավորվում են անվանական (բոլոր փաստաթղթերի տեսակների), թեմատիկ սկզբունքով՝ ֆոնդատաջացնողի դիմանկարներ, մշակույթի ոլորտի գործիչների խմբանկարներ, ընկերական շարժեր (կատակականներ) եւ այլն:

Փոնդատաջացնողի անՀատուկան լուսանկարներով գործի մեջ ժամանակագրական սկզբունքով ընդգրկվում են ոչ ավելի, քան 20 լուսանկար: Մեկ գործի մեջ ընդգրկվող (ցանկացած սկզբունքով) խմբանկարների թվաքանակը չպետք է անցնի 10-ից, իսկ Հարազատների, ծանոթ-բարեկամների լուսանկարների քանակն առանց բնօրինակների՝ 30-ից, բնօրինակներով՝ 5-ից:

Նշանավոր գործիչների գործերը ձևավորվում են ոչ մեծ թվով լուսանկարների մեկտեղումով (մեկ գործում՝ 5-6 լուսանկար): Միանշանակ է, որ գործի կազմում ներառված լուսանկարների քանակով պայմանավորված է վերնադրի իրարժեքությունը:

Օրինակ՝ 1. Ա.Քայանթարյանի անՀատուկան լուսանկարները  
1965-1989թթ., 18 Հատ

2. Ա.Քայանթարյանի Մ.Կալատոցի, Խ.Արրահամյանի, Հ.Սահյանի եւ այլոց Հետ խմբանկարներում:  
1960-1990, 10 Հատ:

3. Ա.Քայանթարյանի ներկայացնող կատակականներ՝ նկարված Գ.Յարալայանի եւ ուրիշների կողմից  
1965-1970թթ., 12 Հատ:

Խմբի շրջանակներում գործերի Համակարգումը կատարվում է առավել-լայնածավալ փաստակագրական կարգով:

ԱնՀայտ (չճշտված) անձանցով լուսանկարները սովորաբար միավորվում են մեկ գործի մեջ եւ տեղադրվում բաժնի վերջում:

6.9. «Հավաքածուներ» խմբում գետեղված փաստաթղթերից եւ նյութերից գործերը (կախված դրանց կազմից ու բովանդակությունից) ձևավորվում են Հեղինակային, ժամանակագրական, աշխարհագրական, թեմատիկ եւ այլ սկզբունքներով: Ինքնագրերից գործերի կազմումը կատարվում է ըստ Հեղինակների, կոչերից ու թուռցիկներից՝ դրանք արձակող կազմակերպությունների: Հավաքածուի կազմում առկա կերպարվեստի նյութերից գործերը ձևավորվում են ըստ դրանց թեմատիկայի, Հեղինակների, ժանրերի, օբյեկտների, ստրաժքների եւ այլ Հիմունքներով: Նման գործերի նվազ քանակության դեպքում Հատուկ բաժնի չի ստեղծվում, այդ գործերը տեղադրվում են բնույթով մոտիկ՝ «Ֆոնդատաջացնողի կողմից իր աշխատանքների Համար Հավաքված նյութեր» բաժնում:

7. Փաստաթղթերի Համակարգումը գործերի ներսում

Գործերի ներսում փաստաթղթերը Համակարգվում են, Հաշվի առնելով դրանց բովանդակային (թեմատիկ) առումով փոխկապվածությունն ու ժամանակագրական Հարաբերակցությունը:

Փոնդի պարունակությունը կազմող կենսագրական, ծառայական եւ Հասարակական գործունեության վերաբերյալ, ինչպես նաև գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերից ձևավորված գործերի ներսում փաստաթղթերը Համակարգվում են ժամանակագրական կարգով:

Գիտություն, մշակույթի գործիչների աշխատանքների (ստեղծագործությունների) ձեռագրերը եւ դրանց սեւագրերն ու Հեղինակային եւ խմբագրական տարբերակները գործի մեջ գետեղվում են Հեղինակի Համապատասխան աշխատություն (ստեղծագործության) ժամանակագրական Հարաբերակցության կարգով:

Տարբեր Հեղինակների ստեղծագործությունների (աշխատությունների) ձեռագրերի միատեղմամբ ձևավորված գործերի ներսում փաստաթղթերը Համակարգվում են դրանց Հեղինակների ազգանունների այբբենական կարգով, իսկ ազգանունների բացակայության դեպքում ձեռագրերի Համակարգումը կատարվում է ժամանակագրական կարգով կամ ձեռագրերի (երկ, Հոդված եւ այլն) անունների այբբենական Հերթականությամբ:

Նույն Հեղինակի մի քանի աշխատանքների (ստեղծագործությունների) ձեռագրերից կազմված գործի փաստաթղթերը Համակարգվում են ժամանակագրական կարգով:

Նամակներից ձևավորված գործերի շրջանակներում փաստաթղթերը Համակարգվում են ժամանակագրական կարգով: Անթվակիր նամակները (նամակներ, որոնց թվագրումը բացակայում է եւ Հնարավոր չէ ստույգ կերպով պարզել) գետեղվում են թվագրումով գրագրություններից Հետո:

Ջրացահայտված անձանց նամակների գործի ներսում Համակարգումը կատարվում է ըստ դրանց ձեռագրային նամակային: Նույն ձեռագրով նամակները դասավորվում են ժամանակագրական Հերթականությամբ:

Կերպարվեստի խմբի նյութերից կազմված միավորների ներսում փաստաթղթերը Համակարգվում են ժամանակագրական կարգով, իսկ անթվավոր լինելու դեպքում՝ ըստ անունների ալբերենական Հերթականության:

Գործերի փաստաթղթերի Համակարգումն ամրապնդելու եւ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով, թերթերը Համարակալվում են աճող Հերթականությունով: Թերթերի Հաջորդական Համարները դրվում են փաստաթղթերի վերին աջ անկյունում, իսկ լուսանկարներինը, կերպարվեստի այլ տեսակի նյութերինը՝ դրանց շրջերեսի վերին ճախ անկյունում:

### 8. Գործերի նկարագրումը

Անձնական ծագման ֆոնդերի գործերի նկարագրման Համար վերահանվում են Հետեւյալ տվյալները՝ փաստաթղթի Հեղինակը կամ սեփականատերը, փաստաթղթերի տեսակները (ստեղծագործության ժանրը), վերնագիրը կամ Համատուր բովանդակությունը, տեքստի իսկությունը (բնօրինակ կամ պատճեն), լրիվ կամ թերի լինելը, լեզուն, վերարտադրման եղանակը (ձեռագիր, մեքենագիր, տպագիր), փաստաթղթի Հրատարակվածությունը, կից Հավելվածների սակայությունը, գործի մեջ ամփոփված թերթերի քանակը, իսկ առանձին դեպքերում՝ նաև փաստաթղթերի քանակը: Բացի այդ, առանձնակի կարևոր փաստաթղթերը կարող են նաև ծանոթագրվել:

Փաստաթղթերի բովանդակության նկարագրումը կատարվում է ՀՀ պետական լեզվով: Միաժամանակ անհրաժեշտ է փաստաթղթերի նկարագրումը կատարել արդի ուղղագրությամբ, պահպանել նկարագրման եղանակների (ճաճեւերի) միասնականությունը, խուսափել Հնարձ արտահայտություններից, արաֆորետային ձևակերպումներից:

Բառերը, որպես կանոն, դրվում են լրիվ, բացառությամբ Համընդհանուր ճանաչում ստացած Հապավումներից («թ.»՝ թվական, «ֆ.»՝ ֆոնդ, «ց.»՝ ցուցակ եւ այլն):

Գործի Հիմնական տարրերն են՝

- գործը կազմող փաստաթղթերի տեսակի նշումը,

- փաստաթղթի Հեղինակի (անձ, կազմակերպություն) կամ սեփականատիրոջ ազգանունը, անունը, Հայրանունը (կամ՝ անվան, Հայրանվան սկզբնատառերը),

- այն անձի ազգանունը եւ անվան ու Հայրանվան սկզբնատառերը կամ Հիմնարկի, կազմակերպության անունը, ում (որին) ուղղված է փաստաթուղթը,

- փաստաթղթի բովանդակության (Հարց, թեմա, ստեղծագործություն եւ այլն) շարագրումը:

Վերնագրի բաղադրատարրերի դասավորության Հաջորդականությունը կարող է փոփոխվել՝ կախված նկարագրվող փաստաթղթի(եր)ի (նյութի(եր)ի) բնույթից, տեսակից եւ այլն:

Այսպես, բովանդակության ընդհանրության Հատկանիշով միավորված տարատեսակ փաստաթղթերից բաղկացած գործի վերնագիրը ձևակերպելիս կարելի է վերնադրի սկզբում օգտագործել «փաստաթղթեր» բառը, ապա փակագծում թվարկել դրանց մի քանի կարևոր տարատեսակները, այնուհետև թույլ առ դրանց ընդհանրական Հարցը, բովանդակությունը:

Հեղինակի, խմբագրի կողմից փաստաթղթին տրված վերնագիրը, որպես կանոն, տեղափոխվում է որպես գործի վերնագիր: Այն դեպքում, երբ Հեղինակային վերնագրի տեքստը Հստակ չէ ու լրարժեքորեն չի արտացոլում գործի մեջ ամփոփված փաստաթղթի բովանդակությունը, այն պետք է լրացվի, ճշգրտվի ու Հստակեցվի:

Օրինակ՝

Ս.Աուրենյանին Մովսես Խորենացու անվան Հուշամեդալով պարգևատրման ներկայացնելու մասին:

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության Հարցերի նախարարի միջնորդագրությամբ ՀՀ վարչապետին՝ գրականագետ Ս.Աուրենյանին Մովսես Խորենացու անվան Հուշամեդալով պարգևատրման ներկայացնելու մասին:

Եթե փաստաթղթի Հեղինակը առանձին ֆիզիկական (ոչ պաշտոնատար) անձ է, ապա վերնագրում Հարկ է նշել նրա եւ թղթակցի ազգանունը եւ անունը, առանձին դեպքերում (ըստ անհրաժեշտի) նաև պաշտոնը:

Օրինակ՝

Հակոբ Բոչարյանի նամակները Համո Օհանջանյանի Պոլսի Հայ պատվիրակության գործունեության Հետ կապված խնդիրների մասին:

Պոլսի Հայ պատվիրակության քարտուղար Հակոբ Բոչարյանի նամակները Բեռլինի Հայոց ազգային պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանին՝ Հայկական Հարցի շուրջ ծավալված բանակցությունների եւ ձեռքբերված նախնական պայմանավորվածությունների մասին:

Մի քանի ազգանվամբ անձանց փաստաթղթի(եր)ի նկարագրման ժամանակ, որպես կանոն, տրվում է փաստաթղթի(եր)ի տակ եղած կամ տվյալ անձի Հիմնական ազգանունը: Իսկ եթե գործում ամփոփված են տվյալ անձի տարբեր ազգանուններով փաստաթղթեր, ապա նկարագրական տեքստում նշվում է վերջին ազգանունը: Իսկ դրա շարունակությունում, փակագծի մեջ տրվում է դրան նախորդողը: Օրինակ՝ Ղարիբյան (ծննդյամբ՝ Սարգսյան) Տիրատու Հի Վարչանի:

Կեղծանվամբ ստորագրված փաստաթղթերից կազմված գործի վերնագրում սկզբից նշվում է կեղծանունը, ապա դրանից անմիջապես Հետո փակագծերում՝ տվյալ անձի իսկական ազգանուն, անուն, Հայրանունը:

Օրինակ՝

Նար-Դոսի (Հովհաննիսյան Միքայել Ջաքարի) «Նեղ օրերից մեկը» պատմվածքի սեւագրերը:

Հավասու (Մարկոսյան Արամենակ Պարսամի) գուսանական երգերից պատասխինների Հավաքածու:

Օտարալեզու թերթերի, Հրատարակումների, կազմակերպությունների եւ այլնի անունները տրվում են Հայերեն տառագրվածությամբ, իսկ կողքը բնագրային լեզվով նշվում է դրանց անունը

Փաստաթղթի(եր)ում չնշված եւ նկարագրողի կողմից կատարված նպատակային ուսումնասիրության արդյունքում բացահայտված տվյալներն ու տեղեկությունները (թվագրում, թղթակից, Հացեատեր եւ այլն) վերնագրում ներառվում են քառակուսի փակագծերի մեջ:

Օրինակ՝

Միացյալ Հայաստանի պատվիրակության ներկայացուցչի [Միհրան Տամասյան] զեկուցագրերը Կիլիկիայի [1920]թ. սկզբներ] ներքաղաքական դրուժյան մասին:

Սույն կանոնը չի կիրառվում, երբ պահանջվող տվյալները չեն կազմված փաստաթղթում բացակայում են, սակայն ակնհայտ ու Հանրահայտ են (օրինակ, Հեղինակի պարագայով՝ Ակսել Բակունցի «Նամակ ուսուց թագավորին» պատմվածքի ձեւագրերը):

Դասախոսություններ, ելույթներ, զեկուցումներ եւ լրացող (ուղեկցող) նյութեր բովանդակող գործերի վերնագրերում նշվում է դրանց անունը (ելույթ, զեկուցում, եւ այլն), անցկացման վայրը (տեղը), եթե դա որոշակիորեն Հայտնի է: Եթե ելույթի, զեկուցման անունը բացակայում է, ապա բացահայտվում է դրանց բովանդակությունը:

Օրինակ՝

Հուշեր՝ ՀՀ արխիվային գործի մեծ երախտավոր, պատմական գիտությունների գոհտոր Աշոտ Հարությունյանի մասին, պատմագիտության գոհտոր Կլիմենտ Հարությունյանի ելույթը Ա.Հարությունյանի ծննդյան 90-ամյակին նվիրված Հայ արխիվագետների Հավաք - Հանդիսությունում:

Հուշագրությունների, օրագրերի, նոթերի վերնագրերը կազմվում են, նշելով դրանց ժանրը (տեսակը), բովանդակության Համառոտ ծանոթագրություններ եւ ժամանակագրական շրջանակները (ընդգրկված ժամանակաշրջանը):

Եթե Հուշագրություններն ունենում են Հեղինակային վերնագիր, ապա դրանց նկարագրումը կատարվում է նույն կանոններով, ինչ ընդունված է գեղարվեստական ստեղծագործությունների Համար:

Գրառուժների ծոցատեղերի նկարագրման ժամանակ կազմվող վերնագրում փաստաթղթի տեսակը մատնանշելուց զատ պետք է գետեղվեն տեղեկություններ դրանց բովանդակություն վերաբերյալ (ինչի՞ մասին է):

Օրինակ՝ Արշակ՝ Վարդանյանի ծոցատեղերը՝ Կարսի նահանգում շրջագալության բնթացքում իր տպավորությունների մասին գրառուժներով:

Աշխատանքային նյութեր (քաղվածքներ, նշումներ եւ այլն) նկարագրելիս նշվում է այն աշխատանքը կամ թեման, որին վերաբերում են այդ նյութերը, եւ թվարկվում են հավաքված փաստաթղթերի տեսակները:

Օրինակ՝ Ն.Ման՝ Հնագիտական պեղումներ Զվարթնոցում. գրառուժներ, քաղվածքներ, լուսանկարներ:

Փոնդառաջացնողի հետ կամ նրա մասին անցկացված հարցազրույցներ բովանդակող գործերի վերնագրերում անհրաժեշտ է նշել, թե ում հետ եւ ով է անցկացրել հարցազրույցը ու ինչ հարցերի շուրջ է ծավալվել զրուցակցուժը:

Օրինակ՝ Լրագրող Ռ.Բարսեղյանի հարցազրույցը ՀՀ արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանի հետ՝ Արցախյան հիմնախնդրի լուծումների գերխնդրում օտարերկրյա դիվանագետների մոտեցումների մասին:

Գրագրություն, նամակներ, հեռագրեր նկարագրելիս պարտադիր նշվում են փաստաթղթի տեսակը, թղթակիցների ու հասցեատերերի ազգանունները եւ նրանց անուն հայրանունների սկզբնատառերը: Նամակների նկարագրման համար կիրառելի է նաեւ վերնագրի տարրերի այսպիսի հաջորդականություն՝ նշվում է նախ՝ փաստաթղթի տեսակը (եթե դա փոնդառաջացնողին է) կամ թղթակցի ազգանունը, (սեռական հոլովով) անվան, Հայրանվան սկզբնատառերը (եթե թղթակցը մեկ ուրիշ անձ է), ապա՝ հասցեատիրոջ ազգանունը (տրական հոլովով), անվան ու Հայրանվան սկզբնատառերը:

Այն դեպքում, երբ գրագրության թղթակիցը փոնդառաջացնողն է, ապա ցույց է տրվում միայն նրա ազգանունը եւ անվան ու Հայրանվան սկզբնատառերը, իսկ եթե մեկ ուրիշն է, ապա պետք է նշվի նաեւ վերջինիս գրադեցրած պաշտոնը, մասնագիտությունը (քաղմուտը) եւ մատնանշվի գրագրություն վարելու պահին նրա ունեցած ծառայական դիրքի մասին:

Օրինակ՝ 1.Սերո Խանգաղյանի ցավակցական հեռագրերը Բաղդասար Գրիգորյանին, Վարդուհի Սարաֆյան-Գրիգորյանին եւ Կարեն ու Լեւոն Գրիգորյաններին՝ որդու, ամուսնու, Հոր՝ Աշոտ Գրաշու մահվան կապակցությամբ.

2.Համո Սահյանի նամակը Վահագն Գալթյանին՝ Ռազմիկ Գալթյանի նոր գրքույկի հրատարակման առնչությամբ իր նկատառումների մասին.

3.Նամակներ, հեռագրեր, բացիկներ Ա.Ն.Խանգաղյանին՝ ամանորի շնորհավորանքներով ու բարեմաղթություններով:

Անստորագիր կամ չվերծանվող ստորագրություններով (միայն անվան, ազգանվան սկզբնատառերով եւ այլն) նամակներից (որոնց հեղինակները թղթակիցները) պարզված չեն ու պարզել հնարավոր չէ), կազմված գործերի նկարագրման ժամանակ վերոհիշյալ նախանշանները (սկզբնատառեր, կեղծանուն եւ այլն) արտացոլվում են վերնագրում: Այն դեպքում, երբ վերծանված է միայն թղթակցի ազգանվան (ըստ ստորագրության) մի մասը՝ որոշակի տառերը, ապա վերնագրում նշվում են դրանք եւ դրվում է բազմակետ: Ցանկալի է, որ նման նամակները ծանոթագրվեն:

Հեղինակների խմբի նամակներից կազմված գործերը նկարագրելիս անհրաժեշտ է վերնագրում նշել առավել հանրաճանաչ (նշանավոր) մի քանի անձանց եւ (կամ) ստորագրող թղթակիցների ազգանունները: Այդպիսի նամակների հեղինակներին կարելի է մատնանշել նաեւ որեւէ հատկանիշով նրանց միավորող ընդհանրական անվամբ (օրինակ՝ լրագրողներ, գյուղացիներ, բանվորներ եւ այլն):

Օրինակ՝ 1. Ա.Արշակյանի, Մ.Շահգեղյանի, Ա.Սաղոյանի, Մ.Գասպարյանի բաց նամակը ՀՀ նախագահին՝ Հանրապետու-

թյան բուժհիմնարկների օպտիմալացման գործում թույլ տրված բացթողումների, շտապօգնականության մասին:

2.ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորների նամակը ՀՀ նախագահին՝ արցախյան հարցում իրենց դիրքորոշման մասին:

3.ՀՀ նախարարների զեկույց-նամակը ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանին՝ մարզեր կառավարած իրենց այցերի եւ բնակիչների հետ ունեցած հանդիպումների արդյունքների մասին:

Ընծայագրերով գրքեր եւ այլ նյութեր նկարագրելիս վերնագրում նշվում է ընծայագրի Հեղինակը, ում է հասցեագրված եւ որ փաստաթղթի վրա է արված ընծայագրառումը:

Օրինակ՝ Երեւանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի վարակալին հիվանդությունների ամբիոնի վարիչ Լ.Մխիթարյանի ընծայագրեր ամբիոնի ասպիրանտ Վ.Սարգսյանին՝ իր «Վարակալին հիվանդություններ» գրքույկի տիպոգրաֆերի վրա:

Անձնական (կենսագրական) բնույթի եւ ծառայական ու հասարակական գործունեությանը վերաբերող փաստաթղթերից ձեւավորված գործերի վերնագրերում նշվում են փաստաթղթերի տեսակները, կազմակերպությունների անունները, անձանց անվան ու հայրանվան սկզբնատառերը (կամ անունները, հայրանունները) եւ ազգանունները, ինչպես նաեւ այն անձանց ազգանունները, որոնց տրված կամ հասցեագրված են փաստաթղթերը: Վերնագրում համառոտակի տրվում է նաեւ փաստաթղթերի բովանդակությունը:

Օրինակ՝ 1. Տեխնիկական գիտությունների դոկտոր, գիտություն վաստակավոր գործիչ Ս.Մ.Սերոբյանի պլամանագրերը «Հայաստան» հրատարակչության հետ՝ իր գիտական աշխատությունների երկհատորյակի տպագրություն իրականացնելու մասին:

2.Արխիվային գործի վարչության պետ Հ.Ֆեղեքյանի՝ Արխիվների միջազգային խորհրդի աշխատանքներին մասնակցության հրավիրատմանը, գործուղման ու Հյուրընկալության փաստաթղթերը (ուղեւորության տոմսեր, Հյուրանոցային վարձավճարների կտրոններ, ձեռք բերված գրականության համար վճարումների հաշիվներ եւ այլն):

Պաշտոնական գրությունների, շրջաբերական նամակների նկարագրման դեպքում դրանք ստորագրող պաշտոնատար ու Հանրածանոթ (նշանավոր) անձանց ստորագրությունները վերնագրում ծանոթագրվում են:

Օրինակ՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար Հ.Արթուրյանի շրջաբերական նամակները՝ ՀՀ մարզերում արխիվային գործի կազմակերպումը բարելավելու մասին:

2.«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Վիրաբյանի շրջաբերական նամակը ՀԱԱԿ-ի մարզային մասնաճյուղերի վարիչներին՝ իրականացված ձեռնարկատիրական գործունեության եւ արդյունքում գոյացած գումարների չափերի մասին ամենամսյա հաշվետվությունների ներկայացնելու մասին:

Պաշտոնական հաշվետվությունների, զեկուցումների, այլ նախագծերի հեղինակային վերնագրերը համապատասխան գործի վերնագրի տեքստում վերադասագրվում են չափերանցի մեջ:

Օրինակ՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 20.02.2004թ. որոշումը «ՀՀ արխիվային գործի ոլորտի 2003 թվականի գործունեության արդյունքների եւ 2004 թվականի հիմնական խնդիրների» մասին:

Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերից ու նյութերից կազմված գործերի վերնագրերում նշվում են ամփոփված փաստաթղթ(եր)ի տեսակները, ունեցվածքի, գույքի (սեփականության) անունը եւ նրա սեփականատերն ու գտնվելու վայրը (տեղը): Այս շարքի իրավաբանական եւ տնտեսական բնույթի փաստաթղթերը նկարագրելիս, վերոհիշյալ տեղեկություններից գատ տրվում է նաեւ գործարքին մասնակցած կազմակերպության (Հիմնարկի) անունը եւ փաստաթղթերի բովանդակությունը:

Օրինակ՝ Նախիջևանի գավառի Յղնա գյուղի Սամսոն Տեր-Ղազարյանի պատկանող Հայրենակալվածքային Հողատիրութեան գրասենյակի եկամուտների եւ ծախսերի մատյաններ:

Լուսանկարները նկարագրելիս նշվում է դրանցում պատկերված անձանց (անձի) անունները, Հայրանունները (կամ՝ դրանց սկզբնատուները) եւ ազգանունները, ապա՝ նկարագրվող փաստաթղթի (լուսանկարի) տեսակը (տարատեսակը)՝ գիմանկար, խմբանկար եւ այլն:

Եթե ֆոնդառաջացնողը լուսանկարված է այլ անձանց խմբի հետ, տրվում է Համառոտ ծանոթագրություն.

Ա.Հակոբջանյան՝ տե՛ս 2-րդ շարքի կենտրոնում, վերեւից՝ առաջին շարքում ակադեմիկոս Ծ.Աղայան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Պարսամյան

2-րդ շարքում աջից՝ Վահրամ Փափազյան, ձախից՝ Վարդուհի Վարդերեսյան:

Եթե խմբային լուսանկարում պատկերված է ֆոնդառաջացնողը Հարգատների շրջանում, ապա վերջինների անուններից Հետո մակագծերում նշվում է ֆոնդատաջացնողի Հետ նրանց ազգակցական կապը (Հայրը, մայրը, որդին, կինը, աղջիկը, թոռը եւ այլն):

Փոնդատաջացնողին ծանոթների շրջապատում պատկերող նկարագրման ժամանակ, եթե այդ անձինք գիտություն, մշակույթի եւ այլ բնագավառների անվանի գործիչներ չեն, վերնագրում կարելի է նշել դրանցից լուի մի քանիսի ազգանունները եւ անվան ու Հայրանվան սկզբնատուները, մնացածներին չմասնանշելով վերնագրի տեքստում: Կարելի է նաեւ վերնագրում այդ անձանց հիշատակել ընդհանրացված հասկացությամբ:

Օրինակ՝ ՀևնՍՃ ժողովրդական դերասանուհի Վ.Վարդերեսյանը Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի 1986-87թ. ուս.տարվա շրջանավարտների Հետ Հանդիպման ժամանակ:

Բնակավայրեր, բնապատկերներ եւ այլն ներկայացնող լուսանկարների նկարագրական տեքստում (վերնագրում) նշվում է, թե ինչ բնակավայրեր, տեսարաններ են պատկերված նկարագրվող լուսանկարում:

Օրինակ՝ 1. Տեսարան ք.Երևանի «Կոնդ» թաղամասի բնակելի Հատվածից:  
2.Երևանի օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքի արտաքին տեսքը՝ Սայաթ-Նովա փողոցի կողմից:  
3.Բնապատկերներ Նորավանքի մերձակա տարածքից:

Ոչ ամբողջականորեն պահպանված փաստաթղթերը նկարագրելիս նշվում է դրանց լրիվություն աստիճանը (հատված, անջատ-անջատ (պակասավոր) թերթեր, ոչ լրիվ տեքստ, անկիղբ, առանց վերջի, բացակայում են... թերթերը եւ այլն): Որպես կանոն լրիվ տեքստը չի ծանոթագրվում:

Փաստաթղթի վերարտադրման եղանակը կամ գրելաձևը նկարագրական տեքստում տրվում է այն բոլոր դեպքերում, երբ այն որոշակի նշանակություն ունի փաստաթղթի բնութագրման համար: Իսկ փաստաթղթի լեզուն նշվում է, եթե այն գրված է ոչ այն լեզվով, որով կատարվում է նկարագրումը, այսինքն՝ փաստաթուղթը գրված է մեկ, իսկ դրա նկարագրումը՝ այլ լեզվով:

Փաստաթղթի ստեղծման վայրը նշվում է միայն այն դեպքում, երբ նկարագրվում են նշանավոր, հանրաճանաչ գործիչների նյութերը, պայմանով, եթե փաստաթղթում դա ամբողջված է:

Նկարագրման ժամանակ խորհուրդ է տրվում է մատնանշել գործի կազմում ընդգրկված փաստաթղթերի արտաքին այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են, օրինակ, շապիկի (կազմի) հատուկ նյութից պատրաստված լինելը, գարգերի, յուրահատուկ կնիքների առկայությունը, գրելանյութի առանձնահատկությունը, ձևագրա(ապա)տառը եւ այլն:

Փաստաթղթերի Հրապարակման մասին տեղեկությունները պետք է տրվեն առավել կատարյալ ժողովածուների վերաբերյալ եւ, ըստ Հնարավորին, նշել դրանց առաջին անգամ Հրապարակվելու թվագրումն ու աղբյուրը (Հանդես, ժողովածու, աշխատություն եւ այլն):

Օրինակ՝ 1. Ա.Այունի «Հայկական գործարար-թուրքական պատերազմում», Սոֆիա, 1927թ.  
2.«Աստուծոմ ֆիդայիների մարտական գործողությունների նկարագրումը» - Հրապարակ. ա) «Իրոշակ» (Ժնեւ), 1904թ., Հոկտեմբեր, N 10, բ) «Անդրանիկ Օղանյան. Փաստաթղթեր եւ նյութեր», ժողովածու, 1991թ., թթ. 61-70:

Գործի ծայրային տարեթվերն են.

- մեկ փաստաթղթից կազմված գործի համար՝ Հենց այդ փաստաթղթի թվագրումը,

- շատ թվով փաստաթղթերից կազմված գործի համար՝ ամենից վաղ ու ամենից ուշ ստեղծված փաստաթղթերի թվագրումները:

Եթե փաստաթղթի վրա թվագրումը բացակայում է, ապա այն պարզվում է բովանդակության, ձևագրի, գրելանյութի (թուղթ, մագաղաթ եւ այլն), առկա տեղեկատվության եւ այլնի հիման վրա: Փաստաթուղթը նկարագրողի կողմից սահմանված թվագրումը առնվում է քառակուսի փակագծերի մեջ, իսկ եթե այն սահմանվել է մոտավոր կամ որոշակի աստիճանի հավանականությամբ, ապա փակագծերի ներսում, տարեթվի կողքին գրվում է Հարցական նշան ([1904թ. ?]), կամ՝ [19-րդ դարի սկիզբ (1826 թվականից ոչ ուշ)] եւ այլն:

Փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման Հերթական փուլում կատարվում է գործերի կազմում ներառված փաստաթղթերի թերթերի համարակազմում եւ կազմերի ձևավորում: Գործի կազմի (շապիկի) վրա նշվում են թերթերի (առանձին դեպքերում՝ նաեւ փաստաթղթերի) քանակը, փաստաթղթերի պահպանվածությունը Հետ կապված թերությունները:

Գործի կազմի (շապիկի) վերեւի ձախ (շուտայ) եւ ներքեւի աջ անկյուններում գրվում է գրոշմակնիք՝ արխիվապահոցի անվան (Համարի), ֆոնդի, ցուցակի, գործի համարների նշումով: Փոնդի անունը, որպես կանոն, գրվում է յուրաքանչյուր գործի վերեւի հատվածում:

Գործերի ցուցակը կազմվում է գիտատեխնիկական մշակման ենթարկված ամեն մի ֆոնդի համար՝ սահմանված ձևաթղթի վրա: Փոնդի բոլոր փաստաթղթերն ու նյութերը մշակումից Հետո ներառվում են մեկ ցուցակում: Սակայն եթե ֆոնդի գործերի քանակը նկատելիորեն մեծ է եւ Հասնում է վեցանիշ թվի, ապա ցուցակները կարելի է կազմել ըստ բաժինների, որոշակի տարիների, գործունեության առանձին ուղղությունների եւ այլն:

Ցուցակը կազմված է նկարագրական Հոգվածներից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է Հետեւյալ բաղադրատարրերը. գործի Հերթական համարը, վերնագիրը, ծայրային տարեթվերը, թերթերի քանակը, «Ծանոթություն» սյունակը՝ Հավելվածների առկայությունը, գործերի տեղաշարժի (գուրս գրում, մեկ այլ իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձի Հանձնում եւ այլն) մասին նշումների համար:

Ցուցակում գետեղված վերջին նկարագրական Հոգվածից Հետո, նոր տողից գրվում է ցուցակի ամփոփագիրը, որտեղ թվերով ու տառերով (փակագծերի մեջ) ցույց է տրվում ներառված գործերի ընդհանուր քանակը:

Այնուհետեւ նշվում է ցուցակի կազմման թվագրումը, կազմողի պաշտոնը, ազգանունը եւ անվան սկզբնատուը: Ցուցակից գործեր գուրս գրելիս եւ (կամ) նորերն ավելացնելիս կազմվում է նոր ամփոփագիր, իսկ Հնի վրա քաշվում են խաչվող գծեր:



Ցուցակը պետք է հազեցված լինի նախարանով, տիտղոսաթերթով, գլխահանով, ցուցիչներով եւ տեղեկատու-որոնողական անհրաժեշտ այլ միջոցներով:

Նույն ֆոնդի համար մի քանի ցուցակ կազմվելու դեպքում առաջարանը կցվում է առաջին ցուցակին, իսկ մյուս ցուցակներին կարելի է կցել համառոտ տեղեկանքներ՝ դրանցում ամփոփված գործերի կազմի ու համակարգման վերաբերյալ տեղեկություններով:

Մայլաուն եւ բարդ ցուցակներից օգտվելը գյուրին ու արագ դարձնելու համար նպատակահարմար է կազմել ամփոփված փաստաթղթերում տեղ գտած անունների (անվանական), աշխարհագրական, առարկայական, կազմակերպութունների եւ այլ ցուցիչներ, որոնցում հղում է արվում ցուցակում ընդգրկված գործերի հերթական համարների վրա:

Եթե ցուցակի կազմումից հետո ֆոնդը համալրվում է փաստաթղթերի ու նյութերի նոր լրակազմերով, ապա այդ մուտքագրումները՝ կախված դրանց բնույթից եւ հատկապես ծավալներից, ֆոնդում կարող են գետեղվել՝

- ա) դրանց տարանջով համարների ամրագրմամբ ցուցակում մտցնելու,
- բ) ունեցած ցուցակի վերջում դրանք ավելացնելու,
- գ) դրանց համար առանձին (ինքնուրույն) ցուցակ կազմելու,
- դ) ամբողջ ֆոնդի միավորները մեկտեղելու համար նոր միասնական ցուցակ կազմելու միջոցով:

Առավել կարեւոր եւ առանձնապես արժեքավոր գործերի համար կարելի է կազմել ներքին ցուցակ, որտեղ մտցվում են տվյալ գործի բոլոր փաստաթղթերը՝ գործի մեջ դրանց համակարգման հաջորդականութւյանը համապատասխան: Ցուցակում համապատասխան նկարագրական հոդվածի դիմաց, «ժանտութւյուն» սյունակում, նշվում է ներքին ցուցակի առկայութւյան մասին: Ներքին ցուցակի մեկ օրինակը գետեղվում է տվյալ գործի սկզբում, իսկ մյուս օրինակը կցվում է ֆոնդի ցուցակին՝ ցուցիչներից առաջ կամ համապատասխան գործի նկարագրումից անմիջապես հետո:

9. Արվեստի գործիչների (նկարիչներ, ճարտարապետներ, երգահաններ, կինոռեժիսորներ եւ այլն) ստեղծագործական նյութերի մշակման առանձնահատկութւյունները

9.1. Նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների ֆոնդերին բնորոշ են նկարները (կտավներ, քանդակների ֆոտոպատճենները, վերարտադրութւյունները՝ ամսագրերում, թերթերում) եւ դժագրերը, որոնց նկարագրումն ու համակարգումը ուրույն մտեցում է պահանջում է:

Նկարիչների եւ քանդակագործների ֆոնդերում առաջին՝ «Ստեղծագործական նյութեր» բաժնում տեղ են գրավում ֆոնդառաջացնողի ստեղծագործութւյունները՝ նկարներ, էսյուզներ, ձեւանկարներ: Որպես արդեն ընդունված կարգ, ձեւագրերը (ուսումնասիրութւյուններ, հոդվածներ, գրախոսութւյուններ, հուշեր, օրագրեր) ընդգրկվում են 2-րդ՝ «Փոնդառաջացնողի ձեւագրեր» բաժնում:

Առաջին բաժնում գործերը համակարգվում են ըստ ժանրերի, կատարման տեխնիկայի, ժամանակագրութւյան նաեւ այրբենական կարգով, եթե թվագրում չկա, սակայն կան Հեղինակային անվանումներ:

Մաղրանկարները, պատատները, կատականկարները կարելի է բաժանել ըստ թեմատիկայի, իսկ ծաղրանկարչի ֆոնդում դրանք բաժանվում են ըստ այն թերթերի ու ամսագրերի, որոնց համար արված են:

Փոնդառաջացնողի կողմից հալածած նկարների եւ վերարտադրութւյունների բնագրեր ընդգրկող գործերը համակարգվում են ըստ Հեղինակների ազգանունների հերթականութւյան, ժամանակագրական կարգով կամ այլ սկզբունքներով, ելնելով նյութի քանակից:

-Տուշով, թանաքով, ջրաներկով արված նկարները, ինչպես նաեւ փորագրանկարները գործերում չպետք է անցնեն 25 թերթից: Նշանավոր նկարչի յուրաքանչյուր ստեղծագործութւյուն (գուռչ, գունամատիտ, ածուխ) առանձին գործ է:

-Նկարների կոմպոզիցիաների էսքիզները, դրանց էսյուզները եւ ուրվանկարները միավորվում են մեկ գործի մեջ (ոչ ավելի 10 թերթից): Դիմանկարները՝ բնանկարները, նատյուրմորտները գործ են գանուում ըստ

ժանրերի, իսկ ներսում համակարգվում՝ ըստ կատարման տեխնիկայի (ոչ ավելի 10 թերթից):

-Ինկորացիաների, զգեստների, դիմահարգարանքի էսքիզներից գործ է ձեւավորվում ըստ ներկայացումների եւ ֆիլմերի, իսկ դրանց մեծ ծավալի դեպքում՝ ըստ տեսակների (զգեստների, դիմահարգարանքի, զեկորացիաների էսքիզների):

Նկարագրագրումներից գործ է ձեւավորվում ըստ այն գրական ստեղծագործութւյունների, որոնց համար դրանք արված են:

-Պատասաններից գործեր են ստեղծվում ըստ թեմատիկայի, տեքստերի, Հեղինակների եւ չափսի:

-Յուրաքանչյուր այլում կազմում է մեկ առանձին գործ:  
-Վերարտադրութւյունից գործեր են ստեղծվում Հեղինակային, թեմատիկ կամ ժամանակագրական սկզբունքներով:

- Կերպարվեստի ստեղծագործութւյուններ ընդգրկող գործի վերնագրում նշվում են Հեղինակը, ստեղծագործութւյան անվանումը, ժանրը, ավարտված կամ անավարտ լինելը, չափը (եզակի ստեղծագործութւյունների համար), այն դեմքը, որից կատարված է ուրվանկարը կամ էսյուզը, Հեղինակի ստորագրութւյունը եւ նշումները, կատարման տեխնիկան, տարեթիվը (եթե հնարավոր է):

Հեղինակը նշելիս պետք է նշվի ոչ միայն ազգանունը, այլև անվան ու Հայրանվան սկզբնատառերը, եթե Հեղինակը հայտնի չէ, կատարվում է «անհայտ նկարիչ» նշումը, հնարավորութւյան դեպքում նշվում է տարեթիվը, ինչպես նաեւ գեղանկարչական այն պարոցը, որին կարող էր հարել նա:

Օրինակ՝ 1. Հ.Հաղարյան՝ «Մադրիկներ եւ դոզնոց»

2.Ա.Կազեմիական պարոցի անհայտ նկարիչ՝ «Վարդեր»:

Փորագրութւյուն նկարագրելիս նշվում է փորագրողի ազգանունը, անվան ու Հայրանվան սկզբնատառերը, ստեղծագործութւյան անունը եւ կատարման տեխնիկան:

- Օրինակ՝ 1. Ա.Մամջանյան՝ «Աղջկա դիմանկար». քերուս մոմապատ թղթի վրա
- 2.Ա.Մամջանյան՝ «Հոփսիսիեի տաճարը». գունավոր օֆորտ
- 3.Ա.Մամջանյան՝ «Բակ Աշտարակում»՝ փորագրութւյուն ցելյուլօիդի վրա:

Եթե գործը կազմված է նկարի կամ քանդակի ուրվանկարներից, նկարների շարքից, ապա վերնագրում ցույց է տրվում Հեղինակը, շարքի, նկարի, քանդակի անվանումը: Եզակի ստեղծագործութւյունների համար թվարկվում են բոլոր նկարներն ու ուրվանկարները կամ կազմվում է ներքին ցուցակ:

- Օրինակ՝ 1.Վ.Էլիբեկյան՝ «Սայաթ-Նուվա» նկարաշարի ձեւանկարներ, 1977-1987
- 2.Կ.Սմբատյան՝ «Արքայապատում», «Երվանդունիները գահաժողովում» նկարաշարի ձեւանկարներ, 1996

Եթե գործն ընդգրկում է ներկայացման դեկորացիաների, զգեստների, դիմահարգարանքի էսքիզներ, ապա վերնագրում նշվում է նկարիչը, ռեժիսորը, ներկայացման եւ էսքիզների անվանումները:

- Օրինակ՝ 1. Գ.Ասատրյան
- Տ.Բիտյուցկայա-Էլիբեկյանի «Մեղագրական եզրակացութւյուն»՝ հեռուստաներկայացման դեկորացիաների էսքիզներ
- 2.Գ.Ասատրյան
- Հ.Աշուղյանի «Աշնան արեւ»՝ ներկայացման գլուղական բակի եւ գործող անձանց զգեստների էսքիզներ
- 3.Հ.Ալավերդյան

Պարի համույթի մենակատարի զգեստի էսքիզ

Յիւմի համար արված զգեստների, դեկորացիաների, դիմահարգարանքի էսքիզները նկարագրելիս նշվում է նկարիչը, ֆիլմի անվանումը, ռեժիսորը եւ փաստաթղթի տեսակը:

Օրինակ՝ 1. Լ. Գեւորգյան

Ա.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմի դեկորացիաների, դիմաճարգարանքի եւ գգեստների էւքիզներ

Նկարազարդումների նկարազրման ժամանակ նշվում է նկարիչը, ստեղծագործութան հեղինակը, ժանրը, անվանումը:

Օրինակ՝ 1.Ֆ.Ա.Ֆրիլյան

Մ.Հակոբյանի «Բարսիող սրտեր» վավերագրական ակնարկների նկարազարդումները

2.Վ.Ա.Բրաճամյան

«Փրանսիական ժողովրդական հիբիաթներ» գրքի նկարազարդումներ

3.Ա.Մամաջանյան

«Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումներից

Շարժեր եւ ծաղրանկարներ ընդգրկող գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, ստեղծագործութան անվանումը, ժանրը եւ մատանշվում այն թերթերը կամ ամսագրերը, որոնց համար դրանք արվել են:

Օրինակ՝ 1.Գ.Բալայան

«Գինեմոլը», ծաղրանկար «Ողնի» երգիծաթերթի համար.

եթե ծաղրանկար(ներ)ը անուն չունի(են) ուղղակի նշվում է՝ ծաղրանկար(ներ).

Օրինակ՝ 1.Ֆ.Գարբինյան

Ծաղրանկարներ «Ողնի» երգիծաթերթի համար

Պատաստներից եւ տախտանկարներից (սցենար) ձեւավորված գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, ստեղծագործութան անվանումը, տեքստը, հեղինակը.

Օրինակ՝ Ա.Մամաջանյան

Կապիկը Գերեյի դիմանկարի մոտ

Տեքստը՝ Ն.Առլայանի

Գեղարվեստական գրքապիտակներից (էքսլիբրիս) ձեւավորված գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, գրադարանի տիրոջ ազգանունը եւ առանձին գեպրերում՝ նկարի բովանդակությունը: Մեծ թվով էքսլիբրիսների առկայությունը գեպրում կարելի է կազմել ներքին ցուցակ.

Օրինակ՝ 1. Ա.Մամաջանյան

Պրոֆեսոր Խ.Հ.Բարսեղյանի գրքապիտակը: Ձանգը հնչեցնող կին:

2.Ա.Մամաջանյան

Գ.Գալստյանի գրքապիտակը: Զուլդ սիրամարգեր եւ գիրք:

Այլոմների եւ համացանկերի նկարազրման ժամանակ նշվում է հեղինակը, անվանումը (եթե ունի) կամ թեմատիկան (եթե անվանում չունի): Ներքին ցուցակներ կազմվում են միայն դասականների եւ նշանավոր նկարիչների այլոմների ու համացանկերի համար:

Օրինակ՝ 4.Միքայելյան

«ՄՆեր Արեղյան» գեղանկարչական կտավների այլոմ:

Եթե ֆոնդաուշացնողի ստեղծագործությունները ոչ թե անհատական, այլ մի քանի նկարիչներ ներկայացնող այլոմում կամ համացանկում են ամփոփված, ապա տրվում է հղում՝ «տե՛ս էջ...», նախապես նշելով վերնագիրը:

Օրինակ՝ Բ.Զուրաբով

«Հայաստանի պետական պատկերասրահ» այլոմ.

Մ.Արեղյանի «Դաշտային ծաղիկներ»-ը տե՛ս էջ 31:

Ճարտարապետական նախագծերի նկարազրման ժամանակ օրյեկտը նշելուց հետո, ցույց է տրվում դրա գտնվելու վայրը (ինչպես փաստաթղթում է նշված) եւ թվարկվում գործի մեջ ընդգրկված գծագրերը կամ կազմվում է ներքին ցուցակ.

Օրինակ՝ 1. Հ.Ջիվանյան

Մեծ Հայրենականում զոհվածների հուշարձան Ազատան գյուղում: Մուտքի եւ ծածկի գրվագներ, ներքին տեսքը:

2.Աս.Բյուրբյան

Կամերային երաժշտության տունը Իսահակյան փողոցի վրա: Ճեմասարհի նախագիծը:

Կերպարվեստի ստեղծագործությունների եւ գծագրերի նկարազրման ժամանակ ցույց է արվում նյութը (թուղթ, սովորաբար թուղթ եւ այլն), կատարման տեխնիկան (տուչ, ջրաներկ, գուաշ եւ այլն), գործիքը (ասեղ, մատիտ, վրձին եւ այլն): Այս տարրերը վերնագրում նշվում են կրճատ կամ լրիվ ձեւով:

Օրինակ՝ 1. Կ.Ամբասյան

Ազատամարտիկի դիմանկար: Ստ. տուչ, ծայր.

2.Կ.Ամբասյան

Առագաստանավեր: Թ.գրիչ

3.Տեսարաններ Մարտիրոս եւ Հովհաննիսյանը գյուղերից, ջրաներկ, տուչ, 1970.:

Նկարները երբեմն արվում են երկու երեսից, այս դեպքում հիմնական նկարից հետո նշվում է նաև մյուս՝ Հակառակ երեսի նկարը: Եթե գործն ընդգրկում է նման բնույթի շատ թերթեր, հակառակ երեսները նկարազրվում են ներքին ցուցակում:

Օրինակ՝ 4.Ամբասյան

Տեսարան ծովից, Հակառակ երեսին՝ նավաստիները նավի տախտակամածին:

Ֆոնդաուշացնողի ստեղծագործությունների վերարտադրությունները նկարազրվում են բնագրի նման.

Օրինակ՝ 1. Վ.Էլիբեկյան

«Ձմեռը թեյարանի մուտքի մոտ» նկարի գունավոր ֆոտոպատճեն

2.Կ.Ամբասյան

Խժժակ Գյուլյանգարյանի դիմանկարը

Ֆոտոպատճեն:

Վերարտադրությունների մեծ թվի դեպքում նույնպես կատարվում է գործի ձեւավորումը ըստ ժանրերի (նատյուրմորտ, դիմանկար, բնանկար), կազմվում է ներքին ցուցակ:

9.2. Երգահանների (կոմպոզիտորների) անձնական ծագման արևմտալիան ֆոնդերում փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումն ու համակարգումը կատարվում է էլնելով դրանց առանձնահատկություններից:

Ֆոնդում առաջնայինը «Նոտաների ձեւագրեր» կամ «Ստեղծագործական նյութեր» բաժինն է, որն ընդգրկում է ֆոնդաուշացնողի երաժշտական ստեղծագործությունները, նոտաների գրառումների տեսքերը, ստեղծագործությունների ցանկերը, հրատարակված ստեղծագործությունների համացանկերը: Այս բաժնում պահպանման միավորները համակարգվում են հետևյալ հերթականությամբ (եթե դրանք շատ են եւ տարբեր ժանրերի).

-Բեմական ստեղծագործություններ՝ օպերաների, բալետների, ներկայացումների, նաև կինոնկարների համար գրված երաժշտություն:

-Գործիքային ստեղծագործություններ՝ սիմֆոնիկ կամ այլ նվագախմբերի համար, նվագախմբի հետ գործիքային մենսոլագի կոնցերտներ, կամերային-գործիքային անսամբլներ (տրիո, կվարտետներ եւ այլն), առանձին գործիքների համար գրված ստեղծագործություններ (դաշնամուրի, ջութակի եւ այլն):

-Վոկալ ստեղծագործություններ՝ կանտատներ, օրատորիաներ, երգչախմբեր, վոկալ համույթներ, ուոմաններ (ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ):

-Ժողովրդական երգերի մշակումներ եւ այլ հեղինակների ստեղծագործություններ:

-Այլ երգահանների կողմից տվյալ հեղինակի երաժշտական ստեղծագործության մշակում (սիմֆոնիկ ստեղծագործության հարմարեցում դաշնամուրին, գործիքավորում եւ այլն), ստեղծագործությունների ցանկեր եւ հրատարակված ստեղծագործությունների համացանկեր:

Ենթարաբաժինների հերթականությունը կարելի է փոփոխել հաշվի առնելով այն հանգամանքը, թե որ ժանրն է բնորոշ տվյալ երգահանին (կոմպոզիտորին):

Յուրաքանչյուր ենթարածնում նյութերը, մեծ քանակության դեպքում, կարելի է Համալսարանի բնական գիտությունների (սիմֆոնիաներ, սյուիտաներ, ուվերտյուրաներ), դրանք էլ իրենց Հերթին բնական համալսարանում, իսկ եթե ստեղծագործության նոտաները թվագրված չեն, նպատակահարմար է վերնագրերը Համալսարանի ալբանական կարգով:

Հեղինակային ձեռագիրը իր բոլոր տարբերակներով, խմբավորումներով եւ սեւագրություններով միավորվում է մեկ գործի մեջ: Մեծ ծավալի դեպքում այն կարելի է բաժանել մասերի՝ բնական փուլերի կամ բնական ձեռագրի տեսակների (մեքենագիր, սեւագիր, պարտիտուրա, առաջին տարբերակ, երկրորդ տարբերակ եւ այլն):

Հեղինակի կողմից մեկ Համարի (Օպուս) տակ միավորված ոչ մեծ ստեղծագործությունները կազմում են մեկ գործի: Նշանավոր երգահանի (կոմպոզիտորի) յուրաքանչյուր ոչ մեծ ստեղծագործություն, որը որոշակի օպուսի մեջ չի մտել, կազմում է առանձին գործ:

Ավելի քիչ Հայտնի երգահանի (կոմպոզիտորի) ոչ մեծ ծավալի ստեղծագործությունները, որոնք օպուսի որոշակի Համար չունեն, միավորվում են մեկ գործի մեջ՝ բնական:

Նոտաների ձեռագրերի նկարագրման ժամանակ նշվում են երգահանի (կոմպոզիտորի) ազգանունը, անվան ու Հայրանվան սկզբնատառերը, ստեղծագործության անվանումը, ժանրը, խմբավորումը, սյուժեի կամ խոսքերի Հեղինակը, օպուսի Համարը, տոնայնությունը, մասերի թիվը, շարադրման ձևը, ուժ է ընծայված, վերաբաղման եղանակը, թվագրումը:

Այս տարբերակ սեղաբաշխումը փոփոխվում է ստեղծագործության տարբեր խմբերի պատկանելությամբ: Օպուսի Համարը գրվում է կրճատ ձևով:

Ստեղծագործության Համար չունենալու դեպքում, նշվում է «առանց երկի Համարի»:

Տոնայնությունը նշվում է իտալերեն լեզվով, ընդունված տերմիններով, սեւագրերի ժամանակ չի նշվում: Ջայնային բարդ կառուցվածքով ժամանակակից ստեղծագործությունների նկարագրման ժամանակ տոնայնությունը նշվում է միայն Հեղինակի կողմից:

Նոտաների ձեռագրերը նկարագրելիս ցույց է տրվում Հեղինակը, ում ստեղծագործության սյուժեի Հիման վրա է գրվել երաժշտական ստեղծագործությունը:

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Շիրակ» երաժշտական կոմեդիա՝ բնական Մ.Արմենի Համանուն ստեղծագործության:

Եթե ստեղծագործությունը նվիրված է որեւէ մեկին (ընծայագրված է), ապա անպայման նշվում է վերնագրի շարագրանքի վերջում:

Օրինակ՝ Ա.Այվազյան՝ «Իմ մանկանը», երգ, խոսք Գ.Սարյանի, նվիրվում է Գ.Գասպարյանիսի ձեռագրի, 26.10.1965

Օպերաների, օպերետների եւ բալետների ձեռագրեր ամփոփող գործերը վերնագրելիս նշվում է դրանց անվանումը, ժանրը, արարների եւ պատկերների թիվը, երկի Համարը (եթե նշված է), լիբրետոյի եւ սյուժեի Հեղինակը, լեզուն (եթե լիբրետոյի տեքստը այլ լեզվով է), ամբողջականությունը (եթե ձեռագիրը լրիվ չէ), շարագրանքը:

Օրինակ՝ Ա.Այվազյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ», 3 գործողություններով երաժշտական կատակերգություն: Լիբրետոն Ա.Այվազյանի, բնական Հ.Պարոնյանի Համանուն գործի: Նախերգանք: Կյավիր գործիքավորման նշումներով: Մեք., ուս., 1954:

Եթե գործը կազմված է ոչ լրիվ ստեղծագործությունից, ապա վերնագրում կամ ներքին ցուցակում (մեծ թվով Համարների դեպքում) թվարկվում են երգած Հատվածները, մասերը:

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Սոս եւ Վարդիթեր», Օպերա բնական Պ.Պուռչյանի Համանուն վեպի, պարտիտուրա, Հատվածներ,

N 10 Վարդիթերի մեներգը, N 11 Սոսի մեներգը, N 13 Մանուշի մեներգը:

Օպերայի կամ օպերետի կյավիրը նկարագրելիս նշվում է տեսակը՝ կյավիր երգեցողություն, ավելացված տեքստով:

Ներկայացման կամ ֆիլմի երաժշտություն նկարագրելիս նշվում է դրանց անվանումը, թատրոնը, որտեղ կայացել է ներկայացումը: Ֆիլմի Համար նշվում է նաև ունիտոսով:

Օրինակ՝ 1. Վ.Տիգրանյան՝ «Սոս եւ Վարդիթեր», Ա.Ապենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի ներկայացման երաժշտությունը: Կյավիր: 2.Տ.Մանուշյան՝ «Ճերմակ անուրջներ», Ա.Խարայելյանի ֆիլմի երաժշտությունը, վերջաբան: Կյավիր:

Գործիքային ստեղծագործությունների ձեռագրերը ընդգրկող գործերի վերնագրերը կազմվում են անվանումից, ժանրից (այն ստեղծագործության Համար, որի անվանումը ժանրն է՝ պրելյուդ, էտյուդ, սոնատ, սիմֆոնիա) նվագախմբի կազմից կամ գործիքի անվանումից, սյուժեի Հեղինակից, երկի Համարից, մասերի թվից, շարագրման տեսակից:

Օրինակ՝ Ա.Այվազյան՝ Կոնցերտ թավջութակի Համար նվագախմբի նվագակցությամբ: Օր. N 2, 2 մասից: Պարտիտուրա:

Սիմֆոնիկ եւ կամերային ստեղծագործությունների նկարագրման ժամանակ նշվում է, թե որ գործիքի կամ նվագախմբի Համար են դրանք գրված (դաշնամուրի, գործիքային Համալսարանի, սիմֆոնիկ, փողային, ժողովրդական գործիքների նվագախմբերի եւ այլն), անսամբլների նկարագրման ժամանակ նշվում է գործիքների կազմը (կվարտետ, ջութակի եւ թավջութակի, 2 ջութակների Համար եւ այլն):

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ 1.Սոնատ ջութակի եւ դաշնամուրի Համար 2.«Ջուզերգ», պիես դաշնամուրի եւ կլարնետի Համար:

Փոխադրումների նկարագրման ժամանակ (նվագախմբային ստեղծագործության փոխադրումը դաշնամուրի եւ այլն) նշվում է ստեղծագործության Հեղինակը, եթե նա ֆոնդատու չէ, ստեղծագործության անվանումը, որ գործիքի Համար է արված փոխադրումը, իսկ եթե ե՛լ ստեղծագործությունը, ե՛լ փոխադրումը ֆոնդատու չեն, ապա վերնագրերը եւ գործիքը:

Օրինակ՝ 1. Տղամարդկանց պարը Ա.Ապենդիարյանի «Ալմաստ» օպերայից, փոխադրումը դաշնամուրի Համար՝ Ն.Մկրտչյանի 2.«Հին Թիֆլիսի պատկերներ», սիմֆոնիկ սյուիտ 4 մասից, փոխադրումը ջութակի Համար Հեղինակային է:

Դաշնամուրային պիեսների ժողովածուների նկարագրման ժամանակ ցույց է տրվում դրա, այնուհետեւ յուրաքանչյուր Համարի անվանումը:

Օրինակ՝ 1. Վ.Տիգրանյան՝ «Լիրիկական մեղեդի», դաշնամուրային պիեսներ: «Ուրախ հովիվը», «Էքսպրոսիտ», «Ակերցիոն», «Լորիկ»: 2.Վ.Տիգրանյան՝ «Մանկական պիեսներ դաշնամուրի Համար»: «Խորոտիկ», «Մարտիկ», «Լիրիկ մեղեդի»:

Կանտատների, օրատորիաների եւ երգչախմբային ստեղծագործությունների ձեռագրերը ընդգրկող գործերի վերնագրերում անհրաժեշտ է նշել Հեղինակը, ստեղծագործության վերնագիրը, ժանրը, երգչախմբի ու մենակատարների կազմը, նվագակցությունը, բառերի Հեղինակը (եթե նշված է), երկի Համարը, մասերի թիվը եւ շարագրման տեսակը:

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Հայրենական», կանտատ դրամատիկ սուպրանոյի եւ երգչախմբի Համար: Խոսք Գ.Սարյանի, օր.Պ, պարտիտուրա:

Երգչախմբային ստեղծագործությունների նկարագրման ժամանակ նշվում է երգչախմբի կազմը (խոսք, աղամարդկանց, կանանց, մանկական) եւ ձայների թիվը (մեկ ձայն, երկձայն եւ այլն):

Վրկայ Համուլթների ստեղծագործությունները նկարագրելիս ցույց է արվում Համուլթի կազմը (գուևտ, օրիտ, կվարտետ) եւ թե որ ձայների Համար է գրված ստեղծագործությունը:

1.«Սայաթ-Նովա»-ը, կանտատ մենակատարների, երկձայն երգչախմբի եւ սիմֆոնիկ նվագախմբի Համար: Օր 64, պարտիտուրա, մաս 1-ին, 2-րդ

Վրկայ մեներգերի ձեռագրերը ընդգրկող գործերը վերնագրելիս պետք է նշել ստեղծագործությունից անվանումը, ժանրը, ձայնի տեսակը (բարձր, միջին, ցածր) նվագակցությունը, բառերի Հեղինակը, երկի Համարը, ցիկլի Համարը, շարադրման տեսակը (եթե ստեղծագործությունը գրված է ձայնի Համար՝ նվագախմբի նվագակցությամբ):

Ժողովրդական երգերի մշակումների ժամանակ նշվում են դրանց Հեղինակները, ստեղծագործության անվանումը եւ ինչ մշակման է ենթարկվել:

Օրինակ՝ Ն.Մկրտչյան «Արազ», Ժողովրդական երգ, մշակում երկձայն երգչախմբի Համար:

9.3. Թատրոնների դերասանների եւ ռեժիսորների ֆոնդերն ընդգրկում են ոչ միայն դերասանի կամ ռեժիսորի, այլեւ այն անձանց փաստաթղթերը, ովքեր անմիջական կապ ունեն ներկայացման Հետ:

Այս բնագավառը ներկայացնող փաստաթղթերի նկարագրումն ու Համակարգումը նույնպես կատարվում է ուրույն ձևով: Ինչպես մյուս ֆոնդերում, այստեղ եւս ստեղծվում է օպերաները, պիեսների ռեժիսորական օրինակները, պարզաբանական տեքստերը, նշումները, մշակումները, միզանոցեները, ներկայացումների մոնտաժումները, ֆոնդառաջանողի կողմից խաղացած դերերի տեքստերն իր նշումներով, խաղացանկը, դերերի եւ Համերգային ելույթների ցանկը, Հյուրախաղերի ընթացքում գրված օրագրերը, զգեստների, դեկորացիաների, դիմաճարդարանքի էսքիզները (գծագրված նախօրինակ, ուրվագրծ) ֆոնդառաջանողի դերակատարումների լուսանկարները եւ իր մասնակցությունը կամ ներկայացրած բեմադրությունների պատկերները:

Գործերն ըստ կայացած եւ չկայացած ներկայացումների «Ստեղծագործական նյութեր» բաժնում տեղադրվում են ընդհանուր ժամանակագրական կարգով:

Յուրաքանչյուր ներկայացման նյութեր Համակարգվում են ըստ Հետեւյալ ենթարաժիւնների:

-Պիեսի ռեժիսորական օրինակը, ռեժիսորական նշումներ, ներկայացման ռեժիսորական պլան (էքսպլիկացիաներ), միզանոցեների մշակումներ, ներկայացման մոնտաժում, դերադաշխում եւ այլն:

-Ներկայացման կերպարվեստային նյութեր՝ ներկայացման պատկերների եւ գործող անձանց լուսանկարներ, դեկորների, զգեստների եւ գրիմի էսքիզներ, եթե դրանք ֆոնդառաջանող է արել:

Եթե ռեժիսորի ֆոնդում փաստաթղթերը շատ են եւ բազմաբնույթ, ապա Համակարգումը կատարվում է ըստ թատրոնների, որտեղ նա աշխատել է, այնուհետեւ ըստ ներկայացումների:

Ռեժիսորի ստեղծագործական նյութերի ոչ մեծ ծավալի դեպքում դրանց Համակարգումը կատարվում է առանց ենթարաժիւնների:

«Ստեղծագործական նյութեր» բաժնին Հաջորդում է երկրորդ՝ «Ձեռագրեր» բաժինը (դերերի եւ ներկայացման աշխատանքների Հետ կապ չունեցող ուսումնասիրություններ, Հոդվածներ, գրախոսություններ, Հուշեր, օրագրեր եւ այլն): Այնուհետեւ ըստ ընդունված կարգի, տեղադրվում են ֆոնդառաջանողի եւ նրան ուղղված նամակները:

«Ֆոնդառաջանողի կենսագրությունն առնչվող նյութեր» բաժնում ընդգրկվում են թատրոնում նրա աշխատանքային գործունեությունն առնչվող նյութերը (Հրամաններ, արձանագրություններ, գրագրություններ Հիմնարկությունների Հետ, ֆինանսական փաստաթղթեր, ազդագրեր, ծրագրեր եւ այլն):

Ֆոնդառաջանողի ներկայացումների, խաղացած դերերի մասին Հոդվածները, գրախոսությունները, նշումները տեղադրվում են «Նյութեր ֆոնդառաջանողի մասին» բաժնում:

Դերասանների ֆոնդերում ստեղծագործական նյութերը Համակարգվում են Հետեւյալ ուրվագծով.

- Ֆոնդառաջանողի կողմից խաղացած դերերի տեքստեր՝ նրա նշումներով եւ նրա Համերգային խաղացանկը:

- Դերերի ցուցակները, Հյուրախաղերի ժամանակագրական ցանկերը եւ այլն տեղադրվում են այդ ենթարաժիւնի վերջում:

-Ֆոնդառաջանողի լուսանկարները դերերում եւ տեսարաններ իր մասնակցությունը ներկայացումներից:

Ենթարաժիւններում գործերը Համակարգվում են ժամանակագրական կարգով: Եթե «Դերեր» եւ «Պիեսների ռեժիսորական օրինակներ» ենթարաժիւններում Հնարավոր չէ ճշտել ժամանակագրությունը, ապա դրանք Համակարգվում են պիեսների վերնագրերի այբբենական Հերթականությամբ:

Դերասանների եւ ռեժիսորների ֆոնդերում կերպարվեստի նյութերը տեղադրվում են երկու բաժիններում՝ դերասանական եւ ռեժիսորական գործունեությունն արտացոլող նյութերն առաջինում, մնացածը (լուսանկարներ կյանքում, Հարազատների, ծանոթների, ուրիշ դերասանների շրջապատում)՝ «կերպարվեստի նյութեր» բաժնում:

Դերերի տեքստերից, պիեսների ռեժիսորական օրինակներից ու մշակումներից գործեր են ձեւավորվում Հեղինակային եւ անվանական սկզբունքով:

Ֆոնդառաջանողի կողմից Հեռուստատեսությամբ, ռադիոյով, էստրադայից կարգացած բանաստեղծությունները, պատմվածքները, պիեսների Հատվածները նույնպես գործ են դառնում ժամանակագրական սկզբունքով (եթե տարեթիվը չկան՝ այբբենական սկզբունքով):

Եթե գործը ձեւավորվում է լուսանկարներից, ապա յուրաքանչյուր գործում 3 դերից ավելի (մինչեւ 10 փաստաթուղթ) չպետք է լինի՝ վերնագրերը Հանգամանակից կազմելու Համար: Նշանավոր դերասանների յուրաքանչյուր դերակատարման լուսանկարն առանձին գործ է դառնում:

Ազդագրերի եւ ծրագրերի մեծ քանակների դեպքում գործը ձեւավորվում են ըստ թատրոնների, ներսում Համակարգումը կատարվում է ժամանակագրությունով: Հյուրախաղերի ազդագրերն ու ծրագրերը դառնում են առանձին գործեր:

Պիեսների ռեժիսորական մշակումները նկարագրելիս վերնագրում նշվում է ռեժիսորի ազգանունը, Հեղինակը, պիեսի վերնագիրը, թատրոնը (որտեղ ներկայացվում կայացել է), վերաբաղման եղանակը: Թվագրումը կատարվում է ըստ ռեժիսորի կատարած աշխատանքի ժամանակի:

Օրինակ՝ Խ.Աբրահամյան

Գ.Սունդուկյանի «Պեպո» պիեսի ռեժիսորական օրինակը, Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն, Ինքնագիր. 1985թ.:

Ֆոնդառաջանողի խաղացած դերերը նկարագրելիս ցույց է արվում կերպարը, Հեղինակը եւ պիեսի վերնագիրը, ով է խաղացել դերը, վերաբաղման եղանակը, նշանավոր դերասանների խաղացած դերի դեպքում՝ նաև թատրոնը, տարեթիվը:

Օրինակ՝

1. Ուստա Մկրտչի դերակատարման տեքստը Մկրտչ Արմենի «Հեղնար աղբյուր» պիեսում Գ.Ամիրբեկյանի կատարմամբ. Թբիլիսիի Սո.Շահումյանի անվան թատրոն, 1974թ., ձեռագիր, մեքենագիր:

Ֆոնդառաջանողի, կինոյում խաղացած դերերի նկարագրման ժամանակ ցույց է արվում կերպարը, ռեժիսորը եւ ֆիլմի անվանումը, դերակատարի անունը եւ վերաբաղման եղանակը:

Օրինակ՝

Փոստատարի դերը Ա.Մկրտչյանի «Հին օրերի երգը» ֆիլմում՝ Մ.Մկրտչյանի կատարմամբ. մեքենագիր, իր նշումներով:

Դերասանի էստրադայից, Հեռուստատեսությամբ, ռադիոյով ունեցած ելույթների թեմա Հանդիսացող ստեղծագործությունների նկարագրելիս գործի վերնագրում ցույց է արվում ժանրը, Հեղինակը, իսկ փակագծերում՝ օգտագործման ձևը եւ վերաբաղման եղանակը:

<sup>1</sup> Խոսքը «Ստեղծագործական նյութեր» բաժնի մասին է:

Օրինակ՝ 1. Բանաստեղծություններ եւ պատմվածքներ Վ.Տերյանից, Ե.Չարենցից, Ա.Բակունցից, Ա.Իսահակյանից, Վ.Աբաջյանի կատարմամբ (ռադիոյով) սպազիր, մեքենագիր, ինքնագիր  
2. Հատվածներ Գ.Նարեկացու «Մատյան ողբերգություններից» Ս. Գարբիելյանի կատարմամբ (Հեռուստատեսությունով), մեքենագիր:

Դերասանի ելույթների ցուցակներն ընդգրկող գործերի վերնագրերը կազմելիս նշվում է ֆոնդառաջանցի ազգանունը, փաստաթղթի տեսակը եւ բովանդակությունը, վերաբերումն եղանակը, ծայրային տարեթվերը:

Օրինակ՝ 1. Ս.Արզույան  
Ներկայացումներում՝ խաղացած դերերի եւ Հեռուստատեսությունների ցուցակ, ինքնագիր 1968-1986:  
2. Ա. Ազադյան, Հյուրախաղերի ընթացքում ունեցած ելույթների ցուցակ, ինքնագիր 1958-1978:

Դերերում դերասանների լուսանկարները նկարագրելիս ցույց է տրվում, թե որ դերերում է լուսանկարված դերասանը: Խմբանկարների համար նշվում են խաղընկերների անունները եւ ազգանունները:

Օրինակ՝ Վ. Փափազյանի լուսանկարները Օթելլոյի դերում («Օթելլոյ») Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, անհատական եւ Մ. Սիմոնյանի հետ:

Ազգագրեր եւ ծրագրեր ընդգրկող գործի վերնագիրը կազմելիս (եթե դրանց թիվը մեծ է), կարելի է կազմել ներքին ցուցակ, բովանդակությունը լրիվ բացելու նպատակով:

Օրինակ՝ Ս. Արզույանի մասնակցությունը կայացած ներկայացումների ազգագրեր. տես ներքին ցուցակը:

2.4. Կինոռեժիսորների ֆոնդերն ընդգրկում են ոչ միայն իրենց, այլեւ կինոֆիլմի ստեղծման մասնակիցների փաստաթղթերը:

Կինոռեժիսորների ֆոնդերում ստեղծվում է «Ստեղծագործական նյութեր» բաժինը, որտեղ տեղ են գտնում ֆիլմերի նկարահանումների եւ սցենարների հեղինակային Հայտերը, սցենարների ծրագրերը (պլանները), ուրվագծերը, լիբրետոները, դրակա եւ ռեժիսորական սցենարները (հկրանավորված եւ չհկրանավորված ֆիլմերի), գործող անձանց բնութագրերը, ռեժիսորական մշակումները, սցենարների եւ ֆիլմերի նկարահանումների ծրագրերը եւ օրագրերը, ֆիլմերի մակագրերը (տիտր), մոնտաժային թերթերը, ֆիլմի երաժշտական հնչյունավորման ծրագրերը (պլանները), վավերագրական ֆիլմերի հաղորդավարական տեքստերը, դերասանների դերակատարումների փորձերի լուսանկարները, ֆիլմերի նկարահանումների աշխատանքային պահերի լուսանկարները, կադրերի կոմպոզիցիաների, դիմահարդարանքի, զգեստների, դեկորացիաների էսքիզները՝ (եթե դրանք ֆոնդառաջանցողին են):

Ֆիլմի նկարահանման հետ կապված փաստաթղթերը (հրամաններ, գրադրություններ, նկարահանումների աշխատանքային գրաֆիկներ, հանձնաժողովի եզրակացություններ, ազգագրեր եւ ծրագրեր) տեղադրվում են «Ֆոնդառաջանցողի կենսագրություն աննշվող նյութեր» բաժնում:

- Ֆիլմերի մասին բոլոր հոդվածները, կարծիքները, գրախոսություններն ընդգրկվում են «նյութեր ֆոնդառաջանցողի մասին» բաժնում:

- Հանդիսատեսների նամակները տեղ են գրավում «Նամակներ» բաժնի վերջում:

- Ֆոնդառաջանցողի բոլոր ձեռագրերը (ուսումնասիրություններ, հոդվածներ, գրախոսություններ, հուշեր, օրագրեր, որոնք անմիջապես կապ չունեն նկարահանվող ֆիլմի եւ սցենարի հետ, ընդգրկվում են «Ֆոնդառաջանցողի ձեռագրեր» բաժնում:

Առաջին՝ «Ստեղծագործական նյութեր» բաժնում, գործերը Համակարգվում են ընդհանուր ժամանակագրական սկզբունքով՝ ըստ էկրանավորված եւ չէկրանավորված ֆիլմերի:

Յուրաքանչյուր ֆիլմի փաստաթղթերը բաժանվում են հետևյալ խմբերի.

- գրական սցենարներ եւ դրանց առնչվող փաստաթղթեր

- ռեժիսորական սցենարներ եւ դրանց առնչվող փաստաթղթեր

- ֆիլմին առնչվող կերպարվեստի նյութեր (կադրերի եւ նկարահանման աշխատանքային պահերի, դերասանների դերակատարման փորձերի եւ դերակատարումների լուսանկարներ):

Կինոռեժիսորի ստեղծագործական ոչ մեծ ծավալի նյութերից առաջացած գործերը կարելի է Համակարգել հետևյալ սկզբունքներով.

- սցենարներ, ռեժիսորական նշումներ, մոնտաժային թերթեր եւ այլն

- կադրերի լուսանկարներ ֆիլմերից, դերասանների լուսանկարներ (դերերում) եւ այլն:

Ֆիլմերի սցենարներից գործերը ձևավորվում են ըստ հեղինակների եւ սցենարների տեսակի:

Ֆիլմերի գրական եւ ռեժիսորական սցենարներից ձևավորվում են տարբեր գործեր:

- Ռեժիսորական մշակումները, սցենարների պլանները, նշումները կազմում են ինքնուրույն գործեր:

- Ֆիլմի նկարահանման եւ սցենարի համար ռեժիսորական նշումներից կազմված գործի ներսում Համակարգումը կատարվում է ըստ ֆիլմի էպիգոգների կամ ժամանակագրությունը:

- Դերակատարումների փորձերի լուսանկարներից գործերը ձևավորվում են ըստ ֆիլմերի, իսկ դրանց ներսում՝ Համակարգվում կամ դերասանների ազգանուններով, կամ գործող անձանց անուններով: Հսքիզներից (դեկորացիաներ, զգեստներ, դիմահարդարանք եւ կադրերի կոմպոզիցիաներ) գործերը ձևավորվում են ըստ աշխատանքների հեղինակների եւ ֆիլմերի անունների:

- Սցենարների հեղինակային Հայտերի նկարագրման ժամանակ գործի վերնագրում նշվում է հեղինակը, ապագա սցենարի անվանումը, փաստաթղթի տեսակը, վերաբերումն եղանակը:

Օրինակ՝ Գ. Մարգարյան, Է. Պալյապտյան՝ «Դժբախտ պատահար», սցենարի Հայտ, ինքնագիր:

Երկու կամ ավելի սերիաների դեպքում գործի ներսում Համակարգումը կատարվում է սերիաներով. էպիգոգներով կամ գործող անձանցով:

Գրական սցենարի բնագրի նկարագրման ժամանակ գործի վերնագրում նշվում է հեղինակը, սցենարի անվանումը, դրա տարատեսակը եւ վերաբերումն եղանակը:

Օրինակ՝ Ա. Այվազյան՝ «Եւանկյունի», գրական սցենար, հեղինակագործված, մեքենագիր:

Եթե սցենարը գրված է ուրիշ հեղինակի ստեղծագործության մոտիվներով, ապա վերնագրում սցենարի տարատեսակից հետո ցույց է տրվում այդ ստեղծագործության հեղինակը, անվանումը եւ ժանրը:

Օրինակ՝ 1. Ստ. Այաջալյան՝ (հեղինակակից Հ. Մալյան)

«Ծերմակ անուրջներ», գրական սցենար ըստ Վ. Թոթովենցի «Աղավնիներ» պատմվածքի, ինքնագիր:

2. Ա. Աղաբաբով, Ֆ. Իովյաթյան՝ «Մենավոր ընկուզենին», ռեժիսորական սցենար ըստ Վ. Պետրոսյանի Համանուն վեպի, մեքենագիր:

3. Ստ. Անդրանիկյան՝ «Երեք Հեքիաթ» մուլտֆիլմի ռեժիսորական սցենար, ըստ Ավ. Իսահակյանի Հեքիաթի:

Ռեժիսորական սցենարներից կազմված գործերի վերնագրերում, նշվում է սցենարի հեղինակը, անվանումը, տարատեսակը եւ վերաբերումն եղանակը, եթե

<sup>1</sup> Ներկայացումները շեշտել, եթե դերասանը նաև կինոյում է խաղում:

<sup>2</sup> Ֆիլմի դեկորացիաների, դիմահարդարանքի եւ զգեստների էսքիզները (եթե ֆոնդառաջանցողի են), մտնում են « կերպարվեստի նյութեր » բաժնի մեջ:

այն գրված է այլ Հեղինակի գրական սցենարի հիման վրա, ապա վերնագրում նշվում է Հեղինակը եւ սցենարի անվանումը.

- Օրինակ՝
1. Ա.Մարտիրոսյան՝ «Սասունցի Դավիթ», ռեժիսորական սցենար, մեքենագիր, ուղղումներով
  2. Ա.Երնջակյան՝ «Ժամկետը յոթ օր է», ռեժիսորական սցենար, ինքնագիր:
  3. Ա.Մարտիրոսյան՝ «Սեւանի ձկնորսները», ռեժիսորական սցենար ըստ Ա.Շալոյանի համանուն գրական սցենարի, Հեղինակագրված, մեքենագիր:
  4. Ա.Մարտիրոսյան՝ «Անահիտ», ռեժիսորական սցենար ըստ Վ.Շվեյցերի համանուն գրական սցենարի, մեքենագիր:

Եթե կինոռեժիսորի ստեղծագործական նյութերն արտացոլում են նրա աշխատանքը կինոյի տարբեր ժանրերում, ապա վերնագրում նշվում է ֆիլմի ժանրը:

- Օրինակ՝
1. Ա.Այվազյան՝ «Վառած լապտեր», ռեժիսորական սցենար, մեքենագիր:
  2. Ա.Այվազյան՝ «Վաղարշակ էլիբեկյան», վավերագրական ֆիլմի սցենար, ինքնագիր:

Մոնտաժային թերթեր ընդգրկող գործերի վերնագրերում ցույց է արվում ռեժիսորը, ֆիլմի անվանումը, փաստաթղթի տեսակը, վերարտադրման եղանակը.

- Օրինակ՝
1. Լ.Իսահակյան՝ «Սովորական Հերթագահություն» ֆիլմի մոնտաժային թերթեր, մեքենագիր, պատճեն.
  2. Ա.Մարտիրոսյան՝ «Մեքսիկական դիվանագետներ» ֆիլմի մոնտաժային թերթեր, ձեռագիր:

Դեկորացիաների, կոստյումների, դիմահարգարանքի էսքիզների նկարադրման ժամանակ գործի վերնագրում նշվում է Հեղինակը, ռեժիսորը, ֆիլմի վերնագիրը, փակագծում էսքիզների բովանդակությունը, կատարման տեխնիկան.

- Օրինակ՝
1. Ե.Սարգսյան՝ Ա.Երնջակյանի «Ժամկետը յոթ օր է» ֆիլմի դեկորացիաների (քաղաքի ավերակները) էսքիզները.
  2. Լ.Գեւորգյան՝ Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմում օգտագործված հագուստների էսքիզներ:

Ֆիլմերի կադրերի լուսանկարներ ընդգրկող գործերի վերնագրերում հարկ է նշել փաստաթղթի տեսակը, կինոռեժիսորի ազգանունը, ֆիլմի անունը, նկարահանման պահը:

- Օրինակ՝
1. Կադրի լուսանկար Ա.Այվազյանի «Վառած լապտեր» ֆիլմից գանգվածային տեսարան.
  2. Կադրի լուսանկար Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմից, Ս.Սարգսյանը աղավինների հետ կամ Ս.Սարգսյանը վարսավիրանոցում:

Ֆիլմի նկարահանման աշխատանքային պահերի լուսանկարների վերնագրերում նշվում է ռեժիսորը, ֆիլմի վերնագիրը: Լուսանկարում եղած անձինք ցույց են արվում վերջում:

- Օրինակ՝
- Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմի նկարահանման աշխատանքային պահերի լուսանկարներ (Հ.Մալյան, Հ.Ալավերդյան, Ս.Սարգսյան, Գ.Նովենց եւ ուրիշներ)

- Կամ՝
- Աշխատանքային պահեր Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմից (Հ.Մալյան, Հ.Ալավերդյան, Ս.Սարգսյան, Գ.Նովենց եւ ուրիշներ):

Հավելված 1

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՖՈՆԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Կենսագրական փաստաթղթեր
2. Ֆոնդառաջացողի պետական, հասարակական-քաղաքական գործունեությունը բնութագրող փաստաթղթեր
- 2.1. Հասարակական-քաղաքական գործունեություն
- 2.2. Մասնական գործունեություն
3. Ֆոնդառաջացողի ստեղծագործական գործունեությունն արտացոլող փաստաթղթեր.
- 3.1. Ստեղծագործությունների (երկերի) ժողովածու
- 3.2. Հուշագրությունների ձեռագրեր
4. Ֆոնդառաջացողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր
- 4.1. Կենսագրական տեղեկություններ քաղաքական գործիչների մասին
- 4.2. Հատվածներ քաղաքական գործիչների Հուշերից
- 4.5. Քաղվածքներ արխիվային եւ այլ փաստաթղթերից ու նյութերից
5. Ֆոնդառաջացողին կարծիքի ուղարկված ձեռագրեր եւ գրանց մասին նրա կարծիք-եզրակացությունները
6. Ֆոնդառաջացողի անձնական գրադրույթներ (թղթակցությունը)
- 6.1. Ֆոնդառաջացողի նամակները
- 6.2. Նամակներ ֆոնդառաջացողին
7. Գույքային-տնտեսական փաստաթղթեր եւ նյութեր
8. Ֆոնդառաջացողի ընտանիքի անդամների (կնոջ, զավակների եւ այլն) փաստաթղթեր
9. Փաստաթղթեր եւ նյութեր ֆոնդառաջացողի մասին
10. Լուսանկարներ
11. Հավաքածուներ

Հավելված 2

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ֆոնդառաջացողի անձնական եւ կենսագրական փաստաթղթերը
- 1.1. Ֆոնդառաջացողի անձնական փաստաթղթերը
- 1.2. Ֆոնդառաջացողի կենսագրությունն առնչվող փաստաթղթեր
2. Ֆոնդառաջացողի ստեղծագործական գործունեությունն նյութեր
- 2.1. Պատմություն հարցերին նվիրված աշխատություններ
- 2.2. Դասախոսությունների, էությունների, գեկուցումների տեքստեր
- 2.3. Գրական ստեղծագործություններ
3. Նամակագրություն
- 3.1. Ֆոնդառաջացողի նամակները
- 3.2. Ֆոնդառաջացողին ուղղված նամակներ
4. Ֆոնդառաջացողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով
5. Կերպարվեստի նյութեր

Հավելված 3

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Տեսական բնույթի աշխատանքներ՝ կից փաստաթղթերով
- 1.1. Գիտական աշխատանքներ
- 1.2. Գրառումների գրքույկներ, աշխատանքային նշումներով ծոցատետրեր
- 1.3. Ֆոնդառաջացողի կողմից իր աշխատանքների համար հավաքված փաստաթղթեր եւ նյութեր (գծագրեր, ուրվագծեր, աղյուսակներ, լուսանկարներ եւ այլն)

2. Ֆոնդառաջացնողի ծառայական գործունեության հետ կապված փաստաթղթեր (Համակարգումը կատարվում է ըստ կազմակերպությունների, որտեղ գործունեություն է ծավալել ֆոնդառաջացնողը)
3. Գիտամանկավարժական գործունեության փաստաթղթեր (Համակարգումն ըստ կազմակերպությունների, գիտասարտագրական միավորումների, ուսումնական Հաստատությունների)
4. Փաստաթղթեր գիտատեխնիկական ընկերություններում ֆոնդառաջացնողի գործունեության մասին
5. Օրագրեր եւ օրագրային գրառումներ
6. Գրազրույթուն
- 6.1. Ֆոնդառաջացնողի նամակներ
- 6.2. Նամակներ՝ Հասցեագրված ֆոնդառաջացնողին
- 6.3. Գրազրույթուն կազմակերպությունների, ընկերությունների եւ այլ իրավաբանական անձանց հետ
7. Կենսագրական փաստաթղթեր եւ նյութեր
- 7.1. Անձնական փաստաթղթեր
- 7.2. Փաստաթղթեր գիտական աստիճաններ, պատվավոր կոչումներ շնորհելու մասին
- 7.3. Փաստաթղթեր ֆոնդառաջացնողի Հոբելյանական սոնակատարությունների, այլ Հանդիսությունների վերաբերյալ
8. Լուսանկարներ
9. Փաստաթղթեր, նյութեր ֆոնդառաջացնողի մասին
10. Ֆոնդառաջացնողի կողմից Հավաքված տպագիր եւ ձեռագիր նյութերի (ակնարկներ, ուրվագծեր, ընծայագրերով գրքեր եւ այլն) ու փաստաթղթերի Հավաքածու:

Հավելված 4

**ԿԻՆՈՒԵԺԻՍՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

1. Ստեղծագործական գործունեության նյութեր
  - 1.1. Սցենարներ, ռեժիսորական նշումներ, մոնտաժային թերթեր եւ այլն
  - 1.2. Ֆիլմերից կադրերի լուսանկարներ
2. Ֆոնդառաջացնողի ձեռագրեր
  - 2.1. Հոդվածներ, Հուշեր
  - 2.2. Օրագրեր եւ գրառումները գրքույկներ
3. Ֆոնդառաջացնողի գրած նամակները
4. Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների Համար Հավաքված նյութեր
5. Ֆոնդառաջացնողին ուղղված նամակներ
6. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
7. Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների Համար Հավաքած նյութեր
8. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին
9. Կերպարվեստի նյութեր
- 9.1. Ֆոնդառաջացնողի լուսանկարները
- 9.2. Տարբեր անձանց (նաեւ ընծայագրով) լուսանկարներ
- 9.3. Ֆիլմերից կադրերի լուսանկարներ (ուրիշ կինոռեժիսորների)

Հավելված 5

**ԿԻՆՈՒԵԺԻՍՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

1. Ստեղծագործական գործունեության նյութեր (գեղարվեստական, վավերագրական եւ կրկնօրինակված ֆիլմեր)
  - 1.1. Գեղարվեստական ֆիլմեր

- 1.2. Վավերագրական ֆիլմեր
- 1.3. Կրկնօրինակված ֆիլմեր
2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը
  - 2.1. Սցենարներ
  - 2.2. Հոդվածներ, էլույթների տեքստեր
  - 2.3. Հուշեր
3. Ֆոնդառաջացնողի գրած եւ ստացած նամակները<sup>1</sup>
4. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
5. Ֆոնդառաջացնողի Հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն Հետաքրքրած թեմաներով
6. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին
7. Կերպարվեստի նյութեր

Հավելված 6

**ՆԿԱՐՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

1. Ստեղծագործական նյութեր
  - 1.1. Գծանկարներ, կտավների ֆոտոպատճեններ
2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը
  - 2.1. Ակնարկներ, Հոդվածներ
  - 2.2. Օրագրեր
  3. Նամակներ (գրազրույթուն)
    - 3.1. Ֆոնդառաջացնողի նամակներ
    - 3.2. Ֆոնդառաջացնողին Հասցեագրված նամակներ
  4. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
  5. Ֆոնդառաջացնողի Հավաքած նյութերն իր աշխատանքների Համար եւ իրեն Հետաքրքրած թեմաներով
  6. Կերպարվեստի նյութեր
  7. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին
  - 7.1. Համացանկեր<sup>2</sup>
  - 7.2. Ակնարկներ, տպավորություններ ֆոնդառաջացնողի Հեղինակային ցուցահանդեսների մասին
  - 7.3. Նյութեր ցուցահանդեսների բացման մասին

Հավելված 7

**ԵՐԳԱՀԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

1. Ֆոնդառաջացնողի նոտագրությունները (նոտաների ձեռագրեր)
  - 1.1. Բեմական ստեղծագործություններ
    - ա) Օպերաներ
    - բ) բալետներ
    - գ) ներկայացումների երաժշտություն
    - դ) կինոնկարների երաժշտություն
  - 1.2. Գործիքային ստեղծագործություններ
    - ա) սիմֆոնիաներ
    - բ) սիմֆոնիկ սյուիտներ

<sup>1</sup> Նամակների մեծ թվի դեպքում (գրած եւ ստացած) բաժինը կվերնազրվի Հետեյալ ձևով 3) նամակներ, 3.1. ֆոնդառաջացնողի գրած նամակները, 3.2. ֆոնդառաջացնողի ստացած նամակները:  
<sup>2</sup> Եթե ֆոնդառաջացնողի նկարներին է, տեղադրվում է առաջին բաժնում, իսկ եթե կան նշումներ իր մասին, տեղադրվում է յոթերորդ բաժնում:

- դ) վալսեր եւ սիմֆոնիկ ստեղծագործություններ
- դ) ստեղծագործություններ փողային նվագախմբի համար
- ե) ստեղծագործություններ ֆլեյտայի համար
- 1.3. Վոկալ (երգեցողական) ստեղծագործություններ
- ա) կանտատներ, օրատորիաները
- բ) ստեղծագործություններ ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ
- 1.4. Այլ Հեղինակների կողմից ֆոնդառաջանող ստեղծագործությունների փոխադրումները
- 2. Ֆոնդառաջանողի ձեռագրերը
- 3. Ֆոնդառաջանողի գրած նամակները
- 4. Ֆոնդառաջանողի ստացած նամակները
- 5. Ֆոնդառաջանողի կենսագրությունն առնչվող փաստաթղթեր
- 6. Ֆոնդառաջանողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով
- 7. Նյութեր ֆոնդառաջանողի մասին
- 8. Կերպարվեստի նյութեր

Հավելված 8

**ԱՐՏԻՍՏԻ, ԴԵՐԱՍԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

- 1. Ֆոնդառաջանողի ստեղծագործական նյութեր
  - 1.1. Խաղացած դերերի տեքստեր
  - 1.2. Դերակատարումների լուսանկարներ
- 2. Ֆոնդառաջանողի ձեռագրերը
- 3. Նամակներ
- 3.1. Ֆոնդառաջանողի գրած նամակները
- 3.2. Ֆոնդառաջանողի ստացած նամակները
- 4. Լուսանկարներ
- 5. Ֆոնդառաջանողի կենսագրությունն առնչվող փաստաթղթեր
- 6. Ֆոնդառաջանողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով
- 7. Նյութեր ֆոնդառաջանողի մասին
- 8. Կերպարվեստի նյութեր

Հավելված 9

**ԳՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

- 1. Ֆոնդառաջանողի ձեռագրերը
  - 1.1. Վիպակներ, պիեսներ, կատակերգություններ
  - 1.2. Հեռուստահաղորդումների տեքստեր եւ կինոսցենարներ
  - 1.3. Սկետչներ, ինտերմենտներ
  - 1.4. Ֆեյլետոններ
  - 1.5. Պատմվածքներ
  - 1.6. Ակնարկներ, հուշեր
  - 1.7. Թարգմանություններ
  - 1.8. Գրախոսություններ
  - 1.9. Հայտեր
- 2. Ֆոնդառաջանողի գրած նամակները
- 3. Ֆոնդառաջանողի ստացած նամակները
- 4. Ընծայագրեր
- 5. Ֆոնդառաջանողի կենսագրությունն առնչվող փաստաթղթեր
- 6. Ֆոնդառաջանողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖՈՆԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ**

- 1. Փաստաթղթեր՝ կապված գլխավոր (Հիմնական) ֆոնդառաջանողի անվան եւ կյանքի ու գործունեության հետ
  - ա) անձնական, կենսագրական բնույթի փաստաթղթեր
  - բ) փաստաթղթեր ծառայական գործունեության վերաբերյալ (ենթախմբի ներսում փաստաթղթերի համակարգումն՝ ըստ կազմակերպությունների գրադեցրած պաշտոնների)
- գ) Փաստաթղթեր հասարակական (քարեգործական) գործունեության վերաբերյալ
  - դ) Հիմնական ֆոնդառաջանողի անվան հետ կապված գրադրություն
    - ֆոնդառաջանողի նամակները
    - ֆոնդառաջանողին հասցեագրված նամակներ
  - ե) Գույքային տնտեսական բնույթի փաստաթղթեր
- 2. Ֆոնդառաջանողի ընտանիքի անդամների փաստաթղթերը
  - 2.1. Ֆոնդառաջանողի կնոջ (ազգանունը, անվան, Հայրանվան սկզբնառաջները) փաստաթղթերը
  - 2.2. Ֆոնդառաջանողի որդու՝ (ազգանունը, անվան, Հայրանվան սկզբնառաջները) փաստաթղթերը
    - անձնական, կենսագրական փաստաթղթեր
    - ծառայական եւ հասարակական գործունեության փաստաթղթեր
    - գրագրություն (նամակներ՝ գրված ֆոնդառաջանողի որդու կողմից եւ նամակներ՝ հասցեագրված վերջինիս)
    - գույքային տնտեսական բնույթի փաստաթղթեր
- 3. Լուսանկարներ
- 4. Փաստաթղթեր ֆոնդառաջանողի, նրա կնոջ, որդու ..... մասին
- 5. Հավաքածու (փաստաթղթեր, նյութեր)

**Լրատու**

**8 ՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ**

Արմեն Տիգրանյանի 125-ամյակի առթիվ, 2004թ. Հոկտեմբերի 8-ին ՀԱԱ կազմակերպած ցուցահանդեսի Հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին անվանի կոմպոզիտորի Հոբելյանական կառավարական Հանձնաժողովի անդամ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, պրոռեկտոր Արկադի Ավանեսովը, Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Սվետլանա Մուրադյանը, կոմպոզիտորի թոռը՝ Արմեն Տիգրանյանը, հյուրեր, լրագրողներ:

«Անուշ» օպերայի անմահ երաժշտության Հնչյունների ներքո, ներկաները ծանոթացան Արմեն Տիգրանյանի կյանքն ու ստեղծագործական ուղին արտացոլող փաստաթղթերին:

Ցուցադրված փաստաթղթերի շարքում տեղ էին գտել Տիգրանյանների գերդաստանին վերաբերվող փաստաթղթեր: Լենինգրադի Լենինի շքանշանակիր Պետական կոնսերվատորիայի ուսանողական տոմսը, Մարքսիզմ-Լենինիզմի համալսարանն ավարտելու վկայականը, նամակներ, գրված որդիների եւ կնոջը՝ Աշխենին, ՀՄԽՀ կենտգործկոմի որոշումը Ա. Տիգրանյանին գեղարվեստի փաստաթղթով գործչի կոչում շնորհելու մասին, տեսարաններ Մարտեում եւ Հայեպոլում կայացած «Անուշ» բեմադրության ներկայացումներից, թերթներում եւ ամսագրերում տպագրված հոդվածներ Ա.Տիգրանյանի մասին:

Ներկայացված էին նաև բազմաթիվ այլ ուշագրավ լուսանկարներ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ»-ի առաջին բեմադրության մասնակիցների, արվեստի գործիչների, Հարազատների հետ խմբանկարներում:



Նշենք մի լուսանկար միայն՝ Մարտելում կայացած «Անուշի» բեմադրության կազմկոմիտեի անդամները եւ Հյուրերը, որոնց կենտրոնում Շառլ Ազնաւուրն է՝ տիկնոջ հետ:

\* \* \*

2004 թվականը Հոբելյանական էր Հանրապետության արխիվագետների համար: Լրացավ Հայաստանում արխիվային գործի կազմակերպման եւ Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 80-ամյակը:

Այս առթիվ կազմակերպված, երկու օր շարունակ՝ նոյեմբերի 11-12-ը տեւած մի շարք միջոցառումների թվում առանձնակի նշանակություն ունեցավ Հայ արխիվաչինարարությունը ներկայացնող փաստաթղթերի ցուցադրությունը: Հազարավոր վավերագրերից բնորոշված փաստաթղթերի միջոցով ներկայանալով ծանոթացնելով արխիվագետների մի քանի սերունդների անցած դժվարին ուղու ու միասնական մեծ վերելքի հետ: Հետաքրքրություն էին ներկայացնում պետարխիվի հիմնադիր տնօրեն ինստիտուտի Սամվելյանի գրությունները (ինքնագիր), զեկուցագրերն ու հրամանները:

Ուշագրավ էին մշակույթի եւ այլ բնագավառների Հայ անվանի գործիչներին՝ Մարտիրոս Սարյանի, Պարույր Սեւակի, մարշալ Հովհաննես Բաղրամյանի եւ ուրիշների պետական արխիվ կատարած այցելությունները պատկերող լուսանկարները, ինքնագրերն ու արխիվագետներին հասցեագրած բարեմազթանքի խոսքերը:

Ներկայացված էին Ափյուռքի մեր Հայրենակից բարերարների լուսանկարներն ու փաստաթղթերը:

ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը, իր բացման խոսքում, ներկայացրեց 80 տարիների ընթացքում Հայ արխիվագետների կողմից կատարված վիթխարի աշխատանքը, արխիվային գործի խնդիրներն ու հետագա ծրագրերը:

Մեծ հանդիսավորությամբ բացվեց նաեւ Հուշապատ, ուր ներկայացված են արխիվային գործի վարչության բոլոր տարիների պետերի, ինչպես նաեւ պետական արխիվների տնօրենների լուսանկարները:

ՀԱԱ ընթերցասրահն անվանակոչվեց արխիվային համակարգում մեծ ներդրում ունեցող Աշոտ Հարությունյանի անվամբ:

Միջոցառումների երկրորդ օրը, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը Հյուրընկալել էր կառավարության, գիտության, մշակույթի մի շարք պաշտոնատար այրերի, արտասահմանից, Արցախից եւ Հանրապետության շրջաններից ժամանած Հյուրերի: Ելույթով հանդես եկավ Հայաստանի մշակույթի եւ երիտասարդության հարցերով նախարար Հ.Հովսեփյանը: Նա պատվոգրեր հանձնեց մի շարք արխիվագետներին: Առանձին ուշադրություն եւ պատվոգրերի արժանացան արխիվի բարերարներ տեր եւ տիկին Քաջբերունդները, Թերեզկյանները, Սասունյանները, Վ. Փարյանը՝ Լոս Անջելոսից եւ տեր եւ տիկին Ղազարյանները Բոստոնից:

Հայաստանի արխիվագետներին իր օրհնության խոսքն էր հղել Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը ներկայացրեց Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը:

Հանդիսավոր նիստից հետո տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ:

\* \* \*

Լրացավ Գեորգյան Հոգեւոր ճեմարանի հիմնադրման 130-ամյակը: Այդ առթիվով, 2004թ. գեկտեմբերի 3-ին Հայաստանի ազգային արխիվը, Գեորգյան ճեմարանի հետ համատեղ, վերջինիս պատմությունը նվիրված փաստաթղթերի ցուցադրություն էր կազմակերպել: Հրավիրվածներին, թվում էին ճեմարանի

այսօրվա տեսուչ Տեր Եղիշեն, ճեմարականներ ու այլ Հոգեւորականներ: Ներկայացված էին Հայ կաթողիկոսների կոնդակներ, ձեռագրեր, վկայագրեր, մասնագիտական ծրագրեր, դասամատյաններ, ներքին կանոններ, ուսանողական խոսքեր, թյունների մասին վկայող փաստաթղթեր, ինչպես նաեւ ներկայիս ճեմարանի առօրյան պատկերող լուսանկարներ, պաշտոնական գրություններ: Առանձնակի ուշադրություն արժանացան Գեորգյան ճեմարանի անվանի սաների ավարտական դիպլոմները, Կոմիտասի, Դ. Դեմիրճյանի, Ավ. Իսահակյանի ձեռագրերը: Հայ ժողովրդի նշանավոր մտավորականների, գիտնականների՝ Հ.Աճառյանի, Ն.Աղբալյանի, Հ.Մանանդյանի, Մ.Արեղյանի, Եվաթյանի, Ա. Խանջյանի եւ այլոց լուսանկարները: Այցելուների ուշադրության արժանացան Գեորգյան ճեմարանի հիմնադրման կոնդակի բնօրինակը եւ նրա հիմնադիր Գեորգ Դ կաթողիկոսի լուսանկարը: Հետաքրքրական էին ճեմարանի 1917թ. փակման եւ 1945թ. վերաբացման հրամանները, տեղեկագրեր Սանկտ-Պետերբուրգի Հայոց եկեղեցիների խորհրդի նախագահ Իշխան Արամելիք Լազարելի գրությունը Գեորգյան ճեմարանի վարչությունը 40 սաների թոշակ նշանակելու մասին: Ցուցադրելի տակ առանձին տեղ էին գտել խորհրդային տարիների ամենածանր շրջանը ներկայացնող փաստաթղթերը՝ բռնադատված եկեղեցականների անձնական գործերը: Այս շարքում կարելի է հատուկ նշել Կեհարյանի խոսքում հարգանքները Գեորգյան ճեմարանի նախկին սան Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի գործը: Գեորգյան ճեմարանի պատմության նյութերն ընդհանուր ներկայացրեց ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը, որից հետո Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը ներկայաներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնանքներն ու բարեմազթանքներն ուղղված կազմակերպիչներին եւ Հյուրերին: Ցուցադրությունը համարեց զեղարվեստական մասը: Ճեմարանի երգչախումբը հանդես եկավ հոգեւոր երգացանկով, իսկ երեսանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի չին ուսանողուհի Ռե Մելը գերեց բոլորին հայկական երգերի յուրօրինակ կատարումով:

**ԱՐԽԻՎԱԾԻՆ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄՆԵՐ**

«ԱՆՏՈՆ ՔՈԶԻՆՅԱՆ»  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ՀՈՒՇԵՐ  
ԵՐԵԱՆ, 2003թ., 200 էջ

Կազմողներ՝ Է. Վ. Հովսեփյան, Ա. Ա. Հարությունյան  
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ս. Վիրաբյան

Գիրքը նվիրված է ինքնուրույն Հայաստանի պետական եւ կուլտուրական ականավոր գործիչ, ՀնՍՀ նախարարների խորհրդի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանի կյանքին ու գործունեությանը: Այն տպագրվել է վերջինիս ծննդյան 90-ամյակի կապակցությամբ, ընթերցող լայն շրջանակների համար:

Գիրքն ունի երեք բաժին՝ փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Բաժիններից յուրաքանչյուրը հետաքրքիր է յուրովի: Իրար լրացնող, մեկը մյուսից հետաքրքիր ու արժեքավոր վավերագրերի ընտրությունն ինքնանպատակ չէ: Դրանք լուսաբանում են Ա. Քոչինյանի կյանքի ու գործունեության կարևոր էջերը:

Առաջին՝ «Փաստաթղթեր» բաժնում ընդգրկված են Քոչինյանի՝ ՀնՍՀ նախարարների խորհրդի նախագահի եւ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնավարության տարիները՝ 1950-60-ական թվականներին արտացոլող վավերագրեր՝ կառավարական որոշումներ, պաշտոնական գրություններ:

Գրքի երկրորդ՝ «Նամակներ» բաժնում Հայ եւ այլազգի մշակույթի ու այլ բնագավառների ակնավոր գործիչների նամակներն են: Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Խոսով, Արամ Խոջատրյան, Անաստաս Միրկոյան, Ռասուլ Համզատով, Լեւ Կուլիջանով եւ ուրիշներ: Նամակագիրների այս անուններն ինքնին խոսու են:

Գրքի վերջին՝ «Հուշեր»-ի բաժնում Քոչինյանի ժամանակակիցների, նրա գործընկերների, հայ անվանի գրողների, արվեստագետների հուշերն են Քոչինյան մարդու, ղեկավարի, կուսակցական ու պետական գործչի մասին: Ջերմ ու անկեղծ այդ հուշերը մեկ անգամ եւս հավաստում են, որ Ա.Քոչինյանը մեծ ժողովրդականություն վայելող ղեկավար էր, մեծ հայրենասեր, իր հոգի ու ժողովրդի նվիրյալ զավակը:

Գրքում գեանդված են նաև լուսանկարներ Ա. Քոչինյանը՝ պետական այրերի (Ն.Հարությունյան, Կ.Գեմիրճյան), մտավորականների (ակադեմիկոս Վիկտոր Համարձումյան, Պարույր Սևակ, Սիրվա Կապուտիկյան, Թաթուլ Ալթունյան) հետ՝ եղևնի գոհերի հուշահամալիրի բացման օրը, Արփա-Սևանի թունելագործների, պիոներ-գարոցականների հետ հանդիպումների ժամանակ խմբանկարներում: Գրքի առաջին էջում Անտոն Քոչինյանի անհատական լուսանկարն է:

«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1912-1920թթ.)»

Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու  
Երևան, 2004թ., 787էջ

Կազմողներ՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան  
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Վիրաբյան (պատմ. գիտութ. գոկտոր)

Հայաստանի ազգային արխիվն առաջին անգամ ամբողջական տեսքով հրատարակում է 1912-1920թթ, կայացած համահայկական խորհրդակցությունների (համագումարների) հրավիրման վերաբերյալ փաստաթղթերը եւ դրանց արձանագրությունները, ինչպես նաև փաստաթղթեր խորհրդակցություններում բնորոշված համագաղթյան գործադիր մարմինների գործունեության մասին:

Ժողովածուում փաստաթղթերը եւ նյութերը գեանդված են բնագրերի լեզվով, արեւելահայ գրական լեզվով փաստաթղթերը տրված են նոր ուղղագրությամբ, արեւմտահայ գրական լեզվով՝ դասական ուղղագրությամբ:

Պահպանվել են բնագրերի առանձնահատկությունները, խմբագրական միջամտություններ չեն կատարվել, բացառությամբ աննշան կետադրական շտկումների ու բացահայտ ուղղագրական սխալների ուղղման: Համարակալվել ու փաստաթղթերը վերնագրվել են մեծ մասամբ կազմողների կողմից, այլ գեպքերում տողատակից նշում է արվել:

Ժողովածուն տպագրվում է վեց բաժնով, որոշ բաժիններ մասերի են բաժանվել:

Յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նշված են սկզբնաղբյուրները: Հրատարակվող փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում եւ Ռուսաստանի Գաշնություն պետական արխիվում:

Ժողովածուն հրատարակվել է Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ: Հրատարակչական աշխատանքներն իրականացրել է «Армянский вестник» հրատարակչությունը (Մոսկվա):

Ժողովածուն տպագրվել է Վաչագան Պետրոսյանի Հովանավորությամբ:

Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր Ի Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ ՈՒ Մ

Ավետիսյան Մարտի	- Գեուրգյան ճեմարանը վավերագրերում-----	3
Փայասլյան Ստեփան	- Ամերիկացի միսիոներ Ջորջ Քաշինգ Նեփի գեուցագիրը Բիթլիսի հայ բնակչության ջարդերի մասին -----	17
Վիրաբյան Վանիկ	- Հայաստանի Հանրապետության Հետախուզական եւ հակահետախուզական ծառայությունը 1918-1920թթ. -----	30
Բաղալյան Արմեն	- Եթովպիայի հայ գաղթօջախը եւ նրա կապերը Խորհրդային Հայաստանի հետ 1945-1985թթ. -----	36

Հ Ո Դ Ա Ա Մ Ն Ե Ր

Մուրադյան Դերենիկ	- Արեւելյան Հայաստանը 1880-1890-ական թվականներին. Յարիգմի գաղութային քաղաքականության ուժեղացումը -----	61
Գեուրգյան Համլետ	- Իրվագիներ մարտական եւ զինատար խմբերի պատմությունից (1898թ.) -----	67
Տեր-Մինասյան Անահիտ	- Անտուան Պուգեբարը եւ Հայաստանը-----	79
Ջովաննի Գուսյատա	- Հայաստանը քեմալական մուրճի եւ	

Հարուժյուղան Ավագ	- քոչվերական զնդանի միջև	105
Ցուլական Վարդան	- Ռամկավար-ժողովրդական խմբավորման գերբորոշումները արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ 1918-1920թթ.	119
Կոխլիկյան Արամայիս	- Հայաստանի Հանրապետության առևտրական հարաբերությունները Ադրբեջանի եւ Վրաստանի հետ (1918 - 1920թթ.)	131
Թադեոսյան Նեյլի	- Որակական եւ քանակական փոփոխությունները ՀնՄՀ գյուղական մտավորականության կազմում (1945-1965թթ.)	141
	- Գրադարանային հավաքածուները ժամանակակից տեղեկատվության համատեքստում	147

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գեւորդյան Պարգեւ Էվոյան Սամվել	- Վրաստանի Հայ մանկավարժական մամուլը - Առաջին «խորհրդահայ» թատրոնի լեգենդը (1918թթ.)	156 159
Մակարյան Կարինե	- Պշերիկի քրդախոս հայերը եւ նրանց գաղթը դեպի Սիրիա	163
Ալեքսեևա Լյուդմիլա	- Հայ ալյախոհությունից շարժման պատմությունից	168
Հովակիմյան Գագիկ	- Հայաստանը ռազմական կրթության ստեղծման ճանապարհին	176
Մանգասարյան Վարդիթեր	- Ֆրանսիայի պետական արխիվային ծառայությունը	181
Հովսեփյան Էմմա	- Ի շահ Հայրենիքի պաշտպանության եւ գինված ուժերի հզորացման	183
	ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	

Սահակյան Ռուբեն	- Ալեքսանդրա Բախտուրինա. «Ռուսական կայսրության ծայրամասերը. պետական կառավարումը եւ ազգային քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917թթ.)	187
-----------------	--	-----

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Անճնական ծագման փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման մեթոդական հանձնարարականներ	205
---	-----

ԼՐԱՏՈՒ

Ցուցահանդեսներ	240
Արխիվային հրատարակումներ	242

С О Д Е Р Ж А Н И Е

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

Аветисян Маро	- Геворгянская семинария в документах	3
Паясян Степан	- Докладная записка американского миссионера Джорджа Кашинга Непа о резне армянского населения Битлиса	17
Вирабян Ваник	- Разведывательная и контрразведывательная служба Республики Армения в 1918-1920гг.	30
Бадалян Армен	- Армянская колония в Эфиопии и ее связи с Советской Арменией в 1945-1985гг.	36

СТАТЬИ

Мурадян Дереник	- Восточная Армения в 1880-890годы. Усиление колониальной политики царизма.	61
Геворгян Гамлет	- Отрывки из истории боевых и оруженосных групп (1898г.)	67

Тер-Минасян Анаит Гуайта Джованни	- Антуан Пуадebar и Армения -----	79
Арутюнян Авак	- Армения между кемалистским молотом и большевистской ковалней -----	105
Цолакян Вардан	- Позиции либерально-народной коалиции по вопросам внешней политики в 1918-1920 годах -----	119
Кохликян Арамаис	- Торговые отношения Республики Армения с Азербайджаном и Грузией (1918 - 1920гг.) -----	131
Тадевосян Нелли	- Качественные и количественные изменения в составе сельской интеллигенции Армянской ССР (1945-1965гг.) -----	141
	- Библиотечные фонды в современной информационной системе -----	147

**СООБЩЕНИЯ**

Геворгян Паркев	- Армянская педагогическая пресса Грузии -----	156
Эвоян Самвел	- Миф о первом “советско-армянском” театре 1918г. -----	159
Макарян Карине	- Пшерикские курдоязычные армяне и их переселение в Сирию -----	163
Алексеева Людмила	- Из истории армянского диссидентского движения -----	168
Овакимян Гагик	- Армения на пути создания военного образования -----	176
Мангасарян Вартитер	- Государственная архивная служба Франции -----	181
Овсебян Эмма	- Во благо защиты Родины и усиления вооруженных сил -----	183

**РЕЦЕНЗИЯ**

Саакян Рубен	- Александра Бахтурина. Окраины Российской империи: Государственное управление и национальная политика в годы первой мировой войны (1914-1917гг.) -----	187
--------------	---	-----

**АРХИВНОЕ ДЕЛО**

	- Методические рекомендации по научно – технической обработке документов личного происхождения	205
--	--	-----

**ХРОНИКА**

Выставки	- -----	240
Архивные публикации	- -----	242

**Ի գիտութիւն հեղինակների եւ ընթերցողների**

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական Հանդեսն ընդգրկված է ԲՈՂ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսութիւնների արդյունքների հրատարակման Համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիութան համար:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հավավումները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝  
«Հայ արխիվագետների հասարակական կազմակերպություն»:  
Հասցեն՝ Երևան - 33, Հրաչյա Քոչարի - 5, Հեռ. 225-355:  
Գրանցման վկայականը N 03Ա.055485:  
Տրված է 02.08.2002թ. :  
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բաղդյան:  
Ստորագրված է տպագրություն 2004 թ. դեկտեմբերի 24-ին:  
Տպաքանակը՝ 200: Տարածվում է անվճար:  
Չափեր 70x100/16:  
«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան: Երևան, Վ. Վաղարշյան 12 «Ա»: